

# ՀԱՅԱՍՏԱՆ. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ

Հայաստանի դատական համակարգի  
հանրային ծախսերի և  
կատարողականի ուսումնասիրություն

Համաշխարհային բանկի խումբ  
Կառավարման գործը պրակտիկա – Հանրային ոլորտ և ինստիտուտներ  
Եվրոպա և Կենտրոնական Ասիա



Funded by the European Union  
Տնտեսապահպան և կառավարման համակարգի կրթություն



**THE WORLD BANK**  
Europe & Central Asia • Governance

© 2023 Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ / Համաշխարհային բանկ  
1818 H NW Փողոց  
Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան 20433  
Հեռախոս՝ 202-473-1000  
Ինտերնետ կայք, [www.worldbank.org](http://www.worldbank.org)

Սույն զեկույցը հանդիսանում է Համաշխարհային բանկի աշխատակազմի և արտաքին համագործակցության արդյունքը: Սույն զեկույցում ներկայացված ուսումնասիրությունների արդյունքները, մեկնաբանությունները և եզրակացությունները պարտադիր չէ, որ արտացոլեն Համաշխարհային բանկի, նրա գործադիր տնօրենների խորհրդի կամ նրանց կողմից ներկայացված կառավարությունների տեսակետները:

Համաշխարհային բանկը չի երաշխավորում սույն զեկույցում ներառված տվյալների ճշգրտությունը, ամբողջականությունը կամ արդիականությունը և պատասխանատվություն չի կրում տեղեկատվության մեջ սխալների, բացթողումների կամ անհամապատասխանությունների համար, ինչպես նաև պատասխանատու չէ տեղեկատվության, մեթոդների, գործընթացների կամ եզրահանգումներ օգտագործման կամ չօգտագործման համար:

Սույն զեկույցում ցանկացած քարտեզի վրա ցուցադրված սահմանները, գույները, անվանումները և այլ տեղեկությունը չի ենթադրում Համաշխարհային բանկի որևէ դատողություն որևէ տարածքի իրավական կարգավիճակի կամ այդպիսի սահմանների հաստատման կամ ընդունման վերաբերյալ:

Սույն փաստաթղթում ոչինչ չպետք է լինի կամ մեկնաբանվի կամ համարվի որպես Համաշխարհային բանկին հատուկ վերապահված արտոնությունների և անձեռնմխելիության սահմանափակում կամ հրաժարում:

### **Իրավունքներ և թույլտվություններ**

Սույն զեկույցում ներկայացված նյութերը հանդիսանում են հեղինակային իրավունքի պաշտպանության օբյեկտ: Զանի որ Համաշխարհային բանկը խրախուսում է իր գիտելիքների տարածումը, այս զեկույցը կարող է ամբողջությամբ կամ մասամբ վերարտադրվել ոչ առևտրային նպատակներով՝ սույն զեկույցին հղում կատարելու պայմանով:

Հեղինակային իրավունքների, այդ թվում հարակից իրավունքների և լիցենզիայի վերաբերյալ ցանկացած հարցում, պետք է ուղղվի Համաշխարհային բանկի հրապարակումների բաժնին, Համաշխարհային բանկ 1818 H NW Փողոց, Վաշինգտոն, Կոլումբիայի շրջան, 20433, ԱՄՆ, ֆաքս, 202-522-2625; e-mail: [pubrights@worldbank.org](mailto:pubrights@worldbank.org).

Պատկերներ. սույն զեկույցում օգտագործված են 20-րդ դարի երկրորդ կեսի հայ նշանավոր նկարիչ Մինաս Ավետիսյանի (1928–1975) երեք որմնանկարների լուսանկարները: Ներկայումս որմնանկարները գտնվում են ՀՀ վերաքննիչ դատարանում: Սույն զեկույցում օգտագործված լուսանկարներում պատկերված են հետևյալ որմնանկարները.

- «Մշեցիք», 1974, շապիկ
- «Թորոս Ռոսլինի ծնունդը», 1974, էջ 52
- «Հանդիպում», 1974, էջ 117

Զեկույցի ձևավորում՝ Ալբերտ Գրաֆիքս

# ՀԱՅԱՍՏԱՆ. ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՆ ՀԱՅԱՑՔ ԱՊԱԳԱՅԻՆ

Հայաստանի դատական համակարգի  
հանրային ծախսերի և  
կատարողականի ուսումնասիրություն

Համաշխարհային բանկի խումբ  
Կառավարման գլոբալ պրակտիկա – Հանրային ոլորտ և ինստիտուտներ  
Եվրոպա և Կենտրոնական Ասիա



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....	ii
Եզրույթներ և սահմանումներ.....	x
Երախտագիտության խոսք .....	xii
Սեղմագիր (ընդհանուր եզրահանգումներ և առաջնահերթություններ ) .....	1
<b>I. Ներածություն .....</b>	<b>4</b>
<b>II. Դեկավարում և կառավարում .....</b>	<b>5</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերները .....</b>	<b>6</b>
Մարտահրավեր 1. Ռազմավարության իրականացում .....	6
Մարտահրավեր 2. Դատական համակարգի կառավարման ինստիտուտների հզորացում.....	10
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ .....</b>	<b>14</b>
<b>III. Դատական ծառայությունների տրամադրումը քաղաքացիներին. հասանելիություն արդարադատությանը .....</b>	<b>17</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերներ .....</b>	<b>17</b>
Մարտահրավեր 1. Ֆինանսական և ֆիզիկական հասանելիություն .....	18
Մարտահրավեր 2. Տեղեկատվության մատչելիություն .....	24
Մարտահրավեր 3. Իրավաբանական օգնություն.....	27
Մարտահրավեր 4. Վեճերի այլընտրանքային լուծում.....	30
<b>Գ. Եզրակացություն և առաջարկություններ .....</b>	<b>31</b>
<b>IV. Կատարողականի չափում և կառավարում .....</b>	<b>33</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերները .....</b>	<b>33</b>
Մարտահրավեր 1. Բավարարել ավելացող պահանջարկը՝ ապահովելու արդյունավետությունը և արտադրողականությունը.....	34
Մարտահրավեր 2. Գործերի ավելացող կուտակումներ .....	48
Մարտահրավեր 3. Գործերի վարման ժամկետայնությունը.....	51
Մարտահրավեր 4. Հատուկ ընթացակարգերի կիրառում (ՎԿ, պարզեցված ընթացակարգ).....	59
Մարտահրավեր 5. Ընթացակարգային արդյունավետություն .....	60
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ .....</b>	<b>64</b>
<b>V. Բյուջետավորում, ֆինանսական կառավարում և ծախսեր .....</b>	<b>66</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերները .....</b>	<b>66</b>
Մարտահրավեր 1. Բյուջեի կազմում, որոշում և կատարում սահմանափակ հմտությունների պարագայում .....	66
Մարտահրավեր 2. Անդրադարձ նվազող բյուջեին, որում աշխատավարձերը գերակշռում են ծախսերը.....	72
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ .....</b>	<b>81</b>
<b>VI. Մարդկային ռեսուրսներ .....</b>	<b>83</b>

<b>Ա. Հիմնական մարտահրավերները</b> .....	<b>83</b>
Մարտահրավեր 1. Կադրային մակարդակների ճիշտ ձևավորում .....	83
Մարտահրավեր 2. Կադրային կառավարման բարելավում .....	89
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ</b> .....	<b>96</b>
<b>VII. ՏՀՏ ռեսուրսներ</b> .....	<b>97</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերները</b> .....	<b>97</b>
Մարտահրավեր 1. ՏՀՏ կառավարման բարելավում .....	97
Մարտահրավեր 2. Գործող ՏՀՏ ռիսկերի մեղմացում .....	100
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ</b> .....	<b>107</b>
<b>VIII. Ֆիզիկական ենթակառուցվածքներ</b> .....	<b>109</b>
<b>Ա. Հիմնական մարտահրավերները</b> .....	<b>109</b>
Մարտահրավեր 1. Վատ ենթակառուցվածքների խնդիրների լուծում և դատարանների պայմանների բարելավում .....	109
Մարտահրավեր 2. Դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում .....	120
<b>Բ. Եզրակացություն և առաջարկություններ</b> .....	<b>124</b>
<b>IX. Եզրակացություններ և առաջարկություններ</b> .....	<b>126</b>
<b>Ա. Կառավարում և ղեկավարում</b> .....	<b>126</b>
<b>Բ. Քաղաքացիներին դատական ծառայությունների մատուցում: Արդարադատության հասանելիություն</b> .....	<b>127</b>
<b>Գ. Կատարողականի չափում և կառավարում</b> .....	<b>127</b>
<b>Դ. Բյուջետավորում, ֆինանսական կառավարում և ծախսեր</b> .....	<b>127</b>
<b>Ե. Մարդկային ռեսուրսներ</b> .....	<b>127</b>
<b>Զ. ՏՀՏ ռեսուրսներ</b> .....	<b>238</b>
<b>Է. Ֆիզիկական ենթակառուցվածքներ</b> .....	<b>238</b>
<b>X. Առաջարկությունների աղյուսակ</b> .....	<b>129</b>
Հավելված 1. Հղումների ցանկ .....	143
Հավելված 2. Մեթոդաբանություն .....	145
Հավելված 3. Արդարադատության նախարարության կառուցվածքը .....	146
Հավելված 4. Բարձրագույն դատական խորհրդի դատական ղեկարտամենտի կառուցվածքը .....	147
Հավելված 5. Դատարաններում կուտակված գործերի նվազեցման ծրագրի մշակում .....	148
Հավելված 6. Հայաստանում և այլ երկրներում դատական գործերի ծանրաբեռնվածության վերաբերյալ համեմատական վերլուծություն՝ հիմնված ԱԱԵԳ-ի մեթոդաբանության վրա .....	151
Հավելված 7. ԵՄ զեկույց. «Մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի և էլեկտրոնային գործիքների կարիքների գնահատման հայեցակարգ» .....	154
Հավելված 8. Դատավորների և աջակցող անձնակազմի թվաքանակը՝ ըստ դատարանի .....	155
Հավելված 9. Հայաստանի դատարանները .....	156



# ՆԵՐՂԻՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Ներդիր 1. Տեսակետներ արդարադատության բարեփոխումների ազդեցության վերաբերյալ.....	7
Ներդիր 2. Դատական համակարգի ընկալումները լրատվամիջոցներում .....	9
Ներդիր 3. Արդարադատության նախարարություն.....	10
Ներդիր 4. Բարձրագույն դատական խորհուրդ.....	11
Ներդիր 5. Դատարանների մատչելիության ընդհանուր ընկալում .....	17
Ներդիր 6. Մատչելիության երեք ասպեկտների ընկալումը.....	18
Ներդիր 7. Զաղաքացիների և տնտեսվարողների համար առաջին ատյանի վարույթի ծախսերը .....	19
Ներդիր 8. Իրավական ներկայացուցչություն և բավարարվածություն փաստաբանների մատչելիությունից (%).....	21
Ներդիր 9. Պարտադիր դատական պաշտպանության կարգավորում .....	22
Ներդիր 10. Զաղաքացիների կարծիքն իրենց նկատմամբ հավասար վերաբերմունքի մասին.....	23
Ներդիր 11. Տնտեսվարողների կարծիքը հավասար վերաբերմունքի վերաբերյալ .....	24
Ներդիր 12. Զաղաքացիներ և տնտեսվարողներ. տեղեկատվության հասանելիություն և աղբյուրներ (%).....	24
Ներդիր 13. Իրավաբանական օգնություն.....	28
Ներդիր 14. Գիտելիքներ անվճար իրավաբանական օգնության մասին .....	29
Ներդիր 15. Արբիտրաժի մասին տեղեկացվածությունը՝ որպես ՎԱԼ.....	30
Ներդիր 16. Վիճակագրական հաշվետվություններ և տվյալների հասանելիություն .....	34
Ներդիր 17. Դատական ծառայությունների պահանջարկի չափումը .....	35
Ներդիր 18. Հայաստանում փոքր հայցերը և վճարման կարգադրությունները .....	37
Ներդիր 19. Դատարանում գործերի լուծման թվերին հետևելը .....	43
Ներդիր 20. Հնացող գործերի ցուցակներ .....	49
Ներդիր 21. Դատարանների գործունեության խթանում. Սերբիան որպես տիպային երկիր.....	51
Ներդիր 22. Լսումների դերը վեճերի լուծման գործում .....	53
Ներդիր 23. Դատական գործերի հարկադիր կատարումը Հայաստանում.....	55
Ներդիր 24. Հայաստանում և գործընկեր երկրներում գործերի լուծման ժամկետները.....	57
Ներդիր 25. Զաղաքացիների և տնտեսվարողների՝ գործերի տևողության ընկալումը .....	58
Ներդիր 26. «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ դատարանների արդյունավետության վերաբերյալ .....	59
Ներդիր 27. Հայաստանում գործերի պատահական ավտոմատացված բաշխում.....	60
Ներդիր 28. Դատարանների աշխատանքի որակի ընկալումը.....	61
Ներդիր 29. Բյուջետավորումը դատական համակարգում. միջազգային պրակտիկա .....	67
Ներդիր 30. Բյուջետավորման գործընթաց և ժամկետներ .....	68
Ներդիր 31. Զաղաքացիական ծառայության բարեփոխում և դատական ծառայության վերականգնում.....	91

Ներդիր 32. Դատավորների օգնականներին դժվար է պահել իրենց պաշտոններում.....	96
Ներդիր 33. ՏՀՏ ապագան արդարադատության ոլորտում .....	99
Ներդիր 34. Դատարանների վարչարարության և հմտությունների փոխանցման (CAST) համակարգի խնդիրները.....	101
Ներդիր 35. Կառավարության ՏՀՏ ծառայությունները .....	106
Ներդիր 36. Համաշխարհային բանկի նախագծեր՝ ուղղված Հայաստանում արդարադատության համակարգի բարեփոխմանը.....	115
Ներդիր 37. Մի դատարանի շենքի պատմություն.....	119



# ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

Գծապատկեր 1. Դատական կայքեր և բովանդակություն	27
Գծապատկեր 2. Դատարան մուտքագրվող քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործեր, ՀՊԳ 2011-2021թթ.	28
Գծապատկեր 3. 2017-2021 թթ. Հայաստանում դատարան մուտքագրված գործերը՝ ըստ դրանց տեսակի	35
Գծապատկեր 4. 2017-2021 թթ. դատարան մուտքագրված գործերը՝ ըստ դատարանների տեսակի	36
Գծապատկեր 5. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների	37
Գծապատկեր 6. 2017-2021 թթ. սնանկության դատարան մուտքագրված գործերը	38
Գծապատկեր 7. 2017-2021 թթ. վերաքննիչ դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների	39
Գծապատկեր 8. 2017-2021 թթ. Վճռաբեկ դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների	39
Գծապատկեր 9. 2018-2021 թթ. գործերի միջին ծանրաբեռնվածությունը մեկ դատավորի հաշվով՝ ըստ դատարանի տեսակի	40
Գծապատկեր 10. 2017-2021 թթ. դատարան մուտքագրված գործերը 100 բնակչի հաշվով՝ ըստ դատարանների տեսակի	42
Գծապատկեր 11. 2021 թ. դատարան մուտքագրված գործերը 100 բնակչի հաշվով՝ քաղաքային բնակչության տոկոսի համեմատությամբ	42
Գծապատկեր 12. 2017-2021 թթ. գործերի լուծումը՝ ըստ դատարանների տեսակի	43
Գծապատկեր 13. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարաններում գործերի լուծումը՝ ըստ դատարանների	44
Գծապատկեր 14. 2017-2021 թթ. քաղաքացիական գործերով և վճարման կարգադրություններով գործերի լուծումը՝ ըստ առաջին ատյանի դատարանների	44
Գծապատկեր 15. 2018-2021 թթ. մեկ դատավորի հաշվով գործերի լուծման միջինը՝ ըստ դատարանների տեսակի	45
Գծապատկեր 16. 2017-2021 թթ. կատարման ընդհանուր տոկոսները	47
Գծապատկեր 17. 2017-2021 թթ. կատարման տոկոսները՝ ըստ դատարանների տեսակի	47
Գծապատկեր 18. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարանների կատարման տոկոսները	48
Գծապատկեր 19. 2017-2021 թթ. տարեվերջի տվյալներով չլուծված գործերի ընդհանուր քանակը	49
Գծապատկեր 20. 2017-2021 թթ. տարեվերջին չլուծված գործերը՝ ըստ դատարանների տեսակի	50
Գծապատկեր 21. 2017-2021 թթ. տարեվերջին չլուծված գործերն առաջին ատյանի դատարաններում՝ ըստ գործերի տեսակի	50
Գծապատկեր 22., 2017-2021 թթ. Հայաստանում դատարանների համընդհանուր խցանումների գործակիցը	52
Գծապատկեր 23. 2017 – 2021 թթ. Հայաստանի դատարաններում գործերի լուծման համընդհանուր ժամկետները	54



Գծապատկեր 24. 2017 – 2021 թթ. գործերի լուծման ժամկետները՝ ըստ դատարանների տեսակի.....	55
Գծապատկեր 25. Առաջին ատյանի դատարաններում գործերի լուծման ժամկետները՝ ըստ գործերի տեսակի.....	56
Գծապատկեր 26. Վճռաբեկ դատարանում գործերի լուծման ժամկետները՝ ըստ գործերի տեսակի.....	57
Գծապատկեր 27. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարաններում բողոքարկման տոկոսները և բեկանման տոկոսները՝ ըստ գործերի տեսակի .....	63
Գծապատկեր 28. 2017 – 2021 թթ. վճռաբեկ դատարան ներկայացված իրավական պաշտպանության միջոցները.....	63
Գծապատկեր 29. Բյուջեի կազմման գործընթաց .....	70
Գծապատկեր 30. Դատական համակարգերի համար կատարված ծախսերը. ԱԱԵՅ-ի հետ համեմատություն .....	73
Գծապատկեր 31. 2018-2021 թթ. դատարանների բյուջեի ծախսերը և եկամուտները (ՀՀ դրամով) .....	73
Գծապատկեր 32. 2018-2021 թթ. դատարանների եկամուտներ. պլանավորումը փաստացիի նկատմամբ (ՀՀ դրամով).....	73
Գծապատկեր 33. 2018-2021 թթ. դատական ծախսերը՝ ըստ կատեգորիաների (ընդհանուր ծախսերում՝ արտահայտված տոկոսներով).....	75
Գծապատկեր 34. 2018-2021 թթ. դատարանների ծախսերը՝ ըստ կատեգորիաների (բոլոր) .....	75
Գծապատկեր 35. 2018-2021 թթ. ոչ աշխատավարձային ծախսեր (ՀՀ դրամով).....	76
Գծապատկեր 36. Դատական համակարգի կոմունալ ծախսերը (ՀՀ դրամով).....	77
Գծապատկեր 37. 2018-2021 թթ. ընդհանուր պլանավորած ծախսերը փաստացի ծախսերի նկատմամբ (արտահայտված հազար դրամով).....	78
Գծապատկեր 38. 2018-2021 թթ. պահանջված, հատկացված բյուջեները փաստացի ծախսերի նկատմամբ՝ ըստ կատեգորիաների (արտահայտված հազար դրամով).....	78
Գծապատկեր 39. Դատավորների թվաքանակը մարզերում 100,000 բնակչության հաշվով.....	85
Գծապատկեր 40. Դատարաններում օգտագործվող հավելվածներ/ծառայություններ.....	104
Գծապատկեր 41. Երևան քաղաքի դատարանի սերվերային սենյակ.....	105
Գծապատկեր 42. Երևանի Էրեբունի վարչական շրջանի սերվերային սենյակ .....	106
Գծապատկեր 43. Հայաստանում դատարանների գտնվելու վայրերը.....	111
Գծապատկեր 44. ԱԲԾԻԳ-ի կազմակերպական սխեման .....	116
Գծապատկեր 45. Վերականգնողական պահանջները՝ ըստ դատարանի գտնվելու վայրի.....	118
Գծապատկեր 46. Դատական ծախսերը՝ ըստ կատեգորիաների (ընդհանուր), 2018-2021 թթ.....	122
Գծապատկեր 47. Պահանջված, հատկացված բյուջեները ըստ կատեգորիաների՝ փաստացի ծախսերի համեմատ, 2018-2021 թթ. (հազ. դրամ) .....	122
Գծապատկեր 48. 100 բնակչի հաշվով առաջին ատյանի դատարան մուտքագրվող գործերի քանակ (ԱԱԵՅ 2020 զեկույց).....	152
Գծապատկեր 49. 100 բնակչի հաշվով առաջին ատյանի դատարան մուտքագրվող քաղաքացիական, առևտրային բնույթի գործերի և վարչական գործերի քանակ (ԱԱԵՅ 2020 զեկույց) .....	152



# ԱՂՅՈՒՄԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Առաջին ատյանի դատարաններում մեկ դատավորի հաշվով գործերի միջին ծանրաբեռնվածությունը 2021թ. ....	41
Աղյուսակ 2. 2021 թ. մեկ դատավորի հաշվով գործերի լուծման միջինը առաջին ատյանի դատարաններում .....	46
Աղյուսակ 3. 2017-2021 թթ. գործերի խցանումների գործակիցները՝ ըստ դատարանների և գործերի տեսակի.....	53
Աղյուսակ 4. Ֆիսկալ մարմինները դատական համակարգում.....	69
Աղյուսակ 5. Արդարադատության ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի և պետական ընդհանուր ծախսերի հարաբերակցություն, 2018-2021 թթ. (հազար ՀՀ դրամով).....	72
Աղյուսակ 6. 2019-2021 թթ. ծախսերը՝ ըստ սուբյեկտների/դատարանների տեսակի (ընդամենը հազար ՀՀ դրամով, ընդամենը ծախսերի տոկոսը).....	74
Աղյուսակ 7. 2020-2021 թթ. մեկ դատավորի հաշվով ծախսերը՝ ըստ դատարանների .....	74
Աղյուսակ 8. 2019-2021 թթ. ոչ աշխատավարձային ծախսերը՝ ըստ դատարանների տեսակի.....	77
Աղյուսակ 9. 2018-2021 թթ. պահանջված և հատկացված բյուջեները փաստացի ծախսերի նկատմամբ՝ ըստ դատարանների տեսակի (հազար ՀՀ դրամով).....	80
Աղյուսակ 10. Ներկա կադրային մակարդակները .....	84
Աղյուսակ 11. 2018 թ. և 2021 թ. դատավորների թվաքանակի միտումները՝ ըստ դատարանների .....	85
Աղյուսակ 12. Կադրերի մակարդակը համեմատվող երկրներում 100,000 բնակչության հաշվով.....	86
Աղյուսակ 13. Օժանդակ աշխատակազմի թվաքանակ.....	87
Աղյուսակ 14. 2021 թ. դատավորների տարեկան աշխատավարձերը.....	88
Աղյուսակ 15. Պետական ծառայության աշխատավարձի գործակիցներ՝ առանց հայեցողական պաշտոնների .....	89
Աղյուսակ 16. Աշխատանքային կայանների տարիքը .....	100
Աղյուսակ 17. Դատավորների և դատական նիստերի դահլիճների հարաբերակցությունը (2022թ.).....	112
Աղյուսակ 18. Դատական նիստերի դահլիճներ. Հայաստանի հետազոտված դատարաններ.....	113
Աղյուսակ 19. Դատական նիստերի դահլիճների չափսերը. Մոլդովայի, Ռումինիայի, Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի դատարանի ուղեցույցներ .....	114
Աղյուսակ 20. Նախորդ տարվա համար սահմանված նպատակների իրականացման հաշվետվություն .....	149
Աղյուսակ 21. Հաջորդ տարվա համար սահմանված նպատակների իրականացման հաշվետվություն .....	150

VIII

# ՀԱՃԱԽ ԿԻՐԱՌՎՈՂ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՎԱԼ	Վեճերի այլընտրանքային լուծում
ԴԳԿ	Դատարանների վարչարարություն և հմտությունների փոխանցման (Գործերի կառավարման) համակարգ (CAST)
ԵԴԽԽ	Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ (CCJE)
ՀԸԳ	Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր
ԱԱԵ	Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (CEPEJ)
ԿՆԾ	Կապիտալ ներդրումների ծրագիր
ԿԿ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՁԾ	Ձեռնարկությունների ճարտարապետություն
ԷԿ	Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով
ԵՄ	Եվրոպական միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ԿՓ	Կառավարության փոխգործելիության հարթակ
ՄՌ	Մարդկային ռեսուրսներ
ՏՅՏ	Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
ԴԴ	Դատական դեպարտամենտ
ԴԲԾԻԳ	Դատական բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ
ՖՆ	Ֆինանսների նախարարություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ՄԾՇ	Միջնաժամկետ ծախսերի շրջանակ
ԱԺ	Ազգային ժողով
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՎԿ	Վճարման կարգադրություն
ՀԴԳ	Հանրային պաշտպանի գրասենյակ
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ՄԱԿԶԾ	ՄԱԿ-ի զարգացման ծրագիր
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն



# ԵԳՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

**Վարչական դատարան.** քննում է հանրային բնույթի (այսինքն՝ կենտրոնական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունված որոշումների) գործերը և պատասխանատու է վարչական իրավախախտումները որպես քրեական վարույթ չդիտվող փոքր իրավախախտումներ քննելու և վարչական տույժեր կիրառելու համար: Համաձայն «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի՝ կարող են տույժեր նշանակել տարբեր պետական մարմիններ՝ ոստիկանությունը, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը և հարկային մարմինները: Այդ տուգանքները կարող են այնուհետև բողոքարկվել վարչական դատարանում:

**Վեճերի այլընտրանքային լուծում (ՎԱԼ).** մեխանիզմներ, որոնք կարող են օգտագործվել վեճերը լուծելու համար՝ առանց դիմելու լիարժեք դատական գործընթացներին, օրինակ՝ արբիտրաժը կամ հաշտարարությունը:

**Գործերի կուտակումներ.** ամպախ գործերն են, որոնք չեն լուծվել սահմանված ժամկետում:

**Սնանկության դատարան.** ստեղծվել է 2018 թ. օգոստոսին: Գործում է 2019 թ. հունվարի 1-ից՝ ՀՀ դատական օրենսգրքին համապատասխան: Նախկինում սնանկության գործերը վարում էին ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները: Սնանկության վարույթում գտնվող պարտապանի հետ կապված բոլոր քաղաքացիական գործերն այժմ քննվում են սնանկության դատարանի կողմից, բացի ոչ դատական սնանկության ընթացակարգից:

**Գործերի վարման համար հաշվարկված ժամանակ.** ամպախ գործերի թիվը տարեվերջին բաժանված է այդ տարվա ընթացքում լուծված գործերի թվի վրա՝ բազմապատկած 365-ով (տարվա օրերը):

**Գործերի լուծումը՝ ըստ դատավորի.** չափվում է՝ լուծված գործերի թիվը դատավորների թվի վրա բաժանելով:

**Գործերի լուծում.** տվյալ դատարանում լուծված գործերի թիվը:

**Գործերի ծանրաբեռնվածություն.** տվյալ տարվա ընթացքում դատարան մուտքագրված գործերի թիվը:

**Գործերի կատարման տոկոս.** ստացվում է՝ լուծված գործերի թիվը բաժանելով տվյալ ժամանակահատվածում դատարան մուտքագրված գործերի թվին՝ արտահայտված տոկոսով: Գործերի 100 տոկոսով կատարումը ցույց է տալիս դատարանի կամ դատական համակարգի հնարավորությունը՝ լուծելու տվյալ

ժամանակահատվածում դատարան մուտքագրված բոլոր գործերը, մինչդեռ 100 տոկոսից ցածրը ցույց է տալիս հակառակը (և ազդարարում է անպախ գործերի աճի մասին): Գործերի 100 տոկոսից բարձր ցույց է տալիս համակարգի կարողությունը լուծելու ավելի շատ գործեր, քան ստացված գործերը:

**Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր.** Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև հարաբերությունների ամրապնդման իրավական հիմքի շրջանակ, որը ստորագրվել է 2017թ. և ժամանակավորապես կիրառվում է 2018թ. հունիսից, ուժի մեջ է մտել 2021թ. մարտին: «Բարեփոխումների նախագիծ», որն ընդգրկում է կենսական բոլոր ոլորտները և համագործակցության շրջանակները, ներառյալ օրենքի գերակայությունը, դատական համակարգի անկախության խթանումը, արդարադատության մատչելիությունը և արդար դատաքննության իրավունքը (հոդվածներ 4 և 12):

**Գործերի խցանման տոկոս.** հաշվարկվում է՝ տարեվերջում չլուծված գործերի քանակը բաժանելով նույն տարվա ընթացքում լուծված գործերի քանակի վրա: Գործերի խցանման տոկոսը ցույց է տալիս, որ ամպախ գործերի ավելի մեծ քանակ ունենալն այնքան էլ հստակ բացասական արդյունք չէ, որքան կարելի է ենթադրել, եթե համակարգում միաժամանակ լուծվում են ավելի մեծ ծավալի գործեր: Խցանումների հարաբերակցությունը 1.00-ից ցածր (գերադասելի է 0.50-ից ցածր) ցույց է տալիս, որ տարեվերջին լուծված գործերը շատ ավելի շատ են եղել, քան չլուծված գործերը:

**Սահմանադրական դատարան.** առանձին դատարան է, որին վերապահված է սահմանադրական վերահսկողությունն իրականացնելու և Սահմանադրության վերջնական մեկնաբանություն տրամադրելու իրավասությունը:

**Արդարադատության խորհուրդ.** նախկին խորհուրդ, որին այժմ փոխարինում է Բարձրագույն դատական խորհուրդը:

**Վճռաբեկ դատարան.** ՀՀ-ում ամենաբարձր ատյանի դատարանն է: Նրա նպատակն ու կազմավորումն ուղղված են ապահովելու օրենքի միատեսակ կիրառումը:

**Առաջին ատյանի դատարաններ.** ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը ընդունում է քաղաքացիական և քրեական գործեր: Կան նաև այլ մասնագիտացված առաջին ատյանի դատարաններ՝ սնանկության դատարանը, վարչական և հակակոռուպցիոն դատարանները: Սույն զեկույցում



այն դեպքում, երբ տեքստը հղում է անում առաջին ատյանի դատարաններին, ապա դա վերաբերում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններին. առաջին ատյանի մյուս մասնագիտացված դատարանները հիշատակվում են իրենց համապատասխան անուններով: Եթե տեքստը նշում է «առաջին կարգի/մակարդակի դատարաններ», ապա դա ներառում է ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները, սևանկության դատարանը և վարչական դատարանը: Չեկոյցի մշակման ժամանակ հակակոռուպցիոն դատարանները դեռ չէին գործարկվել:

**Դատավորների ընդհանուր ժողով.** դատական իշխանության ինքնակառավարման մարմին, որն իրավասու է ա) դատարանների գործունեությունը բարելավելու նպատակով առաջարկություններ քննարկելու և ներկայացնելու, բ) էթիկայի և կարգապահական հանձնաժողովի, գնահատման և կրթական հանձնաժողովի ստեղծման, գ) սեփական և հանձնաժողովների աշխատանքային մեթոդների հաստատման, դ) Սահմանադրական դատարանի թեկնածուների ընտրության և ներկայացման, ե) Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամների ընտրության, զ) դատավորների էթիկայի կանոնների հաստատման, է) դատական դեպարտամենտի տարեկան հաշվետվության քննարկման:

**Դատարան մուտքագրված գործ.** գործ, որը ներկայացվել է տվյալ դատարան սահմանված որոշակի ժամկետում:

**Մշտադիտարկման խորհուրդ.** խորհուրդ, որը ստեղծվելուց հետո կհաստատի ռազմավարության իրականացման մշտադիտարկման և գնահատման ուղեցույցները:

**Առկախ գործ.** գործ, որը դեռ պետք է լուծվի դատարանի կողմից որոշակի ժամանակահատվածում (այսինքն՝ նոր ստացված և նախորդ հաշվետու ժամանակաշրջանից փոխանցված և վարույթ ընդունված գործերը):

**Առկախ գործ՝ ըստ տարիքի.** որոշակի ժամկետում լուծվելիք գործ (օրինակ՝ հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ին), խմբավորված՝ ըստ ներկայացման պահից լրացած ժամկետի:

**Արտադրություն և արտադրողականություն.** այս ցուցանիշները (հետագայում քննարկվում են) ցույց են տալիս, թե արդյոք ռեսուրսները բաշխված են հավասարաչափ, և արդյոք դատարանները ապահովում

են արդյունքի նույն մակարդակը: Այս ցուցանիշները թույլ են տալիս օբյեկտիվ ձևով համեմատել նույն տեսակի դատարանները կամ դատարանների տեսակները: Դրանք գործող են, քանի որ կարող են տեղեկություններ տրամադրել քաղաքականության և բարեփոխումների մասին՝ արդյունքները բարելավելու համար:

**Չանրային պաշտպանի գրասենյակ.** Փաստաբանների պալատի կազմում գտնվող կառուցվածքային ստորաբաժանում է, որն օրենքով սահմանված դեպքերում անվճար իրավաբանական օգնություն է ցուցաբերում մարդկանց և իրականացնում հանրային պաշտպանություն: Իրավաբանական օգնությունը տրամադրում են Չանրային պաշտպանի գրասենյակում աշխատող փաստաբանները (հանրային պաշտպաններ):

**Լուծված գործ.** գործ, որը ավարտվել է տվյալ դատարանում կամ դատարանի որոշմամբ կամ որևէ այլ դատավարական քայլով (օրինակ՝ գործի դադարեցում կամ կարգավորում) սահմանված ժամկետում:

**Պարզեցված ընթացակարգ.** քաղաքացիական վեճերի դատական վարույթի կարճացված և արագացված ձև:

**Բարձրագույն դատական խորհուրդ.** անկախ պետական մարմին և դատավորների նշանակման կենտրոնական մարմին, որը ստեղծվել է դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու համար:

**Վեճետիկի հանձնաժողով.** պաշտոնապես՝ Եվրոպական հանձնաժողով հանուն օրենքի միջոցով ժողովրդավարության: Եվրոպայի խորհրդի խորհրդատվական մարմին, որը կազմված է սահմանադրական իրավունքի ոլորտի անկախ փորձագետներից: Նրա դերն է իրավաբանական խորհրդատվություն տրամադրել իր անդամ երկրներին և օգնել պետություններին իրենց իրավական և ինստիտուցիոնալ կառույցները համապատասխանեցնելու ժողովրդավարության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ոլորտներում եվրոպական չափանիշներին և միջազգային փորձին:

**Աշխատանքային ծանրաբեռնվածություն.** դատարանների ամբողջական գործունեություն (օրինակ՝ գործերի վարում, կառավարման պարտականություններ, ցանկացած այլ գործունեություն, որը դատարանի, դատավորի աշխատանքի կամ դատախազության ծառայության մաս է կազմում):



# ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

«Հայացք ապագային» գեկույցը կազմվել է ՀՀ արդարադատության նախարարության և Բարձրագույն դատական խորհրդի խնդրանքով՝ ընթացիկ և հետագա բարեփոխումներին ուղղված ջանքերի վերլուծություն տրամադրելու համար: Չեկույցը կազմել է Համաշխարհային բանկի թիմը՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության, Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի, դատական դեպարտամենտի և դատական համակարգի անդամների, ինչպես նաև Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության (որպես ֆինանսավորող)<sup>1</sup> և զարգացման այլ գործընկերների գործուն ասակցությամբ:

Համաշխարհային բանկի թիմի անդամներն են Էվա Մելիսը (կառավարման ավագ մասնագետ, թիմի ղեկավար), Նանե Հարությունյանը (հանրային ոլորտի մասնագետ, թիմի համադեկավար), Սրդյան Սվիրցևը (հանրային ոլորտի ավագ մասնագետ), Իրինա Սչերբինան (հանրային ոլորտի ավագ մասնագետ), Սիդեթ Զիմը (գործառնությունների վերլուծաբան), Արփինե Ազարյանը (ծրագրի օգնական), Մարինա Մատիչ Բուսկովիչը (կառավարման և արդարադատության հասանելիության հարցերի խորհրդատու), Անա Կրնիչ Կուլուսիչը (դատական կատարողականի կառավարման հարցերի խորհրդատու), Վիլյամ Դիլինջերը (մարդկային ռեսուրսների կառավարման հարցերի խորհրդատու), Լիդիա Ռովանը (տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների գծով խորհրդատու), Հիկարու Կիտայը (դատական ենթակառուցվածքների գծով խորհրդատու), Անա Մարիա Պալացիո Ջարամիլլոն (դատական գործունեության հարցերի խորհրդատու), Գայանե Թամամյանը (տվյալների գծով խորհրդատու), Հայկանուշ Տեր-Վարդանյանը (մարդկային ռեսուրսների հարցերի խորհրդատու), Գուրգեն Ներսեսյանը (տեղեկատվության և հաղորդակցության տեխնոլոգիաների գծով խորհրդատու), Արամ Սաղաթյանը (քաղաքացիական ենթակառուցվածքների գծով խորհրդատու) և Հասմիկ Հարությունյանը (դատական համակարգի կատարողականի գծով խորհրդատու): Չեկույցը թարգմանել են Սյուզաննա Մուրադյանը և Սուսաննա Վարդանյանը, խմբագրել՝ Անահիտ Հարությունյանը: Չեկույցի ձևավորման համար շնորհակալ ենք Գարեգին Մարտիրոսյանին և «Ալբերտ Գրաֆիքս» ՍՊԸ-ի թիմին:

Արժեքավոր ներդրումներ են ունեցել Օլեքսի Բալաբուշկոն (հանրային ոլորտի առաջատար մասնագետ), Արման Վաթյանը (ֆինանսական կառավարման

առաջատար մասնագետ), Մեյ Օլալիան (հանրային ոլորտի ավագ մասնագետ), Կլաուս Դեքերը (հանրային ոլորտի ավագ մասնագետ և վերանայող), Ռոբին վան Կիպպերսլուխը (հանրային ոլորտի ավագ մասնագետ և վերանայող), Ռոն Մայերսը (հանրային ոլորտի խորհրդատու), Հենրի Չեյսը և Սյուզան Շրոյդերը (խմբագիրներ): Թիմը ցանկանում է շնորհակալություն հայտնել Համաշխարհային բանկի (ՀԲ) հայաստանյան գրասենյակին, մասնավորապես՝ Կարոլին Գեգինատին (ՀԲ Հայաստանի գրասենյակի տնօրեն), Դորոտա Նովակին (հայաստանյան ծրագրի համակարգող), Եվգենի Նաշոյվին (ավագ տնտեսագետ), Իրինա Թևոսյանին (գործառնությունների վերլուծաբան), Վիգեն Սարգսյանին (արտաքին հարցերի ավագ աշխատակից), Նուրե Գևորգյանին (արտաքին հարցերի խորհրդատու) արժեքավոր ուղղություն ցույց տալու համար:

Հատուկ շնորհակալություն ենք հայտնում կառավարության ներկայացուցիչներ Գրիգոր Մինասյանին (արդարադատության նախարար), Լիանա Թովմասյանին (արդարադատության նախարարի խորհրդական) և Սերժ Ռուշանյանին (արդարադատության նախարարի նախկին խորհրդական) Համաշխարհային բանկի թիմի հետ գեկույցի կազմման համատեղ աշխատանքի և հարցերի քննարկման նպատակով պատրաստակամորեն ժամանակ տրամադրելու համար:

Դատական համակարգից հատուկ շնորհակալություն ենք հայտնում Երանուհի Թումանյանցին (Բարձրագույն դատական խորհրդի անդամ), Գրիգոր Բեքմեզյանին (Բարձրագույն դատական խորհրդի նախկին անդամ), Արմեն Հարությունյանին (դատական դեպարտամենտի (ԴԴ) նախկին ղեկավար), Գոհար Հակոբյանին (ԴԴ արտաքին կապերի և արարողակարգի վարչության պետ), Էդգար Մելքոնյանին (ԴԴ արձանագրային վարչության պետ), Խորեն Պետրոսյանին (ԴԴ ՏՏ վարչության պետ), Աննա Չերքեզյանին (ԴԴ ֆինանսաբյուջետային վարչության պետ), Աննա Շիլաջյանին (ԴԴ դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության պետ), Արմեն Հարությունյանին (ԴԴ իրավաբանական վարչության պետ), Հերմինե Գևորգյանին (անձնակազմի կառավարման վարչության պետ) և Մարգարիտա Ամյանին (արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր), որոնք ուղղորդել են Համաշխարհային բանկի գեկույցը պատրաստող հիմնական թիմին և ժամանակ տրամադրելու, հյուրընկալության և բաց քննարկումների պատրաստակամություն են դրսևորել:

<sup>1</sup>Վերանայումը ֆինանսավորվել է «Եվրոպա 2020»-ի ծրագրային մեկ դոնոր վստահության հիմնադրամի 2-րդ մասի շրջանակներում (No. TF073433):

# ՄԵՂՍԱԳԻՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**Հայաստանի ներկայիս քաղաքական համատեքստը բնորոշվում է հավակնոտ նպատակներով:** Առաջնահերթություն են ժողովրդավարական ինստիտուտների և իրավունքի գերակայության ամրապնդումը, լայնատարած կոռուպցիայի վերացումը, Էական և ներառական տնտեսական աճի և բոլորի համար հավասար գործարար հնարավորությունների խթանումը: Արդարադատության համակարգի կատարելագործումը, մասնավորապես՝ դատական համակարգի բարեվարքության, անկախության և կատարողականի մարտահրավերների դիմակայումը կարևոր տարր է այս նպատակներին հասնելու համար:

### ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

**Չնայած վերջին տարիներին Հայաստանում արդարադատության համակարգի զարգացման ուղղությամբ արձանագրված առաջընթացին՝ անկախության, արդյունավետության և որակի առումներով առկա են մարտահրավերներ:** Այսօրվա իրավական դաշտը պահանջում է կատարելագործում՝ դատական համակարգը ղեկավարող ինստիտուտների բարեվարքությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով: Հիմնական հաստատությունները, օրինակ՝ Բարձրագույն դատական խորհուրդը (ԲԴԽ), լիարժեք չեն ստանձնել դատահրավերական ոլորտի կառավարման դերը: Եվրոպայի խորհրդի երկրների հետ համեմատությամբ՝ Հայաստանի դատական համակարգը բյուջեի, մարդկային ռեսուրսների (ՄՌ) և տեղեկատվական ու հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) մասով ռեսուրսների պակաս ունի՝ միաժամանակ բախվելով իր ծառայությունների համեմատաբար մեծ պահանջարկին: Հատկապես դատարանները ֆինանսական միջոցների մեծ կարիք ունեն, քանի որ դատական համակարգը չի կարող պատշաճ դիմակայել գործերի ահռելի ծանրաբեռնվածությանը, առավել ևս՝ այդ կարիքներին: Ուստի դատարաններն ավելի շատ են հետ մնում գործերի լուծման հարցում՝ ձախողելով արդարադատության ժամանակին կայացումը և մարելով գործերի լուծումների

միջազգային (կամ ներպետական) ընդունելի մակարդակի հասնելու հույսերը: Մեկ այլ կարևոր մարտահրավեր է բյուջետավորման, ՄՌ-ի, ինչպես նաև ակտիվների կառավարման ոլորտում համապարփակ և համախմբված պլանավորման բացակայությունը:

**Ոլորտի ղեկավարությունը գիտակցում է մարտահրավերները, բայց դեռ անորոշ են դրանց լուծման համար հատկացվելիք բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսները:** 2022-2026 թթ. դատահրավերական բարեփոխումների ռազմավարության ընդունումը<sup>2</sup> շոշափելի փոփոխությունների նպատակ է հետապնդում: Բացի բավարար մարդկային և ֆինանսական ռեսուրսների հատկացման խնդրից, ռազմավարության իրականացման և անկախ ու արդյունավետ դատական համակարգի նպատակին հասնելու հիմնական ռիսկերից մեկը բարեփոխումների նախագծման հիմքում ընկած հիմնավոր ապացույցների և վերլուծությունների բացակայությունն է:

### ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԵՐԵ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Ամրապնդել ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների ընտրության գործընթացի բարեվարքությունը և թափանցիկությունը՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքին համահունչ:
- Հզորացնել տվյալների հավաքումը և վիճակագրությունը՝ քաղաքականության որոշումների և բարեփոխումների տեղեկատվական հիմք ստեղծելու և դրանց հետևելու համար, ինչպես նաև ստեղծել մշտադիտարկման համակարգ՝ դատարանների հաջողությունները և երկրում լավ փորձը վեր հանելու համար:
- Ուժեղացնել ԲԴԽ-ում և ԴԴ-ում վարչական և կառավարման կառուցակարգերը՝ բարեփոխումների, այդ թվում՝ 2022-2026 թթ. Դատահրավերական ռազմավարության իրականացմանը նպաստելու համար:

<sup>2</sup>2022-2026 թթ. ռազմավարությունը նախանշում է գործողությունների համապարփակ ծրագիր՝ ուղղված համակարգային բարեփոխումների ոլորտներին, ներառելով էլեկտրոնային արդարադատության համակարգը, դատարանների վարչարարությունը և դատական գործերի վարումը, իրավական և մասնագիտական կրթությունը, մասնագիտական զարգացումը և թիրախային այլ ոլորտներ:



# ՂԱՏԱԿԱՆ ԾՈՒԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐՁՐ ՊԱՀԱՆՁԱՐԿԻ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒՄԸ ՂԱՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՐԱԳԻ ՑՄԾՐ ԾԱԽՍԵՐԻ ՀԵՏ

Ղեկավար մարմինները կանգնած են բարդ խնդրի առաջ. Հայաստանում դատարանները 2017-ից մինչև 2021 թվականի վերջը արձանագրել են գործերի 43 տոկոսի աճ: Դրա հիմնական մասը բաժին է ընկնում առաջին աստիճանի դատարաններին, որոնք պայքարում են պահանջարկը հաղթահարելու ուղղությամբ: Քիչ դատարաններ են կարողացել հասնել կատարողականի հաջող տեմպերի, դատական համակարգը տեսանելի ապագայում զգալի կուտակումների վտանգի տակ է: Տվյալների հավաքման և գործերի վարման թույլ համակարգը համապատասխան վիճակագրական հաշվետվություններ չի ապահովում, ինչը դատարաններին և ԲԴԽ-ին դնում է այնպիսի իրավիճակում, երբ դատական ծանրաբեռնվածության յուրաքանչյուր մշտադիտարկում և կառավարում կատարվում է ձեռքով:

**Ի հակադրություն պահանջարկի միտումին՝ դատական համակարգի համար բյուջեի հատկացումները 2019-ից մինչև 2021 թ. նվազել են 1.7 տոկոսով:** Ավելին, աշխատավարձի ծախսերը դուրս են մղում բոլոր մյուս գործառնությունները՝ քիչ տեղ թողնելով կամ տեղ չթողնելով նորարարությունների, ներդրումների, սպասարկման և ՏՀՏ-ի արդիականացման համար: Այսօր Հայաստանը ցածր տեղ է զբաղեցնում արդարադատության ոլորտում թե՛ համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) ցուցանիշով, թե՛ մեկ մարդու հաշվով իրական ծախսերի քանակով՝ համեմատած Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (ԱՎԵՅ) անդամ երկրների հետ: Թեև ԲԴԽ-ն հաստատում է իր և դատարանների բյուջետային հայտերը և միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, ԲԴԽ-ի փաստացի ազդեցությունը Ազգային ժողովի կողմից ընդունվող վերջնական բյուջեի որոշման վրա սահմանափակ է: Դատարանների և կառավարման մակարդակներում ցածր կարողությունները խոչընդոտում են բյուջեի կազմման և ընդունման գործընթացները, իսկ դատական գործունեության համար հատկացված բյուջեն ավելի շատ պահանջների հանրագումարային դրսևորում է, քան վերլուծության, պլանավորման և ապացույցների վրա հիմնված կանխատեսումների արդյունք:

## ՄՈՒՋԱՐԿՎՈՂ ԵՐԵՔ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Վերանայել և կարգավորել պարզեցված և արագացված դատական վարույթների, վճարման կարգադրությունների (ՎԿ) շրջանակն ու կիրառելիությունը:
- Կազմել գործերի կուտակումների կրճատման պլաններ՝ թե՛ ազգային և թե՛ առանձին դատարանների մակարդակով, հաստատել կուտակումների կրճատման միջոցառումներ, օրինակ՝ «հին» համարվող գործերի կանոնավոր և հաճախակի լսումների վերաբերյալ:
- Ամրապնդել ԲԴԽ-ի և կառավարության միջև համակարգման և պլանավորման մեխանիզմները և ԲԴԽ-ում, ԴԴ-ում, դատարաններում և ԱՆ-ում բյուջետավորման կարողությունները:

## ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԳՈՐԾՈՒՆԱԿ ՄԻՋՎԱՍՅՐՈՒՄ

Անհրաժեշտ է մարդկանց, գործիքների և ենթակառուցվածքների համախմբում՝ արդյունավետ և որակյալ ծառայությունների մատուցման ընթացիկ մարտահրավերների լուծմանը հասնելու համար: Չնայած աշխատանքային մեծ ծանրաբեռնվածությանը՝ դատական համակարգը շարունակում է հանդես գալ գրավիչ գործատուի դերում, այդ են վկայում աշխատանքի համար բազմաթիվ դիմումները: Իրավիճակն այդպես պահելու և ավելացող ծանրաբեռնվածությունը մեղմելու նպատակով նախատեսվող էլեկտրոնային արդարադատությունը կարևոր քայլ է՝ ուղղված արդյունավետության, որակի և թափանցիկության ավելացմանը: Այնուամենայնիվ կառավարման և հմտությունների պակասը ստեղծել է ՏՀՏ բարդ միջավայր, որտեղ էլեկտրոնային հավելվածները հակված են կա՛մ ջանքերի կրկնօրինակման, կա՛մ բացթողումների: Ներկայումս դատական համակարգի հիմնական բիզնես գործընթացները երաշխավորող յոթ տարբեր համակարգեր կան: Դրանք ապահովված են սերվերներով, տեղակայված տասնութ սերվերային սենյակներում, որոնք չեն համապատասխանում տվյալների կենտրոնների համար նախատեսված ցանկալի չափանիշներին: Անգամ աղետների (օրինակ՝ երկրաշարժի, հրդեհի, ջրհեղեղի կամ կիբերհարձակման) դեպքում տվյալների վերականգնման երկրորդ վայր չկա, չի ընդունվել կամ իրականացվել անվտանգության քաղաքականություն: Նույն կերպ, Հայաստանի դատական շինությունները ուշադրություն են պահանջում՝ արդյունավետորեն նպաստելու ժամանակակից և անկախ դատական համակարգի նպատակին: Ռեսուրսների և համապատասխան



քաղաքականության բացակայության հետևանքով արդյունավետ սպասարկման բացակայությունը և դատարանները ծանրաբեռնելու ընթացիկ միտումը նախկինում վերանորոգված շատ դատարանների շենքերում հանգեցրել են ծանր աշխատանքային պայմանների, ինչը խոչընդոտում է դատական ծառայությունների արդյունավետ մատուցումը:

### ՍՈՍԿԻԱԿՈՆՎԵՐՏԱԿԱՆ ԿՐԻՄԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Բարելավել դատավորների համալրման, գնահատման և կարգապահական պատասխանատվության համակարգը՝ միաժամանակ բարեվարքության բարելավման և անձնակազմի ներգրավման խնդիրները լուծելու համար նվազեցնելով քաղաքական ազդեցության հավանականությունը:
- Ամրապնդել ԱՆ-ի և ԴԴ-ի միջև համագործակցությունը և հստակեցնել դատական ՏՀՏ կառավարման համար պատասխանատվության դաշտը, ամրապնդել ներկա համակարգը մինչև Եվրոպական միության (ԵՄ) կողմից ֆինանսավորվող Էլեկտրոնային արդարադատության համակարգ և աջակցել դատարանների շենքերում ՏՀՏ մեխանիզմների ինտեգրմանը:
- Չարգացնել ֆիզիկական ենթակառուցվածքների ռազմավարական կառավարումը՝ ֆիզիկական և ֆունկցիոնալ գնահատման և տարածքի աուդիտի հիման վրա ենթակառուցվածքների միասնական ռեգիստր ստեղծելու և դատարանների կառուցապատման և վերանորոգման միասնական ստանդարտներ ներդնելու միջոցով:

**Որպես ամփոփում. Հայաստանում իրականացվել են նշանակալի դատական բարեփոխումներ, սակայն անկախության, արդյունավետության և որակի առումներով հիմնախնդիրները դեռևս մնում են:** Համաշխարհային բանկի թիմի եզրակացությամբ այս խնդիրները չեն կարող շտկվել՝ առանց տեխնիկական և ֆինանսական ձեռնարկումների անհապաղ, հիմնավոր և ամբողջական ծրագրի: Վերև առաջարկված

գործողությունները ներկայացնում են բովանդակալից, թերևս բյուջեի տեսանկյունից ընդունելի առաջնահերթ միջամտություններ, որոնք նպաստում են թափանցիկության և հաշվետվողականության պահանջմունքի բավարարմանը՝ միաժամանակ առաջ քաշելով արդյունավետության և որակի տեսանկյունից շոշափելի փոփոխություններ: Դրանք կառուցված են 2022 թվականին ձեռնարկված տեխնիկական «Հայացք ապագային» գնահատման հիման վրա, որը շեշտում է ընթացիկ կատարողականի դժվարությունները և բարելավման ոլորտները: Գնահատումն ուղեկցվում է առաջարկությունների ավելի ընդգրկուն աղյուսակով, ներառյալ քաղաքական և տեխնիկական գործողությունները, որոնք շահագրգիռ կողմերը պետք է հաշվի առնեն արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքում:

**2022-2026 թվականների ռազմավարության իրականացմանն աջակցելու և Հայաստանում դատական համակարգի գործունեության հզորացման համար «Հայացք ապագային» զեկույցի կիզակետում են և՛ քաղաքականություն մշակողներն ու որոշում կայացնողները, և՛ արդարադատության նախարարության ու դատական համակարգի տեխնիկական անձնակազմը:** Փաստաթղթի յոթ գլուխներում (ա) վերանայվում է ոլորտի իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքը, (բ) վերլուծության են ենթարկվում դատական կատարողականի հարցերը, ներառյալ համակարգային անարդյունավետության պատճառները՝ ըստ գործերի տեսակների, դատարանների տեսակների ու գտնվելու վայրի, (գ) ուսումնասիրվում են բյուջետավորման և ֆինանսական կառավարման առկա գործելակերպը և ընթացակարգերը, ինչպես նաև դատական ծախսերի մակարդակների Էվոյուցիան և միտումները, (դ) վերլուծվում է ՄՌ-ի և դատական համակարգի կատարողականի կապը, այն հանգամանքը, թե ինչպես է ՄՌ-ի կառավարումը խոչընդոտում կամ նպաստում դատարանների դատական ծառայությունների մատուցմանը, (ե) ուսումնասիրվում է, թե որքանով են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներկայիս ռեսուրսները, համակարգերն ու գործիքները բավարարում առկա կարիքները, (զ) ուսումնասիրվում են դատական համակարգի ֆիզիկական ենթակառուցվածքը և դրա պահպանման համար անհրաժեշտ ներդրումների կարիքները:



# I. ՆԵՐՎԾՈՒԹՅՈՒՆ

**1. ԳՅ կառավարությունը մտադիր է արագացնել արդարադատության ոլորտի բարեփոխումների գործընթացը:** Կառավարությունը վերջերս ընդունել է Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների նոր` 2022-2026 թթ. ռազմավարությունը: Այն կառուցված է անկախության և անաչառության, արհեստավարժության, արդյունավետության, հաշվետվողականության ու հակակոռուպցիայի, իրավական որոշակիության ու օրենքի արդյունավետ կիրառման իրավաբանական ծառայություններին առնչվող արդարադատության որակի հիմնական սկզբունքների հիման վրա:

**2. Ռազմավարության ամփոփման և դրա իրականացման գործընթացին աջակցելու և ամբողջ Հայաստանում դատական գործունեությունը ամրապնդելու նպատակով սույն փաստաթուղթը (հետայսու «Հայացք ապագային» փաստաթուղթ), գնահատում է ոլորտի վերջին ձեռքբերումները, ընթացիկ կատարողականը, խոչընդոտներն ու բարելավման ուղիները և ներկայացնում է մի շարք առաջարկություններ:** «Հայացք ապագային» փաստաթուղթը նաև պատկերացումներ է տալիս Եվրոպական հանձնաժողովին (ԵՀ)՝ ապագա ծրագրերի կազմման հիմքում դնելով արդեն իսկ ԵՄ 20 թիրախային արդյունքներում առկա օրենքի գերակայությունը:

**3. Սույն «Հայացք ապագային» փաստաթղթի յոթ գլուխները բովանդակում են Հայաստանում դատական գործունեության գնահատումը:** Փաստաթղթի 1-ին և 2-րդ գլուխներում նկարագրվում են ոլորտի իրավական և ինստիտուցիոնալ կառուցվածքը, նախկինում բարեփոխումների ուղղությամբ գործադրված ջանքերը և դրանց արդյունքները, պարտադիր կառավարման և ինստիտուցիոնալ մարտահրավերները, որոնք խոչընդոտում են դատական գործունեությունը և ծառայությունների մատուցումը, ինչպես նաև արդարադատության մատչելիությանն առնչվող հարցերը: Չեկոյցի 3-րդ գլխում վերլուծվում են կատարողականին առնչվող հարցեր, այդ թվում՝ համակարգային անարդյունավետության պատճառները՝ ըստ գործերի և դատարանների տեսակների ու գտնվելու վայրի: Չեկոյցի 4-րդ գլխում ուսումնասիրվում են

բյուջետավորման, գնումների և ֆինանսական կառավարման քաղաքականությունը, առկա գործելակերպերը և ընթացակարգերը: Այնուհետև քննարկվում են դատական ծախսերի մակարդակի և կազմի էվոլյուցիան ու միտումները, ինչպես նաև բյուջետային հատկացումների համեմատական վերլուծություն է կատարվում՝ ըստ դատարանների տեսակների և գտնվելու վայրի: Սույն փաստաթղթի 5-րդ գլուխն անդրադառնում է ՄՌ-ի և դատաիրավական կատարողականի կապերին՝ մասնավորապես կենտրոնաՆալով ՄՌ-ի՝ դատարանների կողմից դատական ծառայությունների մատուցման կառավարմանը նպաստելու կամ խոչընդոտելու վրա: Դիտարկումները ներառում են կադրերի հավաքագրում, մասնագիտական և աշխատավայրում իրականացվող ուսուցում, կատարողականի կառավարում, կարիերայի ուղիներ և առաջխաղացումներ, կադրերի պահպանում, կարգապահական միջոցառումներ և լիազորությունների դադարեցում, կադրային շրջանառություն և պլանավորում: Չեկոյցի 6-րդ գլխում ուսումնասիրվում են տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ռեսուրսները, համակարգերը և գործիքները, ներառյալ այն, թե որքանով է ներկայիս կազմավորումը բավարարում կարիքները, վեր են հանվում բարելավման ենթակա ոլորտները: Փաստաթղթի 7-րդ գլխում ուսումնասիրվում են դատական համակարգի ֆիզիկական ենթակառուցվածքները, այդ թվում այն հարցերը, թե որքանով են դրանք բավարարում կարիքները, և որոնք են բարելավման ենթակա ոլորտները:

**4. «Հայացք ապագային» փաստաթղթի հիմքում ընկած է քանակական և որակական տվյալների համակցությունը, ներառյալ՝ գործերի կառավարման, ֆինանսական և ՄՌ-ի վերաբերյալ տվյալների վիճակագրական վերլուծությունը, ֆոկուս խմբերի քննարկումները, այցելությունները, (վիրտուալ) աշխատաժողովները և հիմնական հարցազրույցները:** Կատարված յուրաքանչյուր գնահատման համար եռանկյունաձև միավորվել են մի քանի աղբյուրներ՝ պատկերը հնարավորինս հստակ և հավաստի ներկայացնելու համար: Կիրառվող մեթոդաբանության վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս հավելված 2-ը:

## II. ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**5. Հայաստանում<sup>3</sup> արդարադատության ոլորտի ղեկավարումը բաշխված է արդարադատության նախարարության (ԱՆ), Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ), ԲԴԽ-ի դատական ղեկարտամենտի (ԴԴ), Դատավորների ընդհանուր ժողովի և այլ հաստատությունների<sup>4</sup> միջև:** Չնայած Հայաստանը հետամուտ է արդարադատության ոլորտի համապարփակ բարեփոխումների եվրոպական չափանիշներին ու լավագույն գործելակերպին, և վերջին տարիներին այս օրակարգով առաջընթաց է գրանցվել, այնուամենայնիվ առկա են հիմնարար խնդիրներ անկախության, արդյունավետության և որակի առումներով<sup>5</sup>: Այս գլխում վերանայվում են ա) Հայաստանի դատական համակարգի ինստիտուցիոնալ և կառավարման շրջանակը, բ) ներկայումս դատական ոլորտում իրականացվող հիմնական բարեփոխումները, գ) հիմնական կառավարման հաստատությունների կարողություններն ու պարտականությունները և իրականացված կառավարման հիմնական ռազմավարությունները, դ) դատական համակարգի կառավարումը բարելավելու հիմնական առաջարկությունները:

**6. Հայաստանն ունի բարեփոխումների հավակնոտ օրակարգ՝ ուղղված ուժեղ և անկախ դատական համակարգի ապահովմանը:** Արդարադատության ոլորտում բարեփոխումները սկսվել են 25 տարի առաջ, արդարադատության առաջին փոքր-ինչ սահմանափակ բարեփոխումների ռազմավարությունն ընդունվել է 2006 թվականին<sup>6</sup>՝ նախքան 2012-2016 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարության շրջանակներում ավելի համապարփակ ու հավակնոտ դատական և իրավական բարեփոխում-

ների օրակարգի ստեղծումը: Հետագա՝ 2019-2023 և 2022-2026 թթ. ռազմավարական ժամանակաշրջանները հիմնված են այս ավելի վաղ ձեռնարկումների վրա: Հայաստանը ձգտում է հետևել արդարադատության ոլորտի համապարփակ բարեփոխումների եվրոպական չափանիշներին և լավագույն փորձին: Երկիրն ստորագրել է ԵՄ-ի հետ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը (ՀԸԳՀ): ՀԸԳՀ-ն Հայաստանի կառավարության 2019 թվականի հնգամյա ծրագրում ճանաչվել է որպես հիմնական բարեփոխումներին նպաստող գործոն, մասնավորապես՝ օրենքի գերակայության և արդարադատության ոլորտում<sup>7</sup>:

**7. Բարեփոխումների առաջընթաց է գրանցվել, այդ թվում՝ օրենսդրական փոփոխությունների և նոր ինստիտուտների ու դատական մասնագիտությունների ներմուծման ուղղությամբ<sup>8</sup>:** 2015 թվականին իրականացված սահմանադրական փոփոխությունների համաձայն՝ 2018 թ. ընդունված «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով<sup>9</sup> ա) ստեղծվեց ԲԴԽ-ն որպես նոր անկախ պետական մարմին՝ երաշխավորելու դատարանների և դատավորների անկախությունը<sup>10</sup>, բ) վերացվեց Դատարանների նախագահների խորհուրդը<sup>11</sup>, գ) փոփոխվեց դատարանների նախագահների կարգավիճակը՝ նրանց վերապահելով զուտ վարչական և արարողակարգային դերեր՝ նպաստելու դատավորների ներքին անկախությանը, դ) նախատեսվեց ԲԴԽ-ի որոշում կայացնելը դատավորներին այլ դատարաններ տեղափոխելու վերաբերյալ միայն տվյալ դատավորների համաձայնությամբ, ե) կատարելագործվեցին դատավորների

<sup>3</sup>Հայաստանը միջինից բարձր եկամուտ ունեցող երկիր է, և մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմում է 4,670 ԱՄՆ դոլար, իսկ համախառն ազգային եկամուտը՝ 14,220 ԱՄՆ դոլար:

<sup>4</sup>Արդարադատության ոլորտի մաս կազմող այլ հաստատություններ են Սահմանադրական դատարանը, գլխավոր դատախազությունը, քննչական մարմինները, նոտարները, հանրային պաշտպանի գրասենյակը: Այս հաստատությունները սույն վերլուծության առարկա չեն և հիշատակվում են միայն այնքանով, որքանով հարկ է լրացնել դատական գործունեության վերլուծությունը:

<sup>5</sup>«Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդման համար» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի տարեկան գործողությունների ծրագրի մասին հանձնաժողովի որոշման 2-րդ հավելված (2017 թվականի գործողությունների տարեկան ծրագիր): [https://ec.europa.eu/neighbourhoodenlargement/sites/default/files/eni\\_2017\\_040664\\_consolidation\\_of\\_the\\_justice\\_system.pdf%22](https://ec.europa.eu/neighbourhoodenlargement/sites/default/files/eni_2017_040664_consolidation_of_the_justice_system.pdf%22)

<sup>6</sup>Այս բարեփոխումներն ուղղորդվում են, համապատասխանաբար, 2006-2009 և 2009-2011 թթ. արդարադատության բարեփոխումների ռազմավարություններով, որոնք պակաս համապարփակ էին իրենց շրջանակով, տե՛ս նաև հղումը՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66236>

<sup>7</sup>Կառավարության ծրագիրը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.gov.am/files/docs/3562.pdf>

<sup>8</sup>Հաշվետվություն 2020 թվականի 1-ին կիսամյակում Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունների ծրագրի առաջընթացի վերաբերյալ՝ <https://www.moj.am/legal/view/article/1347/>: Հաշվետվություն 2020 թվականի 1-ին եռամսյակում նախատեսված գործողությունների պլանի առաջընթացի վերաբերյալ՝ <https://www.moj.am/legal/view/article/1376/>

<sup>9</sup>2018 թվականից ի վեր «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը փոփոխվել է մի քանի անգամ: Անգլերեն վերջին թարմացված տարբերակը հասանելի է հետևյալ հղումով՝ [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF\(2019\)024](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-REF(2019)024)

<sup>10</sup>ԲԴԽ-ն փոխարինեց Արդարադատության խորհրդին, որն իր կազմի և կառուցվածքի պատճառով անկախ չէր իշխանության մյուս ճյուղերից՝ չնայած 2005 թվականի սահմանադրական փոփոխություններով նախատեսված նշանակալի բարեփոխումներին, որոնք այն դարձրել էին ձևականորեն անկախ օրենսդիր և գործադիր թևերից, սակայն թողնելով կախված մեկ անձից՝ Վճռաբեկ դատարանի նախագահից ներքին անկախության մասով:

<sup>11</sup>Դատարանների նախագահների խորհուրդը և Դատավորների ընդհանուր ժողովը դատական իշխանության երկու ինքնակառավարվող մարմիններն էին, որոնք ներդրվել էին նախորդ՝ 2007 թ. Դատական օրենսգրքով: 2018 թ. Դատական օրենսգրքով (74-րդ հոդված) Դատավորների ընդհանուր ժողովը ճանաչվում է որպես դատավորների ինքնակառավարվող մարմին, իսկ 79-րդ հոդվածով ԲԴԽ-ն ճանաչվում է որպես անկախ պետական մարմին, որն իր սահմանադրական և օրենսդրական լիազորությունների միջոցով ապահովում է դատարանների և դատավորների անկախությունը:

նշանակման ընթացակարգերը, ներառյալ դատավորների հավաքագրման ընթացքում կայացված որոշ որոշումներ դատարանում վիճարկելու տարբերակը, գ) ներկայացվեց օրենսդրական հիմք կատարողականի գնահատումների համար<sup>12</sup>:

**8. Այնուամենայնիվ դեռ մնում են անկախության, արդյունավետության և որակի հետ կապված հիմնախնդիրներ<sup>13</sup>:** Դրանք ներառում են համընդհանուր անարդյունավետ կառավարումը, դատական համակարգի լիակատար անկախությանը և անաչառությանը չնպաստող ինստիտուցիոնալ կառուցվածքը և դատավորների չափազանց ծանրաբեռնվածությունը, որը դատական որոշումների որակի առումով ազդեցություն է թողնում արդարադատության արդյունավետության վրա՝ հաճախ հանգեցնելով ձգձգվող դատավարությունների: Մյուս թերություններից են օրենքների միասնական մեկնաբանության բացակայությունը, դատական որոշումների պատշաճ հիմնավորումների բացակայությունը, ինչպես նաև արդարադատության արդյունավետությունը բարելավելու համար պարզեցված կամ արագացված վարույթների և էլեկտրոնային արդարադատության գործիքների անբավարար օգտագործումը: Փաստերի վրա հիմնված արդարադատության բարեփոխումների բացակայությունը, դատական համակարգում անբավարար մշտադիտարկումը և գնահատումը, դատախարակական վիճակագրական տվյալների ոչ պատշաճ հավաքումն ու վերլուծությունը ընդգծում են հետագա բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև բյուջետային մի քանի փուլերում<sup>14</sup> ներդրումներ պահանջող խնդիրների տարեկան պլանավորման անհրաժեշտությունը:

## Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**9. Առաջին մարտահրավերն այն է, որ ռազմավարական քաղաքականության մշակումը դեռևս լիովին չի իրականացվում այնպես, որ հանգեցնի շոշափելի փոփոխությունների:** Առաջարկությունները նպատակ ունեն աջակցել 2022-2026 թթ. դատախարակական բարեփոխումների ռազմավարության արդյունավետ իրականացմանը, ներառյալ՝ ռեսուրսների և ռազմավարական կառավարումը:

**10. Երկրորդ մարտահրավերը վերաբերում է դատախարակական կառավարման կառույցներին, այդ թվում վերջին բարեփոխմանը՝ մասնագիտացված դատարանների ներդրմանը, որոնք չեն կատարում իրենց համար նախատեսված գործառնությունները կարողությունների և թույլ կազմակերպական կառույցների պատճառով:** Առաջարկություններն ուղղված են հաստատությունների զարգացմանը, նրանց դերերին և կարողություններին:

### Մարտահրավեր 1. Ռազմավարության իրականացում

**11. 2019-2023 թթ. դատախարակական բարեփոխումների ռազմավարությունն<sup>15</sup> առանձնացնում էր կոռուպցիան, անկախության, անկողմնակալության և հաշվետվողականության բացակայությունը և անարդյունավետությունը՝ որպես այսօր Հայաստանում արդարադատության ծառայությունների մատուցման առավել մնայուն մարտահրավերներ:** 2018-ին տեղի ունեցած թավշյա հեղափոխությամբ պայմանավորված՝ 2019-2023 թթ. ռազմավարությունն ուղղված էր օրենքի գերակայության կիրառմանը, իրավական անվտանգության հաստատմանը, մարդու իրավունքների պաշտպանության բարելավմանը, օրենքի գերակայության սկզբունքների արդյունավետ կիրառման մեխանիզմների ստեղծմանը և արդարադատության մատչելիության ու որակի բարելավմանը: Ռազմավարությամբ սահմանված նպատակների իրականացումն ապահովելու համար մշակվել էր երեք ծրագիր կարճաժամկետ, միջնաժամկետ գործողությունների և էլեկտրոնային արդարադատության համար:

**12. Այնուամենայնիվ, Հայաստանի ռազմավարական կառավարման թերությունները, անբավարար կարողությունները, հմտությունները և ֆինանսավորումը սահմանափակեցին այդ փաստաթղթի հաջողությունը:** Բարեփոխումների մեծ մասը «սկզբունքային» էր, բայց ոչ «ապացույցների» վրա հիմնված. ծրագրային քաղաքականությունը վարելու և զարգացնելու նպատակով առկա վիճակագրական տվյալների, դատական համակարգի ընդհանուր արդյունավետության ու որակի վերաբերյալ տեղական և միջազգային աղբյուրների տրամադրած գնահատման հաշվետվությունների<sup>16</sup> ու առաջարկությունների անբավարար վերլուծությունը և օգտագործումը նվազեցրին

<sup>12</sup>ԳՐԵԿՈ-ի 84-րդ լիագումար նիստում ընդունված Հայաստանի համապատասխանության երկրորդ գեկույց, չորրորդ գնահատման փուլ (Ստրասբուրգ, դեկտեմբերի 2-6, 2019 թ., հրապարակվել է 2019 թ. դեկտեմբերի 12-ին. <https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680993e83>)

<sup>13</sup>«Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդման համար» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի տարեկան գործողությունների ծրագրի մասին» հանձնաժողովի որոշման 2-րդ հավելված (Գործողությունների տարեկան ծրագիր 2017 թ.): [https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2017-12/eni\\_2017\\_040664\\_consolidation\\_of\\_the\\_justice\\_system.pdf](https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2017-12/eni_2017_040664_consolidation_of_the_justice_system.pdf)

<sup>14</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>15</sup>2019-2023 թթ. ռազմավարությունը նախանշել է համակարգային բարեփոխումներին ուղղված գործողությունների համապարփակ ծրագիր, որը ներառում է էլեկտրոնային արդարադատության համակարգ, դատարանների վարչարարություն և դատական գործերի վարում, ինքնակարգավորվող մարմինների վերակազմավորում, նոր դատարանների ստեղծում, իրավաբանական և մասնագիտական կրթություն, մասնագիտական զարգացում և թիրախային այլ ոլորտներ:

<sup>16</sup>Զեկույցները հասանելի են հետևյալ հղումներով՝ [https://www.moj.am/legal/browse/h\\_reports/](https://www.moj.am/legal/browse/h_reports/), և <https://www.moj.am/storage/uploads/hjk2.pdf>


ծրագրի ազդեցությունը: Օբյեկտիվորեն ստուգելի ցուցանիշների բացակայությունը, բարեփոխումների անարդյունավետ վերահսկողությունը և ռազմավարության ոչ համարժեք ծախսերը հետագայում էլ ավելի խորացան Քովիդ-19 համավարակի և 2020թ. Ադրբեջանի հետ 44-օրյա պատերազմի հետևանքներով: Շահագրգիռ կողմերի սահմանափակ շրջանակը

բարեփոխումների պլանավորման և մշտադիտարկման/գնահատման երկու փուլերում էլ նվազեցրեց հետևողականությունն ու պատասխանատվությունը՝ խոչընդոտելով արդյունավետ համակարգումն ու կառավարումը: Ի վերջո, 2019-2023 թթ. ռազմավարությամբ նախատեսված 94 գործողություններից իրականացվել է մոտ երեք քառորդը կամ 70-ը<sup>17</sup>:

## Ներդրի 1. Տեսակետներ արդարացիության բարեփոխումների ազդեցության վերաբերյալ

Նախկին բարեփոխումների դրական ազդեցությունը արդարադատության համակարգի վրա կարծես դատարանների աշխատակիցների, դատավորների և դատախազների համար շատ ավելի տեսանելի է, քան քաղաքացիների և գործարարների համար: Այդ դրական վերաբերմունքը թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ անցում է կատարվել սկզբունքների վրա հիմնված մոտեցումից ապացույցների վրա հիմնված մոտեցմանը, ինչպես նաև կառավարության՝ գործուն արդարադատության և կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերի շեշտադրումով: Նախորդ բարեփոխումների վերաբերյալ ամենաբացասական կարծիքն ունեն իրավաբանները, որոնց 13 տոկոսը կարծում է, որ բարեփոխումները ճիշտ ուղղությամբ չեն ընթանում, ինչը հավանաբար պայմանավորված է բարեփոխումների իրական արդյունքների բացակայությամբ:

**Հարցախույզի հարցը.** Ինչպե՞ս կգնահատեք վերջին 10 տարիների ընթացքում արդարադատության բարեփոխումների ազդեցությունը ձեր երկրի արդարադատության համակարգի ներկա վիճակի վրա: Չիմքը՝ թիրախային մասնակիցների ընդհանուր թիվը:



**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

Դատավորները, դատախազները, փաստաբաններն ավելի թերահավատորեն են վերաբերվում ընթացիկ բարեփոխումներին: Դա կարող է պայմանավորված լինել հայտարարված դատավորների և դատախազների համընդհանուր վեթինգի գործընթացով (սկզբում դա վերաբերում էր նոր թեկնածուներին, հետագայում տարածվեց նաև գործող դատավորների և դատախազների վրա): Վեներտիկի հանձնաժողովը և Եվրոպական միությունը հավանության են արժանացրել այս մոտեցումը և աջակցություն հայտնել՝ ընդգծելով զգուշավոր և մտածված մեթոդաբանության անհրաժեշտությունը: Ստեղծվել են դատավորների, դատախազների և քննիչների հայտարարագրերի գնահատման մեխանիզմներ և դատավորների, դատախազների ու այլ բարձրաստիճան պաշտոնյաների թեկնածուների բարեվարքության ստուգման ընթացակարգեր:

**Հարցախույզի հարցը.** Մտածելով ձեր երկրում արդարադատության բարեփոխումների ներկայիս գործընթացի մասին՝ կարո՞ղ եք ասել, որ դրանք ճիշտ ուղղությամբ են ընթանում: Չիմքը՝ թիրախային մասնակիցների ընդհանուր թիվը:

<sup>17</sup>Տե՛ս 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարության նախաբանը:

■ Ոչ ■ Հիմնականում Ոչ ■ Զգիտեմ/չի պատասխանել ■ Հիմնականում այո ■ Այո

Քաղաքացիներ	6	7	20	36	31
Տնտեսվարող տուբյեկտներ	6	14	24	42	14
Փաստաբաններ	9	20	21	38	11
Դատավորներ	1	15	25	53	6
Դատախազներ	3	5	23	50	19
Դատ. աշխատ.	5	7	26	43	19

Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**13. Վերջերս ընդունված 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը<sup>18</sup> նպատակ ունի շարունակել և ընդլայնել նախորդ ռազմավարության մեջ ամրագրված ուղղությունը:** Նոր ռազմավարությունում հիմնական ուշադրությունն ուղղված է շահառուների վրա հիմնված համակարգերին, և այն զուգորդված է գործողությունների ծրագրով, որում մանրամասն նշված են ժամանակացույցները, պատասխանատու մարմինները, արդյունքները, չափման ցուցանիշները և ծախսերը<sup>19</sup>: Փաստաթուղթը հիմնված է նախորդ ձեռքբերումների վրա և ներառում է դատական համակարգի հետ կապված հետևյալ նպատակները. ա) բարձրացնել արդարադատության արդյունավետությունը, ներառյալ՝ իրավական պրակտիկայի համախմբվածությունը, իրավական որոշակիությունը և դատական ժամկետների պահպանումը, բ) ապահովել դատավորների մասնագիտացումը և ենթամասնագիտացումը՝ արդարադատության ծառայությունների որակը բարելավելու և գործերի ընդհանուր ծանրաբեռնվածությունը հաղթահարելու համար, գ) բարելավել դատավորների ընտրության գործընթացի օբյեկտիվությունը և վավերականությունը, դ) ապահովել դատավորների աշխատավարձերի շարունակական բարձրացում՝ սկսած ամենաբարձր ատյաններից, ե) շարունակել դատավորների բարեվարքության ստուգումը<sup>20</sup>, զ) բարելավել դատական ենթակառուցվածքները: Նոր ռազմավարությունը շեշտադրում է

անցումային արդարադատության մեխանիզմների անհրաժեշտությունը, որոնք գործիքակազմ կծառայեն 1991-2018 թթ. խախտված մարդու իրավունքների վերականգնման համար, ինչպես նախատեսված էր նախորդ ռազմավարությամբ: Վերջերս Ազգային ժողովն (ԱԺ) ընդունեց «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում դատավորների անհամատեղելիության լրացուցիչ պահանջների սահմանումը:

**14. Ներկա ռազմավարությունը նպատակ ունի բարելավել բարեփոխումների իրականացումն ու մշտադիտարկումը, ներառյալ՝ մշտադիտարկման նոր խորհրդի ստեղծումը:** 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը, ինչպես և դրա նախորդը, արտացոլում են քաղաքացիական հասարակության և միջազգային ինստիտուտների առաջարկությունները և գնահատման տարբեր հաշվետվություններում վեր հանված տվյալները, ինչպես օրինակ՝ ԵՄ արդարադատության մշտադիտարկման ծրագիրը՝ գնահատման ծրագիր<sup>21</sup>, Եվրոպայի խորհրդի՝ դատարաններից օգտվողների բավարարվածության հարցախույզը<sup>22</sup> և այլն: 2022-2026 թթ. ռազմավարությունը նախատեսում է մշտադիտարկման խորհրդի ձևավորումը<sup>23</sup>: Դա կփոխարինի նախորդ Համակարգող խորհրդին (ստեղծված 2019 թ.), որը ոչ կանոնավոր նիստեր էր անցկացնում և երբեք արդյունավետ

<sup>18</sup>Ռազմավարությունն ընդունվել է ՀՀ կառավարության 2022 թ. հունիսի 21-ին N1133-Լ որոշմամբ:  
<sup>19</sup>Ռազմավարության 3-րդ բաժինը ներկայացնում է ծախսերի աղյուսակը, գործողությունները և ժամանակացույցը: Ամբողջ ռազմավարության արժեքը հաշվարկված է 20,717,400,000 ՀՀ դրամ (շուրջ 50,300,000 եվրո):  
<sup>20</sup>Ներդրվել է դատավորների գույքի հայտարարագրերի ստուգում, սակայն դատավորների ամբողջական բարեվարքության ընդհանուր մեկնագամյա ստուգման/վերաբացահայտման արմատական առաջարկը (որը ընկալվել է 2018 թվականից) մերժվել է:  
<sup>21</sup>Հղումը հասանելի է՝ <https://prwb.am/2018/03/31/justice-monitoring-project-report/>  
<sup>22</sup>Չեկոյցը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.coe.int/en/web/cdcj/-/analysis-of-the-results-of-court-users-satisfaction-survey-of-all-courts-of-all-instances-of-armenia>  
<sup>23</sup>խորհրդի անդամների թվում են վարչապետը կամ վարչապետի գրասենյակի ներկայացուցիչը, արդարադատության նախարարը, արդարադատության նախարարի տեղակալը, գլխավոր դատախազը կամ գլխավոր դատախազության ներկայացուցիչը (համաձայնությամբ), ԲԴԿ նախագահը կամ անդամը (համաձայնությամբ), ԴԴ ղեկավարը (համաձայնությամբ), Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարը (համաձայնությամբ), ընկալման կոմիտեի ղեկավարը կամ տեղակալը (համաձայնությամբ), միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչը, Ազգային ժողովի պետաիրավական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը կամ անդամը (համաձայնությամբ), Արդարադատության ակադեմիայի ղեկավարը (համաձայնությամբ), Փաստաբանների պալատի ներկայացուցիչը (համաձայնությամբ), մեկական ներկայացուցիչ գիտական և պրոֆեսորադասախոսական կազմից (Հայաստանում շատ ուսանողներ ունեցող իրավաբանական ֆակուլտետներից), Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների երկու ներկայացուցիչ:

գործող մարմին չի եղել: Մշտադիտարկման խորհրդում կընդգրկվեն վարչապետը, կառավարության այլ օղակները, համալսարանի ներկայացուցիչներ և քաղաքացիական հասարակությունը: Ստեղծվելուց հետո մշտադիտարկման խորհուրդը կհաստատի ռազմավարության իրականացման մշտադիտարկման և գնահատման ուղեցույցները և իրավասու կլինի ստեղծելու աշխատանքային խմբեր ռազմավարության առանձին մասերի իրականացումը համակարգելու համար:

**15. Պետք է դիտարկել, թե ինչպես նոր ռազմավարության շրջանակներում կլուծվեն դրա իրականացման ավելի վաղ բացահայտված մարտահրավերները:** Մշտադիտարկման խորհրդի պարտականությունները, ինչպես և նրա նախորդի պարտականությունները, լայնորեն սահմանված են: Խորհուրդը կարող է առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը ռազմավարության և գործողությունների ծրագրերի փոփոխությունների վերաբերյալ, խորհրդատվական կարծիքներ տրամադրել պետական մարմիններին որոշակի գործողությունների իրականացման գործընթացի, կարգավիճակի և անհրաժեշտ քայլերի վերաբերյալ և կարող է նախաձեռնել հասարակական կարծիքի հարցումներ թիրախային տարբեր խմբերում: Մշտադիտարկման խորհուրդը կառավարություն և ներկայացնում կիսամյակային և տարեկան հաշ-

վետվություններ: Հաջողության կարևոր տարրերն են տվյալների հավաքումը և վերլուծությունը՝ որպես ռազմավարական և գործառնական պլանավորման գործառնությունների մաս, որը հնարավորություն կտա դատական իշխանության ղեկավարությանը վերահսկելու և կառավարելու աշխատանքը, պահանջելու անհրաժեշտ ռեսուրսներ տեղում կատարողականը խթանելու համար և որոշելու առաջնահերթ, օգտատերերին միտված մոտեցում որդեգրած ոլորտները:


**16. ՀՀ ԱՆ-ն մշտադիտարկման խորհրդին կապահովի քարտուղարությամբ տեխնիկական, փորձագիտական և վարչական աջակցության համար, սակայն դա կապահանջի կարողությունների բարելավում արդյունավետություն ապահովելու համար:** Համապատասխան պետական մարմինները ԱՆ-ին կտրամադրեն տարեկան հաշվետվություններ ռազմավարության իրականացման վիճակի մասին՝ ԱՆ-ի կայքում հրապարակելու համար: ԱՆ-ի հատուկ նշանակված ստորաբաժանումը կգնահատի և կվերահսկի ռազմավարության իրականացումը՝ համաձայն ուղեցույցների և կզեկուցի մշտադիտարկման խորհրդին: Քարտուղարության անհրաժեշտ կլինի համապատասխան վերապատրաստում անցած բավարար թվով անձնակազմ՝ արդյունավետ վերահսկելու, գնահատելու և ապահովելու բարեփոխումների իրականացման բարձրորակ գործընթաց:

## ՆԵՐՈՒՐ 2. ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Դատական իշխանության և լրատվամիջոցների միջև կապը, ինչպես երևում է, թույլ է: Ոչ պաշտոնական տվյալները ցույց են տալիս, որ դատավորները լրատվամիջոցներն ընկալում են որպես դատական համակարգի անկախությունը վտանգող գործոն: ԲԴԽ-ն և Դատավորների ընդհանուր ժողովը հաղորդակցման բավարար կարողություններ չունեն ՉԼՄ-ների հետ ակտիվ աշխատելու, դատական համակարգի դերի ու բարեփոխումների մասին հանրության իրազեկությունը բարելավելու համար: «Իրազեկ քաղաքացիների միավորում» ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունը 2021թ. մայիսին գործարկել է հարթակ (*reforms.am*)՝ հանրությանը իրազեկելու ընթացիկ բարեփոխումների մասին: Դրա ազդեցությունը դատաիրավական բարեփոխումների մասին հասարակության տեղեկացվածության վրա կերևա ապագայում:

**Հարցախույզի հարցը. Հայաստանում լրատվամիջոցները, ընդհանուր առմամբ, դատարանների/դատական համակարգի ի՞նչ պատկեր են ստեղծում:**

Հիմքը՝ թիրախային մասնակիցների ընդհանուր թիվը:



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

\* Այստեղ այն քաղաքացիներն են, որոնք վերջին երեք տարիների ընթացքում առնչվել են դատական գործերին և առաջին ատյանի վճիռներին:

**17. Միաժամանակ ԱՆ-ն թերի է համալրված կադրերով իր հիմնական գործառույթը՝ քաղաքականության մշակման և դատաիրավական բարեփոխումների ռազմավարության իրականացման պարտականությունը կատարելու համար:** 2021թ. նոյեմբերի տվյալներով ԱՆ-ն ուներ 266 լրիվ դրույքով աշխատակից, որոնք բաշխված էին տասնյակ ոլորտների և ստորաբաժանումների միջև, այդ թվում՝ քրեակատարողական, պրոբացիայի, անձնական տվյալների պաշտպանու-

թյան և հակակոռուպցիոն, իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության պետական գրանցման, իրավական փաստաթղթերի փորձաքննության, միջազգային իրավական աջակցության և դատական ակտերի կատարման ոլորտներում քաղաքականության մշակմամբ զբաղվող աշխատակիցները<sup>24</sup>: Արդարադատության նախարարությունը նաև նոտարների վերահսկողության գործառույթներ է իրականացնում Յայաստանում:

### ՆԵՐՂԻՐ 3. ՄՐԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆ-ն արդարադատության ոլորտում բարեփոխումների քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև դրանց մշտադիտարկման և գնահատման համար պատասխանատու հիմնական մարմինն է: Ռազմավարության պատշաճ իրականացումն ապահովելու համար ԱՆ-ն ստեղծում է մշտադիտարկման խորհուրդ, նշանակում է քարտուղարություն, հավաքում և հրապարակում է աշխատանքների կատարման հաշվետվությունները և իրականացնում է այլ հիմնական գործողություններ: ԱՆ-ն պատասխանատու է նոր կամ փոփոխվող օրենքների և իրավական ակտերի նախաձեռնման/մշակման համար, որն աշխատատար գործընթաց է և պահանջում է տեխնիկական թիմ: ԱՆ-ն օգտագործում է տարբեր ներքին վարչությունների և ստորաբաժանումների ռեսուրսները և անհրաժեշտության դեպքում ներգրավում է արտաքին փորձագետներին: ԱՆ-ն ստեղծել է *Օրենսդրության զարգացման կենտրոնը*՝ որպես օրենսդրական նախագծերի մշակման առաջատար կենտրոն, որը սկզբնական փուլում ֆինանսավորվում էր ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից, իսկ այժմ՝ հիմնականում պետական բյուջեից: ԱՆ-ի կազմակերպական կառուցվածքը զետեղված է հավելված 3-ում:

10

**18. Քանի որ շեշտն առավելապես դրվում է ռազմավարության իրականացման վրա, թերի են մնում ծախսերի ռազմավարությունը կամ բարեփոխումների ջանքերին հատկացված բավարար բյուջեն:** Ավելին, հիմնական շահագրգիռ կողմերը (այսինքն՝ ԱՆ-ն և ԲԴԽ/ԴԴ-ն) դեռ պետք է իրականացնեն բարեփոխումների արդյունավետ մշտադիտարկում: Յադրողակցման նախաձեռնությունների շարունակական բացակայությունը և դրա հետ կապված բարեփոխումների միջոցառումների մասին անբավարար տեղեկացվածությունը, ինչպես արդարադատության ոլորտի հանրության, այնպես էլ լայն հասարակության շրջանում, վտանգում է բարեփոխումների իրականացումը և ստեղծում բարեփոխումների արագության և շրջանակի անիրատեսական մեծ ակնկալիքների վտանգ: Շահագրգիռ կողմերի միջև ուժեղացված համակարգումը և ազդեցության կանոնավոր գնահատումները կօգնեն պարզելու, թե տեղերում ինչն է (կամ չի) հանգեցնում փոփոխությունների:

**19. Սահմանադրության փոփոխությունները, այդ թվում ընտրական համակարգի փոփոխությունները**

**և ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը դիտարկվում են առանձին գործընթացով:** Այդ նպատակով ստեղծվել են Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը և Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, որոնք աշխատում են սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի մշակման ուղղությամբ<sup>25</sup>:

**Մարտահրավեր 2. Դատական համակարգի կառավարման ինստիտուտների հզորացում**

**20. Կառավարման հիմնական ինստիտուտները կարողությունների և կառուցվածքային թերությունների պատճառով չեն կարողանում կատարել իրենց վերապահված դերերը:** Բարեփոխումների հավակնոտ օրակարգը, որն արտացոլված է 2019-2023թթ. և 2022-2026թթ. ռազմավարություններում, ընդգծում է ավելի լայն պլանավորման/կառավարման, վիճակագրության/մշտադիտարկումների, բյուջեի/ֆինանսական, մարդկային ռեսուրսների, ՏՀՏ-ի և կապիտալ ներդրումների փորձաքննության անհրաժեշտությունը ԲԴԽ-ի, ԴԴ-ի և ԱՆ-ի ենթակայության տակ գտնվող կառավարման հիմնական ինստիտուտներում:

<sup>24</sup>Դատական ակտերի կատարումը ՀՀ-ում իրականացնում է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, որը ԱՆ ենթակայության պետական կառույց է: 2022-2026 թթ. ռազմավարությունը բարձրացնում է այդ համակարգը վերանայելու հարցը՝ աշխատանքի մեծ ծավալը հաջող իրականացնելու, ծառայության արդյունավետությունը բարձրացնելու, համապատասխան վճարման մեխանիզմներ ներդնելու տեսանկյունից:

<sup>25</sup>Վարչապետի 2022 թ. հունվարի 17-ի N111-Ա որոշմամբ ստեղծվել են Սահմանադրական բարեփոխումների խորհուրդը և դրա կանոնակարգը: Վարչապետի 2022 թ. մարտի 29-ի 315-Ա որոշմամբ ստեղծվել է Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովը, որին հանձնարարված է մշակել բարեփոխումների հայեցակարգը և սահմանադրական փոփոխությունների նախագիծը:



**21. ԲԴԽ-ի կազմը և նշանակումների գործընթացը կարող են բավարար չափով չերաշխավորել իշխանությունների հավասարակշռությունը և տարանջատումը:** ԲԴԽ-ն բաղկացած է 10 անդամից, որոնք ընտրվում են 5 տարի ժամկետով՝ առանց հաջորդաբար վերընտրվելու իրավունքի: Հինգ անդամները դատավորներ են բոլոր ատյանների դատարաններից՝ ընտրված Դատավորների ընդհանուր ժողովի կողմից, մյուս հինգ անդամները դատավոր չեն և նշանակված են ԱԺ-ի կողմից, առանց այլ շահագրգիռ

կողմերի մասնակցության, մի գործընթացում, որում բացակայում է թափանցիկությունը: ԱՆ-ն այս խնդրին անդրադառնալու համար Դատական օրենսգրքում փոփոխությունների նախագիծ էր մշակել<sup>26</sup> (այն ողջունեց Վենետիկի հանձնաժողովը)<sup>27</sup>, որը, սակայն, չընդունվեց: ԲԴԽ-ի դատավոր անդամներին չի թույլատրվում լինել և՛ դատարանի նախագահ, և՛ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահ: ԲԴԽ-ի դատավոր անդամների լիազորությունների յուրաքանչյուր կասեցում կարգավորվում է Դատական օրենսգրքով:

## ՆԵՐՈՒՐ 4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՂԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ԲԴԽ-ն, Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն, դատավորներ նշանակող կենտրոնական մարմինն է (տե՛ս մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ գլուխը): Այն ստեղծվել է 2018 թ. սկզբին որպես անկախ պետական մարմին դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելու համար: ԲԴԽ-ն փոխարինեց Արդարադատության խորհրդին, որն իր կազմի և կառուցվածքի պատճառով անկախ չէր իշխանության այլ ճյուղերից՝ չնայած 2005 թվականի սահմանադրական փոփոխությամբ իրականացված էական բարեփոխումներին: ԲԴԽ-ն կառավարում է դատարանները, առաջարկում է դատական բյուջեն և կարգավորում դատավորների աշխատանքը՝ դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն: Նրա լիազորությունները ներառում են կարգապահական պատասխանատվության կիրառումը դատավորների և ԲԴԽ-ի անդամների նկատմամբ Դատական օրենսգրքով ամրագրված վարքականոսների խախտման համար:

Դատարանների մակարդակով դատարանների գործունեության համար պատասխանատու են դատարանների նախագահները: Դատարանի նախագահը վերահսկում է դատարանի աշխատակազմի աշխատանքը, որոշում է վարչական հարցերը, շփվում է ԲԴԽ-ի հետ և համագործակցում այլ համապատասխան կառույցների հետ: Դատարանների նախագահները օգտակար տեղեկություններ են տրամադրում ԲԴԽ-ին դատարանների գործունեության վերահսկման ընթացքում: Դատարանների ամենօրյա աշխատանքները կառավարելուց բացի, դատարանների նախագահները շարունակում են աշխատել որպես դատավոր, սակայն դատական օրենսգրքի 45-րդ հոդվածի համաձայն՝ նվազ ծանրաբեռնվածությամբ<sup>28</sup>: Առանձին դատարաններում դատական գործերը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը տարբեր կերպ են կառավարվում Հայաստանում:

**22. ԲԴԽ-ն պատասխանատու է դատավորների ընտրության և տեղափոխության համար, սակայն անփոխարինելիության հարցում նրա գործելակերպը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին:** ԲԴԽ-ի՝ դատավորների հեռացման և տեղափոխման գործելակերպին թերևս բնորոշ չէ թափանցիկությունը և հրապարակայնությունը: Վենետիկի հանձնաժողովը պաշտպանում է սահմանադրություններում անփոխարինելիության սկզբունքը. դատավորի կամքին հակառակ տեղափոխումները կարող են

թույլատրելի լինել միայն բացառիկ դեպքերում<sup>29</sup> իսկ «վերադաս դատարան տեղափոխումը հնարավոր է մրցույթի արդյունքների հիման վրա»<sup>30</sup> :

**23. 2015թ. սահմանադրական բարեփոխումներով արվեցին փոփոխություններ, որոնք սահմանափակում են դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետը՝ խթանելով այս դերի ռոտացիան:** Դատարանների նախագահները գործող դատավորներ են (նվազեցված աշխատանքային ծանրաբեռնվածությամբ՝ համաձայն Դատական օրենսգր-

<sup>28</sup>Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահները 25 տոկոսով ավելի քիչ գործեր են ստանում, քան այդ դատարանների սովորական դատավորները, բացառությամբ Երևանի առաջին ատյանի դատարանի, որտեղ դատարանի նախագահը 35 տոկոսով ավելի քիչ գործեր է ստանում, քան այդ դատարանի սովորական դատավորները: Մասնագիտացված դատարանների նախագահները ստանում են 30 տոկոսով ավելի քիչ գործեր, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահները՝ 50 տոկոսով, Վճռաբեկ դատարանի նախագահը՝ 60 տոկոսով ավելի քիչ գործեր, քան այդ դատարանների սովորական դատավորները:

<sup>29</sup>CDL-AD(2010)004

<sup>30</sup>CDL-AD(2015)008, «Ուկրաինայի դատական համակարգի և դատավորների կարգավիճակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ նախնական կարծիք, § 68:

քի 45-րդ հոդվածի), որոնք պատասխանատու են դատարանների գործունեության համար: Նրանք վերահսկում են դատարանների աշխատակազմի աշխատանքը, որոշում են վարչական հարցեր, համագործակցում են համապատասխան հաստատությունների հետ և տեղեկություններ են տրամադրում ԲԴԽ-ին դատարանների կատարողականի մշտադիտարկման վերաբերյալ: Սակայն տարբեր դատարանների նախագահների՝ գործերի վարման և աշխատանքային ծանրաբեռնվածությունը տարբեր է Հայաստանում<sup>31</sup>: 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետների սահմանափակումներ են մտցրել: Նախկինում շատերն այդ դերը կատարում էին մինչև կենսաթոշակի տարիքին հասնելը՝ նվազեցնելով նույն դատարանի այլ դատավորների համար այդ պաշտոնին հավակնելու հնարավորությունները և վտանգելով ներքին անկախությունը: Նոր կանոնակարգը նախատեսում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների պաշտոնավարման սահմանափակ ժամկետ՝ երեք տարի՝ առանց անմիջապես ժամկետի ավարտից հետո վերանշանակվելու իրավունքի: Վճռաբեկ դատարանի նախագահի պաշտոնավարման ժամկետը սահմանափակվում է վեց տարով՝ առանց վերանշանակման իրավունքի<sup>32</sup>:

**24. ԲԴԽ-ին է վերապահված նաև կարգապահական վարույթի իրավասությունը՝ ապահովելու դատական անկախությունը և կանխելու արտաքին ազդեցությունը:** 2020 թ. ի վեր իրավական բարեփոխումների փաթեթով երեք լիազոր մարմիններ կարող են դատավորների նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ. ա) Դատավորների ընդհանուր ժու

րովի էթիկայի և կարգապահական հանձնաժողովը (ԷԿՅ), բ) ՀՀ արդարադատության նախարարությունը և գ) **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ)**՝ չնայած դատավորների ֆինանսական հայտարարագրերին առնչվող սահմանափակ հիմքերին<sup>33</sup>: Անհատների կողմից կարգապահական վարույթ հարուցելու դիմումները գտվում են կա՛մ արդարադատության նախարարի, կա՛մ ԷԿՅ-ի կողմից: Վարույթ է հարուցվում միայն ողջամիտ հիմքերի առկայության դեպքում:

**25. Այնուամենայնիվ ԷԿՀ-ի կազմը չի համապատասխանում եվրոպական չափանիշներին:** ԷԿՀ-ի անդամների մեծ մասը դատավորներ են, ինչը չի համապատասխանում Վենետիկի հանձնաժողովի չափանիշներին, քանի որ դա հղի է դատավորների կորպորատիվ շահերը պաշտպանելու վտանգով<sup>34</sup>: Բացի այդ, ընդունված գործելակերպ չէ գործադիր իշխանությանը թույլ տալ կարգապահական վարույթ հարուցել դատավորի նկատմամբ: Ներհատուկ վտանգ կա, որ արդարադատության նախարարը կարող է քաղաքական դրդապատճառներով կարգապահական վարույթներ հարուցել՝ խարխուլելով դատական անկախության հիմնական սկզբունքները և հնարավոր ազդեցություն ունենալով դատավորների որոշումների վրա<sup>35</sup>:

**26. Բարեվարքությունը խթանելու նպատակով 2020թ. ներմուծվեց դատավորների և ԲԴԽ-ի անդամների բարեվարքության ստուգումներ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (ԿԿՀ) կողմից՝ փոփոխություններ կատարելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում, «Դատախազության մասին» օրենքում և Դատական օրենսգրքում<sup>36</sup>:** Բարեվարքության ստուգումների արդյունքներն

<sup>31</sup>Կատարողականի չափման և կառավարման վերաբերյալ գլուխ 4-ում վերլուծվում են դատական գործերը և աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ ըստ դատարանների, գործերի տեսակների, առանձին դատավորների և բացահայտվում են տարբերությունները Հայաստանի դատարանների ցանցում: Վերլուծությունը ցույց է տալիս, որ տարբեր դատարաններ կարծես ավելի լավ են գործում, քան մյուսները՝ հաղթահարելով գործերի և աշխատանքի ծանրաբեռնվածությունը և երևան հանելով դատական ցանցի ներսում առկա «առաջատար գործելակերպը»:

<sup>32</sup>Սահմանադրության 166-րդ հոդված:

<sup>33</sup>2020 թվականից դատական օրենսգրքի փոփոխված 142-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատավորը կարող է պատասխանատվության ենթարկվել «նյութական կամ դատավարական իրավունքի դրույթները խախտելու» կամ «դատավորների վարքագծի կանոնները խախտելու համար»: Նախատեսվում է նաև, որ դատավորը կարող է պատասխանատվության ենթարկվել միայն այն դեպքերում, երբ արարելները կատարվել են դիտավորյալ կամ «կոպիտ անփութությամբ»: Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածը պարզաբանում է, թե որ պատժամիջոցները կարող են կիրառվել՝ սկսած նախազգուշացումից մինչև «եական կարգապահական խախտման» դեպքում դատավորին աշխատանքից ազատելը: Վերջին հասկացությունը բացատրված է Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 6-րդ մասում:

<sup>34</sup>«Ե՛վ էթիկայի հանձնաժողովը, և՛ կարգապահական հանձնաժողովը կարծես կազմված են բացառապես դատավորներից: Սա կարող է տպավորություն ստեղծել, որ կարգապահական պատասխանատվության հարցը դատական կորպորացիայի շրջանակներում որոշում են մարմիններ, որոնք արտաքին տարրեր և կապեր չունեն ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կամ ավելի լայն իրավական համայնքի հետ»: CDL-AD(2016)013, Կարծիք՝ Ղազախստանի Հանրապետության դատական էթիկայի օրենսգրքի նախագծի վերաբերյալ, § 32: Տե՛ս նաև CDL-AD(2015)045, Միջանկյալ կարծիք Ալբանիայի դատական իշխանության սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, § 76:

<sup>35</sup>Դատական խորհուրդների վրա գործադիր ճյուղի կամ կարգապահական գործառնություններով օժտված այլ արտաքին դերակատարների ցանկացած վերահսկողությունից պետք է խուսափել: CDL-AD(2016)025, հաստատված միասնական կարծիք Դրոզստանի Հանրապետության Սահմանադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի վերաբերյալ, § 76: Տե՛ս նաև CDL-AD(2015)045, Ալբանիայի դատական համակարգի սահմանադրական փոփոխությունների մասին միջանկյալ կարծիք, § 70, 71 և 73: Ավելին, «Այսպիսով, դրական քայլ է, որ Բարձրագույն խորհուրդը լինելու է միակ մարմինը՝ օժտված դատավորների դեմ կարգապահական վարույթներ հարուցելու իրավասությամբ, քանզի սա կտա առավել երաշխիքներ, քան կարգապահական վարույթներ հարուցող հոգևակի մարմինների դեպքում», CDL-AD(2014)032, Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և օրենքի գերակայության տնօրինության համատեղ կարծիք Վրաստանի «Ընդհանուր դատարանների դատավորների կարգապահական պատասխանատվության և վարույթների մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ, § 15:

ամփոփվում և ներկայացվում են որպես ԲԴԽ-ին ներկայացվող խորհրդատվական կարծիք, սակայն բացասական կարծիքը չի բացառում դատավորի նշանակումը<sup>37</sup>: 2021 թ. ընթացքում ԿԿԶ-ն իրականացրել է դատավորների 56,4 տոկոսի գույքի հայտարարագրերի ստուգումներ (130 գործող դատավորների, ԲԴԽ-ի 9 անդամների և Սահմանադրական դատարանի 9 անդամների և դատավորների ընտանիքների շուրջ 450 անդամների)<sup>38</sup>: ԿԿԶ-ն կարգապահական վարույթ է հարուցել ԲԴԽ-ի անդամ երեք դատավորի նկատմամբ, և մեկ միջնորդություն է ուղարկվել գլխավոր դատախազություն քրեական գործ հարուցելու համար:

**27. ԲԴԽ-ի ամենօրյա գործունեության համար ԴԴ-ն ապահովում է օժանդակություն, այնուամենայնիվ որոշ ոլորտներում առկա է կադրային փորձի պակաս:** ԴԴ-ն դատական համակարգին ապահովում է ամենօրյա գործառնական և նյութատեխնիկական աջակցություն, ինչպես նաև իրականացնում է դատական վիճակագրության և հաշվետվությունների հավաքում, վարում և հրապարակում, ընդհանուր տարեկան դատական բյուջեի և միջնաժամկետ ծախսերի պլանների մշակում և ԲԴԽ-ին վերապահված այլ խնդիրներ: Այնուամենայնիվ Հայաստանում պակասում են դատական համակարգի և դատական համակարգի ռազմավարական զարգացման համար առանցքային հմտությունները, ներառյալ ռազմավարական պլանավորումը, քաղաքականության վերլուծությունը, կազմակերպչական գնահատումը և կառավարումը, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունները դատարաններին<sup>39</sup>:

**28. Արդյունավետության և որակի հետ կապված հարցերը լուծելու նպատակով Հայաստանը վերջերս ներդրել է մասնագիտացված դատարաններ և մայրաքաղաք Երևանում իրականացրել է դատա-**

**րանների միավորում**<sup>40</sup>: Հայաստանում կան առաջին ատյանի ընդհանուր իրավասության 10 դատարան<sup>41</sup>, երեք վերաքննիչ դատարան, Վճռաբեկ դատարանը և երեք մասնագիտացված դատարան (վարչական, սևանկության (ստեղծված 2019 թ.) և հակակոռուպցիոն (ստեղծված 2022 թ., սակայն դեռևս նոր պետք է գործի)<sup>42</sup>: Սա արտացոլում է 2018 թ. ընդունված Դատական օրենսգիրքը և դրան հաջորդած զարգացումները:

**29. Դատարանների մասնագիտացումը դատական հարաճուն գործերին և առավել բարդ օրենքների արձագանքելու եղանակ է, սակայն կարող է նոր վտանգներ առաջացնել:** Դատարանի մասնագիտացումը ավելի ու ավելի հաճախ է քարոզվում, այդ թվում՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի (ԵԴԽԽ)<sup>43</sup> կողմից՝ բարձրացնելու դատարանների արդյունավետությունը, դատավորների փորձառությունը և որոշումների որակը: Դատավորները կարող են մասնագիտանալ, օրինակ, անչափահասների արդարադատության, կիբեռանվտանգության կամ հետախուզության հարցերում, մտավոր սեփականության պաշտպանության հարցերի, քաղաքացիական գործերի, կորպորատիվ գործերի կամ օտարերկրյա արբիտրաժային որոշումների գծով: Այնուամենայնիվ, դատական մասնագիտացումը բնավ էլ միանշանակ չէ և միշտ չէ, որ կարելի է դրա դրական ազդեցությունն ակնկալել<sup>44</sup>: Շատ բան կախված է այն պայմաններից, որոնցում գործում են ընդհանուր և մասնագիտացված դատարանները, ասենք՝ դատավորների ընտրության մեխանիզմները, նրանց աշխատանքի տեխնիկական կողմի աստիճանը, դատարանը կառավարող նյութական և դատավարական իրավական նորմերը, ոլորտում շահերի խմբերի դասավորությունը և թիրախավորված ու համակարգված ուսուցման ապա-

<sup>36</sup>Դրանք ստուգում են. ա) թեկնածուի և նրա ընտանիքի անդամների ունեցվածքը (ներառյալ գույքը, գույքի աղբյուրը, եկամուտը, եկամտի աղբյուրը, ֆինանսական միջոցները և դրանց աղբյուրը), բ) թեկնածուի հնարավոր քրեական, վարչական կամ կարգապահական պատասխանատվությունը և որևէ անչափահաս կոռուպցիոն գործարքների կամ անօրինական գործողությունների հետ, գ) անչափահաս քրեական ենթամշակույթի հետ, դ) հարաբերությունները պետական պաշտոն զբաղեցնող անձի հետ (շահերի հնարավոր բախում), ե) թեկնածուի կրթությունը և աշխատանքային գործունեությունը: Բարեկարգության ստուգումների արդյունքներն ամփոփվում են ԿԿԶ-ի կարծիք/եզրակացության մեջ և ներկայացվում համապատասխան պետական կառույցներին: ԿԿԶ-ի կարծիք/եզրակացությունը խորհրդատվական բնույթ ունի ԲԴԽ-ի և գլխավոր դատախազի համար, որոնք թեկնածուի նշանակման վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասություն ունեն:

<sup>37</sup>Այս գործերը կարող են արժանանալ լրատվամիջոցների ուշադրությանը: Տե՛ս հղումը՝ <https://www.newsinfo.am/arm/article/view/EkgK2XQONY> <https://armenpress.am/arm/news/1027584>

<sup>38</sup>ENI/2020/042-019 Ֆինանսավորման համաձայնագրի երկրորդ տրանշի հատկացման պայմանների իրականացման վերաբերյալ ինքնագնահատման զեկույց:

<sup>39</sup>ԴԴ-ի կառուցապատվերն առկա է հավելված 4-ում:

<sup>40</sup>Երևան քաղաքի տարբեր վայրերում գտնվող վեց առաջին ատյանի դատարանները միավորվեցին մեկ դատարանում:

<sup>41</sup>Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները գտնվում են Հայաստանի 43 աշխարհագրական վայրերում: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս ֆիզիկական ենթակառուցվածքների մասին գլուխ 7-ը:

<sup>42</sup>Երևանում հակակոռուպցիոն դատարան ստեղծվեց 2022 թ.՝ կոռուպցիոն գործերի դատական արձագանքն ուժեղացնելու և բարձր ռիսկային այս գործերում դատավորների խոցելիությունը կանխելու նպատակով: Բացի այդ, հակակոռուպցիոն մասնագիտացումն ապահովվում է վերաքննիչ քրեական, վերաքննիչ քաղաքացիական դատարանների և վճռաբեկ դատարանում մասնագիտացված պալատների ստեղծման միջոցով:

<sup>43</sup>Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Կատարողականի չափման և կառավարման վերաբերյալ 3-րդ գլուխը:

<sup>44</sup>Gramckow H and Walsh B., 2013, Developing Specialized Court Services – International Experience and Lessons Learned, the World Bank, 2013, p. 6-7 (Գրավորվ. Ջ. և Ուոլշ Բ., 2013, Մասնագիտացված դատական ծառայությունների զարգացում. միջազգային փորձ և յուրացված դասեր, Համաշխարհային բանկ, էջ 6-7):

հովումը: Մասնագիտացման մասով առնվազն երկու վտանգ է հնարավոր<sup>45</sup>. ա) ավելի մեծ հավանականություն կա, որ մասնագիտացված դատավորներին գրավեն նեղ շահերը<sup>46</sup>, այդ թվում՝ դատարաններից մի քանի անգամ օգտվողների առավելությունը ստանալը ոչ ֆորմալ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ<sup>47</sup>, և բ) կարող է առաջանալ դատավորների «թունելային տեսլական», քանի որ դատավորները կենտրոնանում են միայն մեկ ոլորտի վրա և տեսադաշտից կորցնում են իրենց ոլորտից դուրս կատարվող իրավական փոփոխությունները<sup>48</sup>:

## Բ. ԵԳՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**30. ՀՀ ԱՆ-ի, ԲԴԽ-ի և ԴԴ-ի մակարդակում կառավարման և ռազմավարական պլանավորման հզորացմանն ուղղված նախկին ջանքերը համարվում են առաջընթացի կարևոր քայլեր:** Հաջորդ քայլը Վենետիկի հանձնաժողովի կարծիքներին համահունչ ընթացիկ բարեփոխումների ջանքերի ուժեղացումն է: Դատական ոլորտի շահագրգիռ կողմերի քննարկման նպատակով արվում է վեց առաջարկություն:

Առաջարկություն 1	ԲԴԽ-ում և ԴԴ-ում հզորացնել վարչական և կառավարման կառույցները՝ աջակցելու 2022-2026 թթ. ռազմավարության իրականացմանը:
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Քննադատել ԲԴԽ-ում և ԴԴ-ում ներկա վարչական և կառավարման կառուցվածքի արդյունավետությունը:</li> <li>■ Քննադատման հիման վրա առաջարկել ԴԴ-ի գործունեության նոր համակարգ՝ առաջադրանքների և պահանջվող հմտությունների մանրամասն նկարագրությամբ:</li> <li>■ Դատական համակարգում ստեղծել մշտական ռազմավարական և արագ պլանավորման գործառույթ՝ տվյալների հավաքման ու վերլուծության, ինչպես նաև գործընթացի բարելավումներ պլանավորելու համար՝ համաձայն ԵԴԽԽ չափանիշի, ըստ որի՝ տվյալների հավաքումն օգտագործվում է արդարադատությունն ավելի լայն համատեքստում գնահատելու համար և կատարվում է դատական իշխանության անկախ հաստատությունում<sup>49</sup>:</li> <li>■ Պատշաճ կերպով համալրել ԴԴ-ի՝ դատարանների գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ տվյալների հավաքման և վերլուծության գործառույթը:</li> <li>■ Մշակել կատարողականի շրջանակ/պարզեցված տեղեկատվական վահանակ՝ կատարողականի հիմնական ցուցիչներով կատարողականությունը մշտադիտարկելու համար, որը, ամենայն հավանականությամբ, կհանգեցնի կատարողականի բարելավմանը:</li> <li>■ Սահմանել բարեփոխումների ավելի փոքր փաթեթ՝ դատարանների քաղաքացիակենտրոն աշխատանքն ընդլայնելու և կարճաժամկետ հեռանկարում տեղերում շոշափելի արդյունքների հասնելու համար: Սահմանել բարեփոխումների այս ենթախմբի համար չափելի նպատակները և վերահսկել ու փաստաթղթավորել արդյունքները՝ կապված հատկապես արդյունավետության և օգտագործողների փորձի հետ:</li> <li>■ Ներդնել ԲԴԽ-ի և դատավորների համագործակցության մեխանիզմներ՝ ԲԴԽ-ին դատարանների մակարդակում առկա մարտահրավերների մասին տեղեկացնելու և լուծումներ գտնելու համար:</li> <li>■ Ստեղծել մշտադիտարկման խորհուրդ և համապատասխան անձնակազմով քարտուղարություն:</li> </ul>

<sup>45</sup>ԵԴԽԽ Կարծիք No 15, Դատավորների մասնագիտացման սահմանների և վտանգների գնահատում, պարբերություն 14-22:  
<sup>46</sup>Կոռուպցիայի բարձր ընկալումը 2012 թ. Մոլդովայում տնտեսական դատարանների վերացման պատճառ դարձավ: Ավելի մանրամասն տե՛ս Մոլդովայի Հանրապետությունում դատավորների մասնագիտացման և վարչական դատարանների ստեղծման նպատակահարմարությունը, Մոլդովայի իրավական ռեսուրսների կենտրոն, 2014:  
<sup>47</sup>L. Baum, “Probing the Effects of Judicial Specialization,” Duke Law Journal (Էլ. Բաում, «Դատական մասնագիտացման ազդեցությունների փորձարկում», «Դյուք» իրավական ամսագիր), 58 (2009), էջ 1667–84):  
<sup>48</sup>R.C. Dreyfuss, Forums of the Future: the Role of Specialized Courts in Resolving Business Disputes, Brooklyn Law Review 61, No.1, 1995, pp. 1-44 (Ռ. Մ. Դրեյֆուս, Ապագայի ֆորումներ. մասնագիտացված դատարանների դերը գործարարության վեճերի լուծման գործում, Բրուքլինի իրավական տեսություն 61, թիվ 1, 1995, էջ 1-44):  
<sup>49</sup>Տե՛ս ԵԴԽԽ Կարծիք No. 6 (2004 թ.):

<p><b>Առաջարկություն 2</b></p>	<p><b>Բարելավել քաղաքականության մշակումը և բարեփոխումների մշտադիտարկումը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Իրականացնել յուրաքանչյուր նախորդ բարեփոխման ազդեցության գնահատում մինչև որևէ նոր բարեփոխում կատարելը՝ ենթադրությունները ճշտելու համար:</li> <li>■ Ներդնել վաղ նախագուշացման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերին տեղեկացնելու բարեփոխումների ծրագրերի ուշացումների մասին:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 3</b></p>	<p><b>Բարձրացնել վստահությունն ու հավատը՝ խթանելով հասարակության և շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը բարեփոխումների և դրանց արդյունքների վերաբերյալ:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Դատական համակարգում անցկացնել տեղեկատվական արշավներ՝ ապահովելու բոլոր դատավորների և դատական անձնակազմի ընկալումն ու ակնկալիքները բարեփոխումներից:</li> <li>■ Կազմակերպել հանրային իրազեկման արշավներ ակնկալիքները կառավարելու համար՝ մեկնաբանելով ընթացիկ և նախատեսվող բարեփոխումները, ներառյալ սպասվող արդյունքները:</li> <li>■ Օգտագործել մի շարք (նվազ ծախսային) մեթոդներ նման տեղեկատվությունը տարածելու համար, ներառյալ առցանց տեղեկատվությունը, պաստառները և դատարաններում տրամադրվող նյութերը:</li> <li>■ Տարեկան հաշվետվություններում զետեղել համակարգի տվյալների ներբեռնվող աղյուսակներ՝ վերլուծաբաններին և հետազոտողներին օգտակար լինելու համար: Վարել էլեկտրոնային փոստերի ցուցակներ՝ առաջընթացի առավել հաճախակի թարմացումների մասին ժամանակին տեղեկացնելու համար:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 4</b></p>	<p><b>Խթանել, Վենետիկի հանձնաժողովի կարծիքին համահունչ, ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների ընտրության գործընթացի բարեվարքությունը և թափանցիկությունը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Փոփոխել առաջադրման գործընթացը՝ ակադեմիական և իրավական մասնագիտական շրջանակների ներգրավվածությունը ապահովելու համար:</li> <li>■ Փոփոխել Դատական օրենսգիրքը՝ ապահովելու ԱԺ-ի կողմից թափանցիկ և արժանիքների վրա հիմնված ընթացակարգով ԲԴԽ ոչ դատավոր անդամների նշանակումը<sup>50</sup>:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 5</b></p>	<p><b>Ուժեղացնել դատական համակարգի կարգապահական կանոններն ու ընթացակարգը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Կարգապահական մարմինների կառուցվածքը, ինչպիսին է ԷԿԳ-ն, համապատասխանեցնել Վենետիկի հանձնաժողովի չափանիշներին (ներկայիս կազմը դատավորների նեղ կորպորատիվ շահերը սպասարկելու վտանգ է ստեղծում):</li> <li>■ Վերջնարդյունքում նվազեցնել ԱՆ-ի դերը կարգապահական վարույթ հարուցելու գործում (համաձայն Վենետիկի հանձնաժողովի կարծիքին):</li> </ul>

<sup>50</sup>Տե՛ս նաև Մարդկային ռեսուրսների մասին գլուխ 6-ը:



Առաջարկություն 6	Ընդունել ռեսուրսների կառավարման և գործառնական պլանավորման գործառնությունների ռազմավարական մոտեցում:
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ընդունել և իրականացնել մարդկային ռեսուրսների ռազմավարություն, որը կներառի խիստ և թափանցիկ մեթոդաբանություն կենտրոնական մակարդակում՝ դատավորների և անձնակազմի անհրաժեշտ թվաքանակը որոշելու համար (ինչպես մանրամասն նկարագրված է Մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ 6-րդ գլխում):</li> <li>■ Բարելավել ՏՀՏ կառավարումը՝ ապահովելու ՏՀՏ բարեփոխումների տնօրինումն ու կայունությունը (ինչպես մանրամասն նկարագրված է ՏՀՏ ռեսուրսների վերաբերյալ 7-րդ գլխում):</li> <li>■ Ընդունել ենթակառուցվածքների ռազմավարություն՝ ապահովելու պատշաճ պահպանում և առաջնահերթ կապիտալ ներդրումներ (ինչպես մանրամասն նկարագրված է ենթակառուցվածքների մասին 8-րդ գլխում):</li> <li>■ Ուժեղացնել բյուջեի կազմման գործընթացը՝ համոզվելու համար, որ բյուջեի առաջարկը պատշաճ կերպով հիմնավորված է ԲԴԽ-ի կողմից և պատշաճ կերպով վերանայվում է ֆինանսների նախարարությունում (ինչպես մանրամասն նկարագրված է բյուջետավորման, ֆինանսական կառավարման և ծախսերի մասին 5-րդ գլխում):</li> </ul>

# III. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ. ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆԸ

**31. Հայաստանում իրականացվող 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը նախանշում է արդարադատության մատչելիությունը՝ որպես բարեփոխումների առաջնահերթություններից մեկը:** Արդարադատության մատչելիությունը ներառում է այն բոլոր քաղաքիչները, որոնք քաղաքացիներին հնարավորություն են տալիս ստանալու իրենց բողոքների բավարարում և ապահովելու իրենց իրավունքների պաշտպանությունը: Այս ռազմավարությունը, ինչպես և նախորդ՝ 2019-2023 թթ. ռազմավարությունը, ներառում է անվճար իրավաբանական օգնության բարելավումը որպես ռազմավարական ուղղություն, սակայն չի ամրագրում արդարադատության մատչելիության բոլոր ասպեկտների ամրապնդմանն ուղղված քաղաքացիակենտրոն կամ համապարփակ մոտեցման անհրաժեշտությունը:

32. Քաղաքացիներից և գործարարության ոլորտի ներկայացուցիչներից շատերը համարում են, որ Հայաստանի արդարադատության համակարգը հասանելի է ֆինանսական, ֆիզիկական և տեղեկատվական հարթություններում, թեև երկրում 100,000 բնակչին բաժին ընկնող դատարանների թիվը ԵՄ միջին թվից ցածր է:


## ՆԵՐՊԻՐ 5. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԸՆԿԱԼՈՒՄ

Քաղաքացիների և տնտեսվարողների մեծ մասը կարծում է, որ Հայաստանի արդարադատության համակարգը հասանելի է բոլոր երեք հարթություններում, իսկ ֆինանսական առումով ամենաքիչ հասանելին է: Հայաստանում դատարանները ֆիզիկապես հասանելի են՝ ըստ ծառայություններից օգտվողների և ընկերությունների մեծամասնության կարծիքի, այնուամենայնիվ նկատվել է սահմանափակ շարժունակությամբ, լսողությամբ կամ տեսողությամբ մարդկանց համար մատչելիության հիմնական հնարավորությունների բացակայություն: Արդարադատության համակարգի մասնագետները, հատկապես՝ դատավորները, ավելի դրական կարծիք ունեն, քան դատարաններից օգտվողները:

**Հարցախույզի հարցը. Որքանո՞վ են ՀԵՏԵՎՅԱԼ հաստատությունները մատչելի բոլոր քաղաքացիների/իրավաբանական անձանց համար: - Դատարանները):**

Չիմքը՝ թիրախային մասնակիցների ընդհանուր թիվը:

■ Բացարձակ անհասանելի ■ Որոշ չափով անհասանելի ■ Չգիտեմ ■ Որոշ չափով հասանելի ■ Ամբողջովին հասանելի



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում, հայաստանյան զեկույց:

## IV. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

**33. Առաջին մարտահրավերը ֆինանսական և ֆիզիկական մատչելիությունն է:** Դատարանների վճարները կարող են չափազանց բարձր լինել, կամ որոշ դեպքերում շինությունները կարող են բավականաչափ

հասանելի չլինել, որպեսզի ապահովեն դատական ծառայություններից օգտվելու հնարավորությունը բոլորի համար: Առաջարկությունները ներառում են դատական վճարների վերանայում՝ նպատակ ունենալով գտնել մատչելիության՝ արդարադատության ծառայությունների հասանելիության ապահովման և

կեղծ հայցերի կանխման «ոսկե միջինը»: Վճռաբեկ դատարանում բողոքներն ընդունելու չափանիշները ևս կարող են վերանայվել՝ սահմանափակելու վերջինիս ծանրաբեռնվածությունը այն գործերով, որոնք օրինականության ապահովման տեսանկյունից եական նշանակություն ունեն և (կամ) նպաստում են իրավական պրակտիկայի զարգացմանը, բայց և այդ չափանիշները չափազանց սահմանափակող չդարձնելով և դրանով իսկ վնաս հասցնելով առանձին դիմումատուներին և ավելի լայն առումով իրավական մշակույթին:

**34. Երկրորդ մարտահրավերը արդարադատության համակարգի վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունն է:** Համացանցում չափազանց քիչ տեղեկատվություն կա, և չափազանց շատ են այն տարբեր տեղերը, որտեղ կարելի է գտնել այդ տեղեկությունները: Հանձնարարականներում առաջարկվում է ընդլայնել դատական ծառայությունների, այդ թվում օրենքների և դատարանների մասին տեղեկատվության հասանելիությունը, որպեսզի վերացվի հանրամատչելի տեղեկատվության և որպես մատչելի ու հասկանալի ընկալվող տեղեկատվության միջև եղած խզումը:


**35. Երրորդ մարտահրավերը իրավաբանական օգնության ընկալումն ու հասանելիությունն է:** Բնակչության շատ ներկայացուցիչներ անվստահ են թվում

իրավաբանական օգնության տրամադրման հարցում: Առաջարկությունները ներառում են իրավաբանական օգնության ծառայությունների որակի բարձրացում ի պատասխան հարաճուն պահանջարկին և սահմանափակ ռեսուրսների առավելագույն օգտագործում:

**36. Զորրորդ մարտահրավերը վեճերի լուծման այլընտրանքային (ՎԱԼ) մեխանիզմների մշակումն է:** Դատարանները բախվում են հարաճուն պահանջարկին և գործերի հարաճուն կուտակումներին: Առաջարկությունները ներառում են ՎԱԼ մեխանիզմների հասանելիության ավելացում, որպեսզի նվազեցվի դատարանների բեռը և դյուրին դառնա ծառայությունների հասանելիությունը:

**Մարտահրավեր 1. Ֆինանսական և ֆիզիկական հասանելիություն**  
 ա) Ֆինանսական հասանելիություն

**37. Հայաստանում արդարադատության մատչելիության ամենամեծ արգելքը բարձր ծախսերն են:** 2021թ. արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցումի արդյունքները ցույց տվեցին, որ դատական ծառայություններից օգտվողների համար արդարադատության մատչելիության ամենամեծ արգելքը դատական ծախսերն են, թեև դատավորները չեն ընդունել արդարադատության հասանելիության ֆինանսական խնդիրները:





**38. Դատական գործերի ծախսերն ավելի բարձր են, քան տարածաշրջանի մյուս երկրներում:** Միջին հաշվով, առաջին ատյանում վարույթի արժեքը Հայաստանում կազմում է 668 եվրո՝ Վրաստանում<sup>51</sup> 225 եվրոյի և Ուկրաինայում<sup>52</sup> 171 եվրոյի համեմատ: Հայաստանում քաղաքացիական դատական գործերի միջին ծախսերը գրեթե երկու անգամ գերազանցում են միջին ամսական աշխատավարձը<sup>53</sup>: Զրեական գործերի միջին ծախսերը կազմում են 1381 եվրո (682 եվրո Վրաստանում և 476 եվրո Ուկրաինայում), իսկ տնտեսվարողների ներկայացուցիչների հետ կապված գործերը՝ 694 եվրո (1396 եվրո Վրաստա-

նում և 910 եվրո Ուկրաինայում)<sup>54</sup>: Դատական գործերից ստացված եկամուտների և ծախսերի այս անհամապատասխանությունն ազդեցություն է ունենում դատարանների մատչելիության վրա և քաղաքացիներին հետ է պահում արդարադատության համակարգին դիմելուց:


**39. Դատարանների հետ կապված ծախսերը Հայաստանում դիտվում են որպես արդարադատության համակարգի մատչելիության լուրջ խոչընդոտ:** Ներկայումս դատարանի հետ կապված ծախսերը կազմում են գործի ընդհանուր արժեքի ավելի քան 40 տոկոսը:

## ՆԵՐՂԻՐ 7. ԶԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՈՍԳԻՆ ԱՏՅԱՆԻ ՎԱՐՈՅԹԻ ԾԱԽՍԵՐԸ

Դատավարությունների փորձ ունեցող քաղաքացիները քաղաքացիական գործերի ծախսերի մեջ ամենաբարձրը համարել են դատական ծախսերը (44 տոկոս), մինչդեռ ջրեական վարույթների դեպքում ամենաբարձր ծախսը վարձված փաստաբանին վճարվող գումարն է, որը կազմում է գործի ընդհանուր արժեքի 61 տոկոսը: Գործարարները նաև եական խոչընդոտ են համարել փաստաբանական ծախսերը:

**Հարցախույզի հարցը. Առաջին ատյանի վարույթում տվյալ գործի ծախսերը ընդհանուր ծախսերի քանի՞ տոկոսին կարելի է վերագրել:**

Հիմքը՝ վերջին երեք տարիների ընթացքում դատական գործերի փորձ ունեցողները և առաջին ատյանի վճիռ ունեցողները:



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկուլց:

**40. Դատական տուրքերի հաշվարկման համակարգը, ինչպես նաև հարկման և գանձման եղանակը սահմանված են «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով:** 2021 թվականին օրենքում կատարված փոփոխու-

թյունները հանգեցրել են առանձին գործերի դատական տուրքերի բարձրացմանը<sup>55</sup>: Ընդհանրապես վճարները հիմնված են հայցի նշված արժեքի վրա, և դատական գործերում այն կկազմի հայցի արժեքի 3

<sup>51</sup>Համաձայն Վրաստանի ազգային վիճակագրական գրասենյակի տվյալների՝ 2021 թ. ամսական միջին աշխատավարձը կազմել է 1,368 GEL, որը մոտավորապես հավասար է 376 եվրոյի: <https://www.geostat.ge/en/modules/categories/39/wages>

<sup>52</sup>Համաձայն ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ ամսական միջին աշխատավարձը Ուկրաինայում 2021 թ. կազմել է 12,337 UAH, որը մոտավորապես կազմում է 380 եվրո: [https://ukrstat.org/en/operativ/menu/menu\\_e/dn.htm](https://ukrstat.org/en/operativ/menu/menu_e/dn.htm)

<sup>53</sup>Համաձայն Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի տվյալների՝ ամսական միջին աշխատավարձը 2021 թ. կազմում էր շուրջ 200,000 AMD, որը մոտավորապես կազմում է 360 եվրո: <https://armstat.am/en/?nid=12&id=08001>

<sup>54</sup>Միջին ընդհանուր ծախսերը, ինչպես ներկայացրել են դատարանների օգտագործողները 2021 թ. արդարադատության տարածաշրջանային հետազոտությունում:

<sup>55</sup>Օրենքը հասանելի է հետևյալ հղումով՝ <http://www.arlis.am>: Դատական տուրքերը բարձրացվել են՝ հիմք ընդունելով 2021 թ. ապրիլի 19-ին ընդունված օրենքում կատարված փոփոխությունները: Վերջին անգամ դատական վճարները վերանայվել են 2000 թվականին, այդ ժամանակվանից մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, միջին նվազագույն աշխատավարձը, սպառողական զամբյուղի արժեքը և այլ տնտեսական ցուցանիշներ 4 անգամ աճել են:

տոկոսը՝ տատանվելով նվազագույնը 6,000 ՀՀ դրամից (մոտ 13 եվրո) մինչև 25,000,000 ՀՀ դրամ (մոտ 53,300 եվրո): Համապատասխանեցման նպատակով 2021 թվականի փոփոխությունները զգալիորեն բարձրացրել են քաղաքացիական դատարան դրամական հայց ներկայացնելու պետական տուրքերը՝ պահանջի գումարի 2 տոկոսից մինչև 3 տոկոս: Պետական տուրք վճարելու պարտավորությունն այժմ վերաբերում է նաև քաղաքացիական դատարաններ վճարման կարգադրություններ տալու համար դիմողներին, մինչդեռ մինչև 2021 թվականը այդ անձինք օրենքով ազատված էին:

**41. Դատական տուրքերը պետք է վճարվեն նախքան հայց ներկայացնելը, ինչը պոտենցիալ խոչընդոտ է դատարան դիմելու համար**<sup>56</sup>: Վճարումը չկատարելը հիմք է դիմումը վերադարձնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դիմողը ազատված է վճարումից: Օգտատերերին դատական տուրքերի մասով օգնելու համար բոլոր դատական կայքերում պետք է հասանելի դարձնել անվճար միասնական առցանց հաշվիչը, ներառյալ որոշակի վճարների վերաբերյալ բացատրությունները, նաև թե ով է վճարողը, հայցվորը, պատասխանողը, թե երկու կողմն էլ:

**42. Քաղաքացիների որոշ կատեգորիաներ օրինականորեն ազատված են պետական տուրքերի վճարումից, սակայն դատական վճարից հրաժարվելու սկզբունքի գործառնումը լավ չի հասկացվում:** «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածը նախատեսում է, որ վարչական կամ քաղաքացիական դատարանները ֆինանսապես անապահով անձանց աջակցելու նպատակով յուրաքանչյուր դեպքի համար կարող են կիրառել պետական տուրքի<sup>57</sup> վճարման որոշ արտոնություններ, ինչպես նաև վճարման չափի նվազեցում կամ վճարման ժամկետի հետաձգում<sup>58</sup>: Վճարներից հրաժարվելու կանոնների կիրառման վերաբերյալ համախմբված

տվյալների բացակայությունը բարդացնում է այդ մեխանիզմի մշտադիտարկումը, գնահատումը և հաշվետվությունը: Որոշ երկրներ ներդրել են հետևելու համակարգ<sup>59</sup>:

**բ) Փաստաբանների մատչելիություն**

**43. Հայաստանում փաստաբաններին վճարվող հոնորարները տարբերվում են «մատչելիից» մինչև «շատ թանկ», այսուհանդերձ դեռ հասանելի չեն ֆինանսապես անապահով անձանց համար:** 2021 թվականի Արդարադատության տարածաշրջանային հետազոտությունը ցույց է տվել, որ քաղաքացիների 71 տոկոսը և ձեռնարկությունների 67 տոկոսը կարծում են, որ փաստաբանները հասանելի են: Այնուամենայնիվ ֆինանսապես անապահով շատ քաղաքացիներ չեն կարող իրենց թույլ տալ նույնիսկ «ամենամատչելի» փաստաբան ունենալ՝ տպավորություն ստեղծելով, որ դատարանները մատչելի չեն ծախսերի պատճառով<sup>60</sup>:

**44. Փաստաբանները, ինչպես դատաիրավական շատ համակարգերում<sup>61</sup>, ազատ են պայմանավորվելու իրենց վարձավճարների համար՝ համաձայնության գալով հաճախորդների հետ, առաջնորդվելով հրապարակված միջին գնացուցակով:** Ի տարբերություն ԵՄ անդամ շատ երկրների<sup>62</sup>՝ Փաստաբանների պալատը Հայաստանում սահմանում է փաստաբանական ծառայությունների միջին գնացուցակ՝ երաշխավորելով վճարների ընդունելի մակարդակ<sup>63</sup>: Վճարները պետք է համապատասխանեն ԵԴԽԽ-ի հայտարարությանը, ըստ որի՝ «փաստաբանների և դատական ծառայողների վարձատրությունը պետք է ամրագրվի այնպես, որ չխրախուսի անհարկի դատավարական քայլերը»: Տարբեր ցուցանիշներ են կիրառվում որոշելու համար վարձատրության չափը, օրինակ՝ գործի բարդությունը: Դատավորներն իրավասու են վերագնահատելու փաստաբանական վճարները և ուղղորդվելու գնացուցակով:


<sup>56</sup>Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդված:  
<sup>57</sup>Քաղաքացիների՝ դատական տուրքերի վճարումից հրաժարվելիս Վճարելի դատարանի որոշումը դատավորների համար ծառայում է որպես համապատասխան նախադեպային իրավունք. /ՎԴ/2654/05/10/  
<sup>58</sup>«Պետական տուրքի մասին» օրենքի 21-րդ հոդված:  
<sup>59</sup>Օրինակ՝ Սերբիայում 2020 թ. մշակվել է Դատական վճարների կենտրոնական դիմում, որը թույլ է տալիս դատական համակարգին հետևել դատական բոլոր վճարումներին և տեղեկատվություն տրամադրել վճարներից հրաժարվելու մասին:  
<sup>60</sup>«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Ազգային ժողովի 05.10.2022 թ. ընդունած օրենքը, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է պետության կողմից մատուցվող անվճար իրավաբանական օգնության, ինչպես նաև փաստաբանների կողմից կամավոր անհատույց իրավաբանական օգնության կառուցակարգերի զարգացմանը:  
<sup>61</sup>Իրավաբանների միությունների և իրավաբանական միությունների համեմատական վերլուծությունը ընտրված եվրոպական իրավական համակարգերում, Համաշխարհային բանկ, 2017 թ.:  
<sup>62</sup>ՎճԵՀ 2012 թ., 2010 թ., տվյալների հիման վրա: Շուրջ 41 կամ ԵՄ անդամ երկրներում վարձատրության վերաբերյալ մասնավոր կողմերն ազատ բանակցում են:  
<sup>63</sup>«Փաստաբանության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մաս. Փաստաբանների պալատն ընդունել է փաստաբանական ծառայությունների գնացուցակը:

## ՆԵՐՂԻՐ 8. ԻՐԱՎԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱԳՈՒԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՎԱՐԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ ՓԱՏԱԲԱՆՆԵՐԻ ՄԱՏԳԵԼԻՈՒԹՅՈՒՆԻՑ (%)

Չնայած օրենքը պահանջում է, որ կողմերը միայն որոշակի գործերով փաստաբան ներկայացնեն, շատ հաճախ նրանք այնուամենայնիվ փաստաբան են վարձում:

**Ֆարցախույզի հարցը. Ո՞վ է Ձեզ ներկայացրել դատարանում:**

Հիմք՝ վերջին երեք տարիների ընթացքում դատական գործերի փորձ ունեցողները և առաջին ատյանի վճիռ ունեցողները:




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

Ծառայություններից օգտվողների մեծամասնությունը՝ և՛ քաղաքացիները, և՛ տնտեսվարողները, գոհ են Հայաստանում փաստաբանների հասանելիությունից: Արդարադատության ոլորտի մասնագետների մեծ մասը նույնպես գոհ է Հայաստանում փաստաբանների մատչելիությունից:

**Ֆարցախույզի հարցը. Որքանո՞վ են փաստաբանները հասանելի բոլոր քաղաքացիների/իրավաբանական անձանց համար:**

Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն:



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**45. Քրեական վարույթների համար պարտադիր պաշտպանություն կա, և ժամանակի ընթացքում պահանջարկն աճում է:** Հանրային պաշտպանի գրասենյակի (ՉԴԳ) հավաքած վիճակագրական տվյալները պարտադիր պաշտպանության վերաբերյալ ցույց են տալիս վերջին 10 տարիների ընթացքում ծառայությունների նկատմամբ պահանջարկի զգալի աճ: 2011-2021 թթ. մուտքագրվող գործերի քանակը աճել է 354 տոկոսով: Ժամանակի ընթացքում աճը կայուն է. պիկերը գրանցվել են 2015-ին և 2021-ին: 2015 թ.

4,600 գործ է ստացվել, որը 25 տոկոսով ավելի է, քան 2014 թ.: 2020 թ. Քովիդ-19-ի հետ կապված սահմանափակումները հանգեցրին դատական ծառայությունների ավելի ցածր պահանջարկի և, հետևաբար, Հանրային պաշտպանի գրասենյակի ծառայության նվազման, սակայն ռեկորդային թվեր գրանցվեցին 2021 թ., երբ արձանագրվեց մուտքագրվող գործերի 42 տոկոսով աճ: Գործերի մեծացող ծավալին զուգահեռ՝ 2022 թ.ՉԴԳ-ում հանրային պաշտպանների թիվը 10-ով ավելացել է:

## ՆԵՐՊԻՐ 9. ՊԱՐՏԱԴԻՐ ՂԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Պարտադիր կարգով պաշտպանությունը կանոնակարգվում է քրեական դատավարության օրենսգրքով: Օրենսգրքի 43-րդ, 45-րդ, 46-րդ և 47-րդ հոդվածները կարգավորում են քրեական գործերով պաշտպանությունը և սահմանում, որ քրեական պաշտպանությունը պարտադիր է ձեռքարկվելիս (ձեռքարկվածան որոշումը հանձնելու պահից), ձեռքարկվածան որոշումը հանձնված չլինելու դեպքում՝ ազատությունից փաստացի զրկվելուց հետո 6 (վեց) և ավելի ժամ լրանալուց հետո կամ անձին մեղադրանք ներկայացնելու դեպքում: Պաշտպանությունը պարտադիր է նաև այն դեպքերում, երբ մեղադրյալը ղեկավարանում է ինքնուրույն իրականացնել իր պաշտպանության իրավունքը ֆիզիկական, մտավոր կամ այլ առողջական խնդիր ունենալու պատճառով, չի տիրապետում կամ բավարար չափով չի տիրապետում վարույթի լեզվին, երբ մեղադրյալը ենթադրյալ հանցագործություն կատարելու պահին եղել է անչափահաս, նաև այն դեպքում, երբ մեղադրյալը, ի թիվս այլոց, ժամկետային գինձառայող է:

Բացի այդ, քրեական դատավարության օրենսգրքը կարգավորում է մեղադրյալի պարտադիր պաշտպանության իրավունքի ժամանակահատվածը: Պարտադիր պաշտպանություն է պահանջվում մինչդատական վարույթի փուլում, առաջին ատյանի, վերաքննիչ, Վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև Սահմանադրական դատարանում:

Պաշտպանությունը տրամադրվում է ՀԳԳ-ի միջոցով: Հանրային պաշտպան են հանդիսանում այն փաստաբանները, որոնց հետ Փաստաբանների պալատի նախագահը մրցութային ընտրության արդյունքների հիման վրա աշխատանքային պայմանագիր է կնքում<sup>64, 65</sup>:

**46. ՀԳԳ-ն ստեղծել է պարտադիր դատական պաշտպանության մշտադիտարկման և հսկողության մեխանիզմ ծառայությունների արդյունավետ և որակյալ առաջխաղացման համար:** «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ ՀԳԳ-ի գործունեության նկատմամբ վերահսկողությունն ապահովում է Փաստաբանների պալատի նախագահը: Քանի որ օրենքը սահմանում է, որ հանրային պաշտպանների կողմից տրամադրվող իրավաբանական օգնության որակը և ժամկետները վերահսկում է Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարը, գործում է էլեկտրոնային տեղեկատվական համակարգ յուրաքանչյուր հանրային պաշտպանի գործունեության գնահատումն իրականացնելու համար: Կատարողականի գնահատման մեջ ցածր միավորներ ստացած հանրային պաշտպանների հետ պայմանագիրը չի երկարաձգվում<sup>66</sup>: Բացի կատարողականի գնահատումից, առկա է նաև պաշտպանների նկատմամբ կարգապահական վարույթներ հարուցելու մեխանիզմ, քանի որ նրանք պարտավոր են հետևել նույն չափանիշներին և էթիկայի կանոններին, ինչ մասնավոր փաստաբանները: Հանրային պաշտպանի նկատմամբ կարգապահական վարույթը, օրենքի համաձայն, կանոններ

ով և ընթացակարգերի կոպիտ խախտման դեպքում վերջին միջոցն է: Նույն վերահսկողական մեխանիզմը գործում է անվճար իրավաբանական օգնության դեպքում:

**47. Որակի վերահսկման անուղղակի, հազվադեպ օգտագործվող մեխանիզմը, որ ներառված է «Փաստաբանության մասին» օրենքում, ՀԳԳ-ին և Փաստաբանների պալատի ղեկավարին բողոք ներկայացնելու իրավունքն է:** Այնուամենայնիվ, մեղադրյալները չեն ցանկանում նախաձեռնել նշանակված հանրային պաշտպանի փոխարինման ընթացակարգը՝ հաշվի առնելով նրանց սահմանափակ թվաքանակը և Նոր հանրային պաշտպան նշանակելու համար երկար սպասելու հավանականությունը:

### գ) Ֆիզիկական հասանելիություն

**48. Ֆիզիկապես դատարանների շենքեր մուտք գործելը կարող է ղեկավար լինել գյուղական բնակավայրերի քաղաքացիների համար:** Առաջին ատյանի դատարանների նստավայրերը հիմնականում գտնվում են քաղաքային վայրերում, ուստի գյուղական վայրերում ապրող քաղաքացիների մեծ մասը ստիպված է ճանապարհ կտրել դատարաններ հասնելու համար:

<sup>64</sup>«Փաստաբանության մասին» օրենքի 44-րդ հոդված:

<sup>65</sup>Հանրային պաշտպանները հավաքագրվում են Փաստաբանների պալատի կազմակերպած մրցույթի միջոցով: Մրցույթի մասին տեղեկատվությունը հրապարակված է [advocates.am](https://advocates.am) կայքում: Ստեղծվում է հինգ անդամից բաղկացած հանձնաժողով, ի պաշտոնե անդամներ են պալատի նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահը) և ՀԳԳ-ի ղեկավարը, մյուս երեք անդամներին նշանակում է Փաստաբանների պալատի նախագահը: Մրցույթն անցնում է երկու փուլով՝ գրավոր և բանավոր: Գրավոր փուլն անցած թեկնածուները հրավիրվում են հարցազրույցի: ՀԳԳ-ի ղեկավարը կամ ընտրող հանձնաժողովի ղեկավարը կազմում և թեկնածուների ցուցակը ներկայացնում է Փաստաբանների պալատի նախագահին, որն այնուհետև նշանակում է հանրային պաշտպանի թեկնածուներին: Փաստաբանների պալատի նախագահի կողմից հանրային պաշտպանների նշանակումը կարգավորող հրամանը տե՛ս հետևյալ հղումով: [https://advocates.am/images/nakhagahi\\_voroshummer/2021/KARG\\_HPG\\_mrcuyti-15.01.2014\\_INCORP\\_16.11.21.pdf](https://advocates.am/images/nakhagahi_voroshummer/2021/KARG_HPG_mrcuyti-15.01.2014_INCORP_16.11.21.pdf)

<sup>66</sup>Հանրային պաշտպանի պայմանագրերը վերանայվում են ամեն տարի: Հանրային պաշտպանների մոտ 10 տոկոսը չի բավարարում կատարողականի գնահատմանը:

Ըստ ԱՎԵՅ-ի՝ 2018 թ. Հայաստանում 100,000 բնակչի հաշվով առաջին ատյանի դատարանների թիվը մեկ միավորի չէր հասնում (0,6), ինչը զգալիորեն ցածր է Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի միջին թվաքանակից՝ 1,89<sup>67</sup>: Վերաքննիչ և վճռաբեկ դատարանները գտնվում են Երևանում: Այնուամենայնիվ արդարադատության հասանելիության աշխարհագրական խոչընդոտները հայերի մեծ մասի համար Էական մտահոգություն չեն: Համապատասխանաբար քաղաքացիների և տնտեսվարողների ներկայացուցիչների մոտ 66 տոկոսը դատարանի շենքի հեռավորությունը խնդիր չի համարում: Բացի դատարանների շենքերի գտնվելու վայրից, Հայաստանում դեռևս առկա են դատարանների կամ վարչական շենքերի համար ոչ բավարար տարածքի կամ այլ պետական մարմինների գտնվելու վայրից ոչ պատշաճ տարանջատման, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց դատարաններ մուտք գործելու հետ կապված խնդիրներ: Կան դատարանների շենքեր, որոնցում բացակայում են անհրաժեշտ նվազագույն պայմանները՝ դատական նիստերի համապատասխան դահլիճները, բաց և փակ գոտիներ ունենալու հնարավորությունները և այլն<sup>68</sup>:

**49. Քանի որ ինտերնետի մատչելիությունը բարելավվում է, դատական շենքերի ցանցի հետագա ընդ-**

**լայնման անհրաժեշտություն կարող է չառաջանալ:** Հեշտացված առցանց գործընթացների զարգացման շնորհիվ կարելի է մի շարք դատական ծառայություններ անմիջականորեն հասցնել օգտվողներին: Արդարադատության ծառայությունների ֆիզիկական հասանելիությունը բարելավելու հետագա ջանքերը կարող են, թերևս մասամբ, իրականացվել առցանց կառուցակարգերի միջոցով, ինչպես օրինակ՝ փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելը:

**դ) Հասանելիության հավասարություն խոցելի խմբերի համար**

**50. Արդարադատության համակարգի անհավասար վերաբերմունքի մասին ընկալումներ կան հատկապես քաղաքացիների և տնտեսվարողների շրջանում:** Քաղաքացիների վիճակագրորեն նշանակալի փոքրամասնությունը համարում է, որ դատական համակարգը մի շարք գործոնների հետևանքով հավասարապես հասանելի չէ բոլոր քաղաքացիների համար: Ըստ հարցման մասնակիցների՝ քաղաքացիների նկատմամբ անհավասար վերաբերմունքն առաջին հերթին պայմանավորված է տնտեսական կարգավիճակով, որին հաջորդում են քաղաքական, կուսակցական պատկանելությունը և հաշմանդամությունը (տե՛ս ներդիր 10):



<sup>67</sup>Եվրոպական դատական համակարգեր: Արդարադատության արդյունավետություն և որակ: ԱՎԵՅ 2018 թ. հրատ.:  
<sup>68</sup>Հետագա մանրամասների համար տե՛ս գլուխ 8-ը ֆիզիկական ենթակառուցվածքների վերաբերյալ:




**51. Բիզնես սեկտորի ներկայացուցիչները նույնպես կարծում են, որ անհամապատասխան վերաբերմունք կա:** Բիզնես հատվածի ներկայացուցիչների 33 տոկոսը կարծում է, որ վերաբերմունքը տնտեսական ձեռնարկություններին կախված է ձեռնարկության չա-

փից, իսկ 28 տոկոսը կարծում է, որ վերաբերմունքը տատանվում է ըստ սեփականության կառուցվածքի, մինչդեռ 38 տոկոսը եզրակացրել է, որ դա կախված է ընկերության գործունեության տեսակից (տե՛ս ներդիր 11):

## ՆԵՐԴՐԻ 11. ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ԿԱՐԾԻՔԸ ՀԱՎԱՍԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

**Չարցախույզի հարցը. Ձեր կարծիքով՝ արդյոք Չայաստանում դատական համակարգը հավասար վերաբերմունք է դրսևորում բոլոր քաղաքացիների/տնտեսվարողների նկատմամբ:**

Յիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն:



*Աղբյուրը՝* Չամաշխարհային բանկ, 2021թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**52. Ի հակադրություն, դատավորների, դատախազների և փաստաբանների մեծամասնությունը համարում է, որ քաղաքացիների նկատմամբ չկա անհամապատասխան վերաբերմունք:** Դատավորների միայն մեկ տոկոսը և դատախազների 9 տոկոսն են համարում կուսակցական անդամակցությունը որպես անհավասար վերաբերմունքի հավանական հիմք, մինչդեռ յուրաքանչյուր հինգերորդ փաստաբանը կարծում է, որ անհավասար վերաբերմունք գոյություն ունի՝ ելնելով տնտեսական կարգավիճակից, կուսակցության անդամակցությունից կամ սեռական կողմնորոշումից:

## Մարտահրավեր 2. Տեղեկատվության մատչելիություն

**53. Զաղաքացիները և տնտեսվարողների ներկայացուցիչները կարծում են, որ մատչելի չէ արդարադատության համակարգին վերաբերող տեղեկատվությունը, ներառյալ հասանելիությունը օրենքներին:** Մարդիկ նշում են, որ չգիտեն, թե որտեղ գտնել կանոնակարգեր և չունեն գործածական տեղեկատվություն իրենց իրավունքների կամ իրենց պաշտպանության ընթացակարգերի վերաբերյալ, թեև դատական գործերի անմիջական փորձ ունեցողներն ավելի դրական են արձագանքում տվյալ տեղեկատվության հասանելիությանը:


## ՆԵՐԴՐԻ 12. �ՄՂԱՔԱԳԻՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐ. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՂԲՅՈՒՆԵՐ (%)

Ե՛վ քաղաքացիները, և՛ տնտեսվարողները հայտնել են, որ իրենց կոնկրետ դեպքում ավելի շատ են բավարարված տեղեկատվության հասանելիությունից, քան ընդհանուր առմամբ: Զաղաքացիներն իրենց գործերի մասին տեղեկություններ փնտրելիս օգտվել են տեղեկատվության մի քանի աղբյուրներից, առավել հաճախ՝ փաստաբանից: Գործարարների մեծամասնությունը պնդում է, որ իրենք օգտագործում են տեղեկատվության «այլ աղբյուրներ» կոնկրետ գործի վերաբերյալ և դա համարում են նաև ամենահարմարը: Տնտեսվարողներն ոչ մի ներկայացուցիչ չի դիմում և միայն փոքրաթիվ քաղաքացիներ են դիմում դատարանին առնչվող ծառայություններին՝ որպես գործերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար օգտագործվող աղբյուրների: Այն մի քանի դեպքերում, երբ դրանք օգտագործվում են, քաղաքացիները հիմնականում գոհ են, բացառությամբ գրասենյակների և տեղեկագրերի կամ հուշաթերթիկների: Բայց և այնպես դատարանի հետ կապված այս ծառայություններից ոչ մեկը հարմար չի համարվում:

**Հարցախույզի հարցը. Որքանով է հասանելի դատական համակարգը Հայաստանի քաղաքացիներին... / Որքանով էր Ձեզ կամ Ձեր օրինական ներկայացուցչին հասանելի գործընթացի ընթացքի և պահանջների վերաբերյալ ընդհանուր տեղեկատվությունը (լսումների ժամանակը, վայրը և այլն):**

Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն. վերջին երեք տարիների ընթացքում դատական գործերի փորձ ունեցողները և առաջին ատյանի վճիռ ունեցողները:


■ Բացարձակ անհասանելի ■ Որոշ չափով հասանելի ■ Զգիտեմ ■ Որոշ չափով հասանելի ■ Հասանելի



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**Հարցախույզի հարցը. Տեղեկատվության ո՞ր աղբյուրներն եք օգտագործել՝ պարզելու, թե կոնկրետ այս դեպքում ինչ է պետք անել: Որքանով եք բավարարված տեղեկատվության այդ աղբյուրներից. Ձեր կարծիքով, նման վարույթների մասին տեղեկատվության ո՞ր աղբյուրը կլինի ամենահարմարը Ձեզ նման մարդկանց համար:**

Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն. վերջին երեք տարիների ընթացքում դատական գործերի փորձ ունեցողները և առաջին ատյանի վճիռ ունեցողները:



Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**54. Թեև առցանց տեղեկատվության տրամադրման հարցում առկա է առաջընթաց, այնուամենայնիվ բարելավման կարիք կա, որը կավելացնի արդարադատության և՛ հասանելիությունը, և՛ արդյունավետությունը:**

**յունը:** Դատական վարույթների և որոշումների վերաբերյալ լիարժեք տեղեկատվության հասանելիության բացակայությունն ավելի է սահմանափակում քաղաքացիների համար համակարգի կանխատեսելիությամբ:

յունը և նվազեցնում դատական համակարգի հանրային վերահսկողության հնարավորությունները<sup>69</sup>: Առցանց տեղեկատվության տրամադրումը պոտենցիալ օգտատերերին ինքնուրույն հետազոտություններ անցկացնելու հնարավորություն է տալիս, կանխում է դատարանի շեք անհարկի այցելելը և կարող է բարելավել դատական գործընթացների արդյունավետությունը: Տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրները ներառում են հետևյալը (գծապատկեր 1):

- [www.court.am](http://www.court.am) 2018 թվականի Դատական օրենսգիրքը (հոդված 11) և 2018 թվականի Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (հոդված 17) պահանջում են վերջնական դատական ակտերը հրապարակել դատական իշխանության պաշտոնական կայքում՝ [www.court.am](http://www.court.am)<sup>70</sup>: Սա ներառում է համապատասխան կոնտակտային տվյալները (օրինակ՝ հասցեները, հեռախոսահամարները, դատավորների ցուցակը), սակայն, չնայած բոլոր դատարանների միակ միասնական կայքէջին, բացակայում են տարբեր տեսակի դատական հայցերի՝ օգտատերերի համար հարմար նմուշները:
- [www.arlis.am](http://www.arlis.am) Arlis-ը (Հայաստանի իրավական տեղեկատվական համակարգ) հիմնական հասանելի իրավական շտեմարանն է, որը կարգավորվում է ԱՆ-ի որոշմամբ, որտեղ օրենքները ժամանակին թարմացվում են և հասանելի են իրենց ամբողջական և միակցված տարբերակներով<sup>71</sup>: Կայքը ներառում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներն ընդդեմ Հայաստանի, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի որոշումները: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները հասանելի են նաև այդ դատարանում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքում<sup>72</sup>: Սահմանադրական դատարանի որոշումները հասանելի են դատարանի պաշտոնական կայքում<sup>73</sup>: Թեև [www.arlis.am](http://www.arlis.am)-ը լայնորեն օգտագործվում է իրավաբանական համայնքի կողմից, գեկուցվել է, որ համայնքի ոչ անդամներն այն լայնորեն չեն օգտագործում՝ կա՛մ այն պատճառով, որ տեղյակ չեն դրա գոյության մասին, կա՛մ համարում են, որ այն օգտագործողի համար հարմար չէ, քանի որ պահանջում է ծանոթ լինել իրավական մեթոդներին և հետազոտական առանձնահատկություններին:
- [www.e-draft.am](http://www.e-draft.am) Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք, ստեղծվել է 2016 թվականին, հասանելիություն

է ապահովում ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին: Այս կայքը նպատակ ունի բարելավել օրենքների հասանելիությունը, ապահովել հասարակության մասնակցությունը օրենքների և կառավարության նորմատիվ որոշումների ստեղծման, դրանցում համապատասխան փոփոխությունների և/կամ այլ լրացումների կատարման գործընթացին և բարձրացնել թափանցիկությունն ու հաշվետվողականությունը դատական գործընթացներում: Այն հիմնականում ներառում է կառավարության պատրաստած և առաջարկած օրենքների նախագծեր: Կայքն օգտագործող այլ կառույցներից է ԿԿԳ-ն: Կայքում ներառված չեն այլ կառույցների առաջարկած օրենքների նախագծեր: ԱԺ ներկայացված օրինագծերի հրապարակման համար օգտագործվում է առանձին կայք ([www.Parliament.am](http://www.Parliament.am)):

- [www.reforms.am](http://www.reforms.am) 2021 թվականի մայիսին ոչ կառավարական կազմակերպության (ՀԿ) գործարկած այս կայքը փորձում է ապահովել օրենսդրական գործընթացի ընդհանուր պատկերը և հանրությանը տեղեկացնել իրականացվող բարեփոխումների մասին: Չնայած այս անհատական ջանքերին, հանրային իրազեկման բարձրացումը և հանրային քարոզարշավը նախկինում հետևողականություն չեն ունեցել և հաճախ սահմանափակվում են ԱՆ-ի և ՀԿ-ների միջև քննարկումներով:
- **DataLex**-ը Համաշխարհային բանկի կողմից նախկինում ֆինանսավորվող ընդհանուր, ինչպես նաև գործին առնչվող դատական տեղեկատվության բջջային տարբերակով հասանելի վեբ-պորտալ է: Օգտատերերը կարող են ծանոթանալ իրենց գործի ֆայլերին, ստուգել լսումների օրացույցը, տեսնել արձանագրությունները և մուտք գործել որոշումներ՝ որտեղ առկա են հիմնավորումները և վիճակագրությունը: Գործավարության կառավարման համակարգը տրամադրում է տվյալներ: Այնուամենայնիվ, տեղեկատվության հասանելիությունն ու ամբողջականությունը կախված է դատարանի անձնակազմից, քանի որ համապատասխան տեղեկատվությունը հաճախ պետք է ձեռքով մուտքագրել: Օգտատերերը հայտնել են, որ կայքը հաճախ անցանց է, և սնանկության դեպքերի մասին տեղեկատվությունը հաճախ թերի է: Չնայած պորտալի պահպանման տեխնիկական մարտահրավերներին, այն իրավական գործերի վերաբերյալ

<sup>69</sup>ՅՕգուտ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի տարեկան գործողությունների ծրագրի մասին հանձնաժողովի որոշման 1-ին հավելված (մաս 1): Հայաստանում արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցության գործողությունների փաստաթուղթ՝ I փուլ:

<sup>70</sup>Դատական ակտերը հրապարակվում են նաև DataLex կայքում:

<sup>71</sup>ՀՀ ԱՆ որոշում N-180, 2018 մայիսի 7-ից հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145009>

<sup>72</sup>Հղումը՝ <https://echr.am/en/home.html>


<sup>73</sup>Հղումը՝ <https://concourt.am/>



տեղեկատվության համարժեք աղբյուր է, դատարանների օգտատերերի մեծամասնությունը կարող է հեշտությամբ մուտք գործել համապատաս-

խան տեղեկատվության բաժին<sup>74</sup>: Այսուհանդերձ շատերը դեռ նախընտրում են մարդկային միջամտությունը:

**Գծապատկեր 1. Դատական կայքեր և բովանդակություն**



**55. Այս համատեքստում, թեև ավելի լայն շրջանակով և ազդեցությամբ, Վճռաբեկ դատարանի հասանելիությունն է ինչպես քաղաքացիական, այնպես էլ վարչական գործերով:** Դատավարական օրենսդրությունը լրացուցիչ պահանջներ է սահմանել վճռաբեկ բողոքների ընդունելիության համար, քանի որ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը և վարչական դատավարության օրենսգիրքը նշում են, որ ընդունելիությունը կախված է այնպիսի հասկացություններից, ինչպիսիք են «օրենքների միասնական մեկնաբանություն ապահովելու անհրաժեշտությունը» և «մարդու իրավունքների առերևույթ կոպիտ խախտումը»: Վճռաբեկ դատարանը հազվադեպ է ընդունում վճռաբեկ բողոքները, իսկ դրանց մեծ մասը մերժվում է: Հաղորդվում է, որ իրավաբանները հաճախ պնդում են, որ թույլատրելիության չափանիշները Վճռաբեկ դատարանի կողմից մեկնաբանվում են սուբյեկտիվորեն՝ այդպիսով սահմանափակելով/մերժելով քաղաքացիների համար արդարադատության հասանելիությունը:

**56. Պահանջներ և բողոքարկումներ ներկայացնելու ֆորմալ պահանջները պահանջում են բարձր իրավական գրագիտություն, ինչը կարող է խոչընդոտ լինել արդարադատության մատչելիության համար:**

Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է բազմաթիվ ֆորմալ պահանջներ, և դատարանները պետք է վերադարձնեն հայցը կամ բողոքը, եթե այդ ֆորմալ պահանջները չկատարվեն: 2018 թվականի քաղաքացիական դատավարության օրենսգիրքը վատթարացրեց իրավիճակը՝ դատավարական փաստաթղթերում էլ ավելի ֆորմալ պահանջներ մտցնելով, ինչը հանգեցրեց քաղաքացիների և նույնիսկ փաստաբանների կողմից ներկայացված հայցերի զանգվածային վերադարձի: Սահմանադրական դատարանի ներկայիս պրակտիկան ուղղված է հայցադիմումներ և բողոքներ ներկայացնելու պահանջների վերաբերյալ անհարկի դատավարական ձևակերպության վերացմանը: Սահմանադրական դատարանը հաճախ պակաս ֆորմալիստական է մեկնաբանում համապատասխան դատավարական օրենսդրությունը՝ այդպիսով բարձրացնելով քաղաքացիների և տնտեսվարողների համար դատարանների մատչելիությունը:

**Մարտահրավեր 3. Իրավաբանական օգնություն**

**57. Վերջին հինգ տարիների ընթացքում հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունն ավելացել է (տե՛ս գծապատկեր 2), մինչդեռ ռեսուրսների հատկացումները մնացել են կայուն և սահմանափակ:** Իրա-


<sup>74</sup>Հայաստանում բարեվարքության համակարգեր և օրենքի գերակայություն, LER II, ԱՄՆ Մ29-ի կողմից ոլորտային գնահատում - Integrity Systems and Rule of Law in Armenia: Filed Assessment for LER II, USAID, [https://pdf.usaid.gov/pdf\\_docs/PA00TWTC.pdf?fbclid=IwAR1K08Zssylm3lqai8fb4n900KqPfhNY7MsiaeXD-Cw\\_GQcF-koEvDK4ADg](https://pdf.usaid.gov/pdf_docs/PA00TWTC.pdf?fbclid=IwAR1K08Zssylm3lqai8fb4n900KqPfhNY7MsiaeXD-Cw_GQcF-koEvDK4ADg)



վաբանական օգնության ֆինանսավորումը տրամադրվում է պետական բյուջեից և պետք է ապահովվի ՀՊԳ-ի բնականոն գործունեությունը<sup>75</sup>: ՀՊԳ-ն Փաստաբանների պալատի նախագահին է ներկայացնում եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ, ներառյալ գործերի որոշակի տարանջատմամբ վիճակագրություն: Այնուամենայնիվ դեպքերի ծանրաբեռնվածությանն առնչվող տվյալները չեն ազդում բյուջետային հատկացումների վրա,

որոնք մնում են համեմատաբար սահմանափակ՝ Հայաստանում մեկ բնակչի հաշվով 0,23 եվրոյով, օրինակ՝ հարևան Վրաստանի<sup>76</sup> մեկ բնակչի հաշվով 0,46 եվրոյի համեմատ, ինչը խոչընդոտում է իրավաբանական օգնության ծառայությունների որակը և արդյունավետությունը: Ավելին, բացակայում է գործերի բաշխման ավտոմատ համակարգը հանրային պաշտպանների միջև հավասար բաշխումն ապահովելու համար: Փոխարենը գործեր է հատկացնում ՀՊԳ-ի ղեկավարը:

**Գծապատկեր 2. Դատարան մուտքագրվող քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործեր, ՀՊԳ 2011-2021 թթ.**



Աղբյուրը՝ ՀՊԳ:

**Ներդիր 13. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ**

Իրավաբանական օգնության հասանելիությունը քաղաքացիներին երաշխավորված է ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածով և տարբեր միջազգային կոնվենցիաներով, որոնց Հայաստանն անդամակցում է, ներառյալ՝ ԵՄ Հիմնարար իրավունքների խարտիան և ՄԱԿ-ի Քրեական արդարադատության համակարգերում իրավաբանական օգնության հասանելիության սկզբունքները: Իրավաբանական օգնությունը հետագայում ամրագրվել է «Փաստաբանության մասին» օրենքում, որում սահմանվում են սոցիալապես խոցելի խմբերը, որոնց նկատմամբ այն կիրառվում է: Գործարար վեճերում անվճար իրավաբանական օգնություն չի տրամադրվում: Բացի այդ, քրեական դատավարության ընթացքում ձերբակալված անձին և մեղադրյալին տրամադրվում է անվճար իրավաբանական օգնություն՝ անկախ նրա կարգավիճակից, եկամտից և այլ պարամետրերից (ինչպես բացատրվել է ավելի վաղ՝ կապված պարտադիր պաշտպանության հետ): Ավելին, այն քաղաքացիներին, որոնք հանդիսանում են քրեական դատավարության մասնակից և անհատապես փաստաբան չեն վարձել, միշտ առաջարկվում է անվճար իրավաբանական օգնություն: Նախատեսվում է ավելի ընդլայնել անվճար իրավաբանական օգնության շահառուների շրջանակը:

Փաստաբանների պալատի ՀՊԳ-ն խոցելի խմբերի իրավական ներկայացուցչությունն ապահովելու հիմնական մեխանիզմն է: 2022 թ. ՀՊԳ-ն ուներ 59 հանրային պաշտպան, որոնցից 30-ը՝ Երևանում (22-ը

<sup>75</sup>«Փաստաբանության մասին» օրենքի 45-րդ հոդված:  
<sup>76</sup>Տե՛ս CEPEJ գեկույցը Եվրոպական դատական համակարգերի մասին: CEPEJ գնահատման գեկույց – 2020 թ. հիատ. (2018 թ. տվյալներ) - CEPEJ Report on “European judicial systems CEPEJ Evaluation Report – Edition 2020 (2018 data): 2020 Evaluation cycle (2018 data)”, <https://rm.coe.int/evaluation-report-part-1-english/16809fc058> and CEPEJ-STAT Եվրոպական դատական համակարգերի դինամիկ տվյալների բազա Dynamic database of European judicial systems, <https://www.coe.int/web/cepej/dynamic-database-of-european-judicial-systems>.

մասնագիտացած քրեական, 8-ը՝ քաղաքացիական և վարչական իրավունքում<sup>77</sup>: 2021 թ. ՀԴԳ-ն վարել է 10,492 քրեական գործ և 8,800 քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործեր (որոնք կայուն աճել են 2011 թ. առկա ընդամենը 12 գործից): Զաղաքացիները պարտավոր են ՀԴԳ-ին ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր՝ իրենց ընդունելիությունը հաստատելու համար: Թեև ՀԴԳ-ն, ըստ տեղեկությունների, խնդրել է ուղղակի մուտք ունենալ հանրային տվյալների շտեմարաններ և գրանցամատյաններ, սակայն ներկայումս այդպիսի մուտք չի տրվում՝ քաղաքացիներին թողնելով փաստաթղթերը հավաքելն ու ներկայացնելը: Տվյալներ չկան այն մասին, թե իրավաբանական օգնության քանի հայց է ներկայացվել, հաստատվել և ուղարկվել փաստաբանին խորհրդատվության կամ օրինական ներկայացուցչության համար:


**58. Չնայած աճող պահանջարկին, բնակչության միայն 11 տոկոսն է ծանոթ անվճար իրավաբանական օգնության մանրամասներին:** Այնուամենայնիվ շատ դատախազներ և փաստաբաններ պնդում են, որ քա-

ղաքացիները գիտեն անվճար իրավաբանական օգնության ծառայության մասին, մինչդեռ դատավորները հավանաբար են հակառակ եզրակացությանը կամ անտեղյակությանը այս հարցում (տե՛ս ներդիր 14):

## ՆԵՐԴԻՐ 14. ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ԱՆՎՃԱՐ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

**Հարցախույզի հարցը.** Ստորև բերվածներից ո՞րն է լավագույնս նկարագրում Հայաստանում անվճար իրավաբանական օգնության մասին ձեր գիտելիքները (առանց հանրային պաշտպանի և անվճար մասնավոր փաստաբանի):


Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն:



**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

**Հարցախույզի հարցը.** Ձեր կարծիքով, որքանով է անվճար իրավաբանական օգնությունը (առանց հանրային պաշտպանի և անվճար մասնավոր փաստաբանի) հասանելի նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն այս երկրում:

Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն:



**Աղբյուրը՝** Համաշխարհային բանկ, 2021թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

<sup>77</sup>Տե՛ս [https://advocates.am/images/nakhagahi\\_voroshumner/2022/HPG\\_texabashxum\\_2022\\_incorporated.pdf](https://advocates.am/images/nakhagahi_voroshumner/2022/HPG_texabashxum_2022_incorporated.pdf)

**Մարտահրավեր 4. Վեճերի այլընտրանքային լուծում**


**59. ՎԱԼ մեխանիզմները<sup>78</sup> Հայաստանում դեռևս սկզբնական փուլում են, դրանց ազդեցությունը դատավորների գործերի ծանրաբեռնվածության մեղմացման վրա դեռ հետագայում պետք է երևա<sup>79</sup>:** Արբիտրաժը սովորաբար օգտագործվում է պարտատերերի գործերում, մինչդեռ հաշտարարությունն առանձնապես հայտնի չէ, հանրաճանաչ չէ լայն հանրության շրջանում: ՎԱԼ համակարգի բարեփոխումը առաջնահերթություն է ճանաչվել ինչպես կառավարության 2021-2026 թթ. գործողությունների ծրագրում, այնպես էլ 2022-2026 թթ. դատաիրավական բարեփոխումների

ռազմավարության մեջ: Կառավարությունը նպատակ ունի զարգացնել միջնորդական համակարգը և ստեղծել ազգային ու միջազգային մանդատով արբիտրաժային հզոր կենտրոն: Առայժմ Հայաստանում չկա միջնորդների միասնական էլեկտրոնային ռեգիստր, ինչը հնարավորություն չի տալիս ԱՆ-ին վարելու կամ հրապարակելու ակտիվ հաշտարարների, նրանց կարգավիճակի, մասնագիտացման, ծանրաբեռնվածության և այլ համապատասխան տեղեկություններ: Ավելին, «Հաշտարարության մասին» օրենքը հաշտարարների նկատմամբ կարգապահական վարույթի վերաբերյալ որևէ բաժին չի ներառում<sup>80</sup>:

**Ներդիր 15. Արբիտրաժի մասին տեղեկացվածությունը՝ որպես ՎԱԼ**

Արբիտրաժի մասին տեղեկացվածությունը սահմանափակ է, մասնավորապես ընդհանուր բնակչության շրջանում:

**Հարցախույզի հարցը. Արդյոք տեղյակ եք, թե ինչ է իրենից ներկայացնում արբիտրաժային գործընթացը: Հիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն:**



*Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:*

**60. ՎԱԼ-ի վերաբերյալ իրազեկության և հարմարավետության բացակայությունը խոչընդոտում է դրա զարգացումը Հայաստանում:** Արբիտրաժը հիմնականում կիրառվում է առևտրային բանկերի կողմից: Իրականում արբիտրաժային հաստատություններից մի քանիսը ստեղծել են առևտրային բանկերը և հանգեցրել են այն տեսակետին, որ դրանք «գրպանային դատարաններ» են, սպասարկում են բանկե-

րի շահերը: Այս իրավիճակը շտկելու նպատակով իշխանությունները նախատեսում են ազգային մակարդակում ստեղծել ժամանակակից արբիտրաժային հաստատություն, ի թիվս այլ գործերի, նաև առևտրային վեճերի և վիճարկվող փոքր դրամական պահանջները<sup>81</sup> քննելու համար: Արբիտրաժի կիրառման մյուս խոչընդոտը միայն դատարանների կողմից արբիտրաժային վճիռների կատարողական

<sup>78</sup>ՎԱԼ դրույթները հիմնականում ներառված են «Առևտրային արբիտրաժի մասին» օրենքում, որը հիմնված է ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի մոդելային օրենքի, ֆինանսական ծառայությունների սպառողների պաշտպանության ուղղված «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» (օմբուդսմենի) օրենքի և «Հաշտարարության մասին» օրենքի վրա:

<sup>79</sup>Եվրոպական հանձնաժողով, 2017 թ., Հայաստանի դատական համակարգի արդյունավետության վերաբերյալ զեկույց, Իրավունքի գերակայության գործընկերային գնահատման 1-ին առաքելությունը Հայաստանում (JHA IND?EXP 64029), էջ 3, (մարտի 6-10, 2017), [http://moj.am/storage/uploads/001.Final\\_Efficiency- Judiciary\\_Quintavalle-2.pdf](http://moj.am/storage/uploads/001.Final_Efficiency- Judiciary_Quintavalle-2.pdf).

<sup>80</sup>ԱՆ-ն մշակել է «Հաշտարարության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծ, որի նպատակն է բարելավել հաշտարարության համակարգը՝ ներդնելով որակավորման ավելի լավ համակարգ, պարտադիր միջնորդության կանոնակարգ, կարգապահական վարույթ, հաշտարարների ռեգիստր: Օրենքի նախագիծը հավանության է արժանացել կառավարության կողմից, և ակնկալվում է ԱԺ-ում դրա ընդունումը:

<sup>81</sup>Կառավարության ռազմավարությունը նախատեսում է, որ այսօրվա դատական փոքր դրամական պահանջների 30 տոկոսը, որոնք ներկայումս քննվում են արագացված ընթացակարգով և պարզեցված ընթացակարգով, մինչև 2026 թվականը կիրականացվի (Նոր ստեղծվելիք) Արբիտրաժային կենտրոնի կողմից:

թերթ տրամադրելու պահանջն է, որը դատավարության կողմերին պարտադրում է մեկ գործով երկու վարույթ անցնել:

**61. Կառավարությունը նախատեսում է ընտանեկան գործերով դատարան դիմելուց առաջ պարտադիր հաշտարարության ինստիտուտ:** Լիցենզավորված հաշտարարը նշանակվում է համապատասխան ոլորտի հաշտարարների ցանկից (ազգանունների այբբենական կարգով)՝ ըստ լիցենզավորված հաշտարարի մասնագիտացման մակարդակի և ծանրաբեռնվածության: Հաշտարարի մասնագիտացման և ծանրաբեռնվածության մակարդակի որոշման չափանիշներն ու կարգը դեռ պետք է սահմանել:

**62. Հաշտարարությունը քաղաքացիական, ընտանեկան և աշխատանքային վեճերի լուծման տարբերակ է 2017 թվականից, թեև հաշտարարության գործընթացի մասին իրազեկությունը բավականին ցածր է ծառայություններից օգտվողների շրջանում (քաղաքացիների 12 տոկոսը):** Դատավորները

պարտավոր են կողմերին տեղեկացնել հաշտարարության միջոցով վեճը լուծելու հնարավորության մասին, սակայն դա հաճախ մերժվում է որպես իրավական խնդիրների լուծման ոչ պատշաճ եղանակ: Դատավորը կարող է, որպես հաշտարարությունը խթանելու միջոց, անվճար չորս ժամ հաշտարարության ժամանակ տրամադրել, և այդպես ձեռք բերված լուծումները համարվում են պարտադիր դատական վճիռներ:

## Գ. ԵԳՐՎԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՈՍՉԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**63. Հայաստանում արդարադատության մատչելիության ամրապնդմանն ուղղված անցյալի ջանքերը գնահատվում են որպես կարևոր առաջընթաց:** Այնուամենայնիվ հետագա բարեփոխումների անհրաժեշտություն կա բոլոր հարթություններում հասանելիությունը մեծացնելու համար: Ստորև բերված են առաջարկություններ դատական ոլորտի շահագրգիռ կողմերի համար:

Առաջարկություն 1	Վերանայել ընթացիկ դատական վճարները՝ մատչելիությունն ապահովելու համար:
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Նախաձեռնել ընթացիկ դատական վճարների խոր վերլուծություն և վերլուծության արդյունքների հիման վրա փոփոխել «Պետական տուրքի մասին» օրենքը՝ ապահովելու դատական վճարների մատչելիությունը: Տարածաշրջանային գործընկերները և նրանց դատական վճարների համակարգը կարող են որպես ուսումնասիրության մոդելներ ծառայել:</li> <li>■ Ներդնել դատական տուրքերից ազատելու ծրագրի մշտադիտարկման համակարգ: Մշտադիտարկման այս համակարգի միջոցով հավաքված տեղեկատվությունը և տվյալները պետք է վերանայվեն՝ որոշելու ծրագրի արդյունավետությունը և հնարավոր ճշգրտումները:</li> <li>■ Ներկայացնել և հանրության համար հեշտ ու ազատ հասանելի դարձնել առցանց վճարների հաշվիչը: Նման գործիքը, թեև պարզ է և որևէ հավելյալ տեղեկատվություն չի պահանջում, բացի նրանից, ինչն արդեն իսկ առկա է դատական վճարների որոշման համար, կարող է մեծապես նպաստել դատական ընթացակարգերի թափանցիկության բարձրացմանը:</li> </ul>
Առաջարկություն 2	Վերանայել Վճռաբեկ դատարան բողոքների ընդունման ներկայումս գործող չափանիշները:
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Վերանայել Վճռաբեկ դատարան բողոքների ընդունման չափանիշները և տեղեկություններ հավաքել այն մասին, թե դիմողները որ չափանիշներին չեն բավարարում:</li> <li>■ Որոշել մերժման ազդեցությունը անհատական գործերի և ավելի լայն առումով իրավական մշակույթի վրա՝ համեմատած համապատասխան գործերով Վճռաբեկ դատարանի սահմանափակ հասանելիության անհրաժեշտության հետ: Ազդեցության այս ուսումնասիրության հիման վրա կարելի է վերանայել և փոփոխել պահանջների և բողոքների ներկայացման օրենսդրական պահանջները՝ խոչընդոտները վերացնելու համար:</li> </ul>

<p><b>Առաջարկություն 3</b></p>	<p><b>Մեծացնել դատական ծառայությունների, այդ թվում՝ օրենքների և դատարանների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ներկայացնել գործնական ուղեցույցներ և կարևոր կանոնների ու կանոնակարգերի հանրամատչելի բացատրություններ՝ քաղաքացիների և ձեռնարկությունների շրջանում դատական ծառայությունների վերաբերյալ իրազեկությունն ու ըմբռնումը բարձրացնելու համար:</li> <li>■ Նոր օրենսդրություն մշակելիս/հրապարակելիս հետևել փոփոխություններին և առկա օրենսդրության խաչաձև հղումներին՝ օրենսդրական գործընթացում թափանցիկությունը բարձրացնելու և ոլորտներում փոխկապակցվածություն ապահովելու համար:</li> <li>■ Շարունակել կատարելագործել օգտատերերին միտված վեբկայքերը՝ տրամադրելով ընդհանուր տեղեկատվություն, հրապարակված դատական որոշումներ (ներառյալ որոնելի տվյալների բազան) և տեղեկատվություն առանձին գործերի վերաբերյալ:</li> <li>■ Ապահովել ստանդարտ դիմումի ձևաթղթեր տարբեր տեսակի դատական ծառայությունների համար:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 4</b></p>	<p><b>Շարունակել բարելավել իրավաբանական օգնության ծառայությունների որակը՝ ավելացող պահանջարկը բավարարելու համար:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ ՀՊԳ-ում ստեղծել ռեգիստր՝ գրանցելու աշխատանքները, որոնք տարանջատված լինեն ըստ գործերի և իրավաբանական աջակցության տեսակի:</li> <li>■ Ժամանակի ընթացքում հետևել օգտագործողների բավարարվածությանը՝ տարանջատված ըստ գործերի տեսակների, սեռի և տարիքի:</li> <li>■ Պահանջել աշխատանքային ծանրաբեռնվածությունը և դրանք վերանայել ՀՊԳ-ում առկա ռեսուրսների համեմատությամբ՝ որոշելու մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և ժամկետայնությունը:</li> <li>■ Վերանայել բյուջեի հատկացումները և պլանավորումը աշխատանքային ծանրաբեռնվածության և արտադրողականության լույսի ներքո և համապատասխանաբար իրականացնել իրավաբանական օգնության ֆինանսավորման հարմարեցում:</li> <li>■ Կազմակերպել քաղաքացիների իրազեկման արշավ՝ ուղղված հատկապես խոցելի խմբերին:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 5</b></p>	<p><b>Ավելացնել ՎԱԼ կառուցակարգերի հասանելիությունը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ստեղծել արբիտրաժային կենտրոն:</li> <li>■ Ստեղծել և վարել հաշտարարների թարմացված ռեգիստր, որը տեղեկություններ կտրամադրի մասնագիտացման և պաշտոնական գրանցման վերաբերյալ:</li> <li>■ Վիճակագրական տվյալներ հավաքել հաշտարարության գործերի, դրանց տեսակների և վերջնական արդյունքների վերաբերյալ:</li> <li>■ Ներկայացնել հաշտարարների համար էթիկական ուղեցույցներ և հետևել նպատակի համապատասխանությանը՝ նպաստելու հավանական օգտատերերի միջև վստահության ստեղծմանը:</li> <li>■ Չուզահեռաբար պետք է ձեռնարկել լրացուցիչ և նպատակաուղղված իրազեկում՝ բարձրացնելու իմացությունը ՎԱԼ կառուցակարգերի և օգտագործողների համար հնարավոր օգուտների վերաբերյալ:</li> </ul>

## IV. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԻ ԶԱՓՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**64. Վերջին ժամանակաշրջանում Հայաստանում դատարանները գործերի ծանրաբեռնվածության զգալի աճ են գրանցում, և համակարգը պայթաբլում է պահանջարկը բավարարելու ուղղությամբ:** Քիչ դատարանների է հաջողվել հասնել կատարման ցանկալի ցուցանիշների, չնայած այն հանգամանքին, որ գործերի լուծումը հետևողականորեն աճել է: Հետևաբար դատարանները բախվում են քննարկման սպասող գործերի ընդհանուր հարածուն քանակի խնդրին: Դատարանների ներքին և արտաքին օգտագործողները հիմնական խնդիրները համարում են դատավորների և վարչական անձնակազմի անբավարար թվաքանակը, դատարաններում կողմերի առաջացրած խոչընդոտները և օրենսդրական բացթողումները: Այնուամենայնիվ առկա տվյալները վկայում են դատական ծառայությունների պահանջարկի բարձր մակարդակի առաձգականության մասին: Այն դատարանները, որոնք ցույց են տալիս յուրաքանչյուր գործող դատավորի ցածր արտադրողականություն, կարող են զգալ պահանջարկի ցածր մակարդակ մեկ դատավորի հաշվով, մինչդեռ այն դատարանները, որոնք մեկ դատավորի հաշվով ավելի շատ գործեր են ստանում, նաև ավելի շատ գործեր են լուծում: Սա ցույց է տալիս, որ առկա դատավորների գործադրած ջանքերն արձագանքում են պահանջների ճնշմանը (այսինքն՝ դատավորներն աշխատում են ավելի քրտնաջան, ավելի երկար կամ ավելի արդյունավետ՝ ըստ անհրաժեշտության): Այս երևույթի մեկ այլ կողմն այն է, որ հաճախ գործերը կարգադրվում են՝ ելնելով պահանջարկից և փոքր-ինչ չափազանցնելով այն: Չգալի կուտակումներ ունեցող համակարգերում դա ցանկալի չէ, քանի որ գործերի նշանակումները երբեք չեն հասնում այն կետին, երբ արդյունավետ կերպով լուծվում է կուտակումների խնդիրը: Ներկա իրավիճակը հաղթահարելու համար անհրաժեշտ է հաղթահարել բազմաթիվ փոխկապակցված մարտահրավերներ: Այս գլխում ներկայացվում է հայաստանյան դատարանների առօրյա առաջադրանքների կատարման աշխատանքների վերլուծությունը մի քանի հարթություններում. գործերի բեռնվածություն և աշխատանքի ծանրաբեռնվածություն, արտադրողականություն, գործերի ժամանակին քննություն և ընթացակարգային արդյունավետություն:

### Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**65. Առաջին մարտահրավերն այն է, որ դատական ծառայությունների տրամադրումը միշտ չէ, որ լիովին արդյունավետ կամ հաջողված է:** Վարույթների

թիվը հետևողականորեն ավելացել է, բայց ավելացել է նաև դրանց միջին ժամկետը, թեև բոլոր դատարանների համար այն մնացել է մինչև մեկ տարի: Չկա բավարար վիճակագրական հաշվետվություն, և գործերի կառավարման համակարգը դեռ աշխատում է ձեռքով: Քիչ բան է արվում թերակատարումների կամ գերակատարումների մշտադիտարկման մասով: Առաջարկությունները ներառում են ավելի շատ ու ավելի լավ տվյալների և վիճակագրական հաշվետվությունների կազմում՝ գործերի ծանրաբեռնվածությունը վերահսկելու, առաջընթացին հետևելու և քաղաքական որոշումներն ու բարեփոխումները հիմնավորելու համար:

**66. Երկրորդ մարտահրավերը կուտակումների աճն է:** Առկա գործերի քանակը ավելացել է: Եթե պահանջարկը շարունակի աճել, ապա կուտակումներն էլ կաճեն: Առաջարկությունները ներառում են կուտակումների կրճատման պլան (պլանի օրինակը ներկայացված է հավելված 5-ում) համակարգային և առանձին դատարանների մակարդակով սահմանված գործողություններով և գործերը լուծելու միջոցներով՝ ելնելով լուծված և չլուծված գործերի տարիքային կառուցվածքից: Դատավորները և դատական ղեկավարությունը գործի լուծման համար պետք է ունենան հասանելի ժամկետներ, որոնք նրանք կարող են փորձել ողջամտորեն պահպանել:

**67. Երրորդ մարտահրավերը վերաբերում է դատական որոշումների ժամանակին կայացմանը:** Պահանջարկի աճը, որն ուղեկցվում է գործերի լուծման ժամանակի աճով և ավելացող կուտակումներով, վտանգի տակ է դրել դատարանների՝ գործերը ժամանակին լուծելու նպատակը՝ միաժամանակ ցույց տալով սակավ ռեսուրսների անարդյունավետ օգտագործումը: Առաջարկությունները ներառում են համակարգի շրջանակներում ժամկետների վերանայում և մշտադիտարկման բարելավում՝ դատարանների գերազանց որակը և լավ փորձը վեր հանելու համար:

**68. Չորրորդ մարտահրավերն այն է, որ վեճերն ու պահանջները պարզեցնելու և արագացնելու գործող ընթացակարգերը, ըստ երևույթին, առավելագույնի չեն հասցվում:** Գործող ընթացակարգերը կարող են օգտագործվել դատարանների ծանրաբեռնվածության մեծ մասի համար, սակայն պարզ չէ՝ դրանք արդյունավետորեն են կիրառվում, թե ոչ: Առաջարկությունները ներառում են պարզեցված ընթացակարգի, արագացված ընթացակարգի և վճարման

կարգադրությունների ընթացակարգի կիրառման արագ ընդլայնվող շրջանակների ուսումնասիրություն՝ մեծաքանակ գործերի ավելի ժամանակին և առավել արդյունավետ լուծման համար:

**69. Հինգերորդ մարտահրավերը դատավարական խոչընդոտներն են, որոնք խանգարում են գործերի ժամանակին լուծմանը:** Ակնհայտորեն առկա են ընթացակարգային սողանքներ, սակայն շահագրգիռ

կողմերի շրջանում կարծես դրանք բարելավելու քիչ հետաքրքրություն կամ շահագրգռություն կա: Առաջարկությունները ներառում են դատավորների և փաստաբանների խրախուսում՝ վեր հանելու և հաղթահարելու խոչընդոտները, ինչպես նաև վիճակագրական տվյալների օգտագործում՝ բացահայտումները հաստատելու և միջոցները գործնականում փորձարկելու համար (հետադարձ կապ):

## ՆԵՐՊԻՐ 16. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՍՍՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Այս գնահատման համար օգտագործվել են Հայաստանի դատարաններում լավագույն գործերի վիճակագրական տվյալները, որոնք հավաքված են դատական իշխանության պաշտոնական կայքից (հասանելի է <http://court.am/hy/statistic> հղումով), ներառյալ կատարողականի ցուցանիշների հաշվարկման համար, ինչպիսիք են՝ կատարման չափերը և գործերի լուծման ժամանակը: ԱՎԵՀ-ի տվյալները օգտագործվել են տարբեր երկրների համեմատությունների համար, մինչդեռ դատավորների զբաղեցրած պաշտոնների թվերը ձեռք են բերվել ԴԴ-ից:

Վերլուծությունն արտացոլում է լայնորեն ընդունված միջազգային լավ փորձի չափանիշները: Դատարանները և դատական գործերը բաժանվում են ըստ տեսակների, որի շնորհիվ հնարավոր է հիմնավոր պատկերացում կազմել, թե ինչպես են Հայաստանում դատարանները գործում որպես առանձին և որպես ավելի լայն դատական համակարգի տարր: Այնուամենայնիվ, թեև առկա տվյալները համապարփակ են, դրանք մեջ բացակայում են կարևոր տիրույթները, ինչը խոչընդոտում էր մանրամասն վերլուծությունը: Օրինակ՝ վիճակագրական հաշվետվությունները չեն տարանջատում պարզեցված և արագացված ընթացակարգով գործերը, բացի այդ, դեպքերի փաստացի միջին տևողության տվյալներ չկան:

### Մարտահրավեր 1. Բավարարել ավելացող պահանջարկը՝ ապահովելու արդյունավետությունը և արտադրողականությունը

**70. Թեև գործերի բեռնվածությունն արտացոլում է պահանջարկը, կարևոր է հասկանալ, թե որքան արդյունավետ և հաշող են պահանջվող դատական ծառայությունները մատուցվում, և վերացնել յուրաքանչյուր խոչընդոտ:** Սա չափվում է դատարանների արտադրությամբ և արտադրողականությամբ<sup>82</sup> և ժամանակին դատական որոշումներով, այսինքն՝ ինչպես են դատարանները հաղթահարում պահանջարկը, արդյոք ռեսուրսները բաշխվում են հավասարաչափ և արդյոք դատարանները տալիս են նույն մակարդակի արդյունքներ: Այս բաժինը վերլուծում է գործերի ընդհանուր բաշխումները, մեկ դատավորի հաշվով գործերի նշանակման և կատարման տոկոսների ցու-

ցանիշները՝ հնարավորություն տալով օբյեկտիվ համեմատություն անելու նույն տեսակի դատարանների կամ դատարանների տեսակների միջև: Դրանք գործող են, քանի որ կարող են տեղեկացնել քաղաքականության և բարեփոխումների մասին՝ արդյունքները բարելավելու համար:


**71. Դատարանները Հայաստանում բախվում են իրենց ծառայությունների պահանջարկի զգալի աճին:** 2021թ. Հայաստանի դատարանները բոլոր դատական ատյաններում ստացել են 292,262 գործ, ինչը 2017 թվականի համեմատ աճել է 40 տոկոսով: Այս ժամանակահատվածում<sup>83</sup> տարեկան ցուցանիշը խիստ անկայուն է եղել՝ 73 տոկոս տարբերությամբ ամենափոքր թվով գործերով 2018 թվականի և ամենամեծ թվով գործերով 2021 թվականի միջև (122,927 գործի տարբերությամբ, տե՛ս գծապատկեր 3):

<sup>82</sup>Արտադրողականությունը երբեմն սխալ է ընկալվում և շփոթում են արտադրության հետ, բայց կա տարբերություն. արտադրությունը ցույց է տալիս արտադրանքի ծավալը, մինչդեռ արտադրողականությունը դատարաններում առկա ռեսուրսների արդյունքում ստացված արտադրանքն է: Արտադրությունն արտահայտվում է բացարձակ արժեքներով՝ մի շարք լուծված գործերի թվով, մինչդեռ արտադրողականությունը հարաբերական է:

<sup>83</sup>Կրելով ա) թավշյա հեղափոխության ազդեցությունը, որը առաջացրեց հանրային ծառայությունների մատուցման ժամանակավոր խափանում, բ) փոքր հայքերի արագ և մատչելի լուծման պահանջարկը, գ) գլոբալ Զովիդ-19 համավարակի ազդեցությունը և դրա հետ կապված սոցիալական հեռավորության պահանջները, դ) Ադրբեյջանի հետ պատերազմի հետևանքները, որոնք լրջորեն սահմանափակեցին կանոնավոր, ամենօրյա գործունեությունը:



**Գծապատկեր 3. 2017-2021 թթ. Հայաստանում դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակի**



Աղբյուրը՝ court.am.

**ԼԵՐԴԻՐ 17. ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՆՈՒՑԱՐԿԻ ՉՎՓՈՒՄԸ**

Դատարանի կատարողականի գնահատումն էապես կապված է դատական ծառայությունների պահանջարկի հետ, թեև դատարանները պահանջարկի նկատմամբ շատ քիչ վերահսկողություն ունեն, եթե առհասարակ ունեն։ Ավելի մեծ տնտեսական ակտիվություն ունեցող խիտ բնակեցված տարածքների դատարանները, ամենայն հավանականությամբ, ավելի շատ գործեր կքննեն, քան փոքր համայնքներում, բայց, ըստ երևույթին, կունենան ավելի շատ ռեսուրսներ։ Այսպիսով, դատարանների (և ընդհանրապես դատական համակարգերի) օբյեկտիվ համեմատություններն ու գնահատականները հիմնված են հարաբերական արժեքների վրա, ինչպիսիք են պահանջարկը՝ բնակչության թվի համեմատությամբ, գործերի ծանրաբեռնվածությունը և նշանակումները՝ դատավորների թվի համեմատությամբ և արդյունքը՝ պահանջարկի համեմատությամբ։

Դատական ծառայությունների ընդհանուր պահանջարկն այս գեկույցում չափվում է գործերի ծանրաբեռնվածության և աշխատանքային ծանրաբեռնվածության միջոցով։ Գործերի ծանրաբեռնվածությունը սահմանվում է որպես տվյալ տարին մուտքագրված գործերի քանակ, մինչդեռ աշխատանքային ծանրաբեռնվածությունը տվյալ տարին մուտքագրված և առկա գործերի քանակի հանրագումարն է (այսինքն՝ և՛ նոր գործերը, և՛ նախորդ տարվա չլուծված գործերը)։ Գործերի ծավալների աճը վկայում է նոր պահանջարկի մասին, աճող աշխատանքային ծանրաբեռնվածությունը կարող է նաև վկայել դատարանների արտադրողականության անկման մասին։ Համեմայն դեպս, աճող աշխատանքային ծանրաբեռնվածությունը, ի վերջո, հանգեցնում է խցանումների և ավելացող կուտակումների։

Այս գլխում գործերի տեսակները վերլուծվում են առանձին՝ կախված տվյալների առկայությունից։ Դրանք հիմնականում տարանջատվում են որպես քաղաքացիական, քրեական, վարչական և սնանկության գործեր և վճարման կարգադրություններ, որոնք դիտարկվել են 2017-ից մինչև 2021 թվականը։ Հետագա տարանջատումը և ավելի խիստ մոտեցումը միշտ չէ, որ հնարավոր է եղել տվյալների բացակայության պատճառով։




ա) Գործերի ծանրաբեռնվածությունը՝ ըստ դատարանների և գործերի տեսակների

**72. Հայաստանում դատական ծառայությունների ընդհանուր պահանջարկը 2017-2021թթ. աճել է, սակայն տարիների ընթացքում նկատելի են ըստ դատարանների տատանումներ, ընդ որում՝ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանները<sup>84</sup> (այսու-**

**հետ՝ առաջին ատյանի դատարաններ) գերակշռում են մուտքային գործերի ամբողջության մեջ (տե՛ս գծապատկեր 4):** Զաղաքացիական և քրեական վերաքննիչ դատարանները 2017-2021 թթ. ամենամյա աճ են գրանցել, Վճռաբեկ դատարանն ունեցել է համեմատաբար փոքր և կայուն թվով գործեր, իսկ այլ տեսակի դատարաններում պահանջարկը տատանվում էր:

**Գծապատկեր 4. 2017-2021թթ. դատարան մուտքագրված գործերը՝ ըստ դատարանների տեսակի**



Աղբյուրը՝ court.am

**73. Առաջին ատյանի դատարաններում 2017 թվականից ի վեր ընդհանուր գործերով ծանրաբեռնվածությունն աճել է 45 տոկոսով, ինչը արտացոլում է գործերի ծանրաբեռնվածության ընդհանուր միտումը:** Սա նաև ամենակտրուկ աճն էր՝ համեմատած այլ տեսակի դատարանների<sup>85</sup> հետ, 2021թ. առաջին ատյանի դատարանները ստացել են բոլոր գործերի 91 տոկոսը կամ 264,363 գործ: Առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական (ներառյալ վճարման կարգադրությունները (ՎԿ-ներ) և քրեական գործերի ընդհանուր բաշխվածությունը ժամանակի ընթացքում չի փոխվել, սակայն երկուսն էլ հավասարապես աճել են: Պահանջարկի աճին առավել զգալիորեն նպաստել են պայմանագրային/դրամական պարտավորություններին վերաբերող քաղաքացիական գործերը և ՎԿ-ները<sup>86</sup> (գծապատկեր 5): Սա հավանաբար

րաններում քաղաքացիական (ներառյալ վճարման կարգադրությունները (ՎԿ-ներ) և քրեական գործերի ընդհանուր բաշխվածությունը ժամանակի ընթացքում չի փոխվել, սակայն երկուսն էլ հավասարապես աճել են: Պահանջարկի աճին առավել զգալիորեն նպաստել են պայմանագրային/դրամական պարտավորություններին վերաբերող քաղաքացիական գործերը և ՎԿ-ները<sup>86</sup> (գծապատկեր 5): Սա հավանաբար

<sup>84</sup>Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը ստանում է քաղաքացիական և քրեական գործեր: Գործում են նաև առաջին ատյանի գործեր ընկող մասնագիտացված սնանկության դատարանը և վարչական դատարանը: Եթե տեքստը հղում է անում առաջին ատյանի դատարաններին, ապա դա վերաբերում է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին, առաջին ատյանի մյուս դատարանները նշվում են իրենց համապատասխան անվանումներով: Եթե տեքստը հղում է անում առաջին կարգի/մակարդակի դատարաններին, ապա նշվում են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, սնանկության դատարանը և վարչական դատարանը: Հայաստանի դատական համակարգի մանրամասների համար տե՛ս ներածությունը:


<sup>85</sup>Վերաքննիչ քաղաքացիական դատարանը և վերաքննիչ քրեական դատարանը հաջորդում են՝ համապատասխանաբար 31 և 24 տոկոսի աճով:

<sup>86</sup>Փոքր հայցերի և վճարման կարգադրությունների ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ պատկերացումների համար տե՛ս «Հայաստանում դատական գործընթացների արդյունավետության բարձրացումը. պարզեցված ընթացակարգի և վճարման կարգի բարելավման ուղիները՝ բարձրացնելու արդարադատության համակարգի արդյունավետությունը», Համաշխարհային բանկ, հասանելի է հետևյալ հղումով՝ <https://documents1.worldbank.org/curated/en/980031608628888810/pdf/Governance-and-Justice-Enhancing-the-efficiency-of-Court-Processes-in-Armenia-Ways-to-Improve-the-Simplified-Procedure-and-Order-for-Payment-Procedure-for-Better-Justice-System-Performance.pdf>

պայմանավորված է պարզեցված ընթացակարգի ներդրմամբ (տե՛ս ներդիր 18), որը պարտատերերին նոր ընթացակարգային հնարավորություններ է տալիս փոքր պահանջների ավելի արագ և արդյունավետ վարման համար, և պայմանավորված է Քովիդ-19-ի ազդեցությամբ, ներառյալ համաճարակի հետևանքով առաջացած ֆինանսական դժվարությունները,

սոցիալական հեռավորության և էլեկտրոնային արդարադատության ընթացակարգերի սահմանափակումները և սահմանափակ հասանելիությունը՝ ձգձգելով գործերը, որոնք այլապես կներկայացվեին 2020 թ.: 2021 թ. պայմանագրային/դրամական պարտավորությունների հետ կապված գործերն աճել են 63 տոկոսով, ՎԿ-ների մասով՝ 30 տոկոսով:

**Գծապատկեր 5. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների**



Աղբյուրը՝ court.am

**74. Պայմանագրային/դրամական պարտավորությունների և ՎԿ-ների հետ կապված գործերը նաև որոշ առաջին ատյանի դատարաններում գործերի ավելացման հիմնական շարժիչ ուժն էին:** Պայմանագրային/դրամական պարտավորությունների հետ կապված գործերով առաջին ատյանի բոլոր դատարանները, առանց բացառությունների, աճ են արձանագրել 2019 և 2021

թվականներին: 2019-ին ՎԿ-ներով բոլոր դատարանները արձանագրել են գործերի ծանրաբեռնվածության աճ՝ Գեղարքունիքում 3 տոկոսից մինչև Տավուշում 36 տոկոս: 2021 թ. Արագածոտնի, Սյունիքի և Տավուշի դատարանները միակն են, որոնց ՎԿ-ների գործերով զբաղվածությունը կրճատվել է, համապատասխանաբար, 3 տոկոսով, 31 տոկոսով և 45 տոկոսով:

**ՆԵՐԴՐԻ 18. ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ՓՈՔԻ ՀԱՅՅԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԱԴՐՈՒՅՈՒՆՆԵՐԸ**

Հայաստանում փոքր հայցերն առնչվում են երկու տեսակի ընթացակարգերի:

**Պարզեցված ընթացակարգ՝** ցածր արժեքով գործերը կարգավորող առանձին ընթացակարգային կանոնների շարք (նվազագույն ամսական աշխատավարձի 2000-ապատիկի չափից ցածր\*, մոտ 3800 եվրո), որ ներդրվել է 2018 թ. փետրվարին և փոփոխվել 2019 թ. հուլիսին: Արդարադատության նախարարության տվյալներով՝ պարզեցված ընթացակարգը 2019 թ. կիրառվել է առկա քաղաքացիական գործերի 55 տոկոսի դեպքում, 2020 թ.՝ 40 տոկոսի և 2021 թ. առաջին կիսամյակում՝ 31 տոկոսի: Առաջին ատյանի դատարանների դատավորները հայտնում են, որ շատ գործեր հարուցվել են բանկերի կամ վարկային կազմակերպությունների նախաձեռնությամբ:

**Արագացված ընթացակարգ՝** առանձին ընթացակարգային կանոնների շարք, որոնք կարգավորում են գործերի որոշակի տեսակներ, ներառյալ այն քաղաքացիական վեճերը, որոնց արժեքը նվազագույն ամսական աշխատավարձի\* 50-ապատիկից ցածր է (մոտ 95 եվրո) 2018 թվականի փոփոխությունից ի վեր:

Ի հակադրություն, վճարման կարգադրությունները ոչ դատական ընթացակարգեր են՝ չունենալով հակառակ կողմեր, որոնց միջոցով պարտատերը կարող է չմարված դրամական պահանջի համար ստանալ կատարման իրավունք՝ ենթադրելով, որ պարտապանը չի առարկում: Պարտապանի առարկության դեպքում վճարման կարգադրության առարկա պահանջը պետք է քննվի արդեն որպես դատական գործ և, կախված



դրա արժեքից, կարող է շարունակվել որպես փոքր հայց (պարզեցված ընթացակարգով, արագացված ընթացակարգով):

Համաշխարհային բանկի կարծիքով՝ վճարման կարգադրությունների գործընթացը պետք է բարելավվել՝ հնարավորություն տալով արդյունավետ քննելու ոչ դատական հայցերը և նվազեցնելու դատարանների բեռը: Միաժամանակ, փոքր հայցերի շեմը և պարզեցված ընթացակարգի շրջանակը կարող են վերանայվել՝ ավելի ճշգրիտ արտացոլելու Հայաստանի տնտեսական իրավիճակը: Պաշտոնական վիճակագրության բացակայությունը դեռևս դժվարացնում է այս ընթացակարգերի ավելի խոր վերլուծությունը: ԴԴ-ի և ԱԼ-ի տրամադրած տվյալները բավարար տեղեկություններ չեն տալիս միտումներին հետևելու, դեպքերի տեսակների մասնաբաժինները հաշվարկելու կամ կատարողականը վերանայելու համար:

Այնուամենայնիվ, հաշվի առնելով այս երեք ընթացակարգերից մեկով վարվող գործերի մասնաբաժինը, կարելի է ասել, որ հետագա պարզեցումը և թվայնացումը հավանաբար զգալի ազդեցություն կունենան աշխատանքի ընդհանուր ծանրաբեռնվածության վրա և ռեսուրսներ կազատեն դատական և առավել բարդ գործերի վրա կենտրոնանալու համար:


*Աղբյուրը՝ «Դատական գործընթացների արդյունավետության բարձրացում Հայաստանում. պարզեցված ընթացակարգի և վճարման կարգադրությունների բարելավման ուղիները արդարադատության համակարգի առավել լավ կատարողականի համար», Համաշխարհային բանկ, դեկտեմբեր 2020 թ.:*

\* Նվազագույն ամսական աշխատավարձը մի թիվ է, որն օգտագործվում է որոշակի հաշվարկների համար, օրինակ՝ կապված պետական տուրքերի և վճարների հետ: Այն հավասար է 1000 ՀՀ դրամի (մոտավորապես 2 եվրո): Դա բազային գումար է, որը չի արտացոլում իրական ամսական նվազագույն վարձատրությունը:

**75. Առաջին առյուծի մյուս դատարաններում պահանջարկը զգալիորեն ցածր էր. վարչական դատարանը նույնիսկ գործերի ծավալի նվազում է արձանագրել:** Սնանկության դատարանում<sup>87</sup> 2017-2021 թթ. ընթացքում գործերի ընդհանուր ծավալն աճել է 8 տոկոսով, բայց երբեք չի հասել Հայաստանում գործերի ընդհանուր ծավալի 1 տոկոսին (գծապատ-

կեր 6)<sup>88</sup>: 2021 թ. դատարանի մուտքային գործերի 75 տոկոսը վերաբերում էր ֆիզիկական անձանց սնանկությանը (որը 2017 թվականից աճել է 45 տոկոսով), 19 տոկոսը՝ ընկերությունների սնանկությանը և 6 տոկոսը՝ անհատ ձեռնարկատերերի<sup>89</sup>: 2021 թ. գործերի ծանրաբեռնվածության 7 տոկոսը (147 գործ) եղել են սնանկության հետ կապված դատական գործեր:

**Գծապատկեր 6. 2017-2021 թթ. սնանկության դատարան մուտքագրված գործերը**



*Աղբյուրը՝ court.am*

<sup>87</sup>Սնանկության վերաբերյալ օրենսդրության մեջ 2020 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում սնանկության շեմը բարձրացվել է նախկին 1,000,000 դրամից մինչև 2,000,000 դրամ. Միաժամանակ, պարտապանի կողմից պայմանագիրը խախտած համարվելու ժամկետ է նախատեսվել նախկին 60-ի փոխարեն 90 օրը: Այս փոփոխությունները ուժի մեջ են մտել 12.10.2020 թ. և կարող են արտացոլվել համապատասխան վիճակագրության մեջ:

<sup>88</sup>Տատանումները եղել են 0,93 տոկոսից 2017 թվականին և 0,71 տոկոսից 2021 թվականին: «Սնանկության դատարան» կատեգորիան օգտագործվում է 2017-2021 թվականների ամբողջ ժամանակահատվածում՝ միտումների էվոլյուցիան վերահսկելու համար, թեև սնանկության գործերը վարվել են առաջին առյուծի դատարաններում մինչև 2019 թ. հունվարի 1-ը:


<sup>89</sup>Դրավաբանական անձ չձևակերպված ձեռնարկատիրական (առևտրային) գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք սնանկության վարույթում ընդգրկված են նույն կանոնակարգով, ինչ իրավաբանական անձինք, որոշ ընթացակարգային տարբերություններով, օրինակ՝ ավելի ցածր վճարներով:

**76. Ի հակադրություն ընդհանուր միտումին, Երևանում գտնվող վարչական դատարանը 2017 թվականից արձանագրել է գործերի ծանրաբեռնվածության նվազում:** 2018-ից մինչև 2020 թվականը մուտքագրված գործերի մշտական անկմանը հաջորդել է 46 տոկոսով աճ 2020-ից մինչև 2021 թվականը<sup>90</sup>: Մուտքագրված գործերի 85 տոկոսը վերաբերում էր կենտրոնական կամ տեղական ինքնակառավարման մարմինների<sup>91</sup> ընդունած որոշումների վիճարկմանը:

**77. Վերաքննիչի մակարդակում, 2017 թվականից ի վեր, գործերի ընդհանուր ծավալը տարեցտարի գրեթե հետևողականորեն աճել է, և ավելի բարձր ատյանի դատարանները միասին 2021 թ. ստացել են 12,433 գործ (տե՛ս գծապատկեր 7), ինչը մի փոքր ավելի է**

**ընդհանուր պահանջարկի 3 տոկոսից:** Վերաքննիչ քրեական դատարանում 2017-ից մինչև 2021 թվականն ընկած ժամանակահատվածում արձանագրվել է մուտքային գործերի մշտական աճ ընդհանուր առմամբ 24 տոկոսով, իսկ վերաքննիչ քաղաքացիական դատարանի գործերով ծանրաբեռնվածությունը նույն ժամանակահատվածում աճել է 31 տոկոսով: Այդուհանդերձ, երկու վերաքննիչ դատարաններում ստացված գործերի տեսակարար կշիռը Հայաստանում 2021 թ. ստացված ընդհանուր գործերի մեջ եղել է ցածր՝ 1,4 տոկոս՝ վերաքննիչ քաղաքացիական դատարանինը, 1,3 տոկոս՝ վերաքննիչ քրեական դատարանինը: Վարչական վերաքննիչ դատարանում գործերի ծավալը տատանվել է, սակայն ընդհանուր աճ է գրանցվել 2017 թվականից ի վեր:

**Գծապատկեր 7. 2017-2021 թթ. վերաքննիչ դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների**




Աղբյուրը՝ court.am

**78. Ամենաբարձր մակարդակում, այսինքն՝ Վճռաբեկ դատարանում, գործերի բեռնվածությունը կայուն է մնացել 2017-ից մինչև 2021 թվականը, բացառությամբ 2019 թվականի, երբ արձանագրվել է 19 տոկոսի աճ (տե՛ս գծապատկեր 8):** 2019 թ. աճը պայմանավորված էր այն քաղաքացիական և քրեական գործերով,

որոնք վերականգնվել են Վճռաբեկ դատարանում ի հայտ եկած նոր հանգամանքների հիմքով<sup>92</sup>: 2020թ. Վճռաբեկ դատարանի ծանրաբեռնվածությունը վերադարձավ իրեն բնորոշ չափերին: 2017թ. դատարանը ստացել է 429 գործ, 2018թ.՝ 434, 2019թ.՝ 517, 2020թ.՝ 427 և 2021թ.՝ 411 գործ:

**Գծապատկեր 8. 2017-2021 թթ. Վճռաբեկ դատարան մուտքագրված գործերը՝ ըստ տեսակների**



Աղբյուրը՝ court.am

<sup>90</sup>Միաժամանակ վարչական դատարանի գործերի ծանրաբեռնվածության մասնաբաժինը ընդհանուր գործերի մեջ 2017 թ. 7 տոկոսից նվազել է մինչև 5 տոկոս 2021 թ.: 2017 թ. դատարանը ստացել է 14,571 գործ, 2018 թ.՝ 11,992, 2019 թ.՝ 9,913, 2020 թ.՝ 9,159 և 2021 թ.՝ 13,385 գործ:

<sup>91</sup>50 տոկոսը՝ տեղական ինքնակառավարման մարմինների, իսկ 35 տոկոսը՝ կենտրոնական իշխանությունների:

<sup>92</sup>Որպես կանոն, քրեական վարույթում նոր հանգամանքների բերումով նվազ քան 10 գործ է ստացվում, 2019 թվականին 45 գործ էր:


բ) **Գործերի ծանրաբեռնվածությունը՝ ըստ դատավորների**

**79. Դատարան մտած գործերի քանակը դատավորների մակարդակում 2021 թ. զգալիորեն տարբերվել է դատարանների տեսակների միջև:** Մեկ դատավորի հաշվով ամենաբարձր հարաբերակցությունը գրանցվել է առաջին ատյանի դատարաններում՝ 1717 գործ, իսկ ամենացածրը՝ Վճռաբեկ դատարանում՝ 26 գործ: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորները միջինը 18 տոկոսով ավելի շատ գործեր են ստացել, քան վերաքննիչ քրեական դատարանի դատավորները: Վարչական դատարանի մեկ դատավորի հաշվով միջինը, որ կազմել է 582 գործ, գերազանցել է վերաքննիչ վարչական դատարանի միջինը, որ կազմել է 350 գործ մեկ դատավորի հաշվով: Ի հակադրություն, սնանկության դատարանի յուրաքանչյուր դատավոր ստացել է միջինը 139 գործ:

**80. Մեկ դատավորի ծանրաբեռնվածության զգալի տատանումներ են նկատվել նաև ժամանակի ընթացքում, ոմանք նկատել են գործերի քանակի աճ, իսկ մյուսները՝ նվազում** (տե՛ս գծապատկեր 9): 2018-ից մինչև 2021 թվականը մեկ դատավորի հաշվով գործերի ծավալը առաջին մակարդակում ավելացել է 67-

ով, ընդ որում, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում պահանջարկն աճել է 82 տոկոսով՝ ուղեկցվելով դատավորների թվի 9 տոկոսի աճով: Վարչական դատարանն ունեցել է ստացված գործերի 12 տոկոսի աճ, իսկ պաշտոն զբաղեցրած դատավորների թիվը մնացել է անփոփոխ՝ 23: Գործերի ծավալը, ընդհանուր առմամբ, նվազել է վերաքննիչ վարչական և սնանկության գործերով դատարաններում, որտեղ դատավորների հաստիքներն ավելացել են 36 տոկոսով, մինչդեռ մուտքագրված գործերն աճել են ընդամենը 19 տոկոսով: Վերաքննիչ դատարաններում դատավորները ստացել են կայուն թվով գործեր քաղաքացիական և քրեական մասով, մինչդեռ մեկ դատավորի նկատմամբ պահանջարկը նվազել է վարչական մասով: Երկու դատարաններն էլ ավելացրել են դատավորների զբաղեցրած պաշտոնների թիվը մեկ հինգերորդով, մինչդեռ դատարան մուտք արված գործերի թիվը նույնպես ավելացել է մոտավորապես մեկ հինգերորդով: Վճռաբեկ դատարանում մեկ դատավորի հաշվով գործերի ծավալն աննշան նվազել է՝ 2020-ի 27-ից 2021-ին հասնելով 26-ի: Սա արտացոլում է ինչպես ստացված գործերի, այնպես էլ դատավորների կայուն թիվը (տե՛ս գծապատկեր 9):

**Գծապատկեր 9. 2018-2021 թթ. գործերի միջին ծանրաբեռնվածությունը մեկ դատավորի հաշվով՝ ըստ դատարանի տեսակի**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**81. Առաջին ատյանի դատարանները, որտեղ գործերի հիմնական ծանրաբեռնվածությունն է, ըստ առանձին դատարանների տարանջատելու դեպքում 2021 թ. մեկ դատավորի հաշվով գործերի միջին ծանրաբեռնվածության էական տարբերություններ են նկատվում, որոնք հնարավոր չէ բացատրել դատա-**

**րանի չափով** (տե՛ս աղյուսակ 1): Ընդամենը առաջին ատյանի երկու դատարան է համապատասխանել մեկ դատավորի հաշվով գործերի միջին հաշվարկային արժեքներին: Հինգ դատարան մեկ դատավորի հաշվով միջինից բարձր ծանրաբեռնվածություն է ունեցել, իսկ երեքը՝ միջինից ցածր:

**Աղյուսակ 1. Առաջին ատյանի դատարաններում մեկ դատավորի հաշվով գործերի միջին ծանրաբեռնվածությունը 2021 թ.**

	Մուտքագրված գործեր	Դատավորների թվաքանակ	1 դատավորի հաշվով ծանրաբեռնվածություն
	<ul style="list-style-type: none"> <li>■ - այն դատարանների քանակը, որոնց ծանրաբեռնվածությունը մեկ դատավորի հաշվով գերազանցում էր ազգային միջինը</li> <li>■ - միջինից միայն 10 տոկոսով բարձր կամ ցածր ծանրաբեռնվածություն ունեցողներինը</li> <li>■ - ազգային միջինից ցածր ունեցողներինը</li> </ul>		
Արմավիր	21,682	9	2,409
Արարատ և Վայոց ձոր	27,677	12	2,306
Կոտայք	21,461	10	2,146
Շիրակ	24,557	12	2,046
Լոռի	23,780	12	1,982
Արագածոտն	10,356	6	1,726
Գեղարքունիք	14,990	9	1,666
Երևան	104,853	69	1,520
Տավուշ	7,426	6	1,238
Սյունիք	7,581	9	842

Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:


**գ) Դատական ծառայությունների պահանջարկի ժողովրդագրական տարբերությունները**

**82. Գործերի ընդհանուր ծանրաբեռնվածության միտումնին համահունչ՝ Հայաստանում մեկ բնակչի հաշվով դատարան դիմած գործերի ծավալը ժամանակի ընթացքում ավելացել է՝ 2017 թ. 100 բնակչի հաշվով 7.05 գործից 2021 թ. հասնելով 9.87-ի (տե՛ս գծապատկեր 10)<sup>93</sup>, որն առաջին հայացքից կարող է ցածր թվալ ԱԱԵՀ երկրների համեմատությամբ: ԱԱԵՀ անդամ երկրների համեմատ (օգտագործելով ԱԱԵՀ մեթոդաբանությունը)<sup>94</sup>՝ Հայաստանը ցածր պահանջարկ ունի քրեական գործերով (0.10 գործ 100 բնակչի հաշվով, իսկ ԱԱԵՀ անդամ այլ երկրներում՝ 100 բնակչի հաշվով միջինը 2.77) և ոչ քրեա-**

կան գործերով առաջին ատյանի դատարաններում (6.13 գործ 100 բնակչին ԱԱԵՀ անդամ երկրների 100 բնակչի հաշվով 10.29 գործի դիմաց): Մինչդեռ ԱԱԵՀ-ի մյուս անդամ պետությունների հետ դատավարական բնույթի գործերում այդ ցուցանիշը միևնույն մակարդակում է (100 բնակչի հաշվով 2.85 գործ 100 բնակչի հաշվով 2.53 գործի դիմաց): Հայաստանում դատավորների ցածր թվի պարագայում (100,000 բնակչի հաշվով 8 դատավոր ԱԱԵՀ-ի անդամ մյուս երկրների 21.4-ի դիմաց) սա դատավորի մեծ ծանրաբեռնվածություն է (ոչ քրեական գործերով), որը գերազանցում է ԱԱԵՀ անդամ երկրների դատավորների ծանրաբեռնվածությունը մոտ երկու անգամ (տե՛ս նաև հավելված 6-ում):

<sup>93</sup>Հաշվարկվել է՝ օգտագործելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի, ՀՀ մարզերի և Երևան քաղաքի համառոտ սոցիալ-տնտեսական բնութագրերը թվերով, 2020 թ.: Մանրամասների համար տե՛ս [https://armstat.am/file/article/armenia\\_2020\\_16.pdf](https://armstat.am/file/article/armenia_2020_16.pdf): Համաշխարհային բանկի քաղաքային բնակչության ցուցիչը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://data.worldbank.org/indicator/SP.URB.TOTL.IN.ZS?locations=AM>

**Գծապատկեր 10. 2017-2021 թթ. դատարան մուտքագրված գործերը 100 բնակչի հաշվով՝ ըստ դատարանների տեսակի**




Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**83. Տարածաշրջանի ուրբանիզացվածության աստիճանի և դատական ծառայությունների պահանջարկի միջև կարծես բացակայում է սերտ կապը** (տե՛ս գծապատկեր 11): Առաջին ատյանի դատարանների դիտարկման ժամանակ (որոնք զբաղվում են գործերի զգալի մասով) ուրբանիզացիայի ամենաբարձր մակարդակ ունեցող մարզերը, օրինակ՝ Լոռի և

Շիրակը 100 բնակչի հաշվով արձանագրել են ամենաբարձր ծանրաբեռնվածությունը 2021թ., սակայն Սյունիքում, որի ուրբանիզացիայի մակարդակն ամենաբարձրն է, գրանցվել է ամենացածր ծանրաբեռնվածությունը: Մայրաքաղաք Երևանը զբաղեցրել է երրորդ տեղը, իսկ ուրբանիզացիայի առումով՝ վեցերորդը:

**Գծապատկեր 11. 2021 թ. դատարան մուտքագրված գործերը 100 բնակչի հաշվով՝ քաղաքային բնակչության տոկոսի համեմատությամբ**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**դ) Գործերի լուծումը**

**84. Հայաստանի դատարաններում դատական գործերի լուծման ծավալը ընդհանուր առմամբ աճել է:** 2021թ. Հայաստանի դատարանները քննել են 271941 գործ, ինչը 2017թ. համեմատ աճել է 34 տոկոսով:


Ինչպես դատարան մուտք արված գործերի պարագայում, առաջին ատյանի դատարաններն ամենամեծ ազդեցությունն են ունեցել ընդհանուր միտումի վրա (տե՛ս գծապատկեր 12):



## ՆԵՐՊԻՐ 19. ԴԱՏԱՐԱՆՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԹՎԵՐԻՆ ՀԵՏԵՎԵԼԸ

Գործերի թվերին հետևելը օգնում է գնահատելու կատարողականը, հատկապես՝ կառավարման նպատակներով: Գործերի լուծումը վերաբերում է կոնկրետ դատարանում գործերի լուծմանը: Գործերի լուծման զգալի տատանումները կարող են վկայել ռեսուրսների ոչ համարժեք բաշխման կամ գործերի ծանրաբեռնվածության ու աշխատանքային ծանրաբեռնվածության սխալ բաշխման կամ էլ դատարանների կառավարման թերությունների մասին: Իրավական համակարգերը կարող են արձագանքել այնպիսի միջոցներով, ինչպիսիք են միջոցների վերաբաշխումը (ժամանակավոր կամ մշտական), թիրախների կամ բյուջետային հատկացումների ճշգրտումը և դատարանների իրավասության օրենսդրական փոփոխությունները: Ծանրաբեռնված դատարաններում կարող են նշանակվել դատավորներ (և անձնակազմ), կամ գործերը կարող են ուղղորդվել ծանրաբեռնված դատարանից ավելի քիչ ծանրաբեռնված դատարան: Մի հնարավորություն, որը ներկայումս նախատեսված չէ Հայաստանի դատավարական օրենքներով: Գործերի լուծումների մասին տեղեկատվությունը կարող է օգտագործվել նաև կոնկրետ բարեփոխումների ազդեցությունը գնահատելու համար:

**Գծապատկեր 12. 2017-2021 թթ. գործերի լուծումը՝ ըստ դատարանների տեսակի**




Աղբյուրը՝ court.am

**85. Բոլոր առաջին ատյանի դատարաններում, բացառությամբ մեկի, 2017-2021 թթ. գործերի լուծման ծավալը ավելացել է** (տե՛ս գծապատկեր 13): Լուծված գործերի ամենամեծ ծավալը գրանցվել է մայրաքաղաք Երևանում, որին բաժին է ընկնում նաև դատավորների ամենամեծ թիվը: 11 տոկոսի անկում է արձանագրել միայն Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանը, որն առաջին ատյանի դատարանների մեջ գործերի ամենացածր ծանրաբեռնվածությունն ունի, մեկ դատավորի հաշվով ծանրաբեռնվածությամբ ու գործերի լուծմամբ արձանագրել է 11

տոկոսի անկում: Եվ ընդհակառակը՝ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանը դիտարկվող ժամանակահատվածում կրկնապատկել է իր որոշումները, իսկ Լոռու մարզում գործերի լուծումն ավելացել է 65 տոկոսով: Միաժամանակ միայն Արագածոտնի մարզի և Գեղարքունիքի մարզի դատարաններն են գործերի լուծման մասով գրանցել մշտական աճ՝ 2017-2021 թթ. յուրաքանչյուր տարում: Մյուս առաջին ատյանի դատարանները տարբերություններ ունենին, սակայն ոչ մեկը գործերի լուծման մասով չի արձանագրել շարունակական անկում:



**Գծապատկեր 13. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարաններում գործերի լուծումը՝ ըստ դատարանների**




Աղբյուրը՝ court.am

**86. Առաջին ատյանի առանձին դատարաններ դրսևորում են գործերի լուծման նմանատիպ միտումներ, պարզեցված ընթացակարգերի ներդրումը, ըստ երևույթին, ազդում է ՎԿ-ների լուծման վրա:** Երկու տեսակի գործերի լուծումով էլ ամենամեծ ծավալը արձանագրված է Երևանում, մինչդեռ ամենաքիչ թվով լուծված գործեր (ինչպես ընդհանուր քաղաքացիական, այնպես էլ վճարման կարգադրություններ) արձա-

նագրվել են Սյունիքի և Տավուշի դատարաններում: 2020թ. առաջին ատյանի բոլոր դատարանները լուծել են ավելի շատ քաղաքացիական գործեր, քան ՎԿ-ներ: Սակայն 2021թ. Գեղարքունիքի և Երևանի դատարանները լուծել են ավելի շատ ՎԿ-ներ (տե՛ս գծապատկեր 14)՝ հաստատելով այն եզրակացությունը, որ դատարաններն օգտագործում են պարզեցված ընթացակարգը որպես «դե ֆակտո» ՎԿ ընթացակարգ:

**Գծապատկեր 14. 2017-2021 թթ. քաղաքացիական գործերով և վճարման կարգադրություններով գործերի լուծումը՝ ըստ առաջին ատյանի դատարանների**




Աղբյուրը՝ court.am

ե) Գործերի լուծումը՝ ըստ դատավորների

**87. Հայաստանում ինչպես մեկ դատավորին բաժին ընկնող գործերի քանակի դեպքում էր, այնպես էլ 2021 թ. մեկ դատավորի կողմից լուծված գործերի քանակը զգալիորեն տարբեր է ըստ դատարանների տեսակի** (տե՛ս գծապատկեր 15): Առաջին ատյանի դատարաններն ունեցել են մեկ դատավորին բաժին ընկնող գործերի լուծման ամենաբարձր հարաբերակցությունը՝ մեկ դատավորի հաշվով 1,596 լուծված գործերով, և ամենամեծ ու զգալի աճը մեկ դատավորի հաշվով՝ 55 տոկոս 2018 թ. համեմատությամբ<sup>94</sup>: Վճռաբեկ դատարանն ունեցել է ամենաքիչ լուծված

գործերը մեկ դատավորի հաշվով (24), սակայն այս դատարանը բոլորովին ուրիշ դեր ունի դատական համակարգում: Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավորները մեկ դատավորի հաշվով 15 տոկոսով ավելի շատ գործեր են լուծել, քան վերաքննիչ քրեական դատարանի դատավորները: Վերաքննիչ վարչական դատարանը մեկ դատավորի հաշվով քննել է միջինը 529 գործ, իսկ վարչական դատարանի դատավորները՝ միջինը 545 գործ՝ 13 տոկոսով պակաս, քան 2018-21 թթ.: Սևանկության դատարանի դատավորները միջինը լուծել են 151 գործ, հիմնականում՝ ոչ դատավարական<sup>95</sup>:

**Գծապատկեր 15. 2018-2021 թթ. մեկ դատավորի հաշվով լուծված գործերի միջինը՝ ըստ դատարանների տեսակի**



1. Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**88. Ինչպես յուրաքանչյուր դատավորի համար գործերի ծանրաբեռնվածության միջին ցուցանիշների դեպքում, մեկ դատավորի հաշվարկով լուծված գործերի և դատարանի չափի միջև հարաբերակցություն չկա** (տե՛ս աղյուսակ 2), թեև հաճախ համարում են, որ խոշոր դատարաններն ավելի շատ գործեր

են լուծում: Սակայն փոխկապակցվածություն կա դատարանների գործերի ծանրաբեռնվածության և նրանց՝ գործերի լուծման միջև: Այն դատարանները, որոնք ստացել են մեկ դատավորի հաշվով միջինից շատ գործեր, լուծել են միջինից մեծ թվով գործեր:

<sup>94</sup>Պաշտոն զբաղեցրած դատավորների տվյալները հասանելի էին 2017թ. համար:  
<sup>95</sup>Սևանկության դատարանի վերաբերյալ տվյալները ակտիվ են՝ սկսած 2019 թվականից:



**Աղյուսակ 2. 2021 թ. մեկ դատավորի հաշվով գործերի լուծման միջինը առաջին ատյանի դատարաններում**

Մարզ	Լուծված գործեր	Դատավորների թվաքանակ	Գործերի լուծումը մեկ դատավորի հաշվով
	<ul style="list-style-type: none"> <li>■ - մեկ դատավորի հաշվով գործերի լուծման թիվը, որը գերազանցում էր ազգային միջինը</li> <li>■ - միջինից 10 տոկոսով բարձր կամ ցածրը</li> <li>■ - ազգային միջինից ցածրը</li> </ul>		
Արմավիր	20,502	9	2,278
Արարատ և Վայոց ձոր	27,119	12	2,260
Կոտայք	20,894	10	2,089
Լոռի	23,322	12	1,944
Շիրակ	23,182	12	1,932
Արագածոտն	10,403	6	1,734
Գեղարքունիք	13,441	9	1,493
Երևան	93,246	69	1,351
Տավուշ	6,744	6	1,124
Սյունիք	6,855	9	762

Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

46

**89. Վերաքննիչ մակարդակում վերաքննիչ քաղաքացիական դատարանը և վերաքննիչ վարչական դատարանը 2018-2021 թթ. արձանագրել են մեկ դատավորի հաշվով գործերի լուծման անկում, մինչդեռ վերաքննիչ քրեական դատարանի՝ մեկ դատավորի հաշվով լուծված գործերի քանակը մնացել է անփոփոխ:** Վերաքննիչ քաղաքացիական դատարանում անկումը կազմել է 8 տոկոս (232-ից մինչև 213 գործ), իսկ վերաքննիչ վարչական դատարանում՝ 24 տոկոս (386-ից՝ 294 գործ): Վերաքննիչ քրեական դատարանը զեկուցել է 2018թ. մեկ դատավորի հաշվով 184 լուծված գործերի մասին, իսկ 2021 թ.՝ 185: Քաղաքացիական և վարչական վերաքննիչ դատարանների անկումը կապված է մեկ դատավորի հաշվով գործերի ծանրաբեռնվածության շարունակական նվազման և դատավորների զբաղեցված պաշտոնների ավելացման հետ: Վերաքննիչ քրեական դատարանում գործերի ծանրաբեռնվածության աճը մեղմացվել է լրացուցիչ երեք դատավորների նշանակումով, ինչը վերածվել է դատավորների զբաղեցրած պաշտոնների 18 տոկոսի աճի:

**90. 2018-2021 թթ. Վճռաբեկ դատարանը մեկ դատավորի հաշվով գործերի լուծման կայունություն է արձանագրել:** Թեև մեկ դատավորին բաժին ընկնող


գործերի լուծման միջինը 20-ից հասել է 24-ի, դա բավարար չի եղել կատարման ցանկալի գործակիցներին հասնելու համար:

**գ) Կատարման գործակից**

**91. Հայաստանի բոլոր դատարանների համար կատարման ընդհանուր գործակիցը տատանվել է 2019թ. 88 տոկոսից մինչև 112 տոկոս 2020 թ. (տե՛ս գծապատկեր 16):** 2018 և 2020 թթ. երկրում կատարման ընդհանուր ցուցանիշը բարելավվեց մուտքային գործերի ավելի ցածր բեռի և գործերի ավելացող լուծումների շնորհիվ, հիմնականում՝ առաջին ատյանի դատարաններում: 2018-ին և՛ գործերի ծանրաբեռնվածությունը, և՛ լուծումները նվազել են, բայց ավելի շատ գործեր են լուծվել, քան ստացվել են: 2020 թ. գործերի ծանրաբեռնվածությունը նվազել է, մինչդեռ գործերի լուծումներն աճել են նախորդ տարվա համեմատությամբ 39 տոկոսով, առավելապես՝ քաղաքացիական գործերով<sup>96</sup>: 2021թ. առաջին ատյանի դատարանները շարունակում էին մնալ գործերի լուծման ընդհանուր մակարդակի վրա ազդող հիմնական գործոնը: 2020-2021 թթ. 19 տոկոսային կետով անկումը արտացոլում է ստացված քաղաքացիական գործերի 58 տոկոսի աճը, այն դեպքում, երբ միայն 6 տոկոսով են ավելացել լուծված գործերը:

<sup>96</sup>2019 թ. հետ համեմատած՝ քրեական գործերով լուծումներն աճել են 5 տոկոսով, մինչդեռ ՎԿ-ների մասով նվազել են 5 տոկոսով:

**Գծապատկեր 16. 2017-2021 թթ. կատարման ընդհանուր տոկոսները**




Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**92. 2017-2021 թթ. ընթացքում կատարման ցուցանիշները, ըստ դատարանների տեսակների, հազվադեպ են գերազանցել 100 տոկոսը** (տես գծապատկեր 17)՝ **իրական դարձնելով չավարտված գործերի աճի ռիսկը** (տե՛ս մարտահրավեր 2-ի մասով հաջորդ քննարկումը): Առաջին ատյանի դատարանները գործերի լուծման 100 տոկոսանոց մակարդակը գերազանցել են միայն 2020 թվականին (115 տոկոս), ինչը նշանակում է, որ 2017-2021 թթ. նրանք փաստացի կրճատել են գործերի կուտակումները միայն մեկ անգամ: Վճռաբեկ դատարանի կատարման ամենաբարձր տոկոսը գրանցվել է 2017 թ.՝ 95 տոկոս, մինչ-

դեռ 2019 թ. այն սկզբել է մինչև 67 տոկոս: Դատարանի այլ տեսակների մեծ մասը դիտարկված ժամանակահատվածում հասել կամ գերազանցել է 100 տոկոսը միայն մեկ կամ երկու անգամ: Միակ բացառությունը սնանկության դատարանն էր, որը երբեք անգամ հասավ դրան՝ այս փոքր դատարանը դարձնելով դատարանների տեսակների մեջ լավագույն կատարողը: Վերաքննիչ վարչական դատարանն արձանագրել է 2017 թ. ամենացածր՝ 58 տոկոսով կատարման ցուցանիշը, իսկ ամենաբարձր 120 տոկոսն արձանագրվել է վարչական դատարանում 2018 թ.:

**Գծապատկեր 17. 2017-2021 թթ. կատարման տոկոսները՝ ըստ դատարանների տեսակի**




Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**93. Առաջին ատյանի դատարանների ընդհանուր կատարման ցուցանիշը գերազանցել է 100 տոկոսը միայն 2020թ., դա նաև այն տարին էր, երբ առաջին ատյանի բոլոր առանձին դատարանները գերազանցեցին 100 տոկոսը (տե՛ս գծապատկեր 18):** Առանձին

դատարանները տարբեր կատարման ցուցանիշներ են արձանագրել 2017 և 2018 թվականներին, մինչդեռ 2019 թ. դատարաններ չեն եղել 100 տոկոսով կամ ավելի բարձր կատարման ցուցանիշներով: 2021թ. միայն Արագածոտնի դատարանը հասավ 100 տոկոսի:

**Գծապատկեր 18. 2017-2021 թթ. առաջին ատյանի դատարանների կատարման տոկոսները**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**94. Գործերի տեսակների տարանջատման դեպքում 2020թ. արձանագրված հաջողությունը գրեթե բացառապես կապված է պայմանագրային/դրամական պարտավորությունների վերաբերյալ քաղաքացիական գործերի հետ, որոնք սովորաբար քննվում են պարզեցված ընթացակարգով:** Այս տիպի գործերով առաջին ատյանի բոլոր դատարաններն արձանագրել են վճիռների կայացման բարձր տոկոսներ՝ մինչև 145 տոկոս<sup>97</sup>: Հատուկ քրեական գործերի և ՎԿ-ների հաշվարկներով՝ 2020թ. առաջին ատյանի դատարանների վճիռների կատարման տոկոսը շատ ավելի ցածր էր: Քրեական գործերի լուծման ցուցանիշը տատանվել է 47 տոկոսից Արմավիրի դատարանում մինչև 104 տոկոս Սյունիքի դատարանում: Վերջինս միակ առաջին ատյանի դատարանն էր, որը գերազանցեց կատարման 100 տոկոսը 2020թ.: Միայն երեք առաջին ատյանի դատարանների հաջողվեց հասնել կամ գերազանցել 100 տոկոսը ՎԿ-ների մասով (Արարատի և Վայոց ձորի մարզերի, Արմավիրի մարզի և Գեղարքունիքի մարզի դատարանները):

**95. 2021թ. միայն մեկ առաջին ատյանի դատարան է (Արագածոտնում) 100 տոկոսի չափով ապահովել վճիռների կայացումը:** Այդ նույն տարում քաղաքա-

ցիական գործերի կատարման ցուցանիշները նվազել են և իջել 100 տոկոսից բոլոր դատարաններում, իսկ քրեական գործերը ուղղակի մնացել են 100 տոկոսից ցածր բոլոր դատարաններում: Թեև ՎԿ-ների կատարողականը բարելավվել է և բարձրացել 100 տոկոսից (բացառությամբ Երևանի առաջին ատյանի դատարանի՝ 98 տոկոս), դա բավարար չէ քաղաքացիական և քրեական գործերի կատարման ցուցանիշի անկումը փոխհատուցելու համար:

**Մարտահրավեր 2. Գործերի ավելացող կուտակումներ**


**96. Քանի որ գործերի ծավալները մեծանում են և կատարման տոկոսները (միջինը) 100-ից ցածր են, Հայաստանում դատարանները բախվում են իրենց ընդհանուր առկա գործերի քանակի ավելացմանը (2017 թ. 69,967 գործից մինչև 94,356 գործ 2021 թ.) կամ 35 տոկոսով աճին:** Առկա (քննության սպասող) գործերի թիվը, որպես ցուցիչ, վեր է հանում մեկ տարուց մյուսին անցած չլուծված գործերի քանակը: Առկա գործերի առկայությունը անխուսափելի է, քանի որ ոչ մի դատարան չի կարող լուծել ամեն տարի մուտքագրվող բոլոր գործերը. որոշ գործեր համակարգ են մտնում շատ ուշ օրացույցով կամ չափազանց բարձր են մինչև

<sup>97</sup>Կոնկրետ այս տեսակի գործի վերաբերյալ ավելի մանրամասն տե՛ս առաջին ատյանի դատարանների գործերի ծանրաբեռնվածության քննարկման բաժնում:

տարեվերջ լուծելու համար: Առկա գործերի քանակը դառնում է խնդրահարույց, երբ դրանց թիվը տարեց-տարի ավելանում է և ներառում է շատ ավելի հին գործեր: Առկա գործերը երբեմն նկարագրվում են որպես խցանված, սակայն որոշ իրավական համակարգերում «կուտակումը» վերաբերում է միայն որոշակի տարի-

քային սահմանափակմամբ առկա գործերին<sup>98</sup>: Գծապատկեր 19-ում ցուցադրված է այս խնդիրը 2017-2021 թվականներին (2020թ. գրանցված կտրուկ անկումը արտացոլում է առաջին ատյանի դատարանների կողմից գործերի լուծման տոկոսի վերուշյալ վերլուծության արդյունքում վեր հանված աճը):

**Գծապատկեր 19. 2017-2021 թթ. տարեվերջի տվյալներով չլուծված գործերի ընդհանուր քանակը**



Աղբյուրը՝ court.am

**ՆԵՐՈՒՐ 20. ՀՆԱՅՈՂ ԳՈՐԾԵՐԻ ՑՈՒՑԱԿՆԵՐ**

Հայաստանում չկա հետաձգված կամ «հին» գործերի պաշտոնական սահմանում, և չկա համակարգում երկարատև խրված գործերի արագ հետազոտում: Վերջերս ընդունված ժամկետները գործերի քննության համար փորձում են լուծել խնդիրը, սակայն դեռևս չափված արդյունքներ չկան:

Հայաստանի դատարանները չեն վարում առկա և լուծված հնացած գործերի ցուցակներ ժամկետայնությանը հետևելու համար, ինչպես նաև չեն ընդունել կուտակումների կրճատման ծրագրեր: Սկզբունքորեն հնացող գործերի ցուցակները կամ առկա և լուծված գործերի տարիքային կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչպես են դատարաններն ընտրում գործերը վարելու համար, նախընտրում են արդյոք նոր և ավելի պարզ գործերը համեմատաբար արագ լուծել, իսկ ավելի բարդ գործերը մնում են կուտակված գործերի մեջ: Հնացող գործերի ցուցակները հեշտացնում են առկա գործերի քանակության ըմբռնումը, կենտրոնացնում են առաջին հերթին ամենահին գործերի լուծման վրա և գոյացած կուտակումների կրճատման համաձայնեցված ծրագրերի կարևոր մասն են, որոնք անհրաժեշտ են ավելի հին գործերը համակարգից մաքրելու համար:


**97. 2017-2021 թթ. առկա գործերի քանակի ավելացման հիմնական պատճառները առաջին ատյանի դատարաններն էին, թեև այլ դատարաններում նույնպես ավելացումներ են եղել:** Առաջին ատյանի (ընդհանուր և մասնագիտացված) դատարանների

հետաձգված գործերը ընդհանուր հաշվով աճել են 34 տոկոսով՝ 66,158-ից հասնելով 88,972-ի՝ վերջին երկու տարում համեստ «բարելավմամբ», երբ աճը նվազել է մինչև ընդամենը 29 տոկոս (տե՛ս գծապատկեր 20):

<sup>98</sup>Չկա խցանված գործերի ընդհանուր սահմանում: Գործերը, որոնք առաջին անգամ դատարան են հասել ավելի քան երկու տարի առաջ, ԱԱԵՀ-ի մեթոդաբանության համաձայն, համարվում են խցանված: Առանձին երկրներ ընդունել են իրենց շեմերը (օրինակ՝ Խորվաթիայում և Սերբիայում գործերը համարվում են «հին» կամ խցանված, եթե դրանք երեք տարուց ավելի են մնացել՝ հաշված առաջին անգամից, երբ կողմերը պահանջել են դատական պաշտպանություն տվյալ հարցում): Թեմայի վերաբերյալ ավելի հասանելի է ԱԱԵՀ-ի 2012 թ. «Դատական գործընթացների տևողությունը Եվրոպայի խորհրդի անդամ երկրներում՝ հիմնված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումների վրա» գեկույցում, տե՛ս հետևյալ հղումով՝ [https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16\(2007\).pdf](https://www.echr.coe.int/LibraryDocs/DG2/HRFILES/DG2-EN-HRFILES-16(2007).pdf)



**Գծապատկեր 20. 2017-2021 թթ. տարեվերջին չլուծված գործերը՝ ըստ դատարանների տեսակի**




Աղբյուրը՝ court.am

**98.** Արտացոլելով գործերի ծանրաբեռնվածությունը՝ առաջին ատյանի դատարաններում տարեվերջին առկա գործերի ծավալն անմիջապես ցույց տվեց ընդհանուր միտումը, մինչդեռ վարչական դատարանում և սնանկության դատարանում տատանումները ավելի համեստ էին: 2017-2021թթ. և՛ վարչական դատարանը, և՛ սնանկության դատարանն իրենց առկա գործերի քանակն ավելացրել են, համապատասխանաբար, 7 տոկոսով (մինչև 8,206 գործ) և 6 տոկոսով (մինչև 7,400 գործ):

**99.** 2021 թ. Հայաստանում ընդհանուր առկա ազգային գործերի գրեթե 80 տոկոսը կազմում են առաջին ատյանի դատարաններում գտնվող քաղաքացիական գործերը. վարույթում գտնվող քաղաքացիական գործերի ծավալը 2017-2021թթ.աճել է գրեթե 40 տոկոսով՝ 51,177-ից հասնելով 73,602-ի (տես գծապատկեր 21): Նույն ժամանակահատվածում առաջին ատյանի դատարանները դժվարությունների են հանդիպել նաև այլ ոլորտներում: Հետաձգված քրեական գործերի ծավալն աճել է 151 տոկոսով՝ կազմելով 4,826 գործ, իսկ ՎԿ-ներով՝ 56 տոկոսով՝ կազմելով 5,588 գործ:

**Գծապատկեր 21. 2017-2021 թթ. տարեվերջին չլուծված գործերն առաջին ատյանի դատարաններում՝ ըստ գործերի տեսակի**



Աղբյուրը՝ court.am



**100. Վերաքննիչ դատարանները միասին 2017-2021 թթ. մեկ երրորդով ավելացրել են չլուծված գործերը՝ 3,694-ից մինչև 4,877:** Աճի մեծ մասը կարող է վերագրվել վերաքննիչ վարչական դատարանին՝ 35 տոկոսով կամ գրեթե 900 գործով: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը արձանագրել է մինչև տարեվերջ չլուծված գործերի 6 տոկոսով աճ, մինչդեռ վերաքննիչ քրեական դատարանը 2021 թ. ևս 250 գործով վարույթ է ունեցել (55 տոկոսի աճ):

**101. Վճռաբեկ դատարանը 2017-2021 թթ. հնգապատիկ ավելացրել է իր առկա գործերի քանակը՝ 115-ից հասցնելով 507-ի:** Առկա քաղաքացիական գործերը քառապատկվել են՝ 59-ից մինչև 242, վարչական գործերը եռապատկվել են՝ 43-ից մինչև 128, իսկ քրեական վարույթը տասնապատկվել է՝ 13-ից դառնալով 137:

**102. Չնայած կուտակումների աճին և ծառայությունների պահանջարկի ավելացմանը՝ առանց որևէ փոփոխության միտումի նախանշանների՝ գոյություն չունեն կուտակումների կրճատման պլաններ կամ վիճակագրական տվյալների հավաքումն ուժեղացնելու ջանքեր՝ որպես այդ պլաններից բխող աշխատանքներ:** Հայաստանում չկա հետաձգված կամ «հին» գործերի պաշտոնական սահմանում, և չկա համակարգում երկարատև խցանված, արգելափակված գործերի արագ հետազոտում: Գործողությունները գործերը լուծելու համար պետք է սահմանվեն համակարգային՝ և՛ առանձին դատարանների մակարդակով, և՛ հիմնվեն լուծված և չլուծված գործերի տարիքային կառուցվածքի վրա (տե՛ս ներդիր 21): Կուտակումների կրճատման ծրագիրը կապահովի իրավիճակի բարելավման կենտրոնացված և համակարգված մոտեցում (տե՛ս հավելված 6-ում պլանի օրինակը):

## ՆԵՐԴՐ 21. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՆԵՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՈՍ. ՍԵՐԲԻԱՆ ՈՐՊԵՍ ՏԻՊԱՅԻՆ ԵՐԿԻՐ

2016 թ. Սերբիան Համաշխարհային բանկի աջակցությամբ գործարկեց դատարանների պարզևատրման ծրագիրը՝ որպես դատարանների կատարողականության բարձրացմանն ուղղված նորարարություն: Ծրագիրն ուղղված էր առաջին աստիճանի դատարանների առջև ծառայած ամենահրատապ խնդիրների լուծմանը պարզևատրման միջոցով «կուտակումների կրճատման հարցում առավել զգալի բարելավման» և «մեկ դատավորի հաշվով լուծված գործերի թվի ամենամեծ բարելավման» համար: Կենտրոնանալով «առավել բարելավված խաղացողների» մրցանակների վրա՝ ծրագիրը նպատակ ուներ խթանել ցածր կատարողականությամբ դատարաններին՝ բարելավելու և բարձրացնելու իրենց միջին ցուցանիշները: Դատարանների աշխատանքի բարելավմանը նպաստած նորամուծությունների ճանաչումը հանգեցրեց նաև երկրում լավ փորձի հրապարակմանը: Պարզևատրման մեկ անվանակարգում «մեկ դատավորի» կատարողականի չափումը փոքր դատարաններին հաջողության հավասար հնարավորություն է տալիս:

Բացի բարձրագույն դատարանի մակարդակով սահմանված և դատարաններին շնորհված դրամական պարգևներից, մրցանակը նաև ճանաչում և հեղինակություն է բերում: Հաղթող դատարանն ազատ է ընտրելու, թե ինչպես ծախսել իր մրցանակային գումարը (ՏՀՏ սարքավորումներ, գրասենյակային սարքավորումներ, դատարանի տեսքի բարելավմանն ուղղած միջոցներ և այլն):

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Համաշխարհային բանկի 2017 թվականի «Պարզևատրման ծրագրերի օգտագործումը դատարանի գործունեությունը ճանաչելու և խրախուսելու համար» զեկույցը, որը հասանելի է հետևյալ հղումով. <https://documents.worldbank.org/en/publication/documents-reports/documentdetail/449331487842777416/using-rewards-programs-to-recognize-and-incentivize-court-performance>

### Մարտահրավեր 3. Գործերի վարման ժամկետայնությունը

**103. Ժամկետների կարգապահությունը (աշխատանքը ժամանակին ավարտելը) դատական գործունեության կարևոր կողմն է և արդար դատաքննության իրավունքի հիմնաքարը<sup>99</sup>:** Այն այստեղ գնահատվում

է գործերի խցանումների և գործերի լուծման ժամանակի գործակիցներով ի լրումն առկա (հետաձգված) գործերի աճող թվի, որոնք ավելի նվազ չափով են կապված կատարման իդեալական գործակցի հետ, ինչպես քննարկվեց վերը: Արդարադատության տարածաշրջանային հետազոտության մեջ ուսումնասիրվել է դատարաններից օգտվողների և պրակ-

<sup>99</sup>Ինչպես սահմանված է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով, յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանում ողջամիտ ժամկետում արդար և հրապարակային դատաքննության իրավունք: Տե՛ս հետևյալ հղումով՝ [http://www.echr.coe.int/Documents/Convention\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf)




տիկ մասնագետների ժամանակայնության ընկալումը և հաշվի է առնվել նաև սույն վերլուծության մեջ:

**ա) Գործերի խցանումների գործակիցները**

**104. Հայաստանի դատարանների ընդհանուր գործերի խցանումների գործակիցը 2017-2021 թթ. մնացել է օպտիմալ միջակայքում՝ 0,50-ից ցածր** (տե՛ս գծապատկեր 22): Խցանումների հարաբերակցությունը կարևոր գործիք է պլանավորման և ռեսուրսների բաշխման համար, քանի որ բացահայտում է գործերի խցանումների ճշգրիտ «տեղը» գործերի լուծման մեջ: Այն մատնանշում է խնդրահարույց ոլորտները,

որոնք կարող են լուծվել նոր ռեսուրսների բաշխմամբ կամ առկա գործերի վերաբաշխմամբ: Այն կարող է նաև հանգեցնել օրենսդրական փոփոխությունների՝ բացահայտելով ընթացակարգային խոչընդոտների հետևանքով առաջացած գործերի խցանումները: Խցանումների գործակիցը չի բացահայտում գործերի տարիքը, սակայն ավելի ցածր ցուցանիշը, ամենայն հավանականությամբ, տարվա ընթացքում գործերն ավելի ուշ ստանալու և այդ պատճառով հաջորդ տարի տեղափոխելու հետևանք է: Հայաստանի դատական համակարգն ամեն տարվա վերջում ունի ավելի շատ լուծված, քան չլուծված գործեր<sup>100</sup>:

**Գծապատկեր 22. 2017-2021 թթ. Հայաստանում դատարանների համընդհանուր խցանումների գործակիցը**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**105. Առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածության գործակիցը օպտիմալ է թվում, սակայն ընդհանուր արդյունքները բարելավվում են ՎԿ-ների շատ ցածր խցանումներով, որ տատանվում է 0,04-ից մինչև 0,07 տիրույթում** (տե՛ս աղյուսակ 3): Քաղաքա-

ցիական գործերի խցանումներն ավելի մեծ են (բացառությամբ 2020 թվականի), և շատ ավելի մեծ և հետևողականորեն աճում են քրեական տիրույթում, քանի որ գործերի ծանրաբեռնվածության աճը չի ուղեկցվում դատական որոշումների աճով:

<sup>100</sup>Տե՛ս «Ժամկետներ և սահմանումները» գործերի խցանման գործակիցը հաշվարկելու համար:

**Աղյուսակ 3. 2017-2021 թթ. գործերի խցանումների գործակիցները՝ ըստ դատարանների և գործերի տեսակի**

Տարի	2017թ.	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
<b>Գործերի տեսակները՝ ըստ դատարանների</b>	Գործերի խցանումների գործակիցները կողավորված են գույներով՝ ցույց տալու դրանց ծանրության աստիճանը: ■ - բավարար է ■ - մտահոգիչ (0,51-ից մինչև 1,00) ■ - տագնապալի (1,01-ից մինչև 2,00) ■ - ավելի շատ տագնապալի (ավելի քան 2,00):				
<b>Առաջին ատյանի դատարաններ</b>	0.28	0.35	0.43	0.26	0.30
<i>Քաղաքացիական գործեր</i>	0.54	0.73	0.81	0.37	0.50
<i>Քրեական գործեր</i>	0.63	0.60	1.04	1.38	1.44
<i>Վճարման կարգադրություններ</i>	0.04	0.05	0.06	0.07	0.05
<b>Վերաքննիչ քաղաքացիական դատարան</b>	0.24	0.17	0.13	0.14	0.19
<b>Վերաքննիչ քրեական դատարան</b>	0.15	0.16	0.15	0.18	0.19
<b>Վերաքննիչ վարչական դատարան</b>	1.21	0.80	1.12	1.01	0.97
<b>Վարչական դատարան</b>	0.58	0.37	0.58	1.04	0.66
<b>Սևանկության դատարան</b>	5.53	4.76	4.01	3.58	3.17
<b>Վճռաբեկ դատարան</b>	0.28	0.70	1.16	1.38	1.32
<i>Քաղաքացիական գործեր</i>	0.53	1.18	1.90	1.09	1.20
<i>Վարչական գործեր</i>	0.20	0.55	1.37	2.69	1.54
<i>Քրեական գործեր</i>	0.16	0.49	0.50	1.36	1.37
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>0.34</b>	<b>0.39</b>	<b>0.47</b>	<b>0.32</b>	<b>0.35</b>

Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**106.** Վարչական դատարաններում գործերի խցանումների գործակիցները տատանվում էին 0,37-ից 2018թ. մինչև 1,04-ը 2020թ., իսկ սևանկության դատարանի արժեքները բարձր էին 2021թ. (3,17), սակայն տարիների ընթացքում բարելավվել են 2017-ի 5,53-ի համեմատ: Սևանկության ընթացակարգերը հաճախ բարդ են և նպաստում են խցանումների բարձր տեմպերին, այնուամենայնիվ դրանք պետք է մշտադիտարկվեն թերակատարումները հետազայում շտկելու համար:

**107.** Վերաքննիչ քրեական դատարանը և վերաքննիչ քաղաքացիական դատարանը դատարանների միակ

տեսակներն էին, որ 2017-2021թթ. հետևողականորեն մնացին օպտիմալ միջակայքում: Վերաքննիչ վարչական դատարանը խառը արդյունքներ է ցույց տվել, որոնք բարելավվել են դիտարկված վերջին երկու տարիների ընթացքում:

**108.** Վճռաբեկ դատարանում գործերի խցանումների տեմպն աճում է՝ 2017-ի 0,28-ից հասնելով 1,32-ի 2021 թ.: Քննված քրեական, ինչպես և քաղաքացիական ու վարչական գործերի տեսակներն էլ, կարծես, համահունչ են միտումին, թեև խցանումն ավելի մեծ է քաղաքացիական և վարչական գործերով:

**ՆԵՐՊԻՐ 22. ԼՍՈՒՄՆԵՐԻ ԳԵՐԸ ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**


Քաղաքացիները, փաստաբանները և դատախազները հայտնել են, որ անցկացված բոլոր լսումների մոտ կեսը նպաստել է գործերի լուծմանը: Գործարարներն ու դատավորները հայտնել են, որ նման լսումների գրեթե երեք քառորդն արդյունավետ է: Քաղաքացիները և տնտեսվարողների ներկայացուցիչները դատական նիստեր չկայանալու կամ գործի լուծմանը չնպաստելու հիմնական պատճառ են նշել դատարանը և մյուս կողմը: Սակայն արդարադատության համակարգի մասնագետները մատնանշել են նաև այլ մասնակիցների, օրինակ՝ վկաներին կամ դատական փորձագետներին: Արդարադատության համակարգի մասնագետների նշած երրորդ պատճառն անարդյունավետ ընթացակարգային դրույթներն էին:

**Հարցախույզի հարցը.** Ընդհանուր առմամբ քանի՞ լսումներ են նշանակվել առաջին ատյանում, այդ թվում նախատեսված, սակայն չանցկացվածները: / Պլանավորված քանի՞ լսումներ չեն կայացել/չեղարկվել: / Կայացած լսումներից որքա՞նը զգալիորեն չեն նպաստել գործի լուծման առաջընթացին: / Վերջին 12 ամս-



վա ընթացքում նախատեսված լուծմներից ո՞ր մասն է չեղարկվել, անցկացվել, սակայն գործի լուծմանը ընթացք չի տրվել կամ անց է կացվել և զգալիորեն նպաստել է գործի լուծմանը:

Հիմքը՝ վերջին երեք տարվա ընթացքում դատական գործի փորձ ունեցող անձինք (քաղաքացիներ և ձեռնարկատերեր), ընդհանուր թիրախային բնակչություն (փաստաբաններ, դատավորներ և դատախազներ (քաղաքացիներ n=362, գործարարներ n=160, փաստաբաններ n=250, դատավորներ n=97, դատախազներ n=245):




Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

բ) **Գործերի լուծման ժամկետները**

**109. Հայաստանում գործերի լուծման ժամկետների ցուցանիշը ընդհանուր առմամբ բոլոր դատարանների դեպքում տատանվել է 2017-2021 թթ., սակայն մնացել է մեկ տարուց պակաս** (գծապատկեր 23): Զանի որ Հայաստանի դատական վիճակագրությունը գործերի քննության փաստացի տևողության վերաբերյալ տվյալներ չի տրամադրում, գործերի քննության օրերով միջին տևողությունը գնահատելու համար կիրառվել է կողմնակի ցուցիչ, որը մշակել է ԱՎԵՅ-ն մեկ

տարվա ընթացքում լուծված և հետաձգված գործերի համեմատության միջոցով<sup>101</sup>: Այս մեթոդաբանության հիմնական խնդիրն այն ենթադրությունն է, որ դատավորները նախ քննում են ամենահին գործերը, ինչը հաճախ գործնականում այդպես է: Դատավորները երբեմն առաջնահերթություն են տալիս գործերին դրանց հրատապ բնույթի պատճառով (օրենքով նախատեսված), երբեմն էլ գործերը չեն կարող առաջընթաց ունենալ արտաքին պատճառներով (օրինակ՝ վկաների բացակայությունը, միջազգային բնույթը):

**Գծապատկեր 23. 2017- 2021 թթ. Հայաստանի դատարաններում գործերի լուծման համընդհանուր ժամկետները**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

<sup>101</sup>Բանաձևը (առկաիս /լուծված գործեր) X 365

## ՆԵՐՂԻՐ 23. ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՀԱՐԿԱՂԻՐ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ


Հարկադիր կատարման ծառայությունը ԱՆ-ի ենթակայությամբ ներդրվել է 1998 թ. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով: Այն նախատեսում է դատական որոշումների, արբիտրաժային դատարանների, ֆինանսական համակարգի հաշտարարի, միջազգային և օտարերկրյա դատարանների ակտերի հարկադիր կատարում:

2019 թ., 2020 թ. և 2021 թ. առաջին երեք եռամսյակների համար առկա տվյալները ցույց են տալիս, որ կատարողական վարույթների թիվն աճել է՝ 2019 թ. 1,364,955-ից 2020-ին 1,554,066-ի, մինչև 2021 թ. սեպտեմբերի վերջը՝ 1,840,770-ի: 2019-2021 թթ. գործերի կատարման տոկոսները նույնպես աճել են՝ 101 տոկոսից հասնելով 107 տոկոսի: 2020 թ. մինչև 89 տոկոսի անկումը հավանաբար պայմանավորված է ՔՈՎԻԴ-19 համավարակի համակցությամբ և դատարան մուտքագրված գործերի 14 տոկոսի աճով: Աճել են նաև գործերի լուծման ժամկետները: 2021 թվականն ավարտվել է 181,278 չլուծված գործերով, մինչև 2021 թ. սեպտեմբերի 30-ը, սակայն, ավելի քիչ չափով՝ 58,297 առկա գործ:

**110. Այնուամենայնիվ, դատարանների տեսակների միջև կային ծայրահեղ տարբերություններ. Հայաստանում 2021 թ., ըստ դատարանների տեսակի, գործերի լուծման ամենաերկար ժամկետը 17 անգամ գերազանցել է ամենակարճը:** Սնանկության դատարանը 2021 թ. ունեցել է գործերի լուծման 1158 օրվա ժամկետ (սվազել է նախորդ տարիների համեմատ)՝

ի տարբերություն 69 օրվան վերաքննիչ քրեական դատարանում և 71 օրվան վերաքննիչ քաղաքացիական դատարանում (տե՛ս ստորև գծապատկեր 24): Եթե հաշվարկից բացառվեն սնանկության գործերը, ապա Հայաստանի դատարաններում գործերի լուծման ընդհանուր ժամկետները ամեն տարի 7-10 տոկոսով պակաս կլինեն<sup>102</sup> :

### Գծապատկեր 24. 2017-2021 թթ. գործերի լուծման ժամկետները՝ ըստ դատարանների տեսակի



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

**111. Առաջին ատյանի դատարաններում գործերի լուծման ժամկետները 2017-2021 թթ. ընթացքում ավելացել են հինգ օրով՝ 104-ից դառնալով 109 օր:** Սնացած տարիների ընթացքում գործերի լուծման հաշվարկված ժամանակը տատանվել է, բայց երբեք չի գերազանցել 2019-ին հաղորդված 158 օրը: 2020-

ին կատարման ցանկալի գործակցի շնորհիվ այն սվազել է մինչև 94 օր:

**112. Առաջին ատյանի դատարաններում գործերի լուծման ժամկետների էական տատանումները հաշվարկվել են ըստ գործերի տեսակի, ինչը ժամանակի**


<sup>102</sup>Ճշգրիտ՝ 10 տոկոս 2017 և 2018 թթ., 7 տոկոս՝ 2019 թ., 9 տոկոս՝ 2020 թ. և 7 տոկոս՝ 2021 թ.:

ընթացքում ցույց է տվել, որ առկա են թերակատարման լուրջ ոլորտներ: Զրեական գործերի լուծման ժամանակը 2021թ. ավելի քան երկու անգամ երկար էր, քան 2017թ. և ավելի քան երկու անգամ երկար, քան 2021թ. քաղաքացիական գործերի լուծման ժամանակը: Այս աճը պայմանավորված էր գործերի ծանրաբեռնվածության աճով, որին չհետևեց գործերի լուծման աճը, ինչը հանգեցրեց երկուսուկես անգամ

ավելի չլուծված գործերի 2021թ. վերջին՝ 2017թ. համեմատությամբ:

**113. Քաղաքացիական գործերի լուծման ժամկետի ընդհանուր նվազում է գրանցվել՝ 2017 թ. 197 օրից մինչև 181 օր 2021 թ.:** ՎԿ-ների լուծման ժամկետները եղել են կայուն և ցածր՝ տատանվելով 14-ից մինչև 26 օր, այդպիսով բարելավելով առաջին ատյանի դատարանի ընդհանուր արդյունքը:

**Գծապատկեր 25. Առաջին ատյանի դատարաններում գործերի լուծման ժամկետները՝ ըստ գործերի տեսակի**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ

**114. Թեև սևանկության դատարանում գործերի լուծման ժամկետը երբեք չի իջել 1000 օրից, տարեցտարի բարելավվել է 2017-2021թթ.՝ ընդհանուր նվազելով 43 տոկոսով:** Սևանկության դատարանում գործերի լուծման ժամկետը 2017թ. կազմել է 2,019 օր, 2018թ.՝ 1,738 օր, 2019թ.՝ 1,463 օր, 2020թ.՝ 1,239 օր, իսկ 2021թ.՝ 1,158 օր: Գործերի լուծման ժամկետները շահել են դատարանի արտադրողականության բարձրացումից՝ անկախ գործերի ծանրաբեռնվածության աճից:

**115. Վարչական դատարանում գործերի լուծման ժամկետը 2017 թվականի 210 օրից 2021 թ. դարձել է 239 օր, միաժամանակ այն մեծ տատանումներ է ունեցել:** 2018 թ. այն նվազել է մինչև 135 օր, 2019 թ. երկարել է մինչև 211 օր, իսկ 2020 թ.՝ 380 օր: Գործերի լուծման երկար ժամկետը պայմանավորված է բոլոր դիտարկված տարիներին կատարման ցածր գործակցով, բացառությամբ 2018 թվականի, երբ կատարման ցուցանիշը կազմել է 120 տոկոս:

**116. Վերաքննիչ ատյանի դատարաններում գործերի լուծման ժամկետները տարբերվում են:** Վարչական վերաքննիչ դատարանում գործերի լուծման ժամկետը 2017թ. 441 օրից բարելավվել է մինչև 354 օր 2021թ.: Վերաքննիչ քաղաքացիական դատարանում և վե-


րաքննիչ քրեական դատարանում գործերի լուծման ժամկետները դիտարկվող ժամանակահատվածում 100 օրից բավականին պակաս են եղել: 2017-ից մինչև 2021թ. վերաքննիչ քաղաքացիական դատարանում գործերի լուծման ժամկետը նվազել է 17 օրով՝ 88-ից դառնալով 71 օր: Նույն ժամանակահատվածում այն վերաքննիչ քրեական դատարանում ավելացել է 13 օրով՝ 56-ից դառնալով 69 օր:

**117. Վճռաբեկ դատարանը դրսևորել է գործերի լուծման ժամկետի բավականին մեծ և կայուն աճ, որն ավելի քան քառապատկվել է 2017-ից մինչև 2021 թվականը:** 2017թ. գործերի լուծման հաշվարկված ժամկետը կազմել է 103 օր, 2018թ. աճել է մինչև 257 օր, 2019թ.՝ 422 օր, 2020թ.՝ 502 օր և 2021թ.՝ 482 օր: Տվյալ աճն առաջացել է քաղաքացիական, վարչական և քրեական գործերով, որոնք, ինչպես ցույց է տրված գծապատկեր 26-ում, հասել են մոտավորապես 500 օրվա 2021թ.: Քաղաքացիական գործերի քննության ժամկետի աճը մոտավորապես կրկնակի է եղել, վարչականներինը գրեթե ութապատկվել է, իսկ քրեական գործերի լուծման ժամկետն աճել է ինը անգամ: Գործերի լուծման ժամկետների գազաթևակետը գրանցվել է վարչական գործերով 2020թ., երբ արձանագրվել է 981 օր 66 տոկոս կատարման ցածր

գործակցի պատճառով՝ չնայած այդ տարում արձանագրված գործերի նվազմանը: Վճռաբեկ դատարանում գործերի լուծման ժամկետները հիմնականում

կատարման ցածր տոկոսների հետևանք էին, որոնք վերլուծված ժամանակահատվածում չեն հասել կամ գերազանցել 100 տոկոսը:


**Գծապատկեր 26. Վճռաբեկ դատարանում գործերի լուծման ժամկետները՝ ըստ գործերի տեսակի**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ

**Ներդիր 24. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԳՈՐԾԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Համաձայն ԱԱԵՅ-ի՝ առաջին ատյանի քաղաքացիական և առևտրային դատական գործերի լուծման ժամկետը Հայաստանում 32 օրով փոքր է եղել ԱԱԵՅ անդամ երկրների միջինից (226 օր): Հայաստանը նաև գործերի լուծման ավելի լավ ժամկետ է գրանցել՝ 194 օր, քան Վրաստանը և Խորվաթիան: Հայաստանում վարչական դատարանի գործերի լուծման ժամկետը համահունչ էր Եստոնականին և ԱԱԵՅ անդամ պետությունների մոտ միջինի կեսին, մինչդեռ քրեական գործերի համար ավելի մեծ ժամկետ էր ապահովվում, քան ԱԱԵՅ անդամ երկրների միջինը կամ դիտարկված որևէ այլ գործընկեր, ինչպես տրվում է ստորև:



Աղբյուրը՝ ԱԱԵՅ 2020 թ., զեկույց (2018 թ. տվյալներ):

գ) **Դատարաններից օգտվողների և պրակտիկ մասնագետների հայտնած ժամկետները**

**118.** Արդարադատության տարածաշրջանային հետազոտության արդյունքների համաձայն՝ գործերի վարման միջին տևողությունը քաղաքացիների համար եղել է մոտ 13 ամիս, իսկ տնտեսվարողների համար՝ մոտ 12 ամիս, սակայն որոշ գործերի դեպքում արձանագրվել է շատ ավելի երկար տևողություն:

Քաղաքացիները հայտնել են, որ իրենց քրեական գործերը տևել են մինչև 130 ամիս (մոտ 11 տարի), քաղաքացիական գործերը՝ մինչև 123 ամիս (մոտ 10 տարի), իսկ վարչական գործերը՝ մինչև 34 ամիս (մոտ 3 տարի): Տնտեսվարողները հայտնել են գործերի վարման առավելագույն տևողությունը՝ 91 ամիս (մոտ 8 տարի): Դատարաններից օգտվողների ընկալումով գործերի վարման տևողության այս առա-

վելագույն չափերը անցանկալի են յուրաքանչյուր դատական համակարգում և ենթադրում են ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքի հնարավոր

խախտումներ, սակայն վստահ եզրակացություններ կարող են արվել միայն գործերի տարիքի փաստացի տվյալների հիման վրա:

## Ներդիր 25. ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԻ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԿՎԼՈՒՄԸ

Քաղաքացիները և տնտեսվարողները ցուցաբերել են գործերի երկար տևողության ընկալում: Առաջարկվել են հետևյալ պատճառները. դատավորների, դատախազների և վարչական անձնակազմի անբավարար թիվը, կողմերի առաջացրած խոչընդոտները և օրենսդրական բացթողումները: Փաստաբանները նշել են քրեական գործերի ավելի մեծ տոկոս, որոնք ավելի երկար են տևել՝ համեմատած գործերի միջինի հետ:

**Չարցախույզի հարցը. Ե՞րբ է գործը ներկայացվել, ե՞րբ է նշանակվել առաջին նիստը, ե՞րբ է ներկայացել կողմերից առնվազն մեկը: Ե՞րբ է կայացվել առաջին ատյանի վճիռը:**


Չիմքը՝ վերջին երեք տարվա ընթացքում դատական գործերի փորձ ունեցած անձինք (n=362):

Ամիսների միջին թիվ	Գործի մասով կայացվել է դատավճիռ	
ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ գործեր	Ամիսների միջին թիվ	13.4
	Ամիսների առավելագույն թիվ	130
Քրեական գործեր	Ամիսների միջին թիվ	20.7
	Ամիսների առավելագույն թիվ	130
Քաղաքացիական գործեր	Ամիսների միջին թիվ	12.3
	Ամիսների առավելագույն թիվ	123
Վարչական գործեր	Ամիսների միջին թիվ	6.7
	Ամիսների առավելագույն թիվ	34
ՏՆՏԵՍԱՐՈՂՆԵՐԻ գործեր	Ամիսների միջին թիվ	11.9
	Ամիսների առավելագույն թիվ	91

Չարցադրում՝ Ինչպե՞ս կգնահատեք տվյալ գործի տևողությունն առաջին ատյանում:

**Չարցախույզի հարցը. Ինչպե՞ս եք գնահատում գործերի տևողությունն առաջին ատյանում: Չաշվի առնելով բոլոր հանգամանքները՝ կարծում եք, որ գործը տևել է... / Խնդրում եմ գնահատեք ձեր այն գործերի այն տոկոսը, որոնք ներկայացրել եք դատարանում վերջին 12 ամսվա ընթացքում և ինչ-ինչ պատճառներով տևել են ավելի երկար, քան պետք է:**

Չիմքը՝ վերջին երեք տարվա ընթացքում դատական գործերի փորձ ունեցած անձինք (քաղաքացիներ և ձեռնարկատերեր), ընդհանուր թիրախային բնակչությունը (փաստաբաններ, դատավորներ և դատախազներ), (քաղաքացիներ n=362, գործարարներ n=160, փաստաբաններ n=250, դատավորներ n=97, դատախազներ n=245):



Չամաշխարհային բանկ, 2021թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում հայաստանյան զեկույց:



**Մարտահրավեր 4. Հատուկ ընթացակարգերի կիրառում (ՎԿ, պարզեցված ընթացակարգ)**

**119.** Ինչպես նկատվեց դատարան մուտքագրված գործերի ծանրաբեռնվածության, կատարողականի գործակիցների և գործերի կուտակումների վերլուծության ընթացքում, պայմանագրային/դրամական պարտավորություններին և ՎԿ-ներին առնչվող գործերն առաջին ատյանի դատարաններում կատարողականի նշանակալի շարժիչ ուժն են: Թեև կանոնավոր կերպով ճշգրիտ տվյալներ չեն հավաքվում, առկա տեղեկատվությունը ցույց է տալիս, որ պայմանագրային/դրամական պարտավորությունների վերաբերյալ գործերի զգալի մասն առնչվում է պարզեցված ընթացակարգին: Ըստ ԱՆ-ի տվյալների՝ 2019թ. 152,580 վարույթում գտնվող քաղաքացիական գործերից 83,988-ով (55 տոկոսը) կիրառվել է պարզեցված ընթացակարգ: 2020թ. պարզեցված ընթացակարգ է կիրառվել 160,857 գործերից 64,950-ով (40 տոկոս), իսկ 2021թ. առաջին կիսամյակում պարզեցված ընթացակարգով վարույթ են ընդունվել 115,162 վարույթում գտնվող քաղաքացիական գործերից 35,815-ը (31 տոկոսը): Ինչպես տեղեկացրել են առաջին ատյանի դատարանների դատավորները, դրանցից շատերը նախաձեռնվել են բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից:

**120.** Չնայած տարբեր տեսակի գործերի համար նախատեսված այս հատուկ ընթացակարգերի առկայությանը՝ Հայաստանում դատավորները, ըստ

երևույթին, չեն օգտագործում դրանք ըստ նշանակության: Փաստորեն, Հայաստանում դատավորները նշել են, որ իրենք հակված են կիրառելու պարզեցված ընթացակարգը ոչ թե փաստացի «փոքր» վեճերը լուծելու, այլ անվիճելի պահանջները կատարման ենթակա դարձնելու համար, այսինքն՝ ինչպես փաստացի վճարման կարգադրություն: Մյուս կողմից՝ արագացված ընթացակարգը համեստորեն է օգտագործվում նաև չհամաձայնեցված ժամկետների պատճառով, երբ դե ֆակտո արագացվածի փոխարեն առաջնահերթություն են տալիս պարզեցված ընթացակարգին:

**121.** Բոլոր երեք ընթացակարգերի կիրառության ընդլայնումը կարող է նպաստել և մեծացնել փոքր և ոչ դատական հայցերի պարզեցման ազդեցությունը<sup>103</sup>: Չնայած ավելի խոր վերլուծության համար պաշտոնական տվյալների բացակայությանը՝ դրանց ավելի լայն կիրառության հնարավորություններ կան: Ոչ դատավարական դրամական պահանջների համար դատական ընթացակարգերի կիրառման դադարեցումը հավանաբար օգտակար կլինի և՛ դատավորների, և՛ անձնակազմի, և՛ դատարաններից օգտվողների համար: Տարանջատված տվյալների բարելավված հասանելիությունը հնարավորություն կտա բացահայտելու դատական գործերում առկա խցանումները, որոնցով Հայաստանը ԱՎԵՅ անդամ գործընկեր երկրների հետ հավասար մակարդակում է, և ուղղել ռեսուրսները կարճաժամկետ ու միջնաժամկետ հեռանկարում դրանք լուծելու համար:

**ՆԵՐՂԻՐ 26. «ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԴՆՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ**

Այս վերլուծության տվյալների համաձայն՝ «Սնանկության մասին» օրենքի 2019 թվականի փոփոխությունները և մասնագիտացված դատարանի ստեղծումը սնանկության վարույթն ավելի արդյունավետ են դարձրել: Մասնագիտացված սնանկության դատարանի դերը հաստատելուց զատ, ներդրվել է փաստաթղթերի էլեկտրոնային փոխանակման համակարգ դատարանի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և սնանկության գործերով կառավարիչների միջև: Ավելին, սնանկության վարույթում գտնվող պարտապանի հետ կապված բոլոր քաղաքացիական գործերը քննվում են սնանկության դատարանում՝ նվազեցնելով նախկին համակարգման բացակայությունը դատական համակարգում և առնչվող քաղաքացիական հարցերի լուծման համար սպասվող երկար ժամանակը:

Բացի այդ, մշակվել են ենթաօրենսդրական ակտեր և ձևանմուշներ սնանկության գործընթացը ստանդարտացնելու և արագացնելու համար: Ընդունված ենթաօրենսդրական ակտերը ներառում են սնանկ

<sup>103</sup>Փոքր հայցերի և վճարման կարգադրությունների ընթացակարգերի վերաբերյալ լրացուցիչ պատկերացումների համար տե՛ս «Դատական գործընթացների արդյունավետության բարձրացում Հայաստանում. պարզեցված ընթացակարգի և վճարման կարգադրությունների բարելավման ուղիները արդարադատության համակարգի առավել լավ կատարողականի համար», Համաշխարհային բանկ, հղումը հասանելի է՝ <https://documents1.worldbank.org/curated/en/980031608628888810/pdf/Governance-and-Justice-Enhancing-the-efficiency-of-Court-Processes-in-Armenia-Ways-to-Improve-the-Simplified-Procedure-and-Order-for-Payment-Procedure-for-Better-Justice-System-Performance.pdf>



կուլթյան գործերով կառավարիչների պարտադիր վերապատրաստումը, սնանկության գործերով կառավարիչների և նրանց կոլեգիայի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը, սնանկության հայցերի գրանցամատյանը, պարտապանի ֆինանսական վերլուծությունը և պարտապանի սեփական ու համասեփականատիրոջ պատկանող գույքի ցուցակների ուղեցույցը: «Սնանկության մասին» օրենքը թույլ է տալիս լրացուցիչ ենթաօրենսդրական ակտերի կիրառում մի շարք առանցքային ոլորտներում, ներառյալ որակավորման քննության համար դիմումները և սնանկության կառավարիչների ԱՆ-ում գրանցվելը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս *‘Working With Insolvency Stakeholders in Armenia., C. Bridge Zoller, B. Davies, Law in Transition Journal 2021* («Աշխատանքը Հայաստանում անվճարունակության շահագրգիռ կողմերի հետ») / Ս. Բրիջ Չոլլեր, Բ. Դեյվիս, «Անցումային իրավունք» ամսագիր, 2021թ. <https://www.ebrd.com/documents/ogc/law-in-transition-2021-insolvency-stakeholders.pdf?blobnocache=true>

### Մարտահրավեր 5. Ընթացակարգային արդյունավետություն

**122.** Ընթացակարգային արդյունավետության նպատակով որոնվում են կատարողականը բարձրացնելու ուղիները՝ դատարաններին հնարավորություն տալով ավելի կարճ ժամանակում մատուցելու որակյալ ծառայություններ, միաժամանակ նվազեցնելով դատավորների և անձնակազմի վրա գործադրվող ճնշումը: Աշխարհի իրավական համակարգերում ընդունված են մի շարք առաջավոր գործելակերպեր, որոնք նպատակ ունեն բարելավելու դատարանների կատարողականությունը: Դրանցից են գործընթացի արդյունավետ սպասարկումը, դատական նիստերի արդյունավետ պլանավորումը և անցկացումը, գործերի հոսքի մշտադիտարկումը՝ անգործությունից խուսա-

փելու համար, ինչպես նաև գործընթացի չարաչափման և ընթացակարգային բացերի բացահայտումն ու կանխումը:

ա) **Գործերի կշռումը գործերի և ժամկետների հատկացման համար**

**123.** Աշխարհում իրավական համակարգերը կիրառում են գործերի կշռման մոտեցումներ գործերը բաշխելու և ժամկետներ սահմանելու համար՝ որպես գործերի բեռնվածության արդյունավետ կարգավորմամբ կառավարման գործիքներ: Հայաստանում նման «գործառնական գործիքների» կիրառումը դեռևս պետք է ներդնել պրակտիկայում՝ դատարանների կատարողականի չափման կոնկրետ թիրախներ սահմանելու համար:

## ՆԵՐՂԻՐ 27. ՀԱՅԱՍՏԱՆՈՒ ՊԱՏԱՀԱՎԱՆ ԱՎՏՈՍՏԱՑՎԱԾ ԲԱՇԽՈՒՄ

Գործերի պատահական ավտոմատացված բաշխումը ներդրվել է Հայաստանի բոլոր դատարաններում 2018թ. և փոփոխվել 2020 և 2021 թվականներին՝ արձագանքելով իրականացման խնդիրներին և թափանցիկության վերաբերյալ շարունակական մտահոգություններին: Համակարգի ենթադրյալ չարաչափում վերացնելու նպատակով ԲԴԽ-ն ժամանակավորապես դադարեցրել է համակարգը: Չապահովվելով փոխարինում, ինչպես նաև պահուստային մեխանիզմի բացակայության պարագայում գրեթե 10 ամիս գործերը վերստին բաշխում էին դատարանների նախագահները: Այս իրավիճակը քննադատության ենթարկեցին ՀԿ-ները հավանական «մարդկային միջամտության» հիմքով<sup>104</sup>:

**124.** 2021 թվականի օգոստոսին ԲԴԽ-ն իր «Գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին» որոշման մեջ ներկայացրել է գործերի բարդության մակարդակներ: Այժմ գործերը, ըստ բարդության աստիճանի, դասակարգվում են որպես պարզ, միջին բարդ, բարդ և առանձնակի բարդ: Գործի բարդության մակարդակը

որոշվում է (ա) իրավական բարդության չափանիշով, այսինքն՝ կիրառման ենթակա իրավունքի տրամբերի և ինստիտուտների առանձնահատկություններով, և (բ) փաստական բարդության չափանիշով՝ դատավարական անհրաժեշտ գործողություններ կատարելու ծավալով և այն հանգամանքներով, որոնք անխուսափելիորեն երկարացնում են գործի քննության տևողությունը: Երկուսն էլ արտահայտված են գոր-

<sup>104</sup><https://www.aravot.am/2022/01/26/1243618/>

ծակիցներով, որոնց հետևում են «Դատական համակարգ» ծրագրային ապահովման միջոցով (տե՛ս նաև 7-րդ գլուխը ՏՀՏ ռեսուրսների վերաբերյալ): Գործերի փաստական բարդության չափանիշների գործակիցների հանրագումարը գումարվում է իրավական բարդության չափանիշի գործակիցին՝ ձևավորելով գործի բարդության մակարդակը, որը կարող է ժամանակի ընթացքում փոխվել:

**125. ԲԴԽ-ի որոշման համաձայն՝ գործերի միջին ուղենշային ժամկետները սահմանվել են Ամերիկայի իրավաբանների ասոցիացիայի (ABA) ժամանակային չափորոշիչների հիման վրա:** Օրինակ՝ առաջին ատյանի դատարաններում պարզ քաղաքացիական գործերի 70 տոկոսը պետք է քննել մեկ ամսվա ընթացքում, 90 տոկոսը՝ երկու ամսվա ընթացքում, իսկ 100 տոկոսը՝ երեք ամսվա ընթացքում: Հաղորդվում է, որ դատավորները դեռևս ուղենշային ժամկետները գործնականում չեն պահպանում զգալի կուտակումների պատճառով (տե՛ս վերև արված քննարկումը), որը խանգարում է նրանց հետևելու սահմանված ղեկավար սկզբունքներին: Դատավորների շրջանում նաև բողոքներ կան, որ համակարգն ի վիճակի չէ հավասարակշռելու դատավորների աշխատանքային ծանրաբեռնվածությունն ու գործերի քանակը: Թեև ԲԴԽ-ի որոշման խախտումը դեռևս հիմք չէ դատավորների համար կարգապահական վարույթ հարուցելու համար, գործի երկարաձգված քննությունը կարող է հանգեցնել կարգապահական վարույթի (օրինակ, եթե գործը դատավորի կողմից բազմիցս երկարացվել կամ հետաձգվել է առանց պատշաճ հիմնավորման):

**126. Հայաստանում կառավարման գործիքների կիրառման շուրջ շահագրգիռ կողմերի հետագա քննարկումների մեծ դաշտ կա:** Որքան էլ դա կապված չէ տեղերում տիրող իրականության հետ, գործերի բաշխման և ժամկետների մասով գործերի կշռման այս մոտեցումը (քվոտաների փոխարեն) կարող է նպաստել գործերի խելամուծ ծանրաբեռնվածությանը, անձնակազմի կամ գործերի վերաբաշխմանը, գնահատման չափանիշների սահմանմանը և Հայաստանի դատական համակարգում աշխատանքային ստորաբաժանումների կրճատման կամ միաձուլման պլանավորմանը:

բ) **Վերաքննիչ համակարգի արդյունավետությունը՝ ուսումնասիրված բողոքարկման տոկոսների և բեկանման տոկոսների միջոցով**

**127. Բողոքարկման կամ բեկանման բարձր մակարդակները կարող են բացահայտել համակարգի թույլ կողմերը և վեր հանել որակի մարտահրավերները:** Բնականաբար, դատարանները նպատակ ունեն նվազագույնի հասցնել բեկանման տոկոսները, այսինքն՝ առաջին հերթին բողոքարկելու հիմքեր չտալ: Գործերի բեկանման բարձր մակարդակը, օրինակ՝ մոտավորապես 50 տոկոսը, ցույց է տալիս, որ բողոքարկվել են միայն իսկապես վիճելի գործերը: Բողոքարկման բարձր ցուցանիշները, սակայն, հուշում են այլ խնդիրների մասին, ինչպիսիք են նախադեպային իրավունքի ներդաշնակեցման հնարավոր բացակայությունը, որը դրդում է կողմերին բողոքարկել և առավել ցանկալի արդյունքի հույս ունենալ: Փաստաբաններն էլ կարող են ավելացնել բողոքների թիվը, եթե վճարվում են տվյալ գործով կատարած յուրաքանչյուր գործողության համար, և կողմերն էլ կարող են օգտագործել բողոքարկումները որպես երկարաժամանակ մեխանիզմ:


**127. Հայաստանում բողոքարկման մակարդակը, այսինքն՝ հաջորդ ավելի բարձր ատյանում բողոքարկվող որոշումների չափը համեմատաբար բարձր է առաջին ատյանի ամեն տեսակի գործերի դեպքում, բացառությամբ քաղաքացիական գործերի** (գծապատկեր 27): Լուծված գործերի թվի համեմատությունը բողոքարկված որոշումների թվի հետ ցույց է տալիս, որ առաջին ատյանի դատարաններում քրեական գործերի բողոքարկման միջին ցուցանիշը կազմում է 28-40 տոկոս, վարչական գործերի՝ 26-39 տոկոս, սևանկության գործերի՝ 15-32 տոկոս: Բողոքարկման մասնաբաժինը շատ ավելի ցածր էր քաղաքացիական գործերով և տատանվում էր 3-5 տոկոսի սահմաններում, հիմնականում՝ դրամական փոխհատուցման գործերի մեծ տեսակարար կշռի շնորհիվ, որոնց դեպքում հաշվարկված բողոքարկման մասնաբաժինը կազմում էր 1 տոկոս:

## Ներդիր 28. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԸՆԿԱՆՈՍԸ

Քաղաքացիներն ու բիզնես ոլորտի ներկայացուցիչները Հայաստանում դատարանների աշխատանքի որակը շատ ավելի ցածր են գնահատել, քան իրավաբանները: Քաղաքացիների միայն 44 տոկոսը և գործարարների 35 տոկոսն են որակը գնահատել բարձր՝ փաստաբանների 69 տոկոսի, դատախազների 68 տոկոսի և դատավորների 89 տոկոսի համեմատությամբ: Այնուամենայնիվ վերջերս դատարանների հետ առնչություն ունեցող քաղաքացիները և գործարարները զգալիորեն ավելի դրական են արտահայտվել, որոնցից քաղաքացիների 60 տոկոսը և ձեռնարկատերերի 44 տոկոսը դրական կարծիք են հայտնել:

**Ֆարցախույզի հարցը. Ընդհանրապես ի՞նչ կարծիք ունեք վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի դատարանների որակի մասին:**

Յիմքը՝ ընդհանուր թիրախային բնակչություն (քաղաքացիներ n=1359, գործարարներ n=552, փաստաբաններ n=250, դատավորներ n=97, դատախազներ n=245):



*Աղբյուրը՝* Համաշխարհային բանկ, 2021 թ., Արդարադատության վերաբերյալ տարածաշրջանային հարցում. հայաստանյան զեկույց:

Վատ օրենքները և դատավորների կատարած թերի աշխատանքը բացահայտվել են որպես առանձին գործերով դատարանների աշխատանքի որակի վատթարացման հիմնական պատճառներ: Ընդհանուր առմամբ, հարցված քաղաքացիների 38 տոկոսը և ընկերությունների 32 տոկոսը նշել են վատ օրենքները որպես դատարանների աշխատանքի ցածր որակի հիմնական պատճառ, մինչդեռ քաղաքացիների 28 տոկոսը և տնտեսվարողների 36 տոկոսը նշել են դատավորների վատ գործունեությունը: Այլ պատճառները շատ ավելի հազվադեպ են նշվել: Օրինակ՝ իրավական համակարգի ներկայացուցչի վատ աշխատանքն արձանագրել են քաղաքացիների միայն 2 տոկոսը և տնտեսվարողների մեկ տոկոսը:


Սակայն վերջին տարիներին դատարանների հետ առնչություն ունեցող քաղաքացիների և տնտեսվարողների հարցման արդյունքները ցույց են տալիս, որ դրական տեսակետները զգալիորեն ավելանում են: Եթե վերը նշված ընդհանուր բնակչության 44 տոկոսը դրական կարծիք ունի, ապա վերջին տարիներին դատարանների հետ առնչություն ունեցող քաղաքացիների՝ 60 տոկոսը: Նմանապես, վերջին տարիներին դատարանների հետ առնչություն ունեցող ձեռնարկությունների 44 տոկոսը դրական կարծիք ունի՝ ի տարբերություն վերը նշված հարցման ենթարկված բոլոր ձեռնարկությունների 35 տոկոսի:

**129. Հաջողված բողոքարկումների դիտարկումը ցույց է տալիս, որ բեկանման ամենաբարձր ցուցանիշները արձանագրվել են վարչական գործերով, իսկ քրեական գործերը ցույց են տվել ամենացածր բեկանման ցուցանիշը՝ չնայած այս տեսակի գործերի բողոքարկման ամենաբարձր տոկոսներին:** Վարչական դատարանը նաև ունեցել է բեկանման տոկոսների ամենամեծ տատանումները՝ 2017թ. 6 տոկոսից մինչև 54 տոկոս 2019թ.: Վարչական գործերով բեկանման տոկոսների աճը թելադրվել է տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնական կառավարության վիճելի որոշումների բեկանման աճով: Ժամանակի ընթացքում քրեական գործերով նվազել է ոչ միայն բողոքարկման, այլև բեկանման մասնաբաժինը 2017 թվականի սկզբնական 10 տո-

կոսից մինչև 3 տոկոս 2021թ.: Քաղաքացիական գործերով բեկանման ցուցանիշները տատանվել են 12-23 տոկոսի սահմաններում:

**130. Առաջին ատյանի առանձին դատարանների միջև բեկանման ցուցանիշները տարբերվել են քաղաքացիական գործերով, մինչդեռ ներկայացված թվերը քրեական գործերով առանձնապես չեն շեղվել:** 2021թ. Արմավիրի առաջին ատյանի դատարանի բողոքարկված քաղաքացիական որոշումների 6 տոկոսն է բեկանվել Գեղարքունիքի մարզի 29 տոկոսի համեմատությամբ: Նույն տարում Արմավիրի և Շիրակի առաջին ատյանի դատարաններում քրեական գործերով բեկանված որոշումներ չեն եղել, իսկ Կոտայքի առաջին ատյանի դատարանի բողոքարկված որոշումների 9 տոկոսը բեկանվել է:

**Գծապատկեր 27. 2017-2021 թթ. առաջին առյալի դատարաններում բողոքարկման տոկոսները և բեկանման տոկոսները՝ ըստ գործերի տեսակի**




Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

\*Սնանկության գործերով բեկանված որոշումների վերաբերյալ տվյալներ չկան:

**131. Վճռաբեկ դատարան ներկայացված իրավական պաշտպանության միջոցների թիվը տարիների ընթացքում նվազել է երեք վերաքննիչ դատարաններում, սակայն մնացել է մոտ 30 տոկոսի սահմաններում** (տե՛ս գծապատկեր 28): Նվազումն առավել էական է եղել վերաքննիչ քրեական դատարանում, երբ 2017թ. Վճռաբեկ դատարանում բողոքարկվել է որոշումների 58 տոկոսը, 2018թ. և 2019թ.՝ 34 տոկոսը, 2020թ.՝ 30 տոկոսը, 2021թ.՝ 29 տոկոսը: Ե՛վ վարչական վերաքննիչ դատարանը, և՛ քաղաքացիական վերաքննիչ դատարանը զեկուցել են ընդհանուր անկում 2017-2021թթ., համապատասխանաբար, 15 և 2 տոկոսային կետով, սակայն տատանումներ են դիտարկվել տվյալ ժամանակահատվածում<sup>105</sup>:

2017թ. Վճռաբեկ դատարանում բողոքարկվել է որոշումների 58 տոկոսը, 2018թ. և 2019թ.՝ 34 տոկոսը, 2020թ.՝ 30 տոկոսը, 2021թ.՝ 29 տոկոսը: Ե՛վ վարչական վերաքննիչ դատարանը, և՛ քաղաքացիական վերաքննիչ դատարանը զեկուցել են ընդհանուր անկում 2017-2021թթ., համապատասխանաբար, 15 և 2 տոկոսային կետով, սակայն տատանումներ են դիտարկվել տվյալ ժամանակահատվածում<sup>105</sup>:

**Գծապատկեր 28. 2017-2021 թթ. Վճռաբեկ դատարան ներկայացված իրավական պաշտպանության միջոցները**



Աղբյուրը՝ court.am և ՀԲ հաշվարկներ:

<sup>105</sup>Վերաքննիչ վարչական դատարանի որոշումների դեմ 2017թ. բողոքներ են ներկայացվել Վճռաբեկ դատարան 45 տոկոսով, 2018թ.՝ 21 տոկոսով, 2019թ.՝ 25 տոկոսով, 2020թ.՝ 32 տոկոսով, 2021թ.՝ 30 տոկոսով: Նույնն է դիտվել վերաքննիչ քաղաքացիական դատարանում. վճռված գործերի 41 տոկոսը՝ 2017թ., 38 տոկոսը՝ 2019թ., 39 տոկոսը՝ 2019թ., 33 տոկոսը՝ 2020թ., 39 տոկոսը՝ 2021թ.:

**132. Բողոքարկման համեմատաբար բարձր մակարդակները ցույց են տալիս, որ վերը նշված «մարտավարություններից» մի քանիսը, ամենայն հավանականությամբ, գործում են, երբ խոսքը վերաբերում է բողոքարկման տոկոսին:** Որոշումների կայացման որակի բավարար մակարդակի հասնելու և պահպանելու համար, ինչպես երևում է բողոքարկման և բեկանման «առողջ» ցուցանիշներով, դատական համակարգերը կիրառում են մի քանի միջոցներ: Դրանք ներառում են դատավորների կրթությունը, նախադեպային իրավունքի ներդաշնակեցման գործիքների ներդրումը և առկա մեխանիզմների ավելի լավ օգտագործումը: Դատավորների գերատեսչական հանդիպումները իրավական հարցերը քննարկելու նպատակով որոշ իրավական համակարգերում դարձել են համաձայնեցված որոշումների ընդունման նորմ և մի գործիք, որը Հայաստանի դատական համակարգը պիտի որ ուսումնասիրելու ցանկություն ունենա: Դատական որոշ համակարգեր ուսումնասիրել են նաև բողոքարկվող որոշումը սեփական որոշմամբ փոխարինելու ընթացակարգային հնարավորությունը, եթե դատավարական օրենքները տալիս են այդ հնարավորությունը: Այդ դեպքերում հստակ իրավական հիմնավորում է տրվում, երբ որոշումները բեկանվում են, որպեսզի ստորին ատյանի դատավորը հասկանա և հետագայում կարողանա խուսափել նման սխալներից:

## Բ. ԵԳՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**133. Գոյություն ունի ակնհայտ հարաճուն ճնշում, ինչը երևում է առաջին ատյանի դատարաններում կուտակումների աճից, որին պետք է անդրադառնալ կարճաժամկետ հեռանկարում, ինչպես նաև հիմք նախապատրաստել հետագայում բովանդակալից, ապացույցների վրա հիմնված որոշումների կայացման համար:** Կուտակումների կրճատման ծրագրերը կօգնեն դատական համակարգին և ղեկավարությանը՝ լուծելու այդ հարցը: Տվյալների առավել հաջող հավաքումը և վերլուծությունը կարճ և միջնաժամկետ հեռանկարում կնպաստի բովանդակալից, ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանը: Հայաստանի դատական համակարգը պետք է դուրս գա տվյալների ձեռքով հավաքման և վերլուծության շրջանակներից՝ բարելավելու դատարանների գործունեության մշտադիտարկումն ու կառավարումը: Չնայած հաղորդվում են բազմաթիվ տվյալներ, որոշ ոլորտներ կամ գործերի տեսակներ ավելի մեծ ուշադրության կարիք ունեն, քանի որ դրանք ներկայացնում են աշխատանքի հիմնական մասը: Գործող ՏՀՏ ծրագրերը պետք է հզորացվեն այդ ջանքերը հեշտացնելու համար: Ստորև ներկայացվում են առաջարկություններ շահագրգիռ կողմերի համար:

Առաջարկություն 1	Հզորացնել տվյալների հավաքումը և վիճակագրությունը
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Վերանայել վիճակագրական հաշվետվությունները ավելի լավ պատկերացում կազմելու համար ներկայումս ամենատարածված գործերի տեսակների մասին, որոնք կազմում են գործերի բեռնվածության և աշխատանքային ծանրաբեռնվածության մեծ մասը: Ցանկալի է սկսել առաջին ատյանի դատարաններում դրամական փոխհատուցման գործերից և վարչական դատարանում տեղական/կենտրոնական իշխանությունների վիճարկվող որոշումներից:</li> <li>■ Ուղղակիորեն սկսել քաղաքացիական գործերի տեսակների տարանջատումից վիճակագրական հաշվետվություններում՝ ըստ առավել նշանակալի ընթացակարգերի, մասնավորապես հարկ և համոզվել, որ պարզեցված և արագացված ընթացակարգերով քննվող գործերը կարող են տարանջատվել մյուս գործերից՝ գործադրվող ջանքերն ու ընթացակարգային խոչընդոտները մշտադիտարկելու և գնահատելու համար:</li> </ul>
Առաջարկություն 2	Ստեղծել գործերի կուտակումների նվազեցման պլաններ:
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Սահմանել տարիքային սահմանափակում գործը ձգձգված համարելու համար՝ ԱԿԵԳ-ի ուղեցույցներին համապատասխան:</li> <li>■ Ընդունել գործերի կուտակումների կրճատման պլաններ ինչպես ազգային, այնպես էլ յուրաքանչյուր դատարանի համար և համաձայնեցնել հետաձգված գործերի կուտակումների կրճատմանն ուղղված գործողությունները, ինչպես օրինակ՝ «հին» համարվող գործերի համար կանոնավոր և հաճախակի նիստեր նշանակել:</li> </ul>

<b>Առաջարկություն 3</b>	<b>Վերանայել ԲԴԽ-ի սահմանած ուղենիշային ժամկետները՝ ապահովելու դրանց իրագործելիությունը:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Նախաձեռնել գործի նմուշային ուսումնասիրություն՝ իրագործելի ժամանակային չափորոշիչները որոշելու համար:</li> <li>■ Ստեղծել մշտադիտարկման համակարգ՝ վեր հանելու առաջատար դատարանների փորձը և երկրում լավագույն գործելակերպի օրինակները:</li> </ul>
<b>Առաջարկություն 4</b>	<b>Վերանայել և հարմարեցնել պարզեցված ընթացակարգի, արագացված ընթացակարգի և վճարման կարգադրությունների շրջանակն ու կիրառելիությունը:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Հավասարեցնել պարզեցված ընթացակարգով և արագացված ընթացակարգով որոշումների ընդունման ժամկետները՝ խուսափելու համար նախապես պարզեցվածը արագացվածով փոխարինումից, ինչպես կատարվում է ներկայումս:</li> <li>■ Վերացնել ընթացակարգային խոչընդոտները, որոնք ստիպում են կողմերին պարզապես ներկայացնել ընդհանուր քաղաքացիական հայց և ոչ թե ընտրել վճարման կարգադրության եղանակը, ներառյալ ներդնել ՎԿ-ների խմբային ներկայացման և ծավալային վճարման մեխանիզմ:</li> </ul>
<b>Առաջարկություն 5</b>	<b>Բացահայտել (և ի վերջո վերացնել) գործերի ժամանակին լուծման ընթացակարգային խոչընդոտները և կիրառել իրավական պաշտպանության միջոցներ:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ձևավորել դատավորների և փաստաբանների համատեղ աշխատանքային խմբեր փոխըմբռնման հասնելու և խոչընդոտները, ինչպես նաև դրանց խորքային պատճառները բացահայտելու համար: Ընթացակարգային այդ խոչընդոտների լուծմանն այնուհետև կարող է առաջնահերթություն տրվել:</li> <li>■ Այս աշխատանքային խմբերին պետք է աջակցել, ընդ որում հարցախույզներով, որքանով որ հնարավոր է, և առկա վիճակագրական տվյալներով՝ արդյունքները հաստատելու և իրավական մեխանիզմները գործնականում ստուգելու համար (հետադարձ կապ):</li> </ul>



# V. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐ

Այս գլխում վերլուծվում է բյուջեի կառավարմանն առնչվող առկա իրավական և ինստիտուցիոնալ հենքը՝ դիտարկելով բյուջեի նախագծմանը, պլանավորմանը, կատարմանը, վերահսկողությանը և հաշվետվության ներկայացմանը մասնակցող հիմնական սուբյեկտներին, ինչպես նաև դիտարկվում են Հայաստանի դատական համակարգում հիմնական ծախսերը: Համեմատած ԱԱԵՀ անդամ երկրների հետ՝ Հայաստանը ցածր տեղ է զբաղեցնում ինչպես ՀՆԱ-ում, այնպես էլ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող արդարադատության իրական ծախսերով: ԲԴԽ-ն հաստատում է իր ու դատարանների բյուջետային հայտերը և միջնաժամկետ ծախսերի ծրագրերը, սակայն սահմանափակ ազդեցություն ունի Ազգային ժողովի վերջնական բյուջետային որոշումների վրա: Քանի որ դատական համակարգի կատարողականի, ծառայությունների մատուցման բարելաման և բարեվարքության մասով հանրային պահանջները մեծանում են, բոլոր մակարդակներում առավել լավ ֆինանսական համակարգման, պլանավորման և բյուջետային հմտությունների կատարելագործման անհարժեշտություն է ծագում:

66

## Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀԻՐԱՎԵՐՆԵՐԸ

**135. Առաջին մարտահրավերը վերաբերում է բյուջեի ֆինանսական նախապատրաստմանը, որոշումներին և կատարմանը:** ԲԴԽ-ն նախապատրաստում և ներկայացնում է դատական բյուջեն, սակայն չկա ԱԺ որոշումների թափանցիկություն՝ կապված ԲԴԽ-ի բյուջետային հայտերի դիմումների կրճատման կամ մերժման հետ: Չնայած ԲԴԽ-ի և ԱԺ-ի միջև անմիջական քննարկումներին՝ վերջինս հաճախ հակված է դատական բյուջեի վերաբերյալ կառավարության ավելի խիստ դիրքորոշմանը<sup>106</sup>: Առաջարկությունները ներառում են բավարար դատական բյուջեի օրենսդրական երաշխիքի ամրապնդում՝ բացարձակ նվազագույնի սահմանը հատելու համար, ինչը հնարավորություն կտա ԲԴԽ-ին ավելի լավ թիրախավորելու իր սկզբնական պահանջները և առավել լավ պաշտպանելու հաստատված բյուջեում փոփոխության/վերաբաշխման համար ներկայացվող պահանջները (ներառյալ այն օրենսդրական հիմքերի ավելի մեծ հստակություն պահանջելը, որոնք հնարավորություն են տալիս ԱԺ-ին մերժելու բյուջետային հայտերը):

**136. Սահմանափակ կարողությունները դատարանի և ԴԴ-ի մակարդակում խոչընդոտում են բյուջեի կազմման և ընդունման գործընթացը:** Դատարանի անձնակազմը և ԴԴ-ի աշխատակիցները ներկայումս չեն վերապատրաստվում դատական բյուջեի կազմման ուղղությամբ<sup>107</sup>, և բավարար մեթոդաբանություն չի կիրառվում նոր բյուջետային հայտերի կազմման համար: Առաջարկությունները ներառում են դատարանի անձնակազմի և ԴԴ անձնակազմի հմտությունների բարելավումը, որոնք ներկայումս դատական բյուջեի կազմման գծով չեն վերապատրաստվում, և պետք է ներդնել բյուջետային նոր հայտերի կազմման բարելավված մեթոդաբանություն:

**137. Երկրորդ մարտահրավերը նվազող բյուջեն է, որում աշխատավարձերը գերակշռում են:** Աշխատանքի վարձատրման ծախսերը սահմանափակում են մյուս ծախսերը: Առանց համապատասխան լրացուցիչ կապիտալի և գործառնական ծախսերի՝ աշխատուժը, ամենայն հավանականությամբ, անարդյունավետ կօգտագործվի, օրինակ՝ կատարելով ձեռքով գործողություններ, որոնք կարող էին թվայնացվել: Աշխատուժի ծախսերից հետո հատկացված բյուջեում մնացածն օգտագործվում է մյուս բոլոր ծախսերի համար, ներառյալ ՏՀՏ-ի և շենքերի վերանորոգման ապահովումը և սպասարկումը՝ արձագանքելով ակնհայտ հրատապ կարիքներին առանց համընդհանուր պլանի կամ ժամկետի: Բարեփոխումների հավակնոտ օրակարգը դժվար թե շոշափելի արդյունքներ տա, եթե ծախսերի և ռեսուրսների բաշխման խնդիրները մնան չլուծված: Առաջարկությունները ներառում են բյուջեի հատկացման և օգտագործման վերաբերյալ տվյալների ընդլայնված հավաքումն ու օգտագործումը: Անհրաժեշտ է ունենալ կատարելագործված պլանավորում՝ ապահովելու համար կարևոր ֆիզիկական ենթակառուցվածքների և ՏՀՏ ծրագրերի իրականացումը:

**Մարտահրավեր 1. Բյուջեի կազմում, որոշում և կատարում սահմանափակ հմտությունների պարագայում**

ա) Իրավական դաշտը և ինստիտուցիոնալ պատասխանատվությունը

**138. Դատարանները և ԲԴԽ-ն ֆինանսավորվում են պետությունից և պետք է ֆինանսավորվեն իրենց բնական գործունեության համար անհրաժեշտ ծախսերը հոգալու համար<sup>108</sup>:** Սահմանադրության 175-րդ հոդվա-

<sup>106</sup>Լալայան Լ. 2022 թ. Դատական անկախության ապահովագրություն ֆինանսական հատկացումների միջոցով:

<sup>107</sup>Տե՛ս նույն տեղում:

<sup>108</sup>Դատական օրենսգրքի 38-րդ հոդված:



ծում նկարագրվում են բյուջեի ձևավորման գործընթացը և ներգրավված սուբյեկտները, որոնք առավել մանրամասն ամրագրված են 2018 թվականի Դատական օրենսգրքում<sup>109</sup>: Բյուջեում յուրաքանչյուր դատարանի և ԲԴԽ-ի համար առանձնացված է առանձին տող:

**139. Հայաստանում բյուջետավորման գործընթացում դատարաններին և ԲԴԽ-ին վերապահված է կենտրոնական դեր, սակայն բյուջետային հմտությունները սահմանափակ են:** 2015 թվականի սահմանադրական փոփոխությունները և 2018 թվականին Դատական օրենսգրքի ներդրումը Հայաստանի դատական համակարգը համապատասխանեցրին միջազգային չափանիշներին (տե՛ս ներդիր 29): Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն և բյուջետային գործընթացն սկսելու մասին որոշմամբ սահմանված ժամկետներում ԲԴԽ-ն կառավարություն է ներկայացնում իր և դատարանների բյուջետային հայտը և միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ դրանք պետա-

կան բյուջեի նախագծում ներառելու համար (տե՛ս ներդիր 30): Երբ կառավարությունը հավանություն է տալիս հայտին, այն ընդգրկում է պետական բյուջեի նախագծում (գծապատկեր 51-ում պատկերված է բյուջեի գործընթացը): Եթե կառավարությունը դեմ է (ամբողջությամբ կամ մասամբ) հայտին կամ ծրագրին, և՛ ԱԺ-ին, և՛ ԲԴԽ-ին է ներկայացնում պետական բյուջեի նախագիծը և դատական համակարգի կողմից առաջադրված հայտն ու ծրագիրը կառավարության առարկությունների հիմնավորման հետ միասին: Այնուամենայնիվ հիմնավորման մանրամասները հստակ չեն և հնարավորություն չեն տալիս ԲԴԽ-ին կատարելաբար ընտելու հաջորդ տարվա բյուջեի հայտի մշակումը: Մրցակցային միջավայրում, որտեղ ռեսուրսները սակավ են, ամբողջ կառավարության կողմից բյուջետային հիմնավոր առաջարկներ կազմելը կարևոր հմտություն է, սակայն անձնակազմն այդ ուղղությամբ հատուկ վերապատրաստում չի անցնում:

## ՆԵՐԴԻՐ 29. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ. ՄԻՋԱԳՈՒՅԻՆ ՊՐԱԿՏԻԿ

**Բուլղարիա.** Բարձրագույն դատական խորհուրդը կազմում է տարեկան բյուջեի նախագիծ, որը ներկայացվում է Նախարարների խորհրդին՝ պետական բյուջեի մասին օրենքի նախագծում ներառելու համար: Նախարարների խորհուրդը դա ներկայացնում է խորհրդարան՝ հանրապետական բյուջեի կատարման հաշվետվության և Բարձրագույն դատական խորհրդի կողմից առաջարկված դատական համակարգի բյուջեի կատարման հաշվետվության հետ միասին (մանրամասն բացատրություններով): Նախարարների խորհուրդն իրավասու չէ փոփոխել Բարձրագույն դատական խորհրդի բյուջեն, այլ միայն կարող է դրա վերաբերյալ կարծիք հայտնել, երբ այն հասնում է խորհրդարան:

**Կալիֆոռնիա (ԱՄՆ).** Դատական խորհուրդը սահմանում է դատարանների բյուջետային քաղաքականությունը՝ համահունչ պետական պահանջներին, աշխատանքային ծանրաբեռնվածությանը և կատարողականի չափանիշներին: Դատարանների վարչական գրասենյակը վերլուծում է դատարանների ներկայացրած դիմումները, դրանք համադրում է ծրագրային հարցումների արդյունքներին և գումարներ առաջարկում խորհրդին: Դատարանի բյուջեն ներկայացվում է որպես միասնական բյուջե: Հարցումները կառավարչին և օրենսդիր մարմիններին կատարվում են ոչ թե առանձին դատարանների, այլ ծրագրերի հիման վրա (օրինակ՝ մեկնաբանողներ): Դատական իշխանության ներկայացուցչությունը իշխանության երկու ճյուղերում իրականացնում է խորհուրդը և դատարանների վարչական գրասենյակը: Դատական խորհուրդն իրավասու է հատկացնել և վերաբաշխել միջոցներ:

**Էստոնիա.** Դատարանների կառավարման խորհուրդը դատարաններին նախապես կարծիք է տրամադրում դատարանների տարեկան բյուջեների ձևավորման և փոփոխման սկզբունքների վերաբերյալ: Արդարադատության նախարարությունը 1-ին և 2-րդ աստիճանի դատարանների բյուջեները հաստատում է պետական բյուջեն ընդունելուց երկու շաբաթ անց՝ հաշվի առնելով այդ կարծիքը: Դատարանի նախագահի նախնական համաձայնությամբ 1-ին և 2-րդ աստիճանի դատարանների համար Դատական կառավարման խորհուրդը նախապատրաստում և արդարադատության նախարարություն է ներկայացնում բյուջեի նախագիծը: Համապատասխան դատարանների դատավորները համատեղ առաջարկություններ են կազմում համապատասխան դատարանի նախագահին բյուջեի նախագծի կազմման և բյուջետային միջոցների օգտագործման վերաբերյալ: Արդարադատության նախարարությունը տարվա ընթացքում կարող է փոփոխություններ կատարել առանձին դատարանի բյուջեում՝ հաշվի առնելով դատարանի նախագահի կարծիքը և Դատական կառավարման խորհրդի կողմից ձևակերպված սկզբունքներին համապատասխան:

*Աղբյուրը՝ Համաշխարհային բանկ:*

<sup>109</sup><https://www.arlis.am/>, Հայաստանի Հանրապետության 2015 թվականի Սահմանադրության 175-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետ, <https://www.arlis.am/>, Հայաստանի Հանրապետության 2018 թ. Դատական օրենսգրքի, 38-րդ և 98-րդ հոդվածներ:

## ՆԵՐՊԻՐ 30. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ ԵՎ ԺԱՍԿԵՏՆԵՐ

Բյուջեի նախագծերը կազմում են պետական և տեղական իշխանությունները և բաղկացած են երկու բաղադրիչից՝ ա) եռամյա միջնաժամկետ ծախսերի շրջանակ (ՄԺԾԾ) և (բ) տարեկան բյուջե: Ժամանակագրական առումով տարեկան բյուջեն հետևում է ՄԺԾԾ-ին, որն ընդգրկում է երեք տարի ժամկետ և հիմք է ծառայում տարեկան բյուջեի համար:

Մինչև հուլիսի 10-ը կառավարությունը հաստատում է ՄԺԾԾ-ն, իսկ մինչև հուլիսի 20-ը այն ներկայացնում է ԱԺ: Տարեկան բյուջեի կազմումը սկսվում է ՄԺԾԾ-ի հաստատումից ոչ ուշ:

Կառավարությունը բյուջետային տարվա սկզբից 90 օր առաջ Ազգային ժողով է ներկայացնում տարեկան պետական բյուջեի նախագիծը (ներառյալ Կենտրոնական բանկի խորհրդի հաստատած կապիտալ ներդրումների ծրագիրը) հետագա քննարկումների համար:

Մինչև բյուջետային տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում հատկացումները կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

Սահմանափակ կարողությունների և աշխատակազմի բյուջետային վերապատրաստման բացակայության պայմաններում դատական համակարգի առկա պրակտիկան հետևյալն է. կիրառել անվճար գնահատման մեխանիզմ տարբեր տարիների ծախսերը համեմատելու միջոցով, որի արդյունքները նպաստում են նոր բյուջետային հայտերի կազմմանը, չնայած այն հանգամանքին, որ բյուջետային հայտերը և ծրագրերն ընդգրկում են ընդհանուր առմամբ չորս տարի (երկու նախորդ, երկու գալիք տարի):

Սեղմ ժամկետները հետագայում սահմանափակում են բյուջեի կազմումը: Դատարանի մակարդակում աշխատակազմը պետք է մշակի բյուջետային հայտերի և միջնաժամկետ ծախսերի պլանների նախագծերը մինչև տվյալ տարվա փետրվարի 10-ը (այսինքն՝ տարեվերջյան տոներից և հասարակական կյանքի վերսկսումից (հունվարի 10) մոտ մեկ ամիս անց): Այնուհետև ԴԴ-ն պետք է վերանայի և վերջնական տեսքի բերի դատարանների (և ԲԴԽ-ի) միասնական բյուջեի հայտը և միջնաժամկետ ծախսերի պլանները մինչև մարտի 1-ը, ներառյալ ԲԴԽ-ի հաստատումը:

*Աղբյուրը՝ ԴԴ օրենքը «ԴԴ բյուջետային համակարգի մասին»:*

**140. ԲԴԽ-ն իրավասու է ԱԺ-ում տարեկան բյուջեի շուրջ լուծումների ժամանակ ներկայացնել իր դիրքորոշումը և հիմնավորել իր բյուջետային պահանջը<sup>110</sup>:** Բյուջեի հարցման կամ միջնաժամկետ ծախսերի պլանի վերաբերյալ ԲԴԽ-ի դիրքորոշումը ԱԺ-ին ներկայացնում է ԲԴԽ-ի նախագահը կամ պատվիրակում է ԴԴ-ի ղեկավարին: Սահմանված է նաև բյուջեի առանձին տող չնախատեսված ծախսերի համար՝ որպես պահուստային ֆոնդ, որի գումարը կազմում է դատա-

կան իշխանության համար տվյալ տարվա նախատեսված ծախսերի երկու տոկոսը: Պահուստային ֆոնդից հատկացումները տրամադրվում են ԲԴԽ-ի որոշմամբ: Հիմնական բյուջեի և պահուստային ֆոնդի միջոցների անբավարարության դեպքում ԲԴԽ-ն դիմում է կառավարություն<sup>111</sup>: Ֆինանսների նախարարությունը (ՖՆ) լրացնում է վեր հանված բացը կառավարության պահուստային ֆոնդից՝ ապահովելով դատական համակարգի բնականոն գործունեությունը<sup>112</sup>:

<sup>110</sup>Դատական օրենսգրքի հոդված 38:

<sup>111</sup>Դատական օրենսգրքի հոդված 38, մաս 10:

<sup>112</sup>Դատական օրենսգրքի հոդված 38, մաս 11-12:

#### Աղյուսակ 4. Ֆինսկալ մարմինները դատական համակարգում

Մարմիններ	Ուղիղ կամ ԲԴԽ-ի ներքո
Արտաքին ֆինանսական վերահսկողություն	
Ֆինանսների նախարարություն	
Հաշվեքննիչ պալատ	
<b>Վարչական/վերահսկողական ստորաբաժանումներ</b>	
Արդարադատության նախարարություն	Ուղիղ
Բարձրագույն դատական խորհուրդ	Ուղիղ
<b>Ընդհանուր իրավասության դատարաններ</b>	
Վճռաբեկ դատարան	ԲԴԽ
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	ԲԴԽ
Վերաքննիչ քրեական դատարան	ԲԴԽ
Ընդհանուր իրավասության դատարան (Երևանում և 10 մարզերում [շրջաններ])	ԲԴԽ
<b>Մասնագիտացված դատարաններ</b>	
Սահմանադրական դատարան	Ուղիղ
Վերաքննիչ վարչական դատարան	ԲԴԽ
Վարչական դատարան	ԲԴԽ
Սևակության դատարան	ԲԴԽ

#### բ) Բյուջեի մշակման գործընթաց

**141. Բյուջետային համակարգը կազմված է պետական բյուջեներից և համայնքային բյուջեներից**<sup>113</sup>: Դրանք հիմնված են պետության միասնական հարկաբյուջետային, դրամավարկային և հարկային քաղաքականության վրա: Բյուջետային քաղաքականության մարմինը գործում է «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի համաձայն<sup>114</sup>:

**142. Դատարաններն իրենց բյուջետային հայտերը և միջնաժամկետ ծախսերի պլանները excel ձևաչափով ներկայացնում են ԴԴ-ին:** Դատական այս բյուջեները ներառում են ներկա/ընթացիկ ծախսերը և ոչ ֆինանսական գործունեությունից գոյացած ծախսերը: Ծախսերը ներառում են՝ դատավորների և դատարանների անձնակազմի աշխատավարձեր, կոմունալ ծառայություններ, համակարգիչներ, շենքերի, ենթակառուցվածքների և տրանսպորտային միջոցների սպասարկում, արդարադատության իրականացման համար անհրաժեշտ տեխնիկական նյութեր, գործուղումների ծախսեր և այլն: Ոչ ֆինանսա-

կան գործունեության ծախսերը ներառում են շենքերի կառուցում, ֆիզիկական ենթակառուցվածքների վերանորոգում ու վերականգնում և այլն:


**143. Առանձին դատարանների բյուջեի դիմումները և միջնաժամկետ ծախսերի պլանները ստանալուց հետո ԴԴ-ն ձևավորում է դատական բյուջեի ընդհանուր հայտը և միջնաժամկետ ծախսերի պլանը, որոնք այնուհետև ներկայացնում է ԲԴԽ՝ Դատական օրենսգրքի 89-րդ հոդվածի համաձայն:** ԴԴ-ն իրավասու է փոփոխել կամ շտկել դատարանների կողմից ներկայացված դիմումների և պլանների նախագծերը, այդ թվում՝ տեխնիկական/հաշվարկային սխալները, նորմատիվ ակտերին չհամապատասխանելը կամ շեղումները նախկին/սովորական ծախսերից<sup>115</sup>: ԴԴ-ն է պատրաստում նաև ԲԴԽ-ի բյուջետային հայտի նախագիծը: Վերջնական բյուջեում գետեղվում են նաև նախորդ երկու տարիների տվյալները և գալիք երկու տարիների կանխատեսումները, ինչը հնարավորություն է տալիս հետևելու դատական ծախսերին:

<sup>113</sup>Համաձայն «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի և «Հարկային օրենսգրքի»՝ համայնքների բյուջեների եկամուտները գոյանում են հարկային եկամուտներից (հողի հարկ, գույքահարկ, եկամտահարկի նվազեցումներ, շահութահարկի նվազեցումներ, բնապահպանական վճարների նվազեցումներ, տույժեր և տուգանքներ՝ հողի և գույքահարկի օրենսդրության խախտման համար, որը գանձվում է համայնքների բյուջեներ), դրոշմանիշային վճարներ, տեղական դրոշմանիշային վճարներ, ոչ հարկային եկամուտներ (համայնքի հողերի վարձակալություն և օգտագործում, գույք, տեղական վճարներ, եկամուտներ տույժերի միջոցառումներից և այլն), կապիտալի մուտքեր, պաշտոնական փոխանցումներ (սուբսիդիաներ, սուբվենցիաներ և այլն):

<sup>114</sup><https://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>

<sup>115</sup>Դատական անկախության ապահովագրում ֆինանսական հատկացումների միջոցով, 2022 թ.:

## Գծապատկեր 29. Բյուջեի կազմման գործընթաց



Աղբյուրը՝ «Բյուջետային համակարգերի մասին» ՀՀ օրենք:

**144. Այնուամենայնիվ բյուջեի պլանավորման կապակցությամբ ԲԴԽ-ի և կառավարության հանդիպումները հազվադեպ են:** Միջգերատեսչական տեխնիկական մակարդակում ավելի հաճախակի հանդիպումները կարող են նպաստել բյուջեի պլանավորմանը, բարձրացնել բյուջեի կատարման արդյունավետությունը, նպաստել բյուջետային գործընթացների ըմբռնման խորացմանը և դատական կառավարման ոլորտում ներկայիս սահմանափակ բյուջետային հմտությունների բարելավմանը:

**145. ԱԺ-ն ի վիճակի է մերժելու կամ վերանայելու բյուջետային հայտերի դիմումները, սակայն օրենսդրական հիմքերը, որոնցով դա թույլատրվում է, միշտ չէ, որ հստակ են:** Սա դժվարացնում է ԲԴԽ-ի՝ իր պահանջները թիրախավորելու կամ պաշտպանելու խնդիրը: Միջգերատեսչական կապերի ու համագործակցության ամրապնդումը և հանդիպումների հաճախականության ավելացումը կիեշտացնեն ներգրավված շահագրգիռ կողմերի տեղեկատվության կարիքների, նաև սակավ ռեսուրսների բաշխման ու

հատկացման խնդիրների փոխըմբռնումն ու հիմնավորումը:

**146. Դատական բյուջեի հատկացումների հարցում շահագրգիռ կողմերի կամ հանրային ներգրավվածությունը սուղ է:** Դատարանների, դատավորների և դատարանների անձնակազմի կարիքները, ինչպես նաև դատարաններից օգտվողների կարիքները հրապարակայնորեն պատշաճ չեն ձևակերպվում: Հավանական է սահմանափակ իրազեկությունն այն դժվարին աշխատանքային պայմանների մասին, որոնցում գործում է Հայաստանի դատական համակարգը, ինչը հավանաբար մեծացնում է հասարակական ճնշումը և բարդացնում հանրային ակնկալիքների կառավարումը:

### գ) Բյուջեի կատարում

**147. Համաձայն օրենսդրության և բյուջետային հատկացումների մասին Կառավարության տարեկան որոշման<sup>116</sup> բյուջեն բաշխվում է ըստ ծախսային միավորների (առանձին դատարանների)<sup>117</sup>:** Յու-

<sup>116</sup>Օրինակ՝ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի 2215-Ն որոշումը:  
<sup>117</sup>Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=149033>, Հավելված 4:

րաքանչյուր դատարանի բյուջեն բաժանվում է ըստ տողերի և ծախսերի տեսակների, օրինակ՝ աշխատավարձ, վարչական ծախսեր և այլն: Դատարանի մակարդակով ԴԴ-ն կազմակերպում և վերահսկում է դատարաններին հատկացված բյուջեի ծախսերը: Շինարարության և այլ մեծ ծախսերը կատարվում են ԲԴԽ-ի կողմից ԴԴ-ի միջոցով: Դատարանները և ԲԴԽ/ԴԴ-ն հետևում են նաև «Պետական գնումների մասին» օրենքին: Այսպիսով, պետական գնումները կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ պլանները նախապես հաստատված են<sup>118</sup>: Մեկ հայտով մրցույթի կամ ուղղակի պայմանագրի դեպքում ծախսերը/գնումները պետք է նախապես հաստատվեն ՖՆ-ի կողմից: Այս լրացուցիչ պահանջը նպատակ ունի սահմանափակ մրցակցության դեպքերում նվազեցնելու հնարավոր շահերի բախումը և կոռուպցիոն ռիսկերը:

**148. Բյուջեի կատարողականը կանոնավոր կերպով վերահսկվում է դատարանների, ԲԴԽ-ի (որին զեկուցում է ԴԴ-ն), ԱՆ-ի և, ի վերջո, ԱԺ-ի կողմից:** Դատարանների մակարդակով ծախսերը կատարվում և մշտադիտարկվում են, ըստ բյուջեի տողերի, էլեկտրոնային համակարգի միջոցով, որը հասանելի է միայն ԴԴ-ին և ՖՆ-ին<sup>119</sup>: Դատարանները եռամսյակային կտրվածքով ԴԴ-ին են ներկայացնում ծախսերի հաշվետվություններ, որտեղ էլ դրանք ամփոփվում են<sup>120</sup>: Այնուամենայնիվ ներկայումս չկան «խելացի» ցուցիչներ (այսինքն՝ կոնկրետ, չափելի, հասանելի, տեղին և ժամկետային ցուցանիշներ), որոնք տեղեկություններ կտրամադրեն բյուջեի կատարման մասին և կուժեղացնեն բյուջեի միջնաժամկետ պլանավորումը, ինչպես նաև կբարելավեն կապը այլ շահագրգիռ կողմերի հետ և լրբբինգը դատական իշխանության բյուջեի կարիքների մասով:

**149. Դատարանները և ԲԴԽ/ԴԴ-ն հետևում են ֆինանսների նախարարության հաստատած բյուջեի կատարման մեթոդաբանությանը:** «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի հիման վրա դատական իշխանությունը, հանձին ԲԴԽ նախագահի, հաջորդ տարվա հունիսին ԱԺ է ներկայացնում տարեկան

ծախսերի հաշվետվությունը: Առարկությունների բացակայության դեպքում ԱԺ-ն ընդունում է ծախսերի հաշվետվությունը: Տարեկան հաստատված բյուջեում դատական բյուջեին հատկացված է հատուկ տող, որը հրապարակայնորեն հասանելի է<sup>121</sup>: Դատարաններն անկախ են բյուջեի յուրաքանչյուր տողով հատկացված միջոցներն օգտագործելու հարցում, թեպետ բյուջեի կատարման մեթոդաբանությունը սահմանափակումներ է դնում յուրաքանչյուր կատեգորիայի ծախսերի համար: Բյուջեի կատարման ընթացքում փոփոխությունները թույլատրվում են յուրաքանչյուր կատեգորիայի ներքո<sup>122</sup>: Որոշակի շեմերից բարձր կատեգորիաների միջև վերաբաշխումները պահանջում են հիմնավորում և հաստատում կառավարության (ՖՆ-ի) կողմից<sup>123</sup>:

**150. ԴԴ-ի ֆինանսաբյուջետային վարչության փոքր անձնակազմը զբաղվում է բյուջեի ներքին գործընթացով՝ որպես ԲԴԽ-ին տրամադրվող աջակցության մաս:** Այս բաժինը, որը կապ է պահպանում ՖՆ-ի հետ, հավաքում, վերջնական տեսքի է բերում և ներկայացնում դատարանների բյուջեն՝ ներառյալ նախորդ տարվա ծախսերի համեմատությունը՝ ըստ դատարանների և աշխատավարձերի: Դեպարտամենտը նաև պատասխանատու է կառավարության՝ բյուջեի պահանջի և պլանի հետ կապված ցանկացած մտահոգության լուծման, բյուջեի վերաբերյալ ԲԴԽ-ի պաշտոնական կարծիքը ձևակերպելու և ավելի ընդհանուր ֆինանսատնտեսական վերլուծության համար, ներառյալ՝ բյուջեի կատարողականը: Չնայած իր առաջադրանքների շրջանակին և կարևորությանը՝ ԴԴ-ի ֆինանսաբյուջետային վարչությունն ընդամենը չորս հաստիք ունի:

**151. ԴԴ-ի հաշվապահական հաշվառման վարչությունը պատասխանատու է ֆինանսական, բյուջետային, հարկային և այլ պարտադիր հաշվապահական հաշվետվությունների համար:** Աշխատավարձերի վճարումը կենտրոնական մակարդակով նույնպես կազմակերպվում է այս գերատեսչության կողմից: Յուրաքանչյուր դատարան ունի մեկ հաշվապահի պաշտոն (բացառությամբ Երևանի առաջին ատյանի դատա-

<sup>118</sup>Տե՛ս <https://gnumner.am/en/>  
<sup>119</sup>Ընդհանուր տարեկան բյուջեի կատարման, ներառյալ դատական իշխանության բյուջեի մասին տեղեկատվությունը հասանելի է հետևյալ հղումով՝ [https://minfin.am/hy/page/byujei\\_hashvetvutyun1/?fbclid=IwAR3HDh-bll-7W82MIltcBoD1\\_v2DwA7ShjeUs\\_McT-axZWcWqyaGMOET8gE](https://minfin.am/hy/page/byujei_hashvetvutyun1/?fbclid=IwAR3HDh-bll-7W82MIltcBoD1_v2DwA7ShjeUs_McT-axZWcWqyaGMOET8gE)  
<sup>120</sup>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդված: Օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է թափանցիկության սկզբունքը (հաստատված բյուջեների և կատարման հաշվետվությունների պարտադիր հրապարակում, բյուջեների կատարման վերաբերյալ տեղեկատվության առկայություն, բյուջեների նախագծերի ընկալման և որոշումների ընդունման գործընթացի թափանցիկություն): Տե՛ս հետևյալ հղումով՝ [https://minfin.am/hy/page/hh\\_petakan\\_byujei\\_ereq\\_tarineri\\_kataroghakan\\_hayeren\\_ev\\_angleren\\_jezunerov](https://minfin.am/hy/page/hh_petakan_byujei_ereq_tarineri_kataroghakan_hayeren_ev_angleren_jezunerov)  
<sup>121</sup>Տե՛ս <https://www.gov.am/files/docs/4337.pdf>  
<sup>122</sup>Պետական բյուջեի կատարման հաշվետվությունները, որոնք հասանելի են ՖՆ կայքում, ներառում են հատուկ տող (1080) դատական համակարգի համար (ԲԴԽ, դատարաններ և այլն), որտեղ հասանելի է դատական բյուջեի կատարողականը: Տե՛ս [https://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun\\_2021\\_t\\_inn\\_amisner](https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun_2021_t_inn_amisner) հղումով:  
<sup>123</sup>«ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքի 23-րդ հոդվածով սահմանվում է, որ պետական բյուջեի կատարման ընթացքում պետական կառավարման համապատասխան մարմին ղեկավարը կարող է կատարել ներքին վերաբաշխումներ՝ պետական բյուջեի մասին օրենքով սահմանված հատկացումների ընդհանուր գումարի 15 տոկոսից ոչ ավելի այդ մարմնի կողմից կառավարության սահմանած կարգով իրականացվող յուրաքանչյուր ծրագրի համար (եթե տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով այլ բան նախատեսված չէ):

րանի, որն ունի երեքը)՝ պատասխանատու ֆինանսական, հաշվապահական և բյուջետային գործընթացների համար, ներառյալ յուրաքանչյուր դատարանի աշխատավարձի հաշվարկը և փաստացի վճարումը: Հաշվարկման գործընթացը կատարվում է ձեռքով, քանի որ չկան օժանդակող էլեկտրոնային գործիքներ:

**դ) Բյուջեի հսկողություն և հաշվետվողականություն**

**152. ԲԴԽ-ի և երբին աուդիտի վարչությունն իրականացնում է բյուջեի ծախսերի ստուգումներ և վերահսկողություն**<sup>124</sup>: Արդյունքների մասին զեկուցվում է ԲԴԽ-ի ղեկավարին: Արտաքին վերահսկողությունը

(աուդիտը) տարեկան կտրվածքով իրականացնում է Հաշվեքննիչ պալատը:

**Մարտահրավեր 2. Անդրադարձ նվազող բյուջեին, որում աշխատավարձերը գերակշռում են ծախսերը**  
**ա) Համընդհանուր միտում**

**153. Թեև արդարադատության ոլորտի ընդհանուր բյուջեն վերջին տարիներին գրանցել է փոքր աճ և՛ որպես ՀՆԱ-ի տոկոս, և՛ ընդհանուր ծախսերում, այն միջոցները, որոնք հատկացվել են ԲԴԽ-ի ներքո գտնվող դատարաններին, նվազել են 2019-2021թթ. (տե՛ս աղյուսակ 5):**

**Աղյուսակ 5. Արդարադատության ծախսերը՝ որպես ՀՆԱ-ի և պետական ընդհանուր ծախսերի հարաբերակցություն, 2018-2021 թթ. (հազար ՀՀ դրամով)**

Մարմիններ	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.
Բարձրագույն դատական խորհուրդ		12,380,668	12,662,336	12,165,313
Ոստիկանություն		64,357,631	65,262,218	64,652,456
Արդարադատության նախարարություն		16,916,251	17,629,549	20,664,947
Քննչական կոմիտե		7,839,639	7,748,575	8,377,759
Դատախազություն		5,340,905	5,443,349	6,145,627
Հատուկ քննչական ծառայություն		739,524	737,870	831,711
Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ		452,645	515,412	532,480
Սահմանադրական դատարան		725,473	721,247	683,878
<b>Ընդամենը</b>	<b>73,542,502</b>	<b>108,752,735</b>	<b>110,720,557</b>	<b>114,054,171</b>
<b>Ընդամենը պետբյուջե (ծախսեր)</b>	<b>1,465,200,573</b>	<b>1,648,063,122</b>	<b>1,855,697,119</b>	<b>1,850,877,541</b>
<b>Արդարադատության ոլորտ/պետբյուջե (ծախսեր) հարաբերակցությունը</b>	<b>5.0%</b>	<b>6.6%</b>	<b>6.0%</b>	<b>6.2%</b>

Աղբյուրը՝ «ՀՀ պետական բյուջեի մասին» օրենքներ, 2018-2021 թթ.:



\*Այս աղյուսակի թվերը ստացվել են պետական բյուջեից, որը համահունչ է ԲԴԽ-ի տարեսկզբի նախնական բյուջեին (կապիտալ հատկացում + ծախսեր): 2018 թվականի համեմատական թվեր չկան, ուստի վերցվել են արդարադատության ոլորտի «Հանրային անվտանգությունը և դատական գործունեությունը» ծախսերը 2018 թվականի «Բյուջեի մասին օրենքից» (բացառությամբ Ազգային անվտանգության և Փրկարարական ծառայությունների):

**154. Հայաստանը ցածր տեղ է զբաղեցնում ինչպես ՀՆԱ-ի հաշվով արդարադատության ծախսերով, այնպես էլ ըստ ԱԱԵՀ անդամ երկրների արդարադատության մեկ շնչին բաժին ընկնող իրական ծախսերով (տե՛ս գծապատկեր 30): 2018թ. տվյալներով՝**

Հայաստանն ունեցել է ամենացածր ծախսերը մեկ շնչի հաշվով (8,93 եվրո՝ ԱԱԵՀ-ի միջին 70,40 եվրոյի համեմատ) և համեմատաբար ցածր են ծախսերը ՀՆԱ-ի բաժնեմասով (0,237 տոկոս՝ ԱԱԵՀ միջին 0,305 տոկոսի դիմաց):

<sup>124</sup>Ներկայացվել է ԴԴ-ի կարգավիճակի և կառուցվածքի մասին ԲԴԽ-ի կանոնադրական որոշման համաձայն (2018թ.), փոփոխված 2021 և 2022 թթ.: Տես <https://court.am/storage/uploads/files/service-page/pf9541UJCpyWvBkGF74BhROQph0kKY04R0n3dEoB.pdf>, <https://www.irtek.am/views/act.aspx?aid=110500>; <https://court.am/storage/uploads/files/bdx-decisions/6idVtm4Lz9Fc4CDrEFdOr5KyLcPifkorMOJ6FJ19.pdf>

**Գծապատկեր 30. Դատական համակարգերի համար կատարված ծախսերը. ԱԱԵՀ-ի հետ համեմատություն**




Աղբյուրը՝ ԱԱԵՀ 2020 թ. զեկույց (2018 թ. տվյալներ):

**155.** Հայաստանի բոլոր դատարանները, բացառությամբ Սահմանադրական դատարանի, ֆինանսավորվում են ԲԴԽ-ի բյուջեից, որը ներառում է ինչպես պետական բյուջեի հատկացումները, այնպես էլ եկամուտները (տե՛ս գծապատկեր 31, 32): Եկամուտների տեսակարար կշիռը (դատական հայցերից, բռ-

դոցներից, բողոքարկումներից և դատարանի կողմից տրված փաստաթղթերի պատճենների տրամադրումից ստացված եկամուտները) մնում է համեմատաբար փոքր և, բացառությամբ 2019 թվականի, մնացել է պլանավորված գումարներից ցածր (տե՛ս գծապատկեր 32):


**Գծապատկեր 31. 2018-2021 թթ. դատարանների բյուջեի ծախսերը և եկամուտները (ՀՀ դրամով)**



Աղբյուրը՝ ԴԴ

**156.** Դատական ծախսերի հիմնական մասը բաժին է ընկնում առաջին ատյանի դատարաններին, որին հաջորդում են դատական կառավարման ծախսերը (այսինքն՝ ԲԴԽ): Բոլոր ծախսերի շուրջ 45 տոկոսը կատարվում է առաջին ատյանի դատարանի մակար-

**Գծապատկեր 32. 2018-2021 թթ. դատարանների եկամուտներ. պլանավորումը փաստացիի նկատմամբ (ՀՀ դրամով)**



Աղբյուրը՝ ԴԴ

դակով, որը նաև զբաղվում է գործերի զգալի մասով (տե՛ս գլուխ IV-ը կատարողականի չափման և կառավարման մասին): Ավելացնելով դատարանների կառավարման ծախսերը՝ 2019-2021թթ. մասնաբաժինը բարձրանում է մինչև 70 տոկոսից մի փոքր ավելի:

**Աղյուսակ 6. 2019-2021 թթ. ծախսերը՝ ըստ սուբյեկտների/դատարանների տեսակի (ընդամենը հազար ՀՀ դրամով, ընդամենը ծախսերի տոկոսը)**

	2018թ. *	2019թ.		2020թ.		2021թ.	
		Ընդամենը	%-ով	Ընդամենը	%-ով	Ընդամենը	%-ով
Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան		5,063,611	45.2	5,257,167	46.5	5,522,213	45.3
Բարձրագույն դատական խորհուրդ և դատական դեպարտամենտ		2,983,006	26.7	2,848,378	25.2	3,282,852	26.9
Վճռաբեկ դատարան		718,738	6.4	734,733	6.5	707,461	5.8
Վարչական դատարան		692,680	6.2	699,680	6.2	741,059	6.1
Վերաքննիչ քրեական դատարան		552,527	4.9	543,918	4.8	580,015	4.8
Վերաքննիչ քաղաքացիական դատարան		488,858	4.4	498,373	4.4	537,895	4.4
Սևանկության դատարան		370,170	3.3	400,492	3.5	440,767	3.6
Վերաքննիչ վարչական դատարան		321,116	2.9	321,935	2.8	384,364	3.2
<b>Ընդամենը</b>		<b>11,190,705</b>	<b>100</b>	<b>11,304,677</b>	<b>100</b>	<b>12,196,626</b>	<b>100</b>

Աղբյուրը՝ ԴԴ:  
\*Տվյալներ չկան:

**157.** Առկա սահմանափակ տվյալները ցույց են տվել, որ մեկ դատավորի հաշվով ծախսերի կրճատում է կատարվել ըստ դատարանների և մարզերի, բացառությամբ երկու դատարանի՝ վարչական դատարանի, Արարատի և Վայոց ձորի առաջին ատյանի դատարանի (տե՛ս աղյուսակ 7): Հասանելի են եղել միայն 2020 և 2021 թվականների տվյալները, սակայն ցույց

են տվել տարբերություններ դատարանների միջև և առանձին դատարանների տարիների միջև: Սա վկայում է ոչ աշխատանքային ծախսերի մակարդակի փոփոխականության մասին: Պահանջվում են ավելի մեծաքանակ տվյալներ պարզելու համար՝ ծախսերի այս անկայունությունը սովորական է, թե ոչ, և ինչպես է այն լուծվում դատարանների մակարդակում:

**Աղյուսակ 7. 2020-2021 թթ. մեկ դատավորի հաշվով ծախսերը՝ ըստ դատարանների**

Դատարաններ	Դատավորների քանակ		Ծախսեր (ՀՀ դրամով)		Ծախսը մեկ դատավորի հաշվով	
	2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.	2020թ.	2021թ.
Վարչական դատարան	23	23	699,680	741,059	30,421	32,220
Վերաքննիչ վարչական դատարան	9	12	321,935	384,364	35,771	32,030
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	15	18	498,373	537,895	33,225	29,883
Սևանկության դատարան	11	15	400,492	440,767	36,408	29,384
Վճռաբեկ դատարան	16	16	734,733	707,461	45,921	44,216
Վերաքննիչ քրեական դատարան	17	20	543,918	580,015	31,995	29,001
Արագածոտնի առաջին ատյանի դատարան	5	6	246,303	263,597	49,261	43,933
Արարատի և Վայոց ձորի առաջին ատյանի դատարան	11	12	418,907	461,695	38,082	38,475
Արմավիրի առաջին ատյանի դատարան	8	9	341,244	355,216	42,655	39,468
Գեղարքունիքի առաջին ատյանի դատարան	8	9	363,457	358,877	45,432	39,875
Կոտայքի առաջին ատյանի դատարան	9	10	362,080	386,794	40,231	38,679
Լոռու առաջին ատյանի դատարան	11	12	405,894	424,989	36,899	35,416
Շիրակի առաջին ատյանի դատարան	11	12	415,982	409,062	37,817	34,089
Սյունիքի առաջին ատյանի դատարան	8	9	297,373	316,760	37,172	35,196
Տավուշի առաջին ատյանի դատարան	5	6	245,745	275,695	49,149	45,949
Երևանի առաջին ատյանի դատարան	61	69	2,160,184	2,269,526	35,413	32,892
<b>Ընդամենը</b>	<b>228</b>	<b>258</b>	<b>8,456,299</b>	<b>8,913,774</b>		

Աղբյուրը՝ ԴԴ:




բ) Ըստ կատեգորիայի

**158. Հայաստանում, ինչպես և այլ երկրներում, աշխատավարձերը գերակշռում են դատական ծախսերում:** Պատմականորեն աշխատավարձը ծախսերի ամենակարևոր հատվածն է՝ կազմելով ծախսերի


մոտ 90 տոկոսը: Կապիտալի և պահպանման հատկացումները սուղ են եղել և կարծես արձագանքել են միայն հույժ հրատապ կարիքներին՝ չնայած տեղերում առկա կարիքներին (տե՛ս գծապատկերներ 33 և 34)<sup>125</sup>:

**Գծապատկեր 33. 2018-2021 թթ. դատական ծախսերը՝ ըստ կատեգորիաների (ընդհանուր ծախսերում՝ արտահայտված տոկոսներով)**







Աղբյուրը՝ ԴԴ

**Գծապատկեր 34. 2018-2021 թթ. դատարանների ծախսերը՝ ըստ կատեգորիաների (բոլոր)**




<sup>125</sup>Տե՛ս ֆիզիկական ենթակառուցվածքների մասին գլուխ 8-ը:



**159. Ոչ աշխատավարձային ծախսերն աճել են և՛ դրանց չափով, և՛ որպես ընդհանուր ծախսերի մասնաբաժին (տե՛ս գծապատկեր 35), և՛ բոլոր առանձին դատարաններում, բացառությամբ վերաքննիչ քրեական դատարանի (տե՛ս աղյուսակ 8):** Սա արժանահավատ կերպով ցույց է տալիս, որ ոչ աշխատավարձային ծախսերի բաշխումը մասամբ արտացոլում է կարիքների հրատապությունը, այլ ոչ թե երկարաժամկետ պլանավորումը աշխատանքի ծախսերի երկարաժամկետ միտումների համատեքստում, որը դուրս

է մղում պահպանման ծախսերը, ինչը ժամանակի ընթացքում հանգեցնում է ենթակառուցվածքի վատթարացման, գործառնական անարդյունավետության և սահմանափակ ծառայությունների մատուցման (տե՛ս նաև ֆիզիկական ենթակառուցվածքների մասին 8-րդ գլուխը): Օրինակ՝ 2021 թվականին վերանորոգման և սպասարկման ծավալների աճը հավանաբար կապված է դատավորների և սպառնալիցների ավելացման հետ, ինչը հանգեցրել է վերանորոգման և փոքր շինարարական աշխատանքների որոշ դատարանների շենքերում:

**Գծապատկեր 35. 2018-2021 թթ. ոչ աշխատավարձային ծախսեր (ՀՀ դրամով)**



Աղբյուրը՝ ԴԴ

**Աղյուսակ 8. 2019-2021 թթ. ոչ աշխատավարձային ծախսերը՝ ըստ դատարանների տեսակի**

Դատարաններ	2019թ.	2020թ.	2021թ.
Բարձրագույն դատական խորհուրդ և դատական դեպարտամենտ	390,944	336,154	463,590
Վճռաբեկ դատարան	28,490	24,486	31,097
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	24,643	26,135	28,810
Վերաքննիչ քրեական դատարան	36,967	29,710	34,468
Վերաքննիչ վարչական դատարան	9,570	10,477	14,954
Վարչական դատարան	50,146	41,362	55,594
Երևանի առաջին ատյանի դատարան	208,725	235,842	267,075
Արագածոտնի առաջին ատյանի դատարան	24,471	23,279	31,643
Արարատի և Վայոց ձորի առաջին ատյանի դատարան	47,990	57,870	66,937
Արմավիրի առաջին ատյանի դատարան	38,814	42,042	48,780
Գեղարքունիքի առաջին ատյանի դատարան	35,756	44,626	43,135
Լոռու մարզի առաջին ատյանի դատարան	44,953	53,769	59,474
Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարան	37,705	52,969	52,757
Շիրակի մարզի առաջին ատյանի դատարան	49,769	51,452	63,853
Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարան	27,624	26,790	33,106
Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան	24,630	24,367	33,002
Սևանկուղի դատարան	24,597	45,884	47,804
Պահուստային ֆոնդ	155,742	126,747	230,890
<b>Ընդամենը</b>	<b>1,261,533</b>	<b>1,253,960</b>	<b>1,606,968</b>


Աղբյուրը՝ ԴԴ:

\*2018թ. համար տարանջատված, այսինքն՝ դատարանի մակարդակով տվյալներ հասանելի չեն: Համախառն թվերն արտացոլվել են այս գլխում ավելի վաղ վերլուծության մեջ:

**160. Առանց այն էլ սուղ ֆինանսական պայմանները, որոնցում այսօր գործում են դատարանները, կարող են էլ ավելի խստանալ:** Հաշվի առնելով կոմունալ ծառայությունների գների աճը (տե՛ս գծապատկեր 36) և հաշվի առնելով Հայաստանի դատական ենթակառուցվածքի կարգավիճակը՝ կարելի է ասել, որ այս

ոլորտներում ծախսերը, ամենայն հավանականությամբ, կավելանան և՛ բացարձակ արժեքով, և՛ որպես ընդհանուր ծախսերի մասնաբաժին: Նախատեսվում է նաև նոր հակակոռուպցիոն դատարան ստեղծել, որը կավելացնի կոմունալ ծառայությունների գործառնական ծախսերը:

**Գծապատկեր 36. Դատական համակարգի կոմունալ ծախսերը (ՀՀ դրամով)**




Աղբյուրը՝ ԴԴ:

գ) Բյուջեի իրականացում

**161.** Հայաստանում դատական սուբյեկտները տնօրինում են իրենց տարեկան բյուջեն այնպես, որ կա՛մ համապատասխանեն դրան, կա՛մ ծախսերը նախատեսվածից ցածր պահեն (տե՛ս գծապատկեր 37):

Այնուամենայնիվ բյուջեի կազմումն ավելի մանրամասն դիտարկելիս, այսինքն՝ համահավաք հայտը՝ ճշգրտված խորհրդարանի հաստատումից հետո, պարզ է դառնում, որ կատեգորիաների և ժամանակների տարբերություններ կան (տե՛ս գծապատկեր 38):





**Գծապատկեր 37.** 2018-2021 թթ. ընդհանուր պլանավորված ծախսերը փաստացի ծախսերի նկատմամբ (արտահայտված հազար դրամով)



Աղբյուրը՝ ԴԴ

**Գծապատկեր 38.** 2018-2021 թթ. պահանջված և հատկացված բյուջեները փաստացի ծախսերի նկատմամբ՝ ըստ կատեգորիաների (արտահայտված հազար դրամով)





**Աղբյուրը՝ ԴԴ**

\*«Այլ» կատեգորիան ներառում է սոցիալական վճարները և պահուստային ֆոնդից հատկացումները:

**162. Առաջին ատյանի դատարանները մշտապես ստացել են պահանջվող մակարդակից ցածր հատկացումներ, որոնք նրանք ամբողջությամբ ծախսել են:** Առաջին ատյանի դատարանները պատասխանատու են բոլոր ծախսերի մոտավորապես 45 տոկոսի համար (և գործերի ծավալի ու աշխատանքային ծանրաբեռնվածության մեծ մասի համար), սակայն հատկացումը հետևողականորեն ցածր է եղել այս մակարդակում եղած պահանջներից (տե՛ս աղյուսակ 9): Ստացված բյուջեների և փաստացի կատարողականի դիտարկումը ցույց է տալիս, որ դատարանները կարողացել են ամբողջությամբ ծախսել տարեկան հատկացումները:

**163. Բյուջեի հիմնական մասը ծախսվում է անձնակազմի աշխատավարձերը վճարելու համար, իսկ ԲԴԿ-ում, ԴԴ-ում և դատարաններում համապատասխան անձնակազմը ներկայումս չունի սահմանափակ բյուջետային միջոցներն արդյունավետ կառավարելու հիմնական հմտություններ:** Սահմանափակ բյուջեներ-

րի կառավարումը, վիճակագրության ապահովումը և ենթակառուցվածքային բարելավումների պլանավորումը պահանջում են հմուտ աշխատակազմ, որը կարող է աջակցել դատարաններին՝ նվազեցնելու գործերի կուտակումները և բարելավելու ծառայությունների մատուցումը՝ համաձայն կառավարության ռազմավարության և ուժեղ, անկախ դատական համակարգի տեսլականի:

**164. Կարևոր նշանակություն կունենա անցումը հիմնականում աշխատավարձերի վճարումներին ուղղված համակարգից կատարողական մոդելին, որը ներառում է հուսալի բյուջեի կազմում, հատկացումներ և ծախսային տվյալներ՝ ծախսերի մասին տեղեկացնելու համար:** Կատարողական մոդելը, որը համահունչ է սուղ ռեսուրսների իրականությանը, կարող է ուղենիշ լինել բյուջետային որոշումներն ընդունելիս՝ հաշվի առնելու դատական ծառայությունների մատուցման բոլոր տարրերի հույժ կարևորությունը:

**Աղյուսակ 9. 2018-2021 թթ. պահանջված և հատկացված բյուջեները փաստացի ծախսերի սկստմամբ՝**  
 ըստ դատարանների տեսակի (հազար ՀՀ դրամով)

Դատարաններ, ԴԴ, ԲԴԻ	2019թ.			2020թ.			2021թ.		
	Պահանջված	Հատկացված	Փաստացի	Պահանջված	Հատկացված	Փաստացի	Պահանջված	Հատկացված	Փաստացի
Վարչական դատարան	709,195	697,181	692,680	718,004	702,346	699,680	725,600	741,527	741,059
Վերաքննիչ վարչական դատարան	317,832	322,448	321,116	320,906	322,982	321,935	322,846	384,429	384,364
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	499,125	490,821	488,858	502,648	498,683	498,373	508,760	537,974	537,895
Սնանկության դատարան	358,621	383,560	370,170	401,541	401,548	400,492	400,648	440,768	440,767
Վճռաբեկ դատարան	739,411	730,039	718,738	734,844	738,661	734,733	723,551	707,477	707,461
Վերաքննիչ քրեական դատարան	561,754	562,057	552,527	571,723	548,815	543,918	574,491	580,016	580,015
Պահուստային ֆոնդ	242,758	242,758	155,742	248,281	148,281	126,747	238,536	232,371	230,890
Բարձրագույն դատական խորհուրդ և դատական ղեկավարամետ	2,768,118	2,994,298	2,827,263	3,097,339	2,771,834	2,721,631	3,249,648	3,082,136	3,051,962
Արագածոտնի առաջին ատյանի դատարան	272,251	246,875	237,185	275,161	248,758	246,303	262,354	263,620	263,597
Արարատի և Վայոց ձորի առաջին ատյանի դատարան	449,934	397,436	384,247	436,404	421,295	418,907	438,798	461,883	461,695
Արմավիրի առաջին ատյանի դատարան	341,713	335,068	326,108	338,230	341,948	341,244	337,167	355,565	355,216
Գեղարքունիքի առաջին ատյանի դատարան	372,571	365,022	340,461	364,793	366,020	363,457	363,986	359,645	358,877
Կոտայքի առաջին ատյանի դատարան	370,399	363,326	349,322	372,479	362,878	362,080	365,367	387,113	386,794
Լոռու առաջին ատյանի դատարան	438,556	418,387	403,005	435,132	406,418	405,894	437,446	425,798	424,989
Շիրակի առաջին ատյանի դատարան	447,023	408,519	391,368	432,628	419,086	415,982	428,906	409,101	409,062
Սյունիքի առաջին ատյանի դատարան	339,144	311,307	297,802	340,853	298,833	297,373	341,427	316,901	316,760
Տավուշի առաջին ատյանի դատարան	268,760	269,766	256,190	267,485	246,116	245,745	266,430	275,707	275,695
Երևանի	2,179,550	2,137,847	2,077,924	2,174,365	2,172,898	2,160,184	2,179,355	2,269,882	2,269,526
<b>Ընդամենը</b>	<b>11,676,715</b>	<b>11,676,715</b>	<b>11,190,705</b>	<b>12,032,815</b>	<b>11,417,397</b>	<b>11,304,677</b>	<b>12,165,313</b>	<b>12,231,912</b>	<b>12,196,626</b>

Աղբյուր՝ ԴԴ

## Բ. ԵԳՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**165. Հայաստանը, ԱԱԵՀ անդամ երկրների համեմատությամբ, արդարադատության ծախսերով ցածր տեղ է զբաղեցնում. դատարաններում և արդարադատության համակարգում ակնհայտ է բյուջեի պլանավորման և կատարման առումով պրոֆեսիոնալիզմի պակասը:** Սահմանափակ կարողությունները դատարանի և ԴԴ-ի մակարդակում խոչընդոտում են բյուջեի կազմման և ընդունման գործընթացը: Զանի որ դատական համակարգում բարելավված կատարողականի, ծառայությունների մատուցման և բարեվարքության համար հանրային ճնշումը մեծանում է, բոլոր մակարդակներում

երում ընդհանուր առավել լավ ֆինանսական համակարգման, պլանավորման և բյուջետային հմտությունների բարելավման անհրաժեշտություն կա:

**166. Աշխատուժի ծախսերը դուրս են մղում մյուս ծախսերը:** Անհրաժեշտ է կատարելագործված պլանավորում՝ ապահովելու համար կարևոր ֆիզիկական ենթակառուցվածքների և ՏՀՏ ծրագրերի իրականացումը: Առանց համապատասխան լրացուցիչ կապիտալ և գործառնական ծախսերի՝ աշխատուժը, ըստ ամենայնի, անարդյունավետ կաշխատի, օրինակ՝ ձեռքով կատարվող գործընթացները կարող էին թվայնացվել:

**167. Հետևյալ առաջարկությունները ներկայացվում են շահագրգիռ կողմերին բացահայտված խնդիրների քննարկման և լուծման համար:**

Առաջարկություն 1	Առաջիկայում հստակեցնել օրենսդրական դաշտը:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>Սահմանել օրենսդրական այն դրույթները, որոնց հիման վրա ԱԺ-ին թույլատրվում է մերժել բյուջետային հայտերը, որպեսզի ԲԴԽ-ին հնարավորություն տրվի առավել լավ թիրախավորելու և պաշտպանելու իր պահանջները:</li> <li>Ամրապնդել բավարար դատական բյուջեի համար օրենսդրական երաշխիքը՝ ի վերջո բացարձակ նվազագույնից ձերբազատվելու համար:</li> </ul>
Առաջարկություն 2	ԲԴԽ-ի և կառավարության միջև ամրապնդել համակարգման և պլանավորման մեխանիզմները:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>Ստեղծել տեխնիկական մակարդակով ԲԴԽ-ի և կառավարության միջև ավելի հաճախակի հանդիպումների մեխանիզմ՝ բյուջեի պլանավորումը հեշտացնելու նպատակով:</li> <li>Բյուջեի կատարումը բարելավելու և բյուջեի միջնաժամկետ պլանավորումը կատարելագործելու համար ներդնել «խելացի» ցուցիչներ (այսինքն՝ ցուցիչներ, որոնք որոշակի են, չափելի, հասանելի, տեղին և ժամանակին):</li> </ul>
Առաջարկություն 3	Դատական բյուջեի լոբբինգ իրականացնել և խթանել ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումը:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>Բարելավել բյուջեի հետ կապված տվյալների որակը, հուսալիությունը և ծածկույթը, որոնք կօգտագործվեն ներքին քննարկումներում և որոշումներ ընդունելիս:</li> <li>Առավել հստակ ձևակերպել բյուջեի (լրացուցիչ) հատկացումների հայտերի նախապատմությունը (դատարանների, դատավորների և դատարանների անձնակազմի կարիքները և դատարաններից օգտվողների կարիքները):</li> <li>Բարձրացնել հանրային իրազեկությունը Հայաստանի դատական համակարգում աշխատանքային բարդ պայմանների վերաբերյալ:</li> </ul>
Առաջարկություն 4	Ամրապնդել բյուջետային հմտությունները ԲԴԽ-ում, ԴԴ-ում և դատարաններում:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>Դատարանների և ԴԴ-ի համար ներդնել ֆինանսական կառավարման փոխգործունակ համակարգ:</li> <li>Իրականացնել կարիքների պարբերական գնահատումներ ֆինանսական գնահատականներով (տեխնիկական օժանդակության կարիքներ, գործառնական ծախսեր, CAPEX և այլն):</li> </ul>

	<ul style="list-style-type: none"> <li>■ Չարգացնել ներկա և ապագա անձնակազմի հմտություններն ու կարողությունները՝ շոշափելի փոփոխությունների հասնելու նպատակով դատարանի բյուջեի կարիքների շուրջ բովանդակալից քննարկումներին նպաստելու համար:</li> <li>■ Մշակել ու վարել վիճակագրություն և փաստերի վրա հիմնված ծախսերի գնահատումներ ներդրումների համար, որպեսզի ԲԴԽ-ին ավելի լավ հնարավորություն ընձեռվի փաստարկելու դատական բյուջեի ավելացումը կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ հեռանկարում:</li> </ul>
<b>Առաջարկություն 5</b>	<b>Ներդնել կատարողականի ճկուն մոդել, որը հիմնված լինի բյուջեի կազմման, հատկացման և ծախսերի վերաբերյալ հուսալի տվյալների և տեղեկատվության վրա:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ներդնել կատարողականի մոդել, որը համահունչ է սակավ ռեսուրսների իրականությանը և արտացոլում է դատական ծառայությունների մատուցման բոլոր հիմնական տարրերը:</li> </ul>



## VI. ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՏՈՒՐՄՆԵՐ

**168.** Այս գլխում փորձ է արվում վերլուծել Հայաստանի դատական համակարգում մարդկային ռեսուրսների մակարդակների, տեղաբաշխման և կառավարման բավարարությունը: Այն հիմնված է ԴԴ-ի աշխատակիցների հետ հարցազրույցների, վերջին վիճակագրության և օրենսդրության, արտաքին աղբյուրներից ստացված տեղեկատվության (ներառյալ Վենետիկի հանձնաժողովը և ԵՄ-ն) և սույն գեկույցի այլ գլուխներից (մասնավորապես բյուջետավորման և կատարողականի նյութերի վերաբերյալ) քաղված նյութերի վրա: Հիմնական ուշադրությունն ուղղված է երեք որոշակի հարցերին. ա) արդյոք դատավորների և օժանդակ աշխատակազմի թվակազմը բավարար է, բ) արդյոք աշխատավարձի մակարդակը բավարար է որակյալ կադրեր ներգրավելու և պահպանելու համար, գ) արդյոք հավաքագրման, գնահատման և առաջխաղացման համակարգերն արդյունավետ են՝ ապահովելու համապատասխան որակավորում ունեցող անձնակազմի աշխատանքի ընդունումը և համապատասխան թեկնածուների առաջընթացն ու առաջխաղացումը:

**169.** Հայաստանում 2018 թվականի բարեփոխումներից հետո դատական համակարգում բարելավվել է մարդկային ռեսուրսների (ՄՌ/HR) կառավարումը<sup>126</sup>: Դատավորների պաշտոնների համար թեկնածուների գնահատման գործընթացը հաջողությամբ է հավասարակշռում օբյեկտիվ և սուբյեկտիվ մոտեցումները: Դատավորների աշխատավարձերը պետական հատվածում ամենաբարձրներից են, իսկ դատական համակարգում թափուր աշխատատեղերի մակարդակը ցածր է: Բարձրագույն ղեկավար և մասնագիտական անձնակազմի աշխատավարձերը նույնպես համեմատելի են մասնավոր հատվածի աշխատավարձերի հետ: Չնայած դատավորների և դատական օգնականների անձնակազմի թվաքանակը ցածր է եվրոպական երկրների մեծ մասի մակարդակից, Հայաստանում բնակչության նկատմամբ դատավորների ցածր հարաբերակցությունը չի ենթադրում ավելի շատ դատավորների անհրաժեշտություն, այս թվաքանակը կարող է բավարար լինել դատավորների ընթացիկ ծանրաբեռնվածությունը ընթացակարգերը պարզեցնելու միջոցով նվազեցնելու դեպքում:

## Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**170.** Առաջին մարտահրավերը անձնակազմի և վարձատրության համապատասխան մակարդակի ապահովումն է: Ե՛վ դատավորների, և՛ դատավորների օգնականների ներկայիս թվաքանակը շատ ավելի ցածր է եվրոպական համեմատականներից: Հաղորդվում է, որ անձնակազմը գերծանրաբեռնված աշխատանքի պատճառով մեծ սթրես է ապրում, ինչը դժվարացնում է որակյալ կադրերի ներգրավումն ու պահպանումը: Դատական համակարգին աջակցելու հրատապ անհրաժեշտություն կա՝ հաղթահարելու դատական գործերի կուտակումները: Առաջարկությունները ներառում են առկա անձնակազմի ավելի լավ օգտագործումը, օրինակ՝ այնպիսի գործիքների կիրառման ավելացումը, ինչպիսիք են պարզեցված, արագացված ընթացակարգերը և ՎԿ-ները, կարող է արագ ազդեցություն ունենալ գործերի կուտակումները նվազեցնելուն և շատ գործեր ավարտին հասցնելուն ուղղված աշխատանքների վրա:

**171.** Երկրորդ մարտահրավերը կադրերի կառավարման կատարելագործումն է: 2018թ. նախատեսված բարեփոխումները օրենքներում, կանոնակարգերում և գործընթացներում դեռ ամբողջությամբ չեն իրականացվել: Առաջարկությունները ներառում են այդ խնդիրները: Չնայած առաջընթացին, դեռևս դատավորների ներգրավման և գնահատման գործընթացների վրա քաղաքական ազդեցության որոշ վտանգ կա: ԴԴ-ն առաջարկում է դատական ծառայությունն առանձնացնել քաղաքացիական ծառայության համակարգից, սակայն դա խորհուրդ չի տրվում:

### Մարտահրավեր 1. Կադրային մակարդակների ճիշտ ձևավորում

#### ա) Կադրային մակարդակներ

## ՂԱՏԱՎՈՐՆԵՐ

**172.** Դատարաններում դատավորների նվազագույն թիվը նախատեսված է Դատական օրենսգրքով: Այնուամենայնիվ ԲԴԿ-ն իրավասու է որոշել դատավորների համար հաստատված հաստիքների քանակը կառավարության հաստատման պայմանով:

<sup>126</sup>ԵՄ-ն 2022 թ. փետրվարին գեկույց է պատրաստել Հայաստանի դատական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի վերաբերյալ, որում ընդգծվում են ներկայիս դատական համակարգի տարբեր մարտահրավերները և բարեփոխումների մի քանի առաջարկություններ: Չեկույցը ներառում է նաև դատախազությունում ՄՌ կառավարման վերաբերյալ քննարկում և էլեկտրոնային համակարգերի օգտագործման լայնածավալ առաջարկություններ: ԵՄ-ի թիմի ներկայացրած մարտահրավերների և առաջարկությունների վերաբերյալ տեղեկությունները տե՛ս սույն գեկույցի հավելված 7-ում:

**173. Դատական համակարգում աշխատում է ավելի քան 2500 աշխատակից<sup>127</sup>:** Նրանցից մոտ 260-ը դատավոր են, իսկ մնացած 2249-ը՝ օժանդակ անձնակազմ, ներառյալ դատավորների օգնականները, գործավարները, դատարանների քարտուղարները, դատարանի աշխատակիցները, գրասենյակային աշխատողները և հաշվապահները: Ընդհանուր

առմամբ, նաև ընդգրկված է 129 աշխատակից ԴԴ-ի կենտրոնական գրասենյակում և 652 աշխատակից՝ դատական կարգադրիչների ծառայությունում: Երկուսն էլ աղյուսակ 10-ում ներառված են օժանդակ անձնակազմի մեջ: Անձնակազմի մանրամասն դասակարգումը, ըստ դատարանների, ներկայացված է հավելված 8-ում:

**Աղյուսակ 10. Ներկա կադրային մակարդակները**

Դատարան	Դատավորներ	Օժանդակ անձնակազմ	Ընդհանուր
Առաջին ատյան	153	985	1138
Վերաքննիչ	52	201	253
Մասնագիտացված	40	194	234
Վճռաբեկ	17	88	105
Կենտրոնական վարչական	0	781	781
<b>Ընդհանուր</b>	<b>262</b>	<b>2249</b>	<b>2511</b>

Աղբյուրը՝ ԴԴ, ամփոփ տվյալներ ԴԴ կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմի վերաբերյալ:

**174. Դատավորների թիվը փոքր-ինչ ավելացել է 2018 թվականին ներկայումս գործող համակարգի ներդրումից հետո:** Աղյուսակ 11-ը դատավորների թվաքանակի 2018 թվականի տվյալները համեմատում է 2021 թվականի տվյալների հետ: Ինչպես ցույց է տրված, առաջին ատյանի դատարաններում դատավորների թիվն աճել է մոտ 9 տոկոսով, ինչը մեծապես պայմանավորված է Երևանում արձանագրված աճով: Մասնագիտացված դատարաններ-

ում դատավորների թիվն ավելացել է 30 տոկոսով, ինչը հիմնականում պայմանավորված է սնանկության գործերի դատարանի անձնակազմի ավելացմամբ: Բացի այդ, ընդհանուր առմամբ, 15 պաշտոն է լիազորվել հակակոռուպցիոն դատարանի համար, ևս 10-ը՝ Վճռաբեկ դատարանի նոր պալատի համար, որը պատասխանատու է հակակոռուպցիոն դատարանների ակտերի դեմ բողոքների լուծման համար:

<sup>127</sup>Այս գլխում օգտագործված անձնակազմին վերաբերող տվյալները տրամադրել է ԴԴ-ն, սակայն տվյալների մեջ թվերի որոշ տարբերություններ կան: «Դատական գերատեսչությունների կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակազմի վերաբերյալ ամփոփ տվյալներում» նշվում է, որ առկա է 262 դատավոր: Սա միակ աղբյուրն է, որը տրամադրում է տվյալներ ինչպես դատավորների, այնպես էլ օժանդակ անձնակազմի թվաքանակի վերաբերյալ, սակայն չի նշում՝ դա վերաբերում է առկա հաստիքներին, թե իրականում զբաղեցրած պաշտոններին: «Հայաստանի Հանրապետության դատավորների թիվը՝ առանձնացված ըստ մարզերի և դատարանների տեսակների» ներկայացնում է այս տարանջատումը (259 լիազորված և 233 լրացված), սակայն երկու թվերն էլ տարբերվում են «Ամփոփ տվյալների» մեջ ներկայացված ընդհանուր թվից: Աղբյուրներից ոչ մեկը չի նշում, թե որ տարվան են վերաբերում այդ տվյալները: Երրորդ աղբյուրը, որը տրամադրվել է ի պատասխան Համաշխարհային բանկի հատուկ հարցման, հիմնված է քույզեի տվյալների հաշվետվությունների վրա, որը ցույց է տալիս ևս մեկ թիվ՝ 243՝ բացառելով 45 դատավորների, որոնք, ըստ տեղեկությունների, վերաքննիչ դատարանում քննում են վարչական գործերը: Բոլոր երեք աղբյուրներից ստացված թվերը բավականին մոտ են իրար: Կախված համատեքստից, այս գլխի տարբեր մասերում օգտագործվում են տարբեր թվեր: Յուրաքանչյուր դեպքում նշվում է կոնկրետ աղբյուրը:

Աղյուսակ 11. 2018 թ. և 2021 թ. դատավորների թվաքանակի միտումները՝ ըստ դատարանների


	2018թ.	2021թ.
<b>Մասնագիտացված դատարաններ</b>		
Վարչական դատարան	23	23
Վերաքննիչ վարչական դատարան	9	12
Վերաքննիչ քաղաքացիական դատարան	15	18
Սևանկության դատարան	0	15
Վճռաբեկ դատարան	16	16
Վերաքննիչ քրեական դատարան	17	20
<b>Առաջին ատյանի դատարաններ (ընդհանուր իրավասության)</b>		
Արագածոտն	5	6
Արարատ և Վայոց ձոր	10	12
Արմավիր	7	9
Գեղարքունիք	8	9
Կոտայք	9	10
Լոռի	12	12
Շիրակ	12	12
Սյունիք	8	9
Տավուշ	5	6
Երևան	65	69
<b>Ընդհանուր</b>	<b>221</b>	<b>258</b>

Աղբյուրը՝ 2022 թ. հունիսին ՀԲ-ին տրամադրված ՖՆ-ի բյուջեի տվյալներ:

**175. Հայաստանում դատավորների և բնակչության թվերի հարաբերակցության էական տատանումներ կան:** Գծապատկեր 39-ը ցույց է տալիս յուրաքանչյուր մարզում և Երևանում մեկ շնչին ընկնող դատավոր-

ների թիվը: Ինչպես ցույց է տրված, հարաբերակցությունը տատանվում է 100,000 մարդու հաշվով Արմավիրում 3,4 դատավորից մինչև 6,5 դատավոր Սյունիքում:

**Գծապատկեր 39. Դատավորների թվաքանակը մարզերում 100,000 բնակչության հաշվով**



Աղբյուրը՝ Բնակչության բաշխումը՝ ըստ վարչատարածքային բաժանման և կառուցվածքի, տե՛ս <https://armstat.am/file/doc/99486113.pdf>

**176. Դատավորների և դատավորների օգնականների անձնակազմի մակարդակը, մեկ շնչի հաշվով, շատ ցածր է եվրոպական համեմատելի երկրների մակարդակից** (տե՛ս աղյուսակ 12-ը): Այս եզրակացությունը հիմնված է ԱՎԵՅ-ի դատավորների, դատավորների օգնականների, վարչական ու տեխնիկական անձնակազ-

մի գործակիցների վրա (2018 թվականի տվյալներ): Յայստանն այն ժամանակ ուներ ընդամենը 8 պրոֆեսիոնալ դատավոր 100,000 բնակչի հաշվով համեմատականների միջին թվի՝ մոտ 29-ի դիմաց<sup>128</sup>: Յայստանն ուներ դատավորների 26 օգնական 100,000 բնակչի հաշվով՝ համեմատականների միջին 45-ի դիմաց<sup>129</sup>:

**Աղյուսակ 12. Կադրերի մակարդակը համեմատվող երկրներում 100,000 բնակչության հաշվով**

	Պրոֆեսիոնալ դատավորներ	Դատավորների օգնականներ	Վարչական, տեխնիկական կազմ
Յայստան	8	26	67
Բուլղարիա	32	67	22
Խորվաթիա	41	101	28
Չեխիա	28	43	25
Վրաստան	8	17	23
Հունգարիա	30	10	NA
Հյուսիսային Մակեդոնիա	25	29	70
Լեհաստան	25	58	27
Ռումինիա	24	33	17
Սերբիա	37	53	74
Սլովակիա	25	40	NA
Սլովենիա	42	47	92
Միջին համեմատական	28.8	45.3	42

Աղբյուրը՝ ԱՎԵՅ [Explorery 2020](https://public.tableau.com/app/profile/cepej/viz/CEPEJ-Explorery2020_1_0EN/Tables):

**177. Յայստանում բնակչության նկատմամբ դատավորների ցածր հարաբերակցությունը պարտադիր չէ, որ վկայի դատական համակարգում կադրային թերի համալրման մասին:** Միջազգային համեմատությունները պետք է զգուշությամբ կիրառվեն, քանի որ նման թվերը երկրների միջև ճշգրիտ համեմատելի չեն: Դատավորների պարտականությունները տարբերվում են տարբեր երկրներում. մի երկրում դատավորին վերապահված աշխատանքը մեկ այլ երկրում կարող են կատարել դատավորների օգնականները: Բացի այդ, բնակչության նկատմամբ դատավորների ցածր հարաբերակցությունը չի վկայում դատավորների շատ քիչ լինելու մասին: Դա կարող է նշանակել, որ դատավորներին շատ գործեր են հատկացվում: Դա տեղի է ունենում մասամբ այն պատճառով, որ Յայստանում չկա վարչական կամ քաղաքացիական գործերի «ֆիլտր» (տե՛ս «ՎԿ»-ների քննարկումը կատա-

րողականության չափման և կառավարման մասին 4-րդ գլխում)<sup>130,131</sup>: Բյուջեի սահմանափակումների և ՄՌ-ի հետ կապված խնդիրները, դուրս մղելով մյուս գործառույթները, անհրաժեշտ է են դարձնում լրացուցիչ դատական պաշտոնների ֆինանսավորումը: Անհրաժեշտ է ծավալել կառավարության գործադիր և օրենսդիր ճյուղերի տարբեր շահագրգիռ կողմերի միջև բովանդակալից քննարկում՝ համաձայնեցնելու առաջնահերթությունները և հետամուտ լինելու բյուջեի բաշխմանը՝ բարեփոխումների հավակնոտ օրակարգն իրականացնելու համար:

**ՕՃԱՆՂԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԾՍ**

**177. Դատական օրենսգիրքը (61-րդ հոդված) սահմանում է, որ յուրաքանչյուր դատավոր (առաջին ատյանի և վերաքննիչ դատարաններում) պետք է ունենա օգնական և գործավար:** Առաջին ատյանի դատարաններ-

<sup>128</sup>Համեմատելի երկրներն են՝ Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիա, Վրաստան, Հունգարիա, Հյուսիսային Մակեդոնիա, Լեհաստան, Ռումինիա, Սերբիա, Սլովակիա և Սլովենիա: Տվյալները (ներառյալ Յայստանի Հանրապետության թվերը) 2018 թվականին են: 2021 թ. Յայստանն ուներ 8,8 դատավոր 100 000 բնակչի հաշվով:

<sup>129</sup>Աղբյուրը՝ ԱՎԵՅ [https://public.tableau.com/app/profile/cepej/viz/CEPEJ-Explorery2020\\_1\\_0EN/Tables](https://public.tableau.com/app/profile/cepej/viz/CEPEJ-Explorery2020_1_0EN/Tables): Նկատենք, որ դատական համակարգում վարչական և տեխնիկական անձնակազմի թիվը, այնուամենայնիվ, Յայստանում ավելի մեծ է, քան համեմատականներում, այն է՝ 67 աշխատակից 100000 բնակչի հաշվով 42-ի դիմաց:

<sup>130</sup>ՀԲ, 2020թ. «Դատական գործընթացների արդյունավետության բարձրացում Յայստանում. պարզեցված ընթացակարգի և վճարման կարգադրությունների բարելավման ուղիներ» արդարադատության համակարգի առավել լավ կատարողականի համար», հասանելի է հետևյալ հղումով՝ <https://documents1.worldbank.org/curated/en/980031608628888810/pdf/Governance-and-Justice-Enhancing-the-efficiency-of-court-processes-in-Armenia-Ways-to-Improve-the-Simplified-Procedure-and-Order-for-Payment-Procedure-for-Better-Justice-System-Performance.pdf>.

<sup>131</sup>Թեև քրեական գործերի քննության արագացում նախատեսված չէ, վերջերս երկու մասնագիտացումների (մինչդատական վարույթ և հավակնուպցիոն ընթացակարգեր) լրացուցիչ պաշտոնների ներմուծումը պետք է թեթևացնի քրեական վարույթներով ծանրաբեռնվածությունը (տե՛ս նաև գլուխ 4-ում կատարողականի չափման և կառավարման մասին լրացուցիչ մանրամասներ):

րում յուրաքանչյուր դատավորի համար նախատեսված է և սովորաբար լրացվում է նաև քարտուղարի պաշտոնը: Համաձայն Դատական օրենսգրքի՝ ԲԴԽ-ն իրավասու է ավելացնել լրացուցիչ օժանդակ պաշտոններ՝ ելնելով յուրաքանչյուր դատավորի ծանրաբեռնվածությունից, թեև այդ լիազորությունը կարող է սահմանափակվել «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի դրույթներով:

**179.** Սույն «Հայացք ապագային» փաստաթղթի պատրաստման ժամանակ դատական համակարգում աշխատում էր դատավորների հաստիքից ցած մոտ 2250 աշխատակից: Նրանք զբաղեցնում են լայն շրջանակի պաշ-

տոններ: Ինչպես ցույց է տրված աղյուսակ 13-ում, ընդհանուր առմամբ 276-ը դատավորների օգնականներ են, ևս 450-ը դասակարգված են որպես դատական ակտերի գրանցող կամ քարտուղարներ, մոտ 650-ը դատական կարգադրիչներ են: Մնացած աշխատակիցների մեծ մասը դասակարգվում է միայն որպես «օժանդակ անձնակազմ»: Ինչպես ավելի վաղ ցույց է տրված աղյուսակ 12-ում, դատական օգնականների թիվը (100,000 բնակչի հաշվով) շատ ցածր է համեմատելի եվրոպական շատ երկրներից: Մյուս կողմից, 100,000 բնակչի հաշվով այլ օժանդակ անձնակազմի թիվը շատ ավելի բարձր է:

### Աղյուսակ 13. Օժանդակ աշխատակազմի թվաքանակ

Հաստիք	Առաջին ատյան	Մասնագիտացված	Վերաքննիչ	Վճռաբեկ	Ընդհանուր
Դատավորների օգնականներ	159	35	50	32	276
Գրասենյակի գործավարներ	152	36	50	0	238
Դատական նիստերի քարտուղարներ	153	40	19	2	214
Գրասենյակի աշխատակազմ	8	21	40	9	188
Օժանդակ աշխատակազմ	361	55	25	32	473
Արխիվապահ	14	2	0		16
Աշխատակազմի ղեկավար	12	2	3	1	18
Գլխավոր հաշվապահ	13	3	3	1	20
Իրավական փորձաքննիչ	3	0	11	11	25
Դատական դեպարտամենտ					129
Դատական կարգադրիչների ծառայություն					652
<b>Ընդամենը</b>	<b>985</b>	<b>194</b>	<b>201</b>	<b>88</b>	<b>2249</b>

Աղբյուրը՝ ամփոփ տվյալներ ԴԴ-ի կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի վերաբերյալ:

#### բ) Աշխատավարձեր

### ՂԱՏԱՎՈՐՆԵՐ

**180.** Բոլոր մակարդակների դատավորների աշխատավարձերը սահմանվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով: Սույն օրենքի համաձայն՝ դատավորի աշխատավարձը սահմանվում է ա) պետական բյուջեի մասին օրենքով սահմանված տարեկան բազային աշխատավարձի, բ) ֆիքսված գործակցի և գ) աշխատանքային ստաժի հիմքով տարեկան բարձրացման հիման վրա<sup>132</sup>:

**181.** 2021 թվականի համար առաջին ատյանի դատարանների դատավորների բազային ամսական աշխատավարձը սահմանվել է 140 եվրո (66,400 ՀՀ դրամ):

Սա համարժեք է տարեկան €13,700 աշխատավարձին՝ եվրո/ՀՀ դրամ տարվա միջին փոխարժեքով: Աղյուսակ 14-ում ներկայացված են գործակիցները, որոնք կիրառվում են դատական համակարգի յուրաքանչյուր մակարդակի դատավորների բազային աշխատավարձի նկատմամբ, և արդյունքում ստացված մեկնարկային և առավելագույն աշխատավարձը (որը հիմնված է ստաժի վրա՝ 30 տոկոս սահմանաչափով): Ներդիր 20-ում նկարագրված են «հորիզոնական» փոխանցումների չափանիշները: Պաշտոնի համար սահմանած առավելագույն աշխատավարձը (15 տարվա ստաժը լրանալուց հետո) մոտ 17,800 եվրոյի չափով է (տարեկան): Վերաքննիչ դատարաններում դատավորների աշխատավարձերի չափերը 10 տոկոսով բարձր են: Վճռաբեկ դատարանում դատավորների աշխատավարձերը դրանից ևս 4,5 տոկոսով բարձր են:

<sup>132</sup>Դատավորները ստանում են երկու տոկոսի չափով հավելված դատավորի պաշտոնում ստանձնած յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև բազային աշխատավարձի 30 տոկոսի առավելագույն չափը: Աշխատավարձի տարեկան բարձրացումը կարող է կասեցվել կատարողականի ոչ դրական գնահատման դեպքում: Կատարողականի դրական գնահատական ստացող անձնակազմի կարող են տրվել բոնուսներ:

**Աղյուսակ 14. 2021 թ. դատավորների տարեկան աշխատավարձերը**

Դատարան	Գործակից	Ամսական մեկնարկային աշխատավարձ (ՀՀ դրամ)	Ամսական առավելագույն աշխատավարձ (ՀՀ դրամ)
Վճռաբեկ դատարան	11.5	760,610	988,793
Վերաքննիչ դատարան	11	727,540	945,802
Առաջին ատյանի դատարան (ընդհանուր իրավասության)	10	661,400	859,820
Վարչական դատարան	10	661,400	859,820

Աղբյուրը՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք:

**182. Աշխատավարձի այս մակարդակը, ըստ երևույթի, բավական բարձր է որակյալ դատավորների ներգրավելու և պահելու համար:** Դատավորների աշխատավարձերն այժմ ամենաբարձր աշխատավարձերից են պետական հատվածում: Առաջին ատյանի դատարանում դատավորի աշխատավարձը հավասար է ԱԺ պատգամավորի, մարզպետի կամ զինված ուժերի շտաբի պետի առաջին տեղակալի աշխատավարձին: Վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանում դատավորի աշխատավարձը ընդամենը 4 տոկոսով է ցածր<sup>133</sup> նախարարի աշխատավարձից, բայց ի տարբերություն նախարարների և կառավարության աշխատակազմի՝ դատավորները ամսական հավելավճար չեն ստանում (որը նախարարների դեպքում սովորաբար կազմում է ամսական աշխատավարձի 100 տոկոսը): Ըստ Զաղաքացիական ծառայության գրասենյակի՝ դատավորների աշխատավարձը գերազանցում է պետական հատվածի իրավաբանների միջին աշխատավարձը: Երևանում մասնավոր հատվածի փաստաբանի միջին տարեկան աշխատավարձը (2021 թ. տարեկան 6,600 եվրոյին համարժեք դրամ) եղել է առաջին ատյանի դատարանի դատավորի մեկնարկային աշխատավարձի կեսից էլ պակաս, իսկ մարզերում, ինչպիսին է Արարատը, այն մեկ երրորդից էր պակաս (2021 թ. տարեկան 4,150 եվրոյին համարժեք դրամ)<sup>134</sup>:

**183. Դատական համակարգում թափուր աշխատատեղերի մակարդակը ցածր է:** 2021 թ. վերջին դատավորների 274 հաստիքներից միայն 11-ն (4 տոկոս) էին թափուր<sup>135</sup>: Այս մասնաբաժինը փոքր-ինչ տարբերվում էր ըստ դատական ատյանների և դատարանների գտնվելու վայրերի: 2021թ. վերջին վերաքննիչ

դատարանում թափուր աշխատատեղերի թիվը կազմել է 2,5 տոկոս, իսկ առաջին ատյանի դատարանում թափուր էին դատավորների 153 պաշտոններից 10-ը (6 տոկոս)<sup>136</sup>: 2022թ. հունվարին, սակայն, թափուր աշխատատեղերի տեսակարար կշիռը հասել է 12,5 տոկոսի: Սա, ըստ երևույթի, արտացոլում է 2021 թվականին դատավորների մեծ թվով հաստիքների ստեղծումը, ներառյալ միջնդատական վարույթների վերաբերյալ գործեր քննող և հակակոռուպցիոն դատարանների դատավորների հաստիքները: Հակակոռուպցիոն դատավորները «Հայացք ապագային» փաստաթղթի պատրաստման ժամանակ դեռ նշանակված չէին:

**ՕԺԱՆՂԱԿ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ**

**184. Օժանդակ անձնակազմի աշխատավարձերը կարգավորվում են «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքով:** Այն ուժի մեջ է մտել 2013թ. և փոքր-ինչ վերանայվել 2018թ. «Զաղաքացիական ծառայության մասին» նոր օրենքին համապատասխանեցնելու համար: Ինչպես դատավորների դեպքում, անհատական աշխատավարձերը արդյունք են ա) «բազային աշխատավարձի», բ) գործակցի, որը կիրառելի է որոշակի աստիճանի և որոշ դեպքերում, գ) մինչև 30 տոկոս հավելումի՝ ելնելով աշխատանքային ստաժից: Օրենքի համաձայն՝ բազային աշխատավարձը պետք է պարբերաբար ճշգրտվի նվազագույն աշխատավարձի փոփոխություններին համապատասխան. բազային աշխատավարձը պետք է լինի նվազագույն աշխատավարձի 80 տոկոսից ոչ պակաս և 120 տոկոսից ոչ ավելի:

<sup>133</sup>Գործողությունների ծրագրով առաջարկվում է բարձրացնել դատավորների և նրանց անձնակազմի աշխատավարձերը՝ պնդելով, որ «այժմ դատավորներին առաջարկվող վարձատրությունը համաչափ չէ նրանց ծանրաբեռնվածությանը, վտանգելով նրանց անաչառությունը, առաջացնելով կոռուպցիա և դժվարացնելով «առաջատար փաստաբանների» ներգրավումը դատական համակարգում ծառայելու համար: Զանի որ այս եզրակացությունը հիմնված էր 2019 թվականի ռազմավարության վրա, այն կարծես թե կրել է իրադարձությունների ազդեցությունը: Դատավորների աշխատավարձերի վերաբերյալ ժամանակային տվյալներ չկան:

<sup>134</sup>Տե՛ս <https://cso.gov.am/news/267?fbclid=IwAR3mSmK7P0DNXfH0rcOaYK0LDBa5nePEw6nK-EQ5VeWZXqwtNPVtMHYawHu>

<sup>135</sup>Աղբյուրը՝ ԴԴ Էլ-փոստ 2022 թ. 31 մայիսի:

<sup>136</sup>Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության դատավորների թիվը՝ առանձնացված ըստ մարզերի և դատարանների տեսակների: Աղբյուրի տվյալների մեջ չկան Վճռաբեկ դատարանի դատավորները: Դիցուք՝ այլ դատարանների թվերը փոքր-ինչ տարբերվում են աղյուսակ 10-ի և 11-ի աղբյուրում ներկայացված տվյալներից:

**185. Փաստորեն ավելի բարձր ղեկավար և մասնագիտական պաշտոնների ղեպքում աշխատավարձերը, կարծես, առավելություն ունեն մասնավոր հատվածի աշխատավարձերի հետ համեմատության մեջ:** 2021 թ. երևանում դատավորի օգնականի մեկնարկային աշխատավարձը կազմում էր տարեկան 5,750 եվրոյին համարժեք դրամ: Սա 15 տոկոսով ցածր էր մասնավոր հատվածի իրավաբանի միջին աշխատավարձից՝ անկախ աշխատանքային փորձից: Արդարադատության համակարգում գործավարի կամ

քարտուղարի մեկնարկային աշխատավարձը տարեկան կազմում էր 2,770 եվրո, ինչը 17 տոկոսով ցածր է «վարչական և օժանդակ ծառայություններով» զբաղված աշխատողների միջին աշխատավարձից ամբողջ Հայաստանում (դարձյալ անկախ աշխատանքային փորձից), այն դեպքում, երբ այս պաշտոնների համար աշխատավարձերը կարող են տատանվել տարեկան մինչև 3650 եվրո, այսինքն՝ 6 տոկոսով բարձր վարչական և օժանդակ անձնակազմի համար ազգային միջինից:

**Աղյուսակ 15. Պետական ծառայության աշխատավարձի գործակիցներ՝ առանց հայեցողական պաշտոնների**

Աշխատավարձի	Կրտսեր պաշտոններ			Առաջատար պաշտոններ			Գլխավոր պաշտոններ			Բարձր պաշտոններ		
	Սանդղակ երրորդ ենթախմբի համար	Սանդղակ երկրորդ ենթախմբի համար	Սանդղակ առաջին ենթախմբի համար	Սանդղակ երրորդ ենթախմբի համար	Սանդղակ երկրորդ ենթախմբի համար	Սանդղակ առաջին ենթախմբի համար	Սանդղակ երրորդ ենթախմբի համար	Սանդղակ երկրորդ ենթախմբի համար	Սանդղակ առաջին ենթախմբի համար	Սանդղակ երկրորդ ենթախմբի համար	Սանդղակ առաջին ենթախմբի համար	
11	1.68	1.95	2.28	2.66	3.11	3.64	4.40	5.34	6.49	7.91	9.65	
10	1.63	1.90	2.21	2.58	3.01	3.53	4.27	5.17	6.29	7.65	9.33	
9	1.58	1.84	2.14	2.50	2.92	3.42	4.13	5.01	6.09	7.41	9.03	
8	1.54	1.79	2.08	2.42	2.83	3.31	4.01	4.85	5.89	7.17	8.74	
7	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.21	3.88	4.70	5.71	6.94	8.46	
6	1.45	1.68	1.96	2.28	2.66	3.11	3.76	4.55	5.52	6.72	8.18	
5	1.41	1.63	1.90	2.21	2.58	3.02	3.64	4.41	5.35	6.50	7.92	
4	1.37	1.59	1.84	2.15	2.50	2.92	3.53	4.27	5.18	6.29	7.66	
3	1.33	1.54	1.79	2.08	2.43	2.83	3.42	4.14	5.01	6.09	7.41	
2	1.29	1.49	1.73	2.02	2.35	2.75	3.31	4.01	4.86	5.89	7.17	
1	1.25	1.45	1.68	1.96	2.28	2.66	3.21	3.88	4.70	5.71	6.94	

Աղբյուրը՝ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենք:

**Մարտահրավեր 2. Կադրային կառավարման բարելավում**

ա) Կառավարում

**ՂԱՏԱՎՈՐՆԵՐ**

**186. Դատավորների ներգրավումը, նշանակումը և գործուղումը կազմակերպվում է ԴԴ-ի դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչու-**

**յան օգնությամբ:** Վարչությունը բաժանված է երկու ստորաբաժանման՝ դատավորների և թեկնածուների առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժին և դատավորների նկատմամբ վարույթներին առնչվող բաժին: Ընդհանուր առմամբ, այս վարչությունը ութ հաստիք ունի՝ մեկը վարչության պետ, չորսը՝ դատավորների և թեկնածուների առաջխաղացմանը վերաբերող հարցերի, երեքը՝ դատավորների նկատմամբ

վարույթներին առնչվող բաժնում: Դատավորների և թեկնածուների առաջխաղացմանը վերաբերող հարցերի բաժինն է կազմակերպում դատավորների թեկնածուների որակավորման քննությունները, ստուգում թեկնածուների դիմումները և դրանց վավերականությունը, վարում դատավորների թեկնածուների, առաջխաղացման ենթակա դատավորների և այլ ցուցակները: ԴԴ-ի անձնակազմի կառավարման վարչությունը հիմնականում զբաղվում է օժանդակ անձնակազմի կառավարմամբ և իրականացնում է դատավորների հետ կապված միայն սահմանափակ վարչական գործառնություններ, ինչպես օրինակ՝ նրանց կադրային գործերը վարելը: ՄՌ-ի էլեկտրոնային կառավարման գործիքի բացակայության պայմաններում բոլոր վարչություններում և բաժիններում աշխատանքի մեծ մասը կազմակերպվում է ձեռքով:

## ՕԺԱՆԴԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԾ

**187. ԴԴ-ի անձնակազմի կառավարման վարչությունը պատասխանատու է դատարանների օժանդակ անձնակազմի կառավարման համար:** Անձնակազմի կառավարման վարչությունում ընդհանուր առմամբ 13 հաստիք կա՝ մեկը վարչության պետ, յոթ հաստիք դատական անձնակազմի և վեց աշխատակից դատական կարգադրիչների մարդկային ռեսուրսների կառավարման աշակցելու համար: Այնուամենայնիվ, սույն փաստաթղթի ձևակերպման փուլում վարչությունում թափուր էր յոթ պաշտոն: Ինչպես դատավորներին և թեկնածուներին առնչվող հարցերի վարչության պարագայում, մարդկային ռեսուրսների կառավարման գործառնությունների մեծ մասն իրականացվում է ձեռքով, ՏՅՏ աշակցությունը սահմանափակ է: Անձնակազմի բոլոր ֆայլերը և դրանց առնչվող տվյալները պահվում են թղթային ձևաչափով, խելացի և համապարփակ էլեկտրոնային ՄՌ-ի կառավարման գործիքների բացակայությունը խաթարում է գործընթացների արդյունավետությունը և վտանգի տակ դնում զգայուն տվյալները: Անբավարար հմտություններն ու կարողությունները, որոնք զուգորդվում են մարդկային ռեսուրսներն ակտիվ կառավարելու ուժեղ մանդատի բացակայության հետ, հանգեցնում են նրան, որ վարչությունը կենտրոնանում է փաստաթղթերի և փաստաթղթերի ներկայացման հետ կապված վարչական խնդիրների վրա: Օժանդակ անձնակազմի համար գործող կատարո-

ղականի գնահատման համակարգը նմանություններ ունի քաղաքացիական ծառայության ընդհանուր գնահատման համակարգի հետ, որը զուրկ է գնահատման խորը և համապարփակ մեխանիզմներից:

**188. Դեկավար և մասնագիտական օժանդակ անձնակազմը ներկայումս դեկավարվում է «Քաղաքացիական ծառայության մասին» և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքներով:** Երկու օրենքներն էլ էականորեն վերանայվել են որպես հանրային զբաղվածության համակարգի ավելի լայն բարեփոխման մաս, որն ընդլայնել է քաղաքացիական ծառայության համակարգի ծածկույթը՝ ներառելով դատական իշխանությունը, ինչպես նաև պետական այլ մարմիններ, որոնք նախկինում ունեին ՄՌ-ի առանձին համակարգեր<sup>137</sup>: Քաղաքացիական ծառայության բարեփոխումը սկսվեց քաղաքացիական ծառայության բոլոր պաշտոնների վերադասակարգմամբ: Դա արվել է այնպիսի գործոնների հիման վրա, ինչպիսիք են պատասխանատվության շրջանակը և որոշումներ կայացնելու իրավասությունը, ազդեցությունը, բարդությունը և պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները: Դրա հիման վրա պաշտոնները բաժանվեցին երկու մեծ խմբի՝ «դեկավար» և «մասնագիտական»: Դեկավար պաշտոններն իրենց հերթին բաժանվել են հինգ ենթախմբի. մասնագիտական պաշտոնները՝ ութ: Բարեփոխումը, ընդլայնելով քաղաքացիական ծառայության համակարգի հասանելիությունը, մարդկային ռեսուրսների մի քանի գործառնություններ թողեց առանձին մարմիններին և գերատեսչություններին, ներառյալ անձնակազմի հավաքագրումը և վերապատրաստումը:

**189. ԴԴ-ն առաջարկում է դարձյալ տարանջատել դատական ծառայությունը քաղաքացիական ծառայության համակարգից, ինչը, ըստ էության, կվերականգնի ԴԴ-ի վերահսկողությունը դատարանների օժանդակ անձնակազմի կառավարմանը** (ներդիր 31): ԴԴ-ն պնդում է, որ դա անհրաժեշտ է, քանի որ ա) քաղաքացիական ծառայության դասակարգման համակարգը հնարավորություն չի տալիս առաջխաղացումներ կատարելու դատական համակարգի մարմիններում<sup>138</sup> թուլացնելով բարոյական ոգին<sup>139</sup>, բ) քաղաքացիական ծառայության աշխատավարձերը չափազանց ցածր են, ինչը խոչընդոտում է կադրերի հավաքագրումը և պահպանումը, գ) քաղաքացիական ծառայության հավաքագրման գործընթացը դանդաղ է և ծանր:

<sup>37</sup> Այս բարեփոխման աշակցել են մի շարք դոկտոր կազմակերպություններ, այդ թվում՝ Համաշխարհային բանկը և ԵՄ/ՏՀԶԿ-ն SIGMA-ի հետ համատեղ նախաձեռնությամբ: Մասնավորապես, SIGMA-ի «Հանրային հատվածի ելակետային գնահատման գեկույցն» ընդգծեց այս բարեփոխման կարևորությունը, ինչպես և Համաշխարհային բանկի «Քաղաքացիական ծառայության ռազմավարությունը (2008-2009 թթ.)»:

<sup>138</sup> Դատավորների կարգավիճակը չի կարգավորվում «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքով:

<sup>139</sup> Դատական համակարգում բարեփոխումների ընդունումից չորս տարի անց պաշտոնները դեռ պետք է դասակարգվեն ըստ քաղաքացիական ծառայության կառուցվածքի:



## ՆԵՐՂԻՐ 31. ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈՒԽՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆՁՆՈՒՄ

ԴԴ-ի ձեռնարկած օրենսդրական նախագծով առաջարկվում է դատական համակարգում ծառայության երկու ձև՝ դատական ծառայություն և դատական կարգադրիչի ծառայություն, որտեղ ԴԴ-ն գործարկում է անձնակազմի կառավարման իր համակարգը: Դատական ծառայությունը կսահմանվի որպես «օրենքով իրականացվող մասնագիտական գործունեություն՝ ապահովելու դատական իշխանության, ԲԴԽ-ի, դատարանների պաշտոնատար անձանց վերապահված լիազորությունների և գործառնությունների լիարժեք և արդյունավետ իրականացումը»: Առաջարկության համաձայն՝ ԲԴԽ նախագահը կնշանակի և աշխատանքից կազատի ԴԴ պետի տեղակալներին, դատարանների աշխատակազմերի ղեկավարներին, ներքին աուդիտորներին և դատական կարգադրիչների ծառայության պետին, իսկ ԲԴԽ-ն կհաստատի կառուցվածքը, պաշտոնները և հաստիքները ԴԴ-ում: «Քաղաքացիական ծառայության մասին» 2018թ. օրենքի շրջանակից կհեռացվի դատական իշխանությունը, իսկ «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքին կավելացվեն դատական և կարգադրիչների ծառայության աշխատավարձի առանձին գործակիցներ<sup>140</sup>:

**190.** Ավնհայտ չէ, որ նախկին դատական ծառայության վերականգնումը ԴԴ-ին դատական համակարգում ղեկավար և մասնագիտական պաշտոնների քանակի ավելի մեծ վերահսկողություն կտա, քանի որ կադրային մակարդակի սահմանափակումները պարտադրվում են կառավարության բյուջետային գործընթացով<sup>141</sup>: Ավելին, որոշ վտանգ կա, որ առանձին դատական ծառայության ստեղծումը, վերջին հաշվով, կարող է ունենալ ձևագնդի էֆեկտ՝ կաթվածահար անելով հանրային զբաղվածության ողջ համակարգը և հանգեցնելով տարբեր գերատեսչություններում աշխատանքային պայմանների կամայական տարբերությունների, ինչից, որը նախատեսված էր լուծել 2018թ. բարեփոխմամբ: Դա վկայում է, որ կառավարությունը պետք է շարունակի ինտեգրել դատական համակարգի օժանդակ անձնակազմի ՄՌ կառավարման համակարգը քաղաքացիական ծառայության համակարգին:

բ) Կադրերի համալրում

### ԴԱՏԱՎՈՐՆԵՐ

**191.** Առաջին ատյանի դատարանների դատավորներին հավաքագրում է ԲԴԽ-ն: Նոր դատավորների համալրման կարգը ամրագրված է Դատական

օրենսգրքում<sup>142</sup>: Առաջին ատյանի դատարանների դեպքում ԲԴԽ-ն ամեն տարի գնահատում է այն պաշտոնների թիվը, որոնք թափուր կմնան առաջիկա երկու տարում՝ ըստ մասնագիտացման ոլորտների (քրեական, քաղաքացիական, սևանկության, վարչական և հակակոռուպցիոն): ԲԴԽ-ն հրապարակում է այս պաշտոնների համար դիմելու կարգը, ինչպես նաև պահանջվող նվազագույն որակավորումները<sup>143</sup>: Դիմումներում առկա տեղեկատվությունը ստուգվում է ԲԴԽ-ում<sup>144</sup>, սակայն Դատական օրենսգիրքը նման ընթացակարգ չի սահմանում: Փոխարենը պահանջում է, որ ԲԴԽ-ն առանձին կանոնակարգերով սահմանի այդ ընթացակարգերը:

**192.** Թեկնածուները հանձնում են գրավոր քննություն<sup>145</sup>, որը գնահատում է հինգ դատավորներից և իրավունքի համապատասխան ոլորտի երկու գիտնական իրավաբաններից բաղկացած հանձնաժողովը: Գնահատող հանձնաժողովը գումարում է ԲԴԽ-ն, որը նաև որոշում է գնահատման չափանիշները և միավորների համակարգը: Քննության անհատական միավորները հրապարակվում են պետական պաշտոնական ծանուցումների կայքում և հայտարարվում են ուղիղ հեռարձակմամբ: Առավելագույն միավորներ հավաքած թեկնածուները ԲԴԽ-ում<sup>146</sup> հրավիրվում

<sup>140</sup>Այս երկու ծառայություններում պաշտոնների գործակիցները սահմանված են առաջարկվող օրենքով և տատանվում են 1,4-ից 9,65-ի սահմաններում դատական ծառայության և 1,96-ից մինչև 9,65-ի սահմաններում դատական կարգադրիչի ծառայության մեջ:

<sup>141</sup>Տե՛ս գլուխ 5-ը բյուջետավորման, ֆինանսական կառավարման և ծախսերի մասին:

<sup>142</sup>Համապատասխան բաժինները բաղկացած են 20 հոդվածներից:

<sup>143</sup>Թեկնածուները պետք է լինեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի և ունենան իրավագիտության բակալավրի կամ մագիստրոսի կոչում, առավազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային փորձ և հայերենի ու առնվազն երկու այլ լեզուների (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն կամ ֆրանսերեն) իմացություն: Նրանք պետք է լինեն 25-60 տարեկան:

<sup>144</sup>Հայտերը պետք է ներառեն որակավորման նվազագույն պահանջներին համապատասխանող ապացույցներ, լրացուցիչ կենսագրական տեղեկատվություն և (ընտրությամբ) երաշխավորագրեր:

<sup>145</sup>Քննության հարցերը նպատակ ունեն ստուգել տեսական իրավական գիտելիքները, օրենքը վերլուծելու և կիրառելու կարողությունը: Դատական օրենսգրքի համաձայն՝ հարցերը կարող են ներառել հիպոթետիկ իրավական ինդիկներ համապատասխան մասնագիտացման ոլորտից, որոնք պահանջում են թեկնածուից ընտրել լուծում և նկարագրել գործը քննելու համար անհրաժեշտ ընթացակարգերն ու փաստաթղթերը: Երբ վերանայված օրենսգիրքը առաջին անգամ ներդրվեց, գրավոր քննությունը ստացավ շարադրանքի ձև, սակայն այն այժմ բազմակի ընտրության ձևաչափով է, որը նվազեցնում է թեստի միավորների սուբյեկտիվությունը (պատասխանը կա՛մ ճիշտ է, կա՛մ սխալ), բայց հնարավորություն չի տալիս գնահատելու թեկնածուի՝ օրենքի վերլուծության և կիրառման հմտությունները:

<sup>146</sup>Թեկնածուները, որոնք անցնում են այս փուլը, ենթակա են բարեկարգության ստուգման՝ բացահայտելու համար կասկածելի ֆինանսական նախադրյալները: Ստուգումն իրականացնում է ԿԿԴ-ն՝ կազմված մրցութային գործընթացի հիման վրա նշանակված անդամներից:

են հարցազրույցի: Այնուհետև ԲԴԽ-ն քննարկում, քվեարկում և ամփոփում է հաջողակ թեկնածուների վերջնական ցուցակը:

**193. Հաստատվելուց հետո թեկնածուն միանում է Արդարադատության ակադեմիայի վերապատրաստման ծրագրին 6-8 ամսով, որին հաջորդում է գրավոր քննություն:** Ակադեմիան, որը հիմնադրվել է 2014թ., տրամադրում է ինչպես մասնագիտական ուսուցում, այնպես էլ վերապատրաստման դասընթացներ դատավորներին, քննիչներին, դատախազներին և քրեական արդարադատության այլ անձնակազմին<sup>147</sup>: Վերապատրաստումը հաջողությամբ ավարտվելու դեպքում ԲԴԽ-ն թեկնածուին ներկայացնում է հանրապետության նախագահին՝ օրենքով սահմանված առաջնահերթության չափանիշներով: Եթե նախագահը մերժում է թեկնածուին, ապա ԲԴԽ-ն պետք է նիստ գումարի նախագահի առաջարկությունները քննարկելու համար: ԲԴԽ-ն այնուամենայնիվ կարող է կրկին առաջադրել թեկնածուին և այդ դեպքում նախագահը պարտավոր է ընդունել որոշումը:

**194. Հնարավոր չի եղել գնահատել, թե արդյոք կիրառվող չափանիշները նպատակ ունեն ապահովել արժանիքների վրա հիմնված համալրում և ներգրավել բարձր որակի կադրեր, ինչպես նաև պարզ չէ՝ արդյոք համալրման գործընթացը համապատասխանում է հայտերի և քննության համար սահմանված չափանիշներին:** 2022-2026թթ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը, հիմնվելով նախկին այն պնդումների վրա, որ խնդիրները մնում են, առաջարկում է համակարգը դարձնել ավելի անաչառ և վստահելի: Կառավարության 2021-2023թթ. դատաիրավական բարեփոխումների գործողությունների ծրագիրը (*հիմնված 2019թ. դատաիրավական բարեփոխումների ռազմավարության վրա*), 2018 թվականի դատական օրենսգրքում ամրագրված բարեփոխումները ճանաչելով հանդերձ, նշում է նաև նրա «օրենսդրական և գործնական կիրառման» խնդիրները, ներառյալ գրավոր գնահատականների թույլ հիմնավորումը և հարցազրույցների ու քննությունների ընթացակարգերում առկա խնդիրները: Այս խնդիրների լուծման համար առաջարկվում է փոփոխել գնահատող հանձնաժողովների ձևավորման կարգը, ներդնել միջազգային լավագույն փորձը (ներառյալ հոգեբանական թեստերը) և դատավորների ընտրության գործընթացում անմիջականորեն ներգրավել միջազգային փորձագետներին<sup>148</sup>:

**195. 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը սևեռ-**

**ված են թեկնածուների գնահատման գործընթացի մեկ խնդրի վրա՝** գրավոր և բանավոր քննությունների կապի բացակայության: Գործողությունների ծրագրի համաձայն՝ գրավոր քննության արդյունքները հաշվի չեն առնվում բանավոր գնահատման ընթացքում՝ չնայած 2020 թվականին Դատական օրենսգրքում կատարված փոփոխություններին, որոնք պահանջում են դա: Ռազմավարությունն առաջարկում է ստեղծել մի համակարգ, որում գրավոր և բանավոր քննությունների արդյունքները կարող են միավորվել գնահատման միասնական համակարգում:

**196. Դատավորների թեկնածուների գնահատման այս համակարգը ճիշտ ուղղությամբ է ընթանում:** Թեկնածուների գնահատման ամեն մի համակարգ պետք է օբյեկտիվություն ապահովող նեղ մեխանիկական մոտեցման առավելությունները համադրի առավել սուբյեկտիվ մոտեցմանը, որը ավելի լայն և նրբանկատ գնահատման հնարավորություն է տալիս, սակայն խոցելի է արտոնյալ անձնական վերաբերմունքի և քաղաքական ճնշման տեսանկյունից: Գործող համակարգը, համեմատյալ դեպք, ինչպես գրված է, ողջամիտ հավասարակշռություն է պահպանում այս երկուսի միջև: Գնահատման գործընթացի առաջին երկու քայլերը, ըստ էության, մեխանիկական են. թեկնածուները պետք է բավարարեն ակադեմիական և աշխատանքային փորձի նվազագույն շեմերը և հաճախ բազմակի ընտրությամբ գրավոր թեստ, թեև վերջինիս դեպքում չկա նվազագույն շեմ: Բարեվարքության ստուգումը նույնպես, ըստ էության, մեխանիկական է. թեկնածուների ֆինանսական վիճակը պետք է համապատասխանի ԿԿԳ-ի կողմից սահմանված չափանիշներին: Այս թեստերը պարտադրվում են հաջորդաբար, այնպես, որ որևէ թեկնածու չի կարող անցնել գնահատման գործընթացի հաջորդ փուլ, եթե չի բավարարել նախորդը: Բանավոր գնահատումը դիտավորյալ ավելի սուբյեկտիվ է և թեկնածուներին գնահատելու հնարավորություն է տալիս նրանց տրամաբանելու և օրենքը կիրառելու կարողության հիման վրա: Դեռևս պարզ չէ՝ արդյոք այս օրենքների իմաստը պահպանվում է գործնականում, քանի որ դրանք նորամուծություն են, համեմատյալ դեպք 2022-2026թթ. ռազմավարությունը հուշում է, որ խնդիրները մնում են:

**197. Կառավարությունը կարող է նաև ցանկանալ վերահավասարակշռել թեկնածուներին գնահատող հանձնաժողովի կազմը՝ բարձրացնելու դատավորների և ոչ պետական հատվածների ներկայացվածությունը:** Որոշ քննադատություններ են հնչել գնահատող

<sup>147</sup>Շատ կայքի՝ Ակադեմիայի հիմնական նպատակներն են «զարգացնել դատավորների և դատախազների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց հմտություններն ու մասնագիտական գիտելիքները և շարունակաբար կատարելագործել դատավորների, դատախազների, դատական կարգադրիչների, դատական ծառայողների և դատախազության աշխատակազմի քաղաքացիական ծառայողների հմտություններն ու մասնագիտական գիտելիքները: Ակադեմիայի կայքում հասանելի վերջին գեկույցն իր գործունեության վերաբերյալ գետեղվել է 2019թ.:

<sup>148</sup>Այս բարեփոխումներն ուժի մեջ են մտել 2021 թ. հոկտեմբերին: Տվյալ պնդումը չհաջողվեց ստուգել:

հանձնաժողովի կազմի վերաբերյալ, հատկապես այն, որ դատավորները քիչ են ներկայացված:

## ՕԺԱՆՂԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԳՍ

**198.** «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը սահմանում է յուրաքանչյուր ենթախմբի համար պահանջվող կրթության և մասնագիտական փորձի նվազագույն մակարդակը: Բոլոր պաշտոնների համար պահանջվում է բարձրագույն կրթություն, բացառությամբ ամենացածր երեք մասնագիտական աստիճանակարգերի, որոնց դեպքում բավարար է ավագ դպրոցում ստացած կրթությունը: Մասնագիտական աշխատանքային փորձի պահանջները տատանվում են ոչնչից (երեք ամենացածր մասնագիտական աստիճանակարգերի դեպքում) մինչև առնվազն յոթ տարվա մասնագիտական աշխատանքը ղեկավար պաշտոնների առաջին և երկրորդ ենթախմբերի պաշտոնների համար:

**199.** Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի՝ դատական համակարգի բոլոր ղեկավար և մասնագիտական պաշտոնները պետք է զբաղեցվեն ԴԴ-ի կողմից անցկացվող մրցութային գործընթացով: Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ գրավոր թեստ և հարցազրույց: Գրավոր թեստը պետք է հիմնված լինի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների և կարողությունների վրա: Ամենաբարձր միավորներ հավաքած հինգ թեկնածուներն այնուհետև անցնում են հարցազրույցի, որը վարում է պաշտոնը համալրելու համար պատասխանատու պաշտոնատար անձի կողմից նշանակված հանձնաժողովը: Հաղթող թեկնածուն այնուհետև նշանակվում է փորձաշրջանով, որը բավարար կատարողականի դեպքում վերածվում է մշտական պաշտոնի:

**200.** Քաղաքացիական ծառայության գրասենյակը և դատական համակարգը մինչ այժմ չեն կարողացել դատարանների օժանդակ անձնակազմի աշխատանքի նկարագրերը համապատասխանեցնել քաղաքացիական ծառայության մեթոդաբանությանը: Քաղաքացիական ծառայության պաշտոնների թեկնածուները համալրվում են առանց աշխատանքի նկարագրության, այլընտրանքային մեխանիզմներով, որոնք սովորաբար կիրառվում են ժամանակավոր պաշտոններ համալրելու համար:

**201.** ԴԴ-ն պնդում է, որ քաղաքացիական ծառայության պահանջներից ելնելով՝ դատավորի օգնական

նշանակելու համար պահանջվում է երեք ամիս, ինչը պարտադրում է դատական իշխանություններին աշխատանքի ընդունել նման աշխատողներին պայմանագրային հիմունքներով: Սակայն պարզ չէ՝ դա քաղաքացիական ծառայության համակարգին բնորոշ խնդիր է, թե ոչ, կամ արդյոք դա կարող է լուծվել, եթե քաղաքացիական ծառայության համակարգն ավելի լավ արձագանքի դատական իշխանության կարիքներին: Պահանջն ինքնին վիճելի է: Համենայն դեպս, քաղաքացիական ծառայության մեջ ընդգրկվելու համար պահանջվող միջին ժամանակը կազմում է այդ ժամանակի միայն կեսը:

գ) Կատարողականի գնահատում և կարգապահական միջոցներ

## ՂԱՏԱՎՈՐՆԵՐ

**202.** Դատական օրենսգրքում հստակ սահմանված է դատավորների գնահատման ընթացակարգը<sup>149</sup>: Դատավորները պետք է գնահատվեն որակի և պրոֆեսիոնալիզմի<sup>150</sup>, արդյունավետության<sup>151</sup> և էթիկայի<sup>152</sup> հիման վրա: Օրենքը լիազորում է ԲԴԽ-ին սահմանել հատուկ մեթոդաբանություն, որը պետք է կիրառել, ներառյալ գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը: Գնահատումները պետք է իրականացնի ԲԴԽ-ն չորս տարի պարբերականությամբ, և դրանք պետք է կիրառվեն բոլոր դատավորների նկատմամբ<sup>153</sup>: Ավարտելուց հետո գնահատման նախագիծն ուղարկվում է դատավորին, որը ցանկության դեպքում կարող է արձագանքել: Այնուհետև ԲԴԽ-ն դիտարկում է դատավորի արձագանքը և տալիս վերջնական գնահատական, ընդ որում՝ ցածր կամ միջին գնահատականի դեպքում որոշում է ընդունում վերապատրաստման կարիքների մասին, իսկ հիմքերի առկայության դեպքում կարգապահական վարույթ հարուցելու համար դիմում է ԷԿՀ:

**203.** Լավ կատարողականը պարգևատրվում է ուղղահայաց առաջխաղացումների և աշխատավարձի միանվագ պարգևավճարների միջոցով, մինչդեռ վատ կատարողականի դեպքում կիրառվում են կարգապահական տարբեր միջոցներ: Դատական օրենսգրքում դատավորների նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին մեծ բաժին է հատկացված: Ընդհանուր առմամբ, կարգապահական տույժեր կարող են կիրառվել ա) դատական իշխանու-

<sup>149</sup>ՀՀ դատական օրենսգրքը, 138-րդ հոդված:

<sup>150</sup>Այն է՝ դատական որոշումները արդարացնելու կարողություն և նախագահել դատական նիստերը:

<sup>151</sup>Այն է՝ աշխատանքային ծանրաբեռնվածության կառավարման հմտություն և աշխատանքի պլանավորում, ինչպես նաև դատական գործողությունների կատարման ժամանակացույցներ:

<sup>152</sup>Այն է՝ էթիկայի կանոնների պահպանում, նպաստում դատարանի՝ հանրության կողմից դրական ընկալմանը, վերաբերմունքը այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ:

<sup>153</sup>Դատական օրենսգրքի 137-րդ հոդվածով նախատեսված գնահատման երկրորդ տեսակը վերաբերում է արտահերթ գնահատմանը, որը կարող է տեղի ունենալ նաև անհատ դատավորի նախաձեռնությամբ:

յունը կարգավորող նյութական կամ դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների կամ բ) Դատական օրենսգրքով նախատեսված դատավորների վարքագծի կանոնների կոպիտ խախտումների համար, որոնք կատարվել են դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

**204. Կարգապահական տույժեր կարող են հարուցվել դատավորների ընդհանուր ժողովի ԷԿԳ-ի<sup>154</sup>, ԱՆ-ի և ԿԿԳ-ի կողմից:** ԷԿԳ-ն ունի ութ անդամ՝ վեց դատավոր և երկու դատավոր չհանդիսացող անդամ: Դատավոր չհանդիսացող անդամները արդարադատության ոլորտում աշխատող իրավաբան են (Դատական օրենսգրքի 77-րդ հոդված): ԿԿԳ-ն ունի հինգ անդամ, որոնք առաջադրվել են մրցութային կարգով և ընտրվել ԱԺ-ի կողմից: Դրա իրավասությունը սահմանափակվում է ֆինանսական սխալ վարքագծի քննությամբ: Այդ նպատակով ԿԿԳ-ն ստուգում է դատավորների ֆինանսական հայտարարագրերն այնպես, ինչպես դա անում է պետական այլ պաշտոնյաների դեպքում: Երրորդը արդարադատության նախարարն է: Այս սուբյեկտներից յուրաքանչյուրը կարող է գործ հարուցել սեփական նախաձեռնությամբ կամ բողոքների, մամուլում առկա տեղեկատվության կամ այլ աղբյուրների հիման վրա: Մասնավոր անձինք, օրինակ՝ հիասթափված հայցվորները, չեն կարող ինքնուրույն նախաձեռնել բողոքների քննության գործընթաց: Ըստ էության, վերոհիշյալ մեխանիզմները նախատեսված են ծառայելու որպես «ֆիլտր»՝ երաշխավորելու, որ միայն ստուգված բողոքներն են ենթակա գնահատման: Այդ նպատակով նրանք կարող են չարաշահումների մասին մեղադրանքների նախնական փաստական հետաքննություն անցկացնել:

**205. Այս երեք սուբյեկտներից որևէ մեկի կողմից հարուցված վարույթներն այնուհետև քննվում են ԲԴԽ-ում:** ԲԴԽ-ի բացառիկ իրավասությունն է վերահսկել գործընթացը և կիրառել կարգապահական պատասխանատվություն, ինչպիսիք են, ի թիվս այլոց, նախագուշացումը, նկատողությունը, լիազորությունների դադարեցումը: Այս դեպքում ԲԴԽ-ն հանդես է գալիս որպես 10 հոգուց բաղկացած դատարան: Որոշումներն ընդունվում են պարզ կամ որակյալ մեծամասնությամբ (կախված պատժամիջոցի ծանրությունից)՝ մրցակցային վարույթից հետո: Վենետիկի հանձնաժողովի 2019 թ. զեկույցում քննադատության է ենթարկվել այս մոտեցումը՝ պնդելով, որ մեղադրվող դատավորները պետք է կարողանան բողոքարկել ԲԴԽ-ի որոշումը վերադաս ատյանում, տվյալ դեպքում՝ Վճռաբեկ դատարանում: Այս առաջարկությո-

յունը չի իրականացվել: Այնուամենայնիվ, ԱՆ-ն այս հարցով Դատական օրենսգրքում փոփոխություններ է նախաձեռնել:

**206. Ոչ պատշաճ վարքագծի համար մեղավոր ճանաչված դատավորները այս կամ այն գործընթացների շրջանակներում ԲԴԽ-ի կողմից ենթարկվում են մի շարք կարգապահական տույժերի:** ԲԴԽ-ից պահանջվում է դադարեցնել դատավորների լիազորությունները, երբ նրանք ա) խախտել են անհամատեղելիության պահանջները<sup>155</sup>, բ) զբաղվել են քաղաքական գործունեությամբ, գ) չեն կատարել իրենց ծառայողական պարտականությունները ավելի քան չորս ամիս անընդմեջ, կամ դ) դատապարտվել են հանցագործության համար: Բացի այդ, դատավորի նկատմամբ քրեական գործ կարող է հարուցվել գլխավոր դատախազի կողմից:

**207. Գործողությունների 2021-2023թթ. ծրագրում ներկայացվում են այս դրույթների իրականացման խնդիրները:** Առաջարկվում է հստակեցնել դատավորներին և ԲԴԽ անդամներին կարգապահական վարույթի ենթարկելու չափանիշները՝ սահմանելով դատավորների վարքագծի կանոնները և ընդլայնելով կարգապահության հիմքերի սահմանումը, ներառելով դատավորի անկախությունը, անաչառությունը կամ բարեվարքությունը կասկածի տակ դնող յուրաքանչյուր գործողություն:

**208. Ժամանակի ընթացքում, կապված կառավարման ավելի լայն բարեփոխումների հետ, նպատակահարմար կհամարվի ԱՆ-ի լիազորությունների սահմանափակումը գործող դատավորների գործունեության վերաբերյալ ԲԴԽ բողոքներ ներկայացնելու մասով՝ այդ պատասխանատվությունը թողնելով ԷԿԳ-ին և ԿԿԳ-ին (տե՛ս գլուխ II՝ «Դեկավարում և կառավարում»):** Այնուամենայնիվ կարճաժամկետ հեռանկարում ԱՆ-ի ազդեցությունը կարող է անհրաժեշտ լինել նման գործերի վերաբերյալ վերջնական վճիռ կայացնող ԲԴԽ-ում ներկայացված դատավորների կորպորատիվ շահերը հակակշռելու համար, մինչև ԷԿԳ-ն այնքան զարգանա, որ աշխատի արդյունավետ և անկախ՝ առանց կորպորատիվ շահերը սպասարկելու ռիսկի:

**209. Կարող է նաև նպատակահարմար լինել ԲԴԽ-ի կազմի փոփոխումը դատավորների և ոչ կառավարական հատվածների ներկայացվածությունը մեծացնելու համար:** Զանի որ դատավորների նշանակման և գնահատման գործում ԲԴԽ-ն առանցքային դեր ունի, նրա կազմի ընդլայնումը կնպաստի ԱԺ-ի կող-

<sup>154</sup>Կարգապահական հարցերի հանձնաժողովը կազմված է ութ անդամից՝ երկու դատավոր մասնագիտացված դատարաններից, երկուսը առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից՝ քրեական և քաղաքացիական մասնագիտացմամբ, մեկը՝ վերաքննիչ և մեկը Վճռաբեկ դատարանից:  
<sup>155</sup>Դատավորը չի կարող զբաղեցնել իր կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններում, որևէ պաշտոն՝ առևտրային կազմակերպություններում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

մից նշանակված անձանց ազդեցության նվազեցմանը, ինչպես նաև կարող է նվազեցնել ԲԴԽ-ի գործունեության վրա քաղաքական ազդեցության հավանականությունը:

## ՕԺԱՆՂԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԳՍ

**210. «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքը պահանջում է ամբողջ անձնակազմի կատարողականի գնահատում իրականացնել տարին երկու անգամ՝ յուրաքանչյուր կիսամյակի վերջում:** Բարձր կատարողականով անձնակազմը կարող է պարգևավճարներ ստանալ. աշխատավարձի մակարդակի փոփոխությունները պայմանավորված են պաշտոնի փոփոխությամբ, որը կատարողականի գնահատման պարտադիր գործառույթ է: Վատ աշխատող անձնակազմը ենթարկվում է նախազգուշացման, նկատողությունների, իսկ ծայրահեղ դեպքում՝ 20 տոկոսով աշխատավարձի նվազեցման: Վատ աշխատող անձնակազմը կարող է նաև պարտադիր վերապատրաստումներ անցնել և վերապատրաստման միավորներ հավաքել: Այն դեպքում, երբ վերապատրաստվողները երկու անգամ անընդմեջ չեն հավաքում բավարար չափով միավորներ, կարող են ազատվել աշխատանքից:

դ) Առաջխաղացում

## ՂԱՏԱՎՈՐՆԵՐ

**211. Առաջին ատյանի դատարաններում դատավորների կարիերայի ուղին սահմանափակվում է վերաքննիչ ատյանում առաջադրվելով. նման պաշտոնները չեն ենթարկվում առաջխաղացման աստիճանական համակարգին:** Դատական օրենսգրքի համաձայն՝ ԲԴԽ-ն ամեն տարի գնահատում է վերաքննիչ դատարաններում առաջիկա երկու տարում ակնկալվող թափուր տեղերի քանակը, այնուհետև կազմում են ակնկալվող թափուր աշխատատեղերի քանակին հավասար կամ դրանից ավելի առաջխաղացման թեկնածուների ցուցակ: Թեկնածուների թվում կարող են ընդգրկվել առաջին ատյանի դատարանների գործող դատավորներ: Թույլատրվում է դիմել նաև նախկին դատավորներին և իրավաբանական կրթություն ունեցող և ամնվազն ութ տարվա համապատասխան փորձ ունեցող անձանց: ԲԴԽ անդամները գնահատում և ապա քվեարկում են թեկնածուների օգտին (Դատական օրենսգրքի 124-րդ հոդված): Ընտրված թեկնածուն ներկայացվում է Արդարադատության ակադեմիա գնահատման, այնուհետև ներկայացվում է հանրապետության նախագահին, որը կարող է ընդունել կամ մերժել այն: Ինչպես առաջին ատյանի դատարանների դեպքում, ԲԴԽ-ն կարող է «չեղարկել» նախագահի առարկությունը: Նմանատիպ ընթացակարգեր են նախատեսված նաև դատավորներին՝ Վճռաբեկ դատարան առաջխաղացման համար,

սակայն ԲԴԽ-ի ընտրած թեկնածուները պետք է հաստատվեն ԱԺ-ի կողմից նախքան նրանց անունները նախագահին ներկայացնելը:

**212. Մի դատարանից մյուս դատարան տեղափոխությունները (հորիզոնական փոխանցումներ) չեն դիտվում որպես առաջխաղացման կամ կատարողականի խթան, թեև ծայրամասային շրջանների դատավորները կարող են նախընտրել աշխատել Երևանում:** Առաջին ատյանի դատարանների դատավորները կարող են դիմել առաջին ատյանի մի դատարանից մյուս դատարան տեղափոխվելու համար թափուր պաշտոնի առկայության դեպքում: Դատական օրենսգրքը (115-րդ հոդված) դրանք չի դիտարկում որպես առաջխաղացում: Փոխարենը այն դատավորները, որոնք ցանկանում են հորիզոնական տեղափոխություն կատարել, դասակարգվում են՝ ելնելով կատարողականի հետ կապ չունեցող չափանիշներից, առաջնահերթությունը տրվում է պաշտոնի համար համապատասխան մասնագիտացում ունեցող դատավորներին (և նախապատվությունը տրվում է ամենահին դատավորին), երկրորդ՝ առաջնահերթությունը՝ վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների դատավորներին, այսինքն՝ որոնք պահանջել են պաշտոնի իջեցում, և երրորդ՝ առաջնահերթությունը՝ պաշտոնաթող դատավորներին:

## ՕԺԱՆՂԱԿ ԱՇԽԱՏԱԿԱԳՍ

**213. Օժանդակ անձնակազմի առաջխաղացումը հիմնականում իրականացվում է նույն սկզբունքներով, ինչ քաղաքացիական ծառայության մյուս ծառայողների դեպքում:** Քաղաքացիական ծառայության համակարգը ներառում է առաջխաղացման աստիճանական համակարգ կարիերայի առանձին հոսքերի շրջանակներում, ինչպես նաև ԴԴ-ի առաջարկը (տե՛ս վերը՝ ներդիր 31): Այդ առաջարկը սահմանում է թե՛ դատական ծառայության, թե՛ դատական կարգադրիչների ծառայության գնահատման կառուցվածքը: Առաջինի դեպքում օրինագիծը առանձնացնում է պաշտոնների չորս մակարդակ (կրտսեր, առաջատար, գլխավոր և ավելի բարձր պաշտոններ), որոնցից յուրաքանչյուրը բաժանված է երկու աստիճանի: Այնուամենայնիվ, դատական համակարգի օժանդակ անձնակազմից շատերը զբաղեցնում են այնպիսի պաշտոններ, որոնք ակնհայտորեն ենթարկվում են քաղաքացիական ծառայության դասակարգման համակարգին՝ առաջխաղացման հետագա հեռանկարներով: Դատական իշխանության կողմից բարձրացված մտահոգությունները հարթահարելու համար կառավարությունը պետք է ձգտի լուծել այդ հարցերը աշխատանքի դասակարգման, վարձատրության և համալրման գործող համակարգում փոփոխությունների և հենց Քաղաքացիական ծառայության գրասենյակի գործունեության բարելավման միջոցով:

## ՆԵՐՂԻՐ 32. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐԻՆ ԴԺՎԱՐ Է ՊԱՇՏԵԼ ԻՐԵՆՑ ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒՄ

Դատավորների օգնականների շրջանում հոսելիության շատ բարձր ցուցանիշ կա, մասնավորապես՝ Երևանում: Երևանի առաջին ատյանի դատարանում դատավորի օգնականի պաշտոնավարման միջին ժամկետը կազմում է ընդամենը 1,6 տարի: Հաղորդվում է, որ դա պայմանավորված է նրանով, որ դատավորների օգնականների աշխատավարձերը առանձնապես ցածր են: Դա պայմանավորված է նրանով, որ դատավորի օգնականի պաշտոնը (հատկապես Երևանում) հուսալի քայլ է դեպի ավելի գրավիչ պաշտոններ՝ կա՛մ դատավորի, կա՛մ մասնավոր հատվածում իրավաբանի: Երևանից դուրս դատավորի օգնականների հաստիքները դժվար է համալրել: Դա պայմանավորված է նրանով, որ մարզերում (շրջաններում) բնակվող որակավորված թեկնածուները սակավ են և Երևանում բնակվող թեկնածուները չեն ցանկանում տեղափոխվել գյուղական վայրեր:

### Բ. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՈՍՁԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**214. Հայաստանի դատական համակարգում ՄՌ կառավարման բարելավումներ են եղել, և այդ միտումը պետք է պահպանել:** Դա կարևոր է, քանի որ սա մի ոլորտ է, որը մեծապես ապավինում է իր աշխատուժին: Տեղեկացվում է, որ անձնակազմը գերծանրաբեռնված աշխատանքի պատճառով մեծ սթրես է ապրում, ինչը կարող է բարդացնել որակյալ կադրերի ներգրավումը և պահպանումը: Ե՛վ դատավորների, և՛ դատավորների օգնականների ներկայիս մակարդակները շատ ավելի ցածր են եվրոպական համեմատականներից: 2021թ. առաջին ատյանի դատարաններում դատավորների աշխատավարձերի վրա կատարվող ծախսերը կազմել են ընդհանուր բյուջեի ընդամենը 0,1 տոկոսը: Անգամ դատավորների թվի կրկնապատկումը (ներկայիս մի-

ջին աշխատավարձի չափով) դժվար թե մեղմի հարցը: Թեև անձնակազմի թվի ավելացումը կարող է լուծումներից մեկը լինել, դա միակ մոտեցումը չէ, կարելի է առկա գործիքներն առավել հաջող կիրառել:

**215. Դատավորների թեկնածուների գնահատման կառավարման գործընթացներում վերջին բարեփոխումները, ըստ երևույթին, ընթանում են ճիշտ ուղղությամբ:** Այժմ կարևոր է աջակցել դրանց լիարժեք իրականացմանը: Կառավարությունը, ըստ երևույթին, պետք է դիմադրի առանձին դատական ծառայության վերստեղծման ջանքերին, ինչը կարող է հանգեցնել բարդությունների ավելացման ռիսկին:

**216. Ստորև բերված է գործող առաջարկությունների ցանկ, որոնք կարող են քննարկել դատական համակարգի շահագրգիռ կողմերը:**

<b>Առաջարկություն 1</b>	<b>Հավաստիանալ, որ գործող անձնակազմի հնարավորությունները առավելագույնս օգտագործվում են: Դատավորների թվաքանակն ավելացնել որպես վերջին լուծում:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>Առավելագույնի հասցնել պարզ ընթացակարգի կիրառությունը՝ դատարանների և դատավորների օգնականների աշխատանքային բեռը թեթևացնելու համար:</li> <li>Ճշգրտել դատավորների և դատավորների օգնականների թիվը՝ համապատասխանեցնելու համար աշխատանքային ծանրաբեռնվածությանը:</li> </ul>
<b>Առաջարկություն 2</b>	<b>Գնահատել դատավորների համալրման, գնահատման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգի փաստացի կատարողականը:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>Գնահատել դատավորների համալրման, գնահատման և կարգապահական ներկայիս պրակտիկան՝ համոզվելու համար, որ փաստացի գործելակերպը համապատասխանում է օրենսդրությանը:</li> <li>Եթե գործելակերպը չի համապատասխանում օրենսդրությանը, որոշել պատճառները և առաջարկել լուծումներ:</li> </ul>
<b>Առաջարկություն 3</b>	<b>Նվազեցնել քաղաքական ազդեցության հավանականությունը դատավորների հավաքագրման և գնահատման վրա:</b>
<b>Հնարավոր քայլ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Ճշգրտել ԲԴԽ-ի կազմը և ընդլայնել դատավորների և ոչ կառավարական հատվածների ներկայացվածությունը:</li> </ul>
<b>Առաջարկություն 4</b>	<b>Իրականացնել ՄՌ/Քաղաքացիական ծառայության բարեփոխում՝ մնալով քաղաքացիական ծառայության համակարգի հովանու ներքո:</b>
<b>Հնարավոր քայլ</b>	<ul style="list-style-type: none"> <li>Անդրադառնալ դատական համակարգի խնդիրներին աշխատանքի դասակարգման, վարձատրության և հավաքագրման գործող համակարգում փոփոխությունների և հենց քաղաքացիական ծառայության գրասենյակի գործունեության բարելավման միջոցով:</li> </ul>

## VII. ՏՀՏ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**217. Դատական իշխանության (և արդարադատության այլ ոլորտների) թվայնացումը կարևոր խնդիր է բոլոր շահագրգիռ կողմերի օրակարգում, սակայն կառավարման և ներդրման հմտությունները դեռևս անբավարար են:** Հայաստանում գործող կանոնակարգերը բավականաչափ պարզ չեն և քիչ ցուցումներ են բովանդակում դատական իշխանության կառավարման մեջ ՏՀՏ գործիքների օգտագործման վերաբերյալ: Ոլորտում կառավարման, ներդրման և սպասարկման հմտություններն անբավարար են: Թեև դատարաններն ընդհանուր առմամբ զինված են համապատասխան ՏՀՏ սարքավորումներով, բացակայում են դրանց կիրառումը կարգավորող համակարգերը և կանոնները: ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Էլեկտրոնային արդարադատության լուծումների մշակումը և ներդրումը Հայաստանում» նախագիծը (այսուհետ՝ Էլեկտրոնային արդարադատության համակարգ) ի վերջո կտրամադրի գործընթացի ընդհանուր ճարտարապետությունը: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի վերջում և բարեհաջող գործելու նպատակով պետք է ստանա ուժեղ ինստիտուցիոնալ և կառավարական աջակցություն: Մինևույն ժամանակ պետք է նշել, որ գործող համակարգերում որոշ բարելավումների անհրաժեշտություն կա:

### Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՍԱՐՏԱՀՐՎՎԵՐՆԵՐԸ

**218. Առաջին մարտահրավերը կառուցվածքային միավորի բացակայությունն է, որը կնպաստեր դատական համակարգում երկարաժամկետ, որակյալ և կայուն ՏՀՏ կառավարմանը:** Անբավարար համակարգումը ԱՆ-ի և ԴԴ-ի միջև, ինչպես նաև դատական ՏՀՏ կառավարման համար հստակ պարտականությունների բացակայությունն ազդում է ՏՀՏ համակարգի պլանավորման և արդիականացման վրա: Այս պատճառով որոշ ոլորտներում թվայնացման գործողությունները կրկնվում են, իսկ մյուսները մնում են անտեսված: Էլեկտրոնային արդարադատության համակարգի աշխատանքները շարունակվում են և պետք է իրականացվեն նախատեսված ժամկետներում: Առաջարկվում է ուժեղացնել ԱՆ-ի և ԴԴ-ի միջև համակարգումը և սահմանել ՏՀՏ կառավարման հստակ պարտավորություններ:

**219. Երկրորդ մարտահրավերը ներկայիս ՏՀՏ համակարգին բնորոշ ռիսկերն են, որոնք պետք է անհապաղ մեղմացվեն:** Ներկայումս կան յոթ տարբեր համակարգեր, որոնք երաշխավորում են դատական

համակարգի հիմնական բիզնես գործընթացները: Դրանք պահվում են 18 տարբեր սեկյակներում տեղադրված սերվերներում, որոնցից գեթ մեկը չի համապատասխանում տվյալների կենտրոնի ցանկալի չափորոշիչներին: Գոյություն չունեն երկրորդական վայրեր աղետներից (օրինակ՝ երկրաշարժ, հրդեհ, ջրհեղեղ, դիտավորյալ (կիբեր) հարձակում) վերականգնման համար, և չի ընդունվել կամ իրականացվել անվտանգության որևէ քաղաքականություն: Օրինակ՝ որոշ աշխատակալաններ չունեն հակավիրուսային ծրագիր կամ աշխատում են հին օպերացիոն համակարգով, ինչը վտանգի տակ է դնում ամբողջ տեղեկատվական համակարգը: Բացի այդ, գոյություն ունեցող համակարգերի և հավելվածների պատշաճ սպասարկում չի իրականացվում, քանի որ ոչ բոլոր համակարգերն ունեն տեխնիկական սպասարկման պայմանագրեր: Պահուստավորման և վերականգնման համար անհրաժեշտ է ունենալ գործառնական ստանդարտ ընթացակարգեր: Պետք է կանոնավոր կերպով իրականացնել բոլոր համակարգերի և հավելվածների կրկնօրինակումներ և փորձարկել վերականգնման ընթացակարգեր՝ ամեն տեսակի տեղեկատվության կորստի ռիսկերը նվազեցնելու համար: Դատական գործունեության առանցքային գործերի կառավարման համակարգի հասանելիության և օգտագործման որևէ կարգավորում չկա: Առաջարկությունները ուղղված են նշված թերությունները հնարավորինս արագ վերացնելուն:

### Մարտահրավեր 1. ՏՀՏ կառավարման բարելավում ա) Օրենսդրական և կարգավորման շրջանակ

**220. Չնայած այն հանգամանքին, որ ներկայումս գործում են դատական ՏՀՏ-ի վերաբերյալ որոշ օրենսդրական ակտեր<sup>156</sup>, դրա օգտագործումը կարգավորող համընդհանուր իրավական դաշտը բացակայում է:** Հստակ սահմանված օրենսդրական դաշտը պարտադիր նախապայման է դատական գործընթացների հաջող թվայնացման համար: Թվայնացումը ինքնուրույն տեխնոլոգիական գործունեություն չէ: Կանոնակարգերը պետք է սահմանեն. ա) դատական իշխանության կողմից օգտագործվող ՏՀՏ-ի զարգացման և պահպանման համար պատասխանատու հաստատությունները. բ) օգտագործվող պաշտոնական հավելվածները և ծառայությունները (օրինակ՝ գործերի կառավարման համակարգ, կայք և այլն). գ) դրանցից յուրաքանչյուրի շրջանակն ու նպատակը. դ) տեղե-

<sup>156</sup>Գործող օրենսդրությունը ներառում է Դատական օրենսգիրքը, Զաղաքացիական դատավարության օրենսգիրքը, Վարչական դատավարության օրենսգիրքը և Քրեական դատավարության օրենսգիրքը, դատարանների գործավարության կանոնները (Դատարանների նախագահների խորհրդի որոշում 23Լ, 21.12.2007թ.), ԱՆ կանոնադրությունը և ԴԴ կանոնադրությունը (երկուսն էլ ներառում են ինստիտուցիոնալ պարտականություններ դատական տեղեկատվական համակարգերի վերաբերյալ):

կատվական համակարգերում օգտագործողների դերերն ու պարտականությունները. և (ե) գործող անվտանգության քաղաքականությունը: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել հիմնարար սկզբունքների կիրառմանը և դրանց պահպանմանը, ինչպիսին է, օրինակ, արդար դատաքնությունը:

**221. Գործող կանոնակարգերը բավականաչափ պարզ չեն և քիչ ցուցումներ են տրամադրում դատական իշխանության կառավարման մեջ ՏՀՏ գործիքների օգտագործման վերաբերյալ, մասնավորապես՝ գործերի կառավարման համակարգի վերաբերյալ:** Թեև որոշ օրենքներ և կանոնակարգեր նշում են ՏՀՏ որոշ լուծումների օգտագործումը, չեն հստակեցնում դրանց շրջանակը, մանրամասն գործունեությունը, դրանց վրա հիմնված գործընթացները կամ այդ գործիքների համատեղելիությունը: Օրինակ՝ Դատարանի գործավարության կանոնները հղում են անում «Հայաստանի Հանրապետության դատական իշխանության համակարգին», սակայն պարզ չէ, թե որ ծրագրային համակարգն է դա, ինչպես նաև գործող օրենսդրական դաշտից պարզ չէ, թե որ համակարգերն են օգտագործվում դատարաններում գործերը գրանցելու և կառավարելու համար: Մեկ այլ օրինակ՝ Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը սահմանում է «վճարման կարգադրությունների» արձակումը էլեկտրոնային դիմումների հիման վրա, սակայն հստակ չի սահմանում, թե ինչ համակարգ է օգտագործվում դիմումը էլեկտրոնային եղանակով ներկայացնելու համար. այդ հարցը պետք է որոշի ԲԴԽ-ն: Գործող կանոնակարգերը երբեմն նշում են համակարգեր, որոնք ներկայումս չեն գործում: Օրինակ՝ DataLex-ի օգտագործումը սահմանվում է միայն Դատարանների գործավարության կանոնների 3-րդ հոդվածում, որում ասվում է. «Էլեկտրոնային փաստաթղթերը դատարան են ներկայացվում DataLex-ի միջոցով»: Մինչդեռ էլեկտրոնային փաստաթղթերի ներկայացման ծառայությունը ներկայումս հասանելի չէ DataLex կայքում<sup>157</sup>: Օրենսդրական դաշտում բացակայում են նաև պաշտոնական ՏՀՏ լուծումների ճշգրիտ սահմանումները՝ ծրագրի/հայտի անվանումը և նկարագրությունը, նպատակը, հավելվածի օգտագործողները, օգտատերերի պարտականությունները և այլն: Օրենսդրական դաշտի թերությունները ստեղծում են պաշտոնական դիմումների չարաշահման հնարավորություն:

**բ) Ինստիտուցիոնալ աջակցություն**

**222. Դատական իշխանության համակարգում բացակայում է կորպորատիվ ճարտարապետությունը**

(ԿԾ). ԿԾ-ն օգնում է կազմակերպություններին համապատասխանեցնել իրենց ՏՀՏ ռազմավարությունը իրենց գործառնական նպատակներին: Այն հնարավորություն է տալիս գոյություն ունեցող ծառայություններին և հավելվածներին, բիզնես գործընթացներին, դատական ենթակառուցվածքին և այլ, լինել կապակցված և փոխգործելի: Ամբողջական ԿԾ-ն պետք է ներառի բիզնեսի և տվյալների ճարտարապետություն, ինչպես նաև տեխնոլոգիական ճարտարապետություն, որը նկարագրում է սարքային ապահովման, ծրագրային ապահովման և ցանցային ենթակառուցվածքը, որոնք անհրաժեշտ են հիմնական հավելվածների ներդրմանն աջակցելու համար: Ներկայիս ՏՀՏ ճարտարապետությունը մասնատված է՝ առանց սահմանված ընդհանուր ռեգիստրների, բաղադրիչների կամ գործառնայինների: Տեղեկատվական համակարգերի ընդհանուր տեսլականի բացակայությունը առաջացնում է թյուրըմբռնումներ և հակասություններ տարբեր համակարգերի և տարբեր ինստիտուտների միջև: Կարճաժամկետ կտրվածքով բոլոր հաստատված ՏՀՏ ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության կենտրոնական աղբյուրը պետք է հասանելի դառնա դատական համակարգին՝ ամեն պահի ճշգրիտ, հետևողական պատկեր ստանալու համար<sup>158</sup>:

**223. Արդարադատության համակարգում ՏՀՏ-ի բարելավման հավակնոտ ծրագրերը ընթացքի մեջ են:** ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Էլեկտրոնային արդարադատություն» ծրագրի միջոցով կմշակվի դատական համակարգի տեղեկատվական համակարգերի կորպորատիվ ճարտարապետությունը: Այս նախագիծը կուրվագծի ՏՀՏ-ի տեսլականը արդարադատության համակարգում: Ապագայում մշակվելիք բոլոր հավելվածները կամ ծառայությունները պետք է հիմնված լինեն այդ նախագծի շրջանակներում սահմանված ճարտարապետության վրա: Դատական իշխանության թվայնացման հավակնոտ օրակարգն արտացոլված է նաև Հայաստանի թվայնացման ռազմավարությունում: Մինչև 2025 թվականը նախատեսվում է երեք սոր համակարգ՝ ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող «Էլեկտրոնային արդարադատություն» ծրագիրը (մինչև 2023 թ. վերջ), ՀԲ-ի կողմից ֆինանսավորվող «e-Criminal» ծրագիրը (մինչև 2023թ. վերջ) և «Դատական վարույթների էլեկտրոնային համակարգը» (ֆինանսավորման, նպատակների և ժամանակացույցի մասին տվյալները բացակայում են):

<sup>157</sup>Անճշտության նմանատիպ օրինակ է դատական իշխանության պաշտոնական կայքի օգտագործումը: Թեև Դատական օրենսգիրքը սահմանում է, որ պետք է լինի դատական իշխանության պաշտոնական կայք, որտեղ պետք է հրապարակվի և հասանելի լինի դատական գործերի վերաբերյալ տեղեկատվությունը, իսկ 18-րդ հոդվածը սահմանում է, որ դատական իշխանության պաշտոնական կայքը [www.court.am](http://www.court.am)-ն է, տեղեկատվությունը իրականում հրապարակվում է DataLex-ում: Միակ համակարգը, որի համար մանրամասն ընթացակարգ կա, և որը ներառված է համապատասխան կանոնակարգում, «հատուկ ձայնագրման համակարգ» է:

<sup>158</sup>Ծառայությունների ռեեստրի ստեղծումը համապատասխանում է ՏՏ ենթակառուցվածքի գրադարանի (ITIL) գործընթացներից մեկի (ITIL ծառայության կատարող) կարճաժամկետ իրականացմանը և ճանապարհ է հարթում ITIL-ի ամբողջական շրջանակի իրականացնելու համար:



### ՆԵՐՂԻՐ 33. ՏՀՏ ՄՊԱԳԱՆ ԱՐՂԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

«Էլեկտրոնային արդարադատության» ծրագրի իրականացումը Էականորեն կբարելավի դատական իշխանության ՏՀՏ համակարգերը: Ծրագրի նպատակն է զարգացնել համակարգի ճարտարապետությունը՝ հետևելով ISO/IEC/IEEE 42010:2011 ստանդարտին, ընդգրկելով ՏՀՏ արդարադատության համակարգի հիմքը, ներառյալ ընդհանուր բաղադրիչները (գործառնությունները), ընդհանուր պահեստները և տվյալների փոխանակման միջերեսը<sup>159</sup>:

Համակարգը կթվայնացնի դատական գործերն ու գործընթացները և կբարձրացնի արդարադատության համակարգերի հասանելիությունը: Ծրագրի շրջանակներում կներդրվեն դատական տեղեկատվական համակարգի ստանդարտ ճարտարապետությունը, տվյալների փոխանակման բաղադրիչները և կապահովվի համատեղելիությունը: Այնպիսի գործառնությունները, ինչպիսիք են Էլեկտրոնային նույնականացումը, Էլեկտրոնային եղանակով գործեր ներկայացնելը, Էլեկտրոնային ստորագրությունը, դատարանների և դատավարության մեջ ներգրավված այլ դերակատարների միջև տվյալների փոխանակումը, դատարանի թվայնացման ջանքերի տարրեր են: Էլեկտրոնային արդարադատության համակարգի ներդրումը կպահանջի կազմակերպական կառուցվածք, և ամնվազն անհրաժեշտ կլինի նկատի ունենալ հետևյալ մարմինները/գործառնությունները.

**ա.** ԱՆ-ում Էլեկտրոնային արդարադատության բաժին, որի կազմում կլինի փորձագիտական թիմ, որը կապահովի Էլեկտրոնային արդարադատության համակարգի արդյունավետ գործունեությունը, այդ թվում ցանկացած հետագա բարելավումներ պլանավորելու, իրականացնելու և վերահսկելու փոխկապակցված փոփոխությունների կառավարման գործընթացը, և տեխնիկական աջակցության թիմ՝ օգտատերերին օգնելու, սովորեցնելու, համակարգի փորձարկումներ իրականացնելու, ձեռնարկներ պատրաստելու և այլ հանձնարարություններ կատարելու համար:

**բ.** Խորհրդատվական մարմին, որը պատասխանատու կլինի համակարգի հետագա զարգացման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու և օրենսդրական դաշտին և դատական պրակտիկային համակարգում կատարվող փոփոխությունների համապատասխանությունը ստուգելու համար:

**գ.** Այլ մասնագիտացված խորհրդատվական մարմիններ, քանի որ Էլեկտրոնային արդարադատության համակարգում նախատեսվում է ներառել այլ ոլորտներ, ինչպիսիք են Էլեկտրոնային հարկադիր կատարման, Էլեկտրոնային քրեակատարողական և Էլեկտրոնային պրոբացիոն համակարգերը, որոնք կաջակցեն անմիջական դատական համակարգից դուրս գտնվող շահագրգիռ կողմերին: Այդ մարմինների հետ համակարգում կարևոր է փոխգործելիության հաջողությունն ապահովելու համար: Դատարանի կատարողականի արդյունավետ մշտադիտարկում և կառավարում իրականացնելու համար պետք է ստեղծվի տվյալների բազա/շտեմարան<sup>160</sup>, որտեղ ինտեգրված կլինեն<sup>161</sup> տարբեր համակարգերի տվյալների աղբյուրները<sup>162</sup>, ինչպես նաև ԱՎԵՅ ուղեցույցներին համահունչ ժամանակակից հաշվետվությունների համակարգ:

**224. ԱՆ-ի և ԴԴ-ի միջև ՏՀՏ կառավարման համակարգում թերի է:** Այս մարմինների միջև հստակ չեն բաշխված ՏՀՏ համակարգերի և հավելվածների կառավարման պարտականությունները: ԴԴ-ի անձնակազմը տեղեկացված չէր դատական համակարգում ՏՀՏ-ի հետագա բարելավման ծրագրերին և ներկայումս մշակվող նախագծերին, ինչպիսին է Էլեկտրոնային արդարադատության համակարգը, չնայած ԴԴ-ն լինելու է այդ համակարգի վարման պատաս-

խանատու մարմինը: Դա հանգեցնելու է մի իրավիճակի, երբ որոշ հատվածներում գործողությունները կրկնվում են, իսկ մյուս ոլորտները մնում են անստեղծ:

**225. Նախատեսվող բարեփոխումների հաջող իրականացումն ապահովելու համար կարևոր է ինստիտուցիոնալ հաստատուն հանձնառությունը:** Էլեկտրոնային արդարադատության ծրագրի իրականացումը և դրան զուգահեռ Էլեկտրոնային արդարադա-

<sup>159</sup> <https://www.iso.org/standard/50508.html>.  
<sup>160</sup> Տվյալների շտեմարանը պարունակում է անփոփոխ տվյալներ, որոնք հավաքվում են տվյալների տարբեր աղբյուրներից և մշակվում՝ ապացույցների վրա հիմնված որոշումների կայացմանն աջակցելու համար:  
<sup>161</sup> Եթե անգամ նշված համակարգերն ունեն տվյալների ռեգիստր, անհրաժեշտ է ինտեգրել տվյալների այլ աղբյուրներ, ինչպիսիք են, ի թիվս այլոց, ֆինանսական համակարգը և ՄՈԿ համակարգը:  
<sup>162</sup> Ընթացիկ ծրագրերի համաձայն՝ կմշակվեն տարբեր համակարգեր քաղաքացիական, քրեական և վարչական գործերի համար (ինչպես առաջարկվում է Էլեկտրոնային արդարադատության նախագծում):



տության համակարգի հետ կապված բոլոր ենթահամակարգերի համար (Էլեկտրոնային քաղաքացիական գործեր, Էլեկտրոնային քրեական գործեր, Էլեկտրոնային սնանկություն, Էլեկտրոնային վարչական գործեր) մրցույթների նախապատրաստումը, ինչպես նաև ծրագրային ապահովման ներդրումը և ենթակառուցվածքային նախապատրաստումը կպահանջեն զգալի ռեսուրսներ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էլեկտրոնային արդարադատության համակարգն արդյունավետ կգործի միայն այն դեպքում, երբ մշակվեն բոլոր ենթահամակարգերը, ենթահամակարգերի համար մրցութային փաստաթղթերի պատրաստումը պետք է հնարավորինս շուտ սկսվի: Կուռ համակարգումը վճռական նշանակություն կունենա Էլեկտրոնային արդարադատության համակարգում այդ տարրերի փոխկապակցվածության շնորհիվ: Օրինակ՝ Էլեկտրոնային սնանկության համակարգի մշակումը դադարեցվել է, քանի որ Էլեկտրոնային արդարադատության համակարգի անհրաժեշտ որոշ բաղադրիչներ դեռևս մշակված չեն:

**226. Ենթակառուցվածքային ռեսուրսների (ՏՀՏ սարքավորումներ և հոսթինգ) և ՄՌԿ-ի համար (համակարգը վարելու և հաճախորդներին աջակցություն տրամադրելու) անհրաժեշտ են բավարար բյուջետային հատկացումներ:** Ռիսկերը և խոցելիությունը մեծանում են, երբ գործում են սակավ ռեսուրսների պայմաններում (սպասարկում, բյուջե, մարդկային ռեսուրսներ): Ընթացիկ ռիսկերից և խոցելիությունից դեպի ցանկալի անվտանգ միջավայր անցնելու ռազմավարությունը պետք է ընդունվի բարձր մակարդակով և կիրառվի իրականացման բոլոր մակարդակներում:

**Մարտահրավեր 2. Գործող ՏՀՏ ռիսկերի մեղմացում**  
ա) Սարքավորումներ

**227. Դատական համակարգում բացակայում է ՏՀՏ ակտիվների կառավարման գործիքը, ինչը դժվարացնում է դատարաններում ՏՀՏ սարքավորումների կառավարումը:** Դատարաններում հասանելի չէ սարքավորումների կարգավիճակի վերաբերյալ արդիական տեղեկատվությունը, ներառյալ ակտիվների գտնվելու վայրի, տեսակի, կարգավիճակի, գնման ամսաթվի և երաշխիքային ժամկետի ավարտի կամ համակարգչային կարգաբերումների (օրինակ՝ պրոցեսոր, հիշողություն, պահեստավորում) վերաբերյալ: Թեև թվում է, թե Հայաստանում դատարանները համապատասխան ՏՀՏ սարքավորումներ ունեն, թերևս համապատասխան հատկացումներ կատարելու դեպքում հնարավոր կլինի ապահովել ծառայությունների ավելի լավ մատուցում: Դատարանները և նրանց անձնակազմը հիմնականում ունեն (ա) սեղանադիր համակարգիչներ կամ բոլորը մեկում (մոնոբլոկ) համակարգիչներ և էկրաններ (տուրբուքերն օգտագործվում են միայն հատուկ նպատակների համար), բ) լազերային տպիչներ, գ) սկաներներ, դ) պատճենահանող մեքենաներ և (ե) վեբ տեսախցիկներ (միայն հատուկ նպատակների համար): Այնուամենայնիվ եղած որոշ սարքավորումներ բավարար չեն դատական գործառնությունների իրականացման համար: Օրինակ՝ չկան հեռավար լսումների անցկացման համար բավարար տեսակոնֆերանսի սարքավորումներ, քանի որ ներկայումս ընդհանուր հաշվով ընդամենը 60 վեբ տեսախցիկ կա, որոնցից մի քանիսը ենթադրաբար օգտագործվում են որպես անվտանգության տեսախցիկներ: Պարզ չէ՝ արդյոք ներկայիս ՏՀՏ սարքավորումները կբավարարեն նվազագույն պահանջները Էլեկտրոնային արդարադատության (և Էլեկտրոնային դատարանի) նոր համակարգին աջակցելու համար:

**228. Դատական համակարգում օգտագործվող աշխատանքային կայանների կեսից ավելին օգտագործվում է արդեն է 3 տարուց ավելի** (տե՛ս ներդիր 16). Դրանք համարվում են համեմատաբար նոր և բավականաչափ լավ աշխատող սարքավորումներ: Յոթ տարուց ավելի հին աշխատանքային կայանները (առկա աշխատանքային կայանների 18 տոկոսը) պետք է նորացվեն, իսկ մնացած աշխատակայանները պետք է լավ վիճակում լինեն: Ամեն տարի ԴԴ-ն դատարաններին խնդրում է նոր ՏՀՏ սարքավորումների հայտ ներկայացնել:

**Աղյուսակ 16. Աշխատանքային կայանների տարիքը**

	7 տարուց հին	3 - 5 տարի	3 տարուց պակաս
Աշխատանքային կայանների քանակ (համակարգիչներ/էփթոփներ)	297	440	881

Աղբյուրը՝ ԴԴ:

**բ) Գոյություն ունեցող հավելվածներ և ծառայություններ**

**229. Դատական համակարգում առկա չէ տվյալների բազա կամ կառուցվածքային փաստաթուղթ, որը պարունակում է տեղեկատվություն բոլոր օգտագործվող ՏՀՏ**

**ծառայությունների մասին:** Քանի որ արտադրության կամ մշակման փուլում գտնվող ծառայությունների վերաբերյալ գրառումներ չկան, ՏՀՏ-ի յուրաքանչյուր նոր նախագիծ միջոցներ է վատնում (կրկին) առկա ծառայությունները և դրանց կարգավիճակը հասկանալու համար:

**230. Յոթ տարբեր ծրագրեր/հավելվածներ են ներկայումս աշակցում դատական համակարգի հիմնական գործընթացներին. CAST (ԴԳԿՅ) համակարգ, OfP (ՎԿ), DataLex, ArmLex, «Ֆեմիդա», Մալբերի համակարգ և դատարանի պաշտոնական կայքը:** ՏՐՏ ներդրման որոշումները մշակվել են արտաքին կազմակերպությունների կողմից, ինչի հետևանքով դատական տարբեր գործառնությունների համար մշակվել են տարբեր համակարգեր<sup>163</sup>:

**231. Գործերի կառավարման համար երկու համապատասխան ծրագիր կա՝ CAST և ՎԿ համակարգ:** CAST համակարգը հիմնական գործառնությունների և գործողությունների ռեգիստր է: Սակայն ոչ բոլոր դատական գործընթացներն են դեռևս թվայնացված: Գործերի կառավարման ընդունելի համակարգը պետք է ունենա հետևյալ գործառնությունները. գործերի վերաբերյալ տվյալների մուտքագրում, գործերի ավտոմատ (պատահական) տեղաբաշխում, փաստաթղթերի կառավարում, տվյալների փոխանակում դատավարության այլ մասնակիցների և դատական իշխանության

համապատասխան մարմինների միջև, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացում:

**232. CAST համակարգը, որ օգտագործում են 33 բոլոր դատարանները, հնարավորություն է տալիս կառավարելու ամեն տեսակի գործերը:** Այն արտադրվել և գործարկվել է 2005թ.: Սկզբում մշակվել է որպես կենտրոնացված համակարգ, հետագայում ցանցային խնդիրների պատճառով համակարգի ճարտարապետությունը փոխվել է, և CAST-ը վերափոխվել է ապակենտրոնացված լուծման (տե՛ս ներդիր 34): Ներկայումս CAST-ի հիմնական գործառնություններն են՝ գործերի պատահական մակագրում, գործերի վերաբերյալ տվյալների մուտքագրում, մտից/ելից փաստաթղթերի տվյալների մուտքագրում, ներքին ծանուցումների կառավարում և տարբեր չափանիշներով որոնում: Ի տարբերություն գործերի կառավարման այլ ստանդարտ ժամանակակից համակարգերի՝ CAST-ը ավտոմատ կերպով չի ստեղծում վիճակագրական հաշվետվություններ: Դրանք ներկայումս ստեղծվում են ձեռքով՝ օգտագործելով համակարգի որոնման հնարավորությունները:

### ՆԵՐԴԻՐ 34. ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՎԱՐԳԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ (CAST) ԽՆԴԻՐՆԵՐԸ

CAST-ի ապակենտրոնացված ճարտարապետությունը հակասում է ընդունված լավագույն փորձին և համակարգի վարումը դարձնում է ավելի բարդ, ստեղծում է անվտանգության ռիսկեր, պահանջում է լրացուցիչ սերվերների ներդրում և բոլոր դատարանների տվյալների սինխրոնացման անհրաժեշտություն է առաջացնում: Թեև քաղաքացիական և այլ գործերի վարման գործընթացներում կան տարբերություններ, շատ մեծ թվով գործառնությունների հնարավորությունները նույնն են, և դրանք, կախված գործընթացների առանձնահատկություններից, կարելի է տարբեր եղանակներով պարամետրացնել:

CAST համակարգը փաստաթղթերը թվայնացված ձևով պահելու տեխնիկական հնարավորություն չունի: Ներկայումս համակարգում կարող է պահպանվել միայն որոշման տեքստը, բայց ոչ ամբողջ փաստաթուղթը: Այնուամենայնիվ Դատարանների գործավարության կանոնները, համաձայն քաղաքացիական և վարչական դատավարության օրենսգրքերի, նշում են, որ էլեկտրոնային փաստաթղթերը կարող են ուղարկվել էլեկտրոնային փոստով: Փաստաթուղթը էլեկտրոնային փոստով ստանալուց հետո դատարանի գրասենյակը արտատպում է փաստաթուղթը, իսկ տպագիր պատճենը տեղադրվում է գործի նյութերում: Դատական տեղեկատվական համակարգի հետագա զարգացման հրապարակված ծրագրի<sup>164</sup> համաձայն՝ նախատեսվում է CAST համակարգը կատարելագործելու և բարելավելու փոխարեն այն փոխարինել նոր համակարգով (համակարգերով): Գործերի էլեկտրոնային գրանցումը երբեմն ժամանակավորապես անջատվում է, ուստի դրանք ձեռքով մակագրում են դատարանների նախագահները: CAST համակարգի որոշ մասեր աշխատում են հին սերվերային սարքավորումների վրա, ինչը շատ ռիսկային է:

<sup>163</sup>CAST-ը մշակվել է Զամաշխարհային բանկի աշակցությամբ դատաիրավական բարեփոխումների առաջին ծրագրի շրջանակներում: ՎԿ-ն ստեղծվել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսական աջակցությամբ: DataLex-ը ստեղծվել է Զամաշխարհային բանկի դատաիրավական բարեփոխումների երկրորդ ծրագրի շրջանակներում Դանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ: Դատարանների պաշտոնական կայքը ստեղծվել է ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի (ՄԱՉԾ) ֆինանսական աջակցությամբ: Նույն հայկական տեղեկատվական տեխնոլոգիաների «Մեյսիս» ընկերությունը մշակել է CAST, DataLex, ArmLex և ՎԿ համակարգերը:

<sup>164</sup>Լրացուցիչ տեղեկություններ կարելի է գտնել «Հայաստանի Հանրապետության դատաիրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունում» և «Հայաստանի թվայնացման 2021-2025 թվականների ռազմավարությունում»:

Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանն օգտագործում է CAST-ի հին համակարգը 2018 թվականին Երևանի յոթ դատարանների միաձուլումից հետո չլուծված գործերի համար: Նոր գործերը գրանցվում են համակցված համակարգով, սակայն Նախկին յոթ դատարանների տեղեկատվությունը չի մուտքագրվել նոր համակարգ (գծապատկեր 63-ում նշված է որպես CAST արխիվ): Դրա փոխարեն տեղեկատվությունը պահվում է անկախ սերվերներում, որոնք տեղակայված են Երևանի առաջին ատյանի դատարանի տարբեր շենքերում: Այսպիսով, դատարանները պետք է օգտագործեն CAST համակարգի երկու տարբերակները, ինչպես նաև CAST արխիվները՝ մուտք գործելու չլուծված գործեր, որոնք հարուցվել են մինչև 2018 թվականը: Տեղեկություններ չկան, թե քանի չլուծված գործեր են մնացել CAST արխիվում և որքան ժամանակ են պահվելու այդ արխիվացված գործերը, քանի որ այդ տեղեկատվության ներբեռնումը պահանջում է լրացուցիչ ծախսեր:

Չկա որևէ օրենք, որը սահմանում է համակարգ մուտք գործելու իրավասություն ունեցող անձանց և նրանց լիազորություններն ու պարտականությունները, ինչպես նաև որոշակի գործողություններ իրականացնելու ընթացակարգեր, ինչպիսիք են դատավորների նշանակման կառավարումը, գործերի բաշխումը, էլեկտրոնային եղանակով ներկայացվող հայցադիմումի կանոնները և այլն: Անհրաժեշտ է ունենալ գործերի կառավարման համակարգի օգտագործման իրավունքների և պարտավորությունների ավելի հստակ կարգավորում, ինչը կբացառի գործողությունների կրկնակումը կամ կառավարման բացերի առկայությունը: Էլեկտրոնային փաստաթղթերի վրա հիմնված գործերի կառավարման համակարգ մշակելիս և ներդնելիս անհրաժեշտ է առավելագույնս հետևել ԱՎԵՅ «Գործերի էլեկտրոնային հարուցման/ներկայացման և դատարանների թվայնացման ուղեցույցներին» և այլ ուղեցույցների:

Գործերի բաշխման/մակագրման գործընթացի թափանցիկությունն ու հաշվետվողականությունն ուժեղացնելու համար պետք է կատարվեն հետևյալ գործողությունները. (ա) գործերի պատահական սկզբունքով մակագրման ալգորիթմը պետք է լինի բաց և հանրությանը հասանելի (բ) մուտքագրման պարամետրերը պետք է գրանցվեն (օրինակ՝ իրավասու դատավորների ցանկը, գործի տեսակը և այլն), (գ) պատահականության աղբյուրը պետք է հայտնի լինի (որպեսզի այն կրկնվի ալգորիթմի արդյունքը ստուգելու անհրաժեշտության դեպքում): Դատավորներին հավասար քանակությամբ գործերով ծանրաբեռնելու նպատակով պետք է օգտագործվի գործի բաշխման ալգորիթմ, որը հաշվի է առնում գործի բարդության կշռի գործոնը: Գործերի կշիռները սահմանելու վերաբերյալ առաջարկությունները կարելի է գտնել ԱՎԵՅ-ի հրապարակած «Գործերի կշռի սահմանումը դատական համակարգում» ձեռնարկում<sup>165</sup>:

**233. ՎԿ համակարգը մշակվել է 2019 թ.՝ վճարման կարգադրությունների թվայնացման նպատակով**<sup>166</sup>: Զամակարգը ներկայումս գործում է միայն վճարման կարգադրությունների համար<sup>167</sup>, սակայն պլանավորվում էր, որ այս համակարգը կփոխարինի CAST համակարգին քաղաքացիական գործերի կառավարման մասով: Դատավարական գործողությունները (վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ դիմումի ներկայացում, հասնելիություն գործի նյութերին, վճարման կարգադրություն արձակելու վերաբերյալ որոշման կայացում) կատարվում են առցանց/վիրտուալ:

**234. «Ֆեմիդա» համակարգն օգտագործվում է դատական նիստերի ձայնագրման համար:** Զայաստանում դատական նիստերի դահլիճները հագեցած են «Ֆեմիդա» ձայնագրման համակարգով, որը ներառում է անհրաժեշտ ՏՅՏ սարքավորումներ («Ֆեմիդա» համակարգչային ծրագրակազմ, համակարգիչ, դիսփլեյ, բարձրախոսներ և աուդիո խառնիչ): Անհրաժեշտ է դատական դահլիճները հագեցնել ավելի նոր համակարգիչներով (ստույգությունը)՝ «Ֆեմիդա» համակարգն առավել արդյունավետ գործարկելու համար: Դատական ձայնագրությունը կարող է կողմերին տրամադրվել ըստ պահանջի նիստի ավարտից

<sup>165</sup>Հասանելի է հետևյալ հղումով <https://rm.coe.int/study-28-case-weighting-report-en/16809ede97>.  
<sup>166</sup>Տե՛ս ԱՎԵՅ-ի գեկույցը հետևյալ հասցեով՝ <https://rm.coe.int/en-armenia-2018/16809fe0be>:  
 Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս նաև «Մեյսիսի» հետ «Վճարման կարգադրություններ» համակարգի մշակման պայմանագիրը հետևյալ հղումով՝ [contract](#).  
<sup>167</sup>Այն ստեղծվել է ԱՄՆ ՄՉԳ-ի «Դատական փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատական համակարգի ներդրում Զայաստանում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

հետո: Ձայնագրությունների սկավառակները պահվում են գործի թղթային օրինակի հետ, իսկ նիստի ընթացքում բանավոր փաստարկները սղագրվում են համակարգչով, սղագրությունը կցվում է գործի նյութերին:

**235. DataLex-ը հանրամատչելի տեղեկատվական կայք է, որում գետեղված է դատական գործերի վերաբերյալ իրական/թարմացված տեղեկատվությունը:** DataLex համակարգը մշտապես համաժամանակացվում է CAST տվյալների բազայի հետ, ստանում է դատական գործերի վերաբերյալ առավել թարմ տվյալները և տեղադրում ճշգրտված տվյալները՝ վերջնական օգտագործողների համար տարբեր չափանիշների հիման վրա որոնման գործառնություններ ապահովելու համար: Բոլոր որոշումները, բացառությամբ այն որոշումների, որոնք նշված են որպես գաղտնի CAST համակարգում, հրապարակվում են՝ հնարավորություն տալով օգտատերերին կատարելու ամբողջական տեքստային որոնում, ինչպես նաև որոնում՝ հիմնված մետատվյալների վրա: Համակարգը ցույց է տալիս կապը առաջին ատյանի դատարանի ակտի և վերադաս դատարանի ակտի միջև, իսկ նախադեպերից (նախադեպային իրավունքի գործեր) կարելի է գտնել միայն այն, ինչ ֆիլտրվում է Վճռաբեկ դատարանի որոշումներում: Համակարգն ունի նաև ինֆոգրաֆիկ մոդուլ, որը հնարավորություն է տալիս վիզուալացնելու դատական գործերի տվյալները, սակայն այդ հնարավորությունը մինչ օրս վերաբերում է միայն քրեական գործերին:

**236. DataLex համակարգի շատ հնարավորություններ պատշաճ կերպով չեն օգտագործվում, ինչը վկայում է անբավարար սպասարկման մասին:** Համակարգի տարբեր խափանումներ տեղի են ունենում գրեթե ամեն շաբաթ: Հաշվի առնելով համակարգի կարևորությունը՝ անհրաժեշտ է սահմանել դրա ավելի լավ վերահսկում: Էլեկտրոնային արդարադատության ծրագրի ավարտից հետո DataLex-ը կփոխարինվի Էլեկտրոնային արդարադատության կայքով:

**237. Դատարանի պաշտոնական կայքը<sup>168</sup> լայն հանրությանը տրամադրում է հիմնական տեղեկատվությունը դատարանների, դատական նորությունների ու դատավարությունների վերաբերյալ.** [www.court.am](http://www.court.am) կայքի բովանդակության մի մասը պարբերաբար թարմացվում է (հիմնականում՝ նորությունները), մինչդեռ մյուս բաժինները (օրինակ՝ թափանցիկության հարթակը) գրեթե որևէ տեղեկություն չեն պարունակում: Ներկայումս կայքի սպասարկման պայմանագիր գոյություն չունի:


**238. Դեռևս որևէ դատական գործընթաց հնարավոր չէ ամբողջությամբ իրականացնել թվային եղանակով, իսկ գոյություն ունեցող ծառայությունների և հավելվածների միջև ինտեգրում կամ փոխգործելիություն չկա:** ՎԿ համակարգը գործերի կառավարման ավելի առաջադեմ համակարգ է, սակայն որոշ դեպքերում օգտատերերը դեռևս ստիպված են ֆիզիկապես գնալ դատարան: Դատական գործերի բոլոր տվյալները ձեռքով են մուտքագրվում CAST համակարգ, ինչը կարող է նվազեցնել գործընթացի արդյունավետությունը և մեծացնել տվյալների սխալ մուտքագրման վտանգը: Լայնորեն օգտագործվում են Էլեկտրոնային նույնականացումը և թվային ստորագրությունները, ինչը հեշտացնում է որոշ դատական գործընթացներ: Դատարաններ Էլեկտրոնային եղանակով գործեր ներկայացնելու համակարգը և փաստաթղթերի փոխանակումը հետագայում կնպաստի դատարանների և դատարաններից օգտվողների միջև թվային հաղորդակցության զարգացմանը: Ավելին, ինտեգրումը ընդհանուր ռեգիստրներին, ինչպիսին է բնակչության պետական ռեգիստրը, զգալիորեն կնվազեցնի տվյալների մուտքագրման բեռը CAST համակարգում: Արդարադատության ոլորտի տարբեր հաստատությունների միջև տվյալների Էլեկտրոնային փոխանակման իրականացումը (ինչպես նախատեսված է «Էլեկտրոնային արդարադատություն» ծրագրով) կարագացնի տվյալների ավանդական փոխանակումը՝ այդպիսով նվազեցնելով գործերի մշակման միջին ժամանակը:

**239. Ստորև գծապատկեր 40-ում ներկայացված են արդարադատության համակարգում օգտագործվող հավելվածները (ծառայությունները), դրանց միջև կապը և դրանց տեղակայումը:** Էլեկտրոնային սնանկությունը գծապատկերում ներկայացված միակ հավելվածն է, որը դեռ մշակման փուլում է:

<sup>168</sup>Կայքը մշակել է X-TECH ընկերությունը ՄԱՉԾ-ի ֆինանսական աջակցությամբ, Հայաստանի «Կատալիտիկ բաց կառավարում» ծրագրի միջոցով:



**Չճապատկեր 40. Դատարաններում օգտագործվող հավելվածներ/ծառայություններ**



104

*Աղբյուրը՝ Զամաշխարհային բանկի թիմի հարցազրույցներ ԴԴ S3S բաժնի հետ:*

#### գ) Ցանց և տվյալների կենտրոն

**240. Ընթացիկ հիմնական դատական գործողություններն ապահովվում են 18 սերվերային սենյակներով:** Համակարգի հիմնական մասերը գտնվում են Երևանի Վճռաբեկ դատարանի սերվերային սենյակում (CAST, DataLex, Armlex), իսկ մյուս համակարգերը (օրինակ՝ դատարանի պաշտոնական կայքը) տեղակայված են ԴԴ-ի գլխավոր գրասենյակի շենքում տեղակայված սերվերների վրա: Բացի այդ, յուրաքանչյուր մարզային դատարան ունի հատուկ սերվերային սենյակ սեփական (տեղական) CAST համակարգի համար, որը հաճախ ՏՀՏ սարքավորումների պահպանման համար պատասխանատու աշխատակցի առանձնասենյակն է:

#### Գծապատկեր 41. Երևան քաղաքի դատարանի սերվերային սենյակ



**241. Սերվերի սենյակներից որևէ մեկը չի համապատասխանում III դասի տվյալների կենտրոնի չափանիշներին.** III դասի<sup>169</sup> տվյալների կենտրոնը պետք է ունենա էներգիայի և հովացման մի քանի ուղիներ և պահուստային համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս շարունակելու աշխատանքը՝ առանց համակարգը ցանցից դուրս հանելու: Որպեսզի տվյալների կենտրոնը բավարարի III դասի կարգավիճակի հիմնական պահանջները, պետք է ունենա վերահսկման ֆիզիկական հասանելիություն, հովացման մեխանիզմ, օպտիկամանրաթելային մալուխ, անխափան սնուցման աղբյուրներ, հրդեհի մարման պատշաճ համակարգ և շարժիչ-գեներատոր: Երևանի վերաքննիչ դատարանի և Երևանի Էրեբունի վարչական շրջանի դատարանի սերվերի սենյակների զուտ տեսքը բավական է դրանց ոչ օպտիմալ վիճակը հասկանալու համար (տե՛ս գծապատկեր 41 և 42):

**242. Դատական համակարգի բոլոր մարմինները/վայրերը իրար հետ կապված են հատուկ Layer2 ցանցի միջոցով, բայց դեռևս չեն օգտագործում այդ ցանցը:** Այդ ցանցային ծառայությունը մատուցվում է տեղական ինտերնետ ծառայությունների մատակարարի կողմից: Layer2 ցանցը միացնում է երկրի բոլոր ֆիզիկական վայրերը մեկ վիրտուալ (կորպորատիվ) ցանցի մեջ՝ դրա վրա կենտրոնացված վերահսկողության լրացուցիչ հնարավորություններով: Անվտանգության նպատակներով նման ցանցերը բաժանվում են ավելի փոքր ենթացանցերի՝ ցանցային ռեսուրսների և ծառայությունների հասանելիության ճշգրիտ վերահսկման համար: Բոլոր ներքին ծառայությունները պետք է հասանելի լինեն կա՛մ կորպորատիվ վայրից, կա՛մ հատուկ վիրտուալ մասնավոր ցանցային կապի միջոցով: Երբ պատրաստվում էր զեկույցը, ԴԴ-ն լիովին չէր օգտագործում Layer2 ցանցի առավելությունները, քանի որ վերոհիշյալ աշխատանքներից և ոչ մեկը դեռևս չի կատարվել: Կառավարությունը մշակել և տեղակայել է անվտանգ թվային ցանց, որը միացնում է բոլոր շահագրգիռ պետական մարմինները կենտրոնական և ենթազգային մակարդակներում<sup>170</sup>: Սակայն Հայաստանի դատական կառույցները չեն օգտվում այդ ցանցից: Շենքերի ներսում կապը հիմնականում ապահովված է չպաշտպանված զույգ ոլորված մալուխներով: Թեև այս խնդրի կապակցությամբ բողոքներ չեն եղել, սերվերի սենյակներում մալուխի կառավարումը բավարար մակարդակում չէ (գծապատկեր 41, 42):

<sup>169</sup>III մակարդակի հավաստագրված տվյալների կենտրոնները կգործեն էլեկտրաէներգիայի անջատման կամ սարքավորումների անսարքության երկար ժամանակաշրջաններում, և դրանք չպետք է անջատել, երբ սարքավորումները տեխնիկական սպասարկման կամ փոխարինման կարիք ունեն, այդպիսով ապահովելով դատական գործունեության շարունակական հասանելիությունը և գործունեությունը: Տվյալների կենտրոնի մակարդակի պահանջները կարելի է գտնել հետևյալ հասցեով՝ <https://uptimeinstitute.com/tiers>.

<sup>170</sup>Համաշխարհային Բանկ, 2021թ., GovTech Հայաստանի համար. Կառավարության ողջ մոտեցումը որպես Հայաստանի թվային տնտեսության առանցքային հիմնադրամ, հասանելի է հետևյալ հղումով. <https://openknowledge.worldbank.org/handle/10986/35852>.

**Գծապատկեր 42. Երևանի Էրեբունի վարչական շրջանի սերվերային սենյակ**



**243. Կենտրոնական սերվերների համար ցանցի ներկայիս դիզայնը և դասավորությունը լավագույնը չեն:** Ներկայումս ցանցի դասավորությունն իրականացնում է դատարանի ՏՅՏ անձնակազմը: Սակայն դատական համակարգում բավարար թվով ՏՅՏ մասնագետներ չկան, որոնք կարող են երաշխավորել ցանցի պատշաճ դասավորությունը, ինչով էլ բացատրվում է ենթացանցերի բացակայությունը և ստատիկ հասցեների նշանակումը:

**244. Ներկայումս աղետից վերականգնման երկրորդային վայր չկա, ինչը խիստ ռիսկային է:** Աղետների հետևանքների վերականգնումը բացասաբար ազդող իրադարձություններին արձագանքելու և դրանցից վերականգնվելու կազմակերպության կարողությունն է: Աղետներից վերականգնման մեթոդների նպատակն է կազմակերպությանը հնարավորություն տալ աղետից հետո հնարավորինս արագ վերականգնելու կարևորագույն համակարգերի և ՏՅՏ ենթակառուցվածքի օգտագործումը: Երկրորդային տեղակայման և աղետի վերականգնման ծրագիր չունենալու հետևանքով անցանկալի իրադարձությունը կարող է հանգեցնել ոչ միայն համակարգի խափանմանը, այլև գործերի վերաբերյալ բոլոր էլեկտրոնային տվյալների կորստին: Ամբողջ դատական ՏՅՏ-ն պետք է պահել կառավարության տվյալների կենտրոնում, որը ընդհանուր է պետական կառույցների համար: Նման կենտրոնացված կառավարական տվյալների կենտրոնները տրամադրում են հիմնական հոսքին և մշտադիտարկման ծառայություններ՝ զգալիորեն կրճատելով օգտատերերի ծախսերը: Հայաստանում դատական տվյալների կենտրոնը կարող է տեղակայվել գործող պետական տվյալների կենտրոններից մեկում (օրինակ՝ ԷԿԵՆԳ տվյալների կենտրոնում (ներդիր 35):

**ՆԵՐԴՐԻ 35. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏՅՏ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Կառավարության ՏՅՏ ծառայությունները տրամադրվում են ԷԿԵՆԳ պետական ընկերության կողմից, որը մատուցում է տարբեր ինտերֆեյսի ծառայություններ հաստատությունների միջև և հնարավորություն է տալիս մուտք գործելու հիմնական հանրային ռեգիստրներ: ԷԿԵՆԳ-ը տրամադրում է փոխգործելիության համար անհրաժեշտ ենթակառուցվածքը և օգտագործում է կառավարության սահմանած փոխկապակցման ստանդարտները (կառավարության փոխգործելիության հարթակ կամ ԿՓՀ)<sup>171</sup>: ԷԿԵՆԳ-ի նույնականացման և հասանելիության վերահսկողության լուծումները (նույնականացման քարտերը), թվային ստորագրությունը և թվային վճարումների համակարգը լայնորեն օգտագործվում են դատական համակարգում: Կառավարության փոխգործելիության հարթակն արդեն գործում է, սակայն նոր ընդլայնումների ընդունումը ակնկալվում է փորձարկման փուլում, որպեսզի այն օգտագործվի ապագա ծրագրերի համար:

<sup>171</sup>Կառավարության 2015 թվականի N1093-Ն որոշմամբ սահմանվել են էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական չափորոշիչները, և նախատեսվում է ստեղծել կառավարության փոխգործելիության հարթակ, որը ներկայումս ապահովում է 24 պետական տվյալների բազաների փոխկապակցումը և ընդլայնման փուլում է՝ ներառելով այլ տվյալների բազաները:



## դ) Տեխնիկական սպասարկում

**245. Դատական ծառայությունների պատշաճ մատուցումն ապահովելու համար կարևոր է ապահովել տեղեկատվական համակարգերի և հավելվածների բոլոր բաղադրիչների պատշաճ տեխնիկական սպասարկումը:** Ներկայումս, և՛ ԱՆ-ն, և՛ ԴԴ-ն ՏՅՏ մասնագետներ չունեն, որոնք կարող են ճիշտ կառավարել և ապահովել ՏՅՏ համակարգերի պատշաճ աշխատանքը: Մասնավորապես, ԱՆ-ն մշտական աշխատանքի չի ընդունում ՏՅՏ մասնագետների, այլ վարձում է կարճաժամկետ խորհրդատուների ՏՅՏ առաջադրանքները կատարելու համար, իսկ ԴԴ-ն իր ՏՅՏ բաժնում ունի ընդամենը մի քանի ՏՅՏ մասնագետ: Սա դժվարացնում է դատական ՏՅՏ համակարգի բաժնի մասնագետներին և կառավարումը: Թեև ԴԴ-ի ՏՅՏ վարչությունը լավատեղյակ է վերոհիշյալ թերություններին, ներկայումս չկա բոլոր համակարգերը մեկ վայրում համախմբելու որևէ ծրագիր դրանց սպասարկումն առավել հեշտացնելու համար: Այդ միացումը չի կարելի հետաձգել, քանի որ CAST համակարգի որոշ հատվածներ աշխատում են հին սերվերային մեքենաներով, ինչը շատ վտանգավոր է:

**246. Հաստատված չեն ՏՅՏ սպասարկման և կառավարման գործընթացները, ինչը հանգեցնում է գործընթացների աննշան օպտիմալացման կամ դրա լիակատար բացակայության:** Ներդրված չեն ծառայությունների կառավարման գործիքներ, ինչպեսզիս է օրինակ՝ թիքթեային ծրագրային ապահովումը: Հետևաբար չկա որևէ հստակ գործընթաց, թե ինչպես են ԴԴ-ում դիտարկում օգտվողների կողմից ստացված բողոքների հաշվետվությունները:

**247. Որոշ աշխատանքային կայաններ չունեն հավիթուսային ծրագրեր կամ ունեն հնացած օպերացիոն համակարգ, որը խոցելի է դարձնում ամբողջ տեղեկատվական համակարգը:** Դատարանի աշխատակազմի համակարգիչներն աշխատում են հնացած օպերացիոն համակարգերով (օրինակ՝ Windows XP) և ծրագրային համակարգերով (օրինակ՝ Microsoft Office 2010): Հին օպերացիոն համակարգերի հակավիրուսային ծրագրերը չեն թարմացվում, ինչը ռիսկային է անվտանգության տեսանկյունից:

**248. Ոչ բոլոր համակարգերն ունեն տեխնիկական սպասարկման պայմանագրեր, բացի այդ, չի իրականացվում վերականգնման ընթացակարգերի փորձարկում:** Երբ DataLex համակարգը երկար ժամանակ անհասանելի էր, ՏՅՏ համակարգերի և հավելվածների մեծ մասի համար (բացառությամբ դատարանի կայքի և «Ֆեմիդա» համակարգի) սպասարկման պայ-

մանագրեր կնքվեցին տեղական «Մեյսիս ինֆորմեյշն սիսթեմս» ՏՅՏ ընկերության հետ: «Մեյսիսը» պնդում է, որ պահուստավորումը կատարվում է կանոնավոր կարգով, բայց հնարավոր վտանգ կա, որ այդ կրկնօրինակները չեն պահվում այլ տեղում, իսկ կրկնօրինակների վերականգնման ընթացակարգը անբավարար ռեսուրսների պատճառով երբեք չի փորձարկվել:

**249. Ցանցի սպասարկումն իրականացվում է ինտերնետ ծառայություններ մատուցող արտաքին ընկերության և դատարանի ՏՅՏ անձնակազմի կողմից:** Ինտերնետ ծառայություններ մատուցող ընկերության ընտրությունը կատարում է ԴԴ-ի ՏՅՏ բաժինը մրցույթի միջոցով, մեկ կամ երկու տարի ժամկետով: Այնուամենայնիվ ներկայումս չկան բավարար ՏՅՏ փորձագետներ, որոնք ունակ են պատշաճ սպասարկելու ցանցը և տվյալների կենտրոնի այլ բաղադրիչները, ինչպես նաև չկան համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ կնքված պայմանագրեր:

**250. Չկա ընդունված և ներդրված անվտանգության քաղաքականություն:** Անվտանգության քաղաքականությունը բարձր մակարդակի փաստաթուղթ է, որը սահմանում է կազմակերպությունում տվյալների անվտանգության և պաշտպանության հիմնական սկզբունքները: Առանց սահմանված և ներդրված անվտանգության քաղաքականության՝ չկա դատական համակարգի տեղեկատվական ակտիվների պաշտպանության մեխանիզմ<sup>172</sup>: Թեև գոյություն չունի անվտանգության քաղաքականություն, անվտանգությունը ապահովելու որոշ գործողություններ այնուամենայնիվ իրականացվում են, ինչպիսիք են մուտքի վերահսկումը, իսկության ստուգումը և նույնականացումը նույնականացման (ID) քարտերի միջոցով:

## Բ. ԵԳՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**251. Դատական իշխանության թվայնացման հարցը (և արդարադատության մյուս ոլորտները) կարևոր տեղ է գրավում շահագրգիռ կողմերի օրակարգերում, սակայն կառավարման և իրականացման համար անհրաժեշտ հմտությունները թերի են:** Ներկայումս մեծա- նում է այս ոլորտում օգտատերերի կարիքների վրա հիմնված ծառայությունների պատշաճ մատուցման պահանջը, ինչը վերջին տարիների նորարարության և պահպանման ոլորտում սահմանափակ ներդրումների պատճառով մեծացնում է նաև ռիսկերի մակարդակը: Դատական իշխանության դիտարկմանն ենք ներկայացնում առաջարկությունների հետևյալ ցանկը:

<sup>172</sup>Համաժողովի թղթ. 2014. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում և իրականացում. բովանդակության վերլուծության մոտեցում, հասանելի՝

[https://www.researchgate.net/publication/303061017\\_Information\\_Security\\_Policy\\_Development\\_and\\_Implementation\\_A\\_content\\_analysis\\_approach](https://www.researchgate.net/publication/303061017_Information_Security_Policy_Development_and_Implementation_A_content_analysis_approach).

<p><b>Առաջարկություն 1</b></p>	<p><b>Ընդլայնել համակարգումը ԱՆ-ի և ԴԴ-ի միջև և սահմանել հստակ պարտականություններ դատական ՏՀՏ կառավարման համար:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ստեղծել կազմակերպական կառուցվածք, որը հեշտացնում է դատական համակարգում որակյալ և կայուն ՏՀՏ կառավարումը, ներառյալ ԱՆ-ում էլեկտրոնային արդարադատության վարչություն, ինչպես նաև խորհրդատվական մարմին, որը կազմված լինի տարբեր ատյանների դատարաններ ներկայացնող դատավորներից, և ստեղծել այլ մասնագիտացված խորհրդատվական մարմիններ, որոնք կաջակցեն անմիջական դատական համակարգից դուրս գտնվող շահագրգիռ կողմերին:</li> <li>■ Ստեղծել տեղեկատվության կենտրոնական աղբյուր բոլոր հաստատված ՏՀՏ ծառայությունների վերաբերյալ, որոնք հասանելի լինեն դատական համակարգին ցանկացած պահին ճշգրիտ, համաձայնեցված պատկեր ստանալու համար, ներառյալ նման ծառայությունների մանրամասները և կարգավիճակը:</li> <li>■ Ստեղծել հաշվետվությունների ժամանակակից համակարգ, որը կնպաստի դատարանների գործունեության արդյունավետ մշտադիտարկմանը և կառավարմանը:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 2</b></p>	<p><b>Պատրաստվել էլեկտրոնային արդարադատության ծրագրի իրականացմանը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ապահովել ամուր ինստիտուցիոնալ հանձնառություն՝ ապահովելու էլեկտրոնային արդարադատության ծրագրի հաջող ավարտը և զուգահեռ սկսել մրցույթների նախապատրաստումը էլեկտրոնային արդարադատության համակարգի հետ կապված բոլոր ենթահամակարգերի համար (էլեկտրոնային քաղաքացիական գործեր, էլեկտրոնային քրեական գործեր, էլեկտրոնային սևանկություն, էլեկտրոնային վարչական գործեր), ներառյալ ծրագրային ապահովման և ենթակառուցվածքային ռեսուրսները:</li> <li>■ Ապահովել բավարար բյուջետային ռեսուրսներ, ենթակառուցվածքային ռեսուրսներ (ՏՀՏ սարքավորումներ և հոսթինգ) և համապատասխան մարդկային ռեսուրսներ՝ համակարգը կառավարելու և հաճախորդներին աջակցություն տրամադրելու համար:</li> <li>■ Տվյալների շտեմարանում ինտեգրել քաղաքացիական, քրեական և վարչական գործերի տարբեր համակարգերը:</li> <li>■ Պատրաստել և պահպանել դատական սարքավորումների և պահանջվող արդիականացման գույքագրումները:</li> </ul>
<p><b>Առաջարկություն 3</b></p>	<p><b>Ընդլայնել գոյություն ունեցող համակարգերը մինչև էլեկտրոնային արդարադատության համակարգի գործարկումը:</b></p>
<p><b>Հնարավոր քայլեր</b></p>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ապահովել, որ բոլոր համակարգերն ունենան սպասարկման պայմանագրեր, որոնք պարունակում են ամուր իրավական կարգավորումներ, ինչը կօգնի խուսափելու համակարգի երկարաժամկետ անջատումներից:</li> <li>■ Սահմանել կրկնօրինակման և վերականգնման ստանդարտ գործառնական ընթացակարգեր, կանոնավոր կերպով կատարել բոլոր համակարգերի և հավելվածների կրկնօրինակում և փորձարկել վերականգնման ընթացակարգեր՝ տեղեկատվության կորուստը նվազեցնելու նպատակով:</li> <li>■ Կանոնակարգել գործերի կառավարման համակարգի օգտագործման իրավունքներն ու պարտականությունները՝ գործողությունների կրկնությունից կամ բացերից, ինչպես նաև ցանկացած չարաշահումից խուսափելու նպատակով:</li> <li>■ Անհապաղ կատարելագործել գործերի պատահական մակագրման ալգորիթմը՝ խուսափելու գործերի ձեռքով մակագրումից և ապահովելու գործընթացի թափանցիկությունը բոլոր օգտատերերի համար:</li> <li>■ Տեղակայել դատական տվյալների կենտրոնը գործող պետական տվյալների կենտրոններից մեկում (օրինակ՝ ԷԿԵՆԳ տվյալների կենտրոնում):</li> <li>■ Ստեղծել աղետների վերականգնման տվյալների կենտրոն:</li> <li>■ Ստեղծել ՏՀՏ ծառայությունների ռեզիստ:</li> <li>■ Ներդնել ՏՀՏ համապատասխան գործիք՝ ավտոմատ կերպով վիճակագրական հաշվետվություններ ստեղծելու համար:</li> <li>■ Գործերի կառավարման համակարգը սահմանել օրենքով (նշել հավելվածի անվանումը և նկարագրությունը, հավելվածի նպատակը, օգտատերերին, օգտատերերի պատասխանատվությունը և այլն):</li> </ul>

## VIII. ՏԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

**252. Հայաստանի դատական հաստատությունները բարեկարգման կարիք ունեն՝ ուժեղ, անկախ և ժամանակակից դատական համակարգ ստեղծելու նպատակին ֆիզիկապես աջակցելու համար:** Մի շարք կառույցներ արդիականացման կամ վերանորոգման կարիք ունեն, և նույնիսկ համեմատաբար վերջերս վերանորոգված դատարանների շենքերը վերջին 10-15 տարիների ընթացքում ստացել են նվազագույն ընթացիկ սպասարկում: Բացակայում է տեխնիկական սպասարկման ռազմավարությունը, նախապատվությունը տրվում է ամենահրատապ խնդիրներին: Նախագծային չափանիշներ չկան, որոնց հիման վրա կարելի էր առաջնորդվել դատարանների շենքերը նախագծելիս: Ավելի ռազմավարական մոտեցում է անհրաժեշտ շենքերի տվյալները գրանցելու, ապագա ներդրումային պլանը և նախագծման չափանիշները համաձայնեցնելու, դատարանի գույքի կառավարումը բարելավելու, ինչպես նաև տեխնիկական սպասարկման ռազմավարություն և արձանագրություն մշակելու համար:

### Ա. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

**253. Առաջին հիմնական մարտահրավերը դատարանների ենթակառուցվածքների և վերանորոգման վատ վիճակն է:** Մի շարք խնդիրներ դարձել են հրատապ, ներառյալ կառուցվածքային աշխատանքները, շենքերի մատչելիության ապահովումը, և անվտանգության հետ կապված փոփոխությունները: Վատ ենթակառուցվածքն ազդում է դատավորների և դատարանների անձնակազմի աշխատանքային պայմանների, ինչպես նաև դատական ծառայությունների արդյունավետության ու որակի վրա: Ենթակառուցվածքների ներկայիս վիճակը բացասաբար է անդրադառնում քաղաքացիների համար արդարադատության հասանելիության վրա: Գոյություն ունեցող դատարանների շենքերը հաճախ պատշաճ հարմարություններ չունեն սահմանափակ շարժունակություն ունեցող անձանց համար, չկան համապատասխան սպասարահներ կամ եղածներն անբավարար են, իսկ վատ պայմանները վտանգավոր միջավայր են ստեղծում դատարան այցելողների համար: Առաջարկությունները ներառում են դատարանների մատչելիության բարելավում և վերանորոգման/արդիականացման պահանջների լուծում:

**254. Երկրորդ առանցքային խնդիրը դատական ենթակառուցվածքների ռազմավարական կառավարման**

**բացակայությունն է:** Կառավարման մակարդակում ենթակառուցվածքի հետ կապված ծախսերի պլանավորման համակարգումը և ենթակառուցվածքի տեխնիկական սպասարկման ընթացիկ ու պարբերական ծախսերի առաջնահերթության սահմանումը կատարվում է ակնթաթրորեն՝ առանց պաշտոնական արձանագրության: Առաջնահերթության սահմանման չափանիշները հիմնված են վերանորոգման հրատապության, ոչ թե ապագա (հեռանկարային) պլանավորման վրա: Կառավարման և տեխնիկական սպասարկման որևէ քաղաքականության բացակայության պարագայում չկա միջնաժամկետ և երկարաժամկետ տեսլական և պլանավորում: Դատական ենթակառուցվածքների կառավարումը վերահսկելու համար պատասխանատու անձնակազմ չկա, իսկ դատական հաստատությունների ֆիզիկական ենթակառուցվածքի վերաբերյալ տարրական տեղեկատվության մեծ պակաս կա: Առաջարկությունները ներառում են ռազմավարական կառավարման բարելավում, կապիտալ ներդրումների կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրերի մշակում և նախագծման չափանիշների ներդրում:

**Մարտահրավեր 1. Վատ ենթակառուցվածքների խնդիրների լուծում և դատարանների պայմանների բարելավում**

ա) Ընթացիկ պայմաններ

**255. Վատ ենթակառուցվածքն ազդում է դատավորների և դատարանների անձնակազմի աշխատանքային պայմանների, ինչպես նաև դատական ծառայությունների արդյունավետության ու որակի վրա:** Ֆիզիկական ենթակառուցվածքի հետ կապված շատ խնդիրներ դառնում են ավելի հրատապ, ներառյալ կառուցվածքային աշխատանքը, հասանելիության ապահովումը և անվտանգության բարելավումը: Պատշաճ կահույքի պակաս կա, իսկ փաստաթղթերի արխիվային պահպանումը անբավարար է: Շենքերի կառուցվածքային թերությունները ներառում են պատերի ճաքեր, խոնավություն, բորբոս, ջրի ներթափանցում և էլեկտրական լարեր, որոնք վտանգավոր են դատավորների, դատարանի աշխատակիցների և այցելուների համար: Դա բացասաբար է անդրադառնում հարմարությունների երկարակետության վրա, ինչպես օրինակ՝ կալանավորների խցերի սանհանգույցի և կահույքի վիճակի վրա: Ստեղծված պայմանները բացասաբար են անդրադառնում քաղաքացիների համար արդարադատության հասա-

նելիության վրա: Դատարանի շենքերը հաճախ չունեն մուտք գործելու համապատասխան հնարավորություն սահմանափակ շարժունակություն ունեցող մարդկանց համար, բացակայում են կամ բավարար չեն անհրաժեշտ սպասարահները: Որոշ դատական հաստատություններում էլեկտրական սարքավորումների վատ վիճակը լուրջ խոչընդոտ է ՏՀՏ ենթակառուցվածքում լրացուցիչ ներդրումներ կատարելու համար: Անվտանգության մեկ այլ խնդիր է դատարանի տարածքների տարանջատումը հանրային, սահմանափակված (արգելված) և պահպանվող գոտիների, օրինակ՝ տարբեր օգտվողների համար դատարանի շենքերի տարբեր մուտքերի բացակայությունը: Ներկայումս նաև խցերի և օպերատիվ տարածքների միջև ձայնային ու տեսողական տարանջատման միջոցներ չկան:

**256. Դատական ենթակառուցվածքի ֆիզիկական և ֆունկցիոնալ զարգացումը կարգավորող սկզբունքների համապարփակ փաթեթ գոյություն չունի**<sup>173</sup>: Նախագծման միակ չափանիշները նախատեսված են կահույքի համար, որպեսզի կահավորվեն դատական նիստերի դահլիճները և դատավորների աշխատասենյակները: Նախագծման ավելի համապարփակ չափանիշների բացակայության դեպքում այնպիսի հիմնարար սկզբունքները, ինչպիսիք են հասանելիությունը, միատեսակությունը և ճկունությունը, ենթակառուցվածքների նախագծման և զարգացման հիմնական ասպեկտները, անտեսվելու վտանգի եզրին են: Նախագծման չափորոշիչների և տեխնիկական սպասարկման արձանագրությունների բացակայության հետևանքով ստեղծվել է մի իրավիճակ, երբ տվյալները և տեղեկատվությունը սակավ են, իսկ

տարբեր դատարաններում իրավիճակը տարբեր է՝ առանց թերությունների վերացման ծրագրի: Հաճախ են հանդիպում դատական դահլիճների ոչ բավարար քանակի, չափի և տեսակի, ինչպես նաև սահմանափակ շարժունակությամբ, տեսողությամբ և լսողությամբ մարդկանց համար անբավարար հասանելիության մասին գանգատները:

**257. Երկրում ներկայումս գործում է 56 դատարան, որոնք տեղավորված են 47 շենքերում:** Հաճախ մի քանի դատարաններ տեղավորված են նույն շենքում, միևնույն մյուսները ցրված են տարբեր շենքերում: Տեսականորեն բոլոր դատարանների շենքերը համարվում են կառավարության սեփականությունը, դրանց մեծ մասը պատկանում է արդարադատության նախարարությանը, սակայն որոշ շենքերի սեփականության մասին տեղեկությունը պարզ չէ: Հուսալի տվյալների բացակայությունը դժվարացնում է շենքերի ապագա շինարարության, վերանորոգման և սպասարկման պլանավորումը: Սեփականության երկակիությունը կարող է դժվարացնել ենթակառուցվածքային ծախսերի պլանավորումը և շենքի պահպանման ընթացիկ և պարբերական ծախսերի առաջնահերթության սահմանումը: Նշված 47 շենքերը ներառում են հետևյալ հաստատությունները. ա) Վճռաբեկ դատարան, բ) երեք վերաքննիչ դատարան (մեկ քրեական, մեկ քաղաքացիական, մեկ վարչական). գ) սնանկության դատարանի երեք նստավայր (համատեղ այլ դատարանի շենքում). դ) վարչական դատարանի հինգ նստավայր (համատեղ այլ դատարանի շենքում) և (ե) 44 ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ, որոնցից յոթը գտնվում են Երևանում (տե՛ս գծապատկեր 43 և հավելված 9)<sup>174</sup>:

<sup>173</sup>Ներկայումս շինարարության թույլտվությունները, ինժեներական հետազոտությունները, նախագծման ու շինարարության ստանդարտներն ու կանոնակարգերը կառավարում է քաղաքաշինության նախարարությունը: «Քաղաքաշինության մասին» օրենքը (ԱԺ-ի կողմից ընդունված 1998 թ. մայիսի 5-ին) սահմանում է նոր շինարարության ընթացակարգերը, ներառյալ համապատասխան քաղաքաշինության գլխավոր և տեղական հատակագծերը, ինչպես նաև շինարարական նախագծերում ներգրավված բոլոր շահագրգիռ կողմերի իրավունքներն ու պարտականությունները: Յուրաքանչյուր շինարարական նախագիծ և շինարարական ընկերություն քաղաքաշինության վարչությունից և տեղական իշխանություններից թույլտվություն է խնդրում: Յուրաքանչյուր ծրագիր, ի թիվս այլոց, պահանջում է համապատասխան ճարտարապետական և կառուցվածքային պլաններ, գեոմեխանիկական և սեյսմիկ ուսումնասիրություններ, հորոհային անվտանգության պլաններ, արտակարգ իրավիճակների պլաններ, հնագիտական գտածոների ընթացակարգեր և շրջակա միջավայրի գնահատում: Շինարարության ընթացքում Քաղաքաշինության պետական անկախ տեսչությունը վերահսկում է համապատասխան թույլտվությունների պահպանումը: Տեղական իշխանությունները պահանջում են շինարարության վերահսկողության և շինարարական աշխատանքների պայմանագրի ապացույցներ՝ որպես ծրագրի մեկնարկի թույլտվություն տալու պայման:

<sup>174</sup>Որոշ դատարաններ գտնվում են նույն դատարանի շենքում, ուստի այս 47 շենքերում գտնվում է 56 դատարան:

**Գծապատկեր 43. Հայաստանում դատարանների գտնվելու վայրերը**



Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության դատական իշխանությունը: <https://court.am/hy#>

**258. Հայաստանի դատական մարմինների շենքերի տարիքը տարբեր է:** Հայաստանում դատարանների 47 շենքերից 33-ը (70 տոկոս) կա՛մ կառուցվել են (22), կա՛մ վերանորոգվել (11) 2000-ական թվականներին: Մնացածները կա՛մ կառուցվել են խորհրդային տարիներին և այդ ժամանակվանից չեն վերակառուցվել (47-ից 7-ը կամ 15 տոկոսը), կա՛մ անհայտ են դրանց կառուցման մանրամասները (7-ը կամ 15 տոկոսը):

**259. Քանի որ շենքերը կառուցվել և վերանորոգվել են տարբեր ժամանակներում, դժվար է կազմել նյութերի ամբողջական ցանկը**<sup>175</sup>: Որոշ շենքեր կառուցվել են դատարանների համար, որոշ շենքեր ժառանգություն են մնացել են խորհրդային ժամանակներից և այժմ էլ օգտագործվում են որպես դատարանի շենք,

երրորդները վերածվել են դատարանների (նախկին դպրոցներ, մասնագիտական ուսումնական կենտրոններ, գործարաններ և այլն): Հաշվի առնելով դատարանների տարբեր տարիքը և ճարտարապետական նկարագիրը, հնարավոր չէ նյութերի հուսալի ամբողջական ցանկ կազմել: Առանց նման ցանկի՝ դժվար է որոշել, թե ինչպես և ինչ հաճախականությամբ պետք է անդրադառնալ այդ նյութերին ու օժանդակ հարմարություններին և սպասարկել դրանք իրենց կյանքի ողջ ցիկի ընթացքում:

**260. Այսօր դատական համակարգը զբաղեցնում է մոտ 73,700 քմ**<sup>176</sup>: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր դատավորին բաժին է ընկնում միջին հաշվով 311 քմ (դատավորների ընդհանուր թիվը 277 է)<sup>177</sup>,

<sup>175</sup>Նյութերի ցանկը սովորաբար պարունակում է բոլոր տեղեկությունները, որոնք անհրաժեշտ են տվյալ դատարանի նյութերի, սարքավորումների, հարմարությունների և կահույքի եզակի նույնականացման համար: Նյութերի ցանկն օգտագործվում է արտաքին և ներքին տարածքների երկար տարիներ պատշաճ պահպանությունն ապահովելու համար, ինչը հանգեցնում է ուշ մաշվածության:  
<sup>176</sup>Հասանելի են 47 դատարաններից միայն 28-ի ընդհանուր տարածքի մոտավոր տվյալներ: Կյն կազմել է մոտ 42,474 քմ: Մնացած 19 շենքերի համար հաշվարկվել է 31,226 քմ տարածք՝ օգտագործելով համապատասխան շրջանի դատարանի կամ այլ վայրում նմանատիպ դատարանի շենքի միջին մակերեսը:  
<sup>177</sup>Թիվը տրվել է ԴԴ-ի կողմից դատարանների շենքերի ուսումնասիրության ժամանակահատվածում:

ինչը զգալիորեն ցածր է միջազգային առաջարկվող չափորոշիչից՝ 450 քմ մեկ դատավորի համար: Բայց և այնպես, թե որքանով է համապատասխանում, գերազանցում կամ չի համապատասխանում Հայաստանում առանձին դատարանի շենքը սույն առաջարկությանը, դժվար է որոշել հավաստի տվյալների բացակայության պատճառով:

**261. Պարզ չէ նաև, թե գործող դատարաններում քանի դատարանի դահլիճ կա:** Այս վերլուծության ընթացքում հետազոտված չորս դատարաններում (Շենգավիթ, Աջափնյակ, Էջմիածին, Արմավիր) դատական նիստերի դահլիճների թիվը<sup>178</sup> համաչափ է գործող դատավորների թվին (տե՛ս աղյուսակ 17): Ըստ առաջարկված եվրոպական չափանիշների՝ դատական նիստերի դահլիճների թիվը որոշվում է ակնկալվող դատալսումների ժամանակացույցի հիման վրա՝ կախված տվյալ դատարանում քննվող գործերի քա-

նակից և հաշվի առնելով գործունեության ցանկացած աճ (օրինակ՝ 30 տոկոս)<sup>179</sup>: Ամերիկյան չափանիշներով խորհուրդ է տրվում 1:1 հարաբերակցության կիրառումը ԱՄՆ դատական համակարգի համար (այսինքն՝ մեկ դատարանի դահլիճ մեկ դատավորի համար): Հայաստանում հետազոտված դատարաններում մեկ դատավորի հաշվով դատական նիստերի դահլիճների հարաբերակցությունը կազմում է 1,135 (այս հարաբերակցությունը հասնում է 1,228-ի, եթե հաշվի առնենք Հայաստանի բոլոր դատարանները, որոնց ճարտարապետական հատակագծերը հասանելի են եղել սույն հաշվետվությունը պատրաստելիս): Իր հերթին, հետազոտված չորս դատական հաստատությունները կարող են չարտացոլել դատական ֆոնդը ազգային մասշտաբով, ինչը առկա է թողնում այն հարցը, թե արդյոք դատական լսումների դահլիճների քանակը բավարար է այսօրվա թվաքանակով դատավորների համար:

**Աղյուսակ 17. Դատավորների և դատական նիստերի դահլիճների հարաբերակցությունը (2022թ.)**

Դատարանի տեսակը	Սիտուացիայի վերլուծությունում իր նիստերի դահլիճների քանակը	Դատարանի վիճակի դասակարգում	Սիտուացիայի վերլուծությունում	Դատավորների թվի մեկ նիստի դահլիճ
Շենգավիթի առաջին ատյանի դատարան (հետազոտված)	0	7	7	1
Աջափնյակի նախաքննական քրեական դատարան (հետազոտված)	0	9	8	0.88
Էջմիածնի քրեական և քաղաքացիական դատարան (հետազոտված)	0	6	6	1
Արմավիրի քրեական և քաղաքացիական դատարան (հետազոտված)	0	3	5	1.66
Էրեբունու առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	7	10	1.43
Արաբկիրի առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	10	12	1.2
Աբովյանի առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	3	1	0.33
Չարենցավանի առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	2	2	1
Հրազդանի առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	2	2	1
Եղվարդ քաղաքի առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	2	4	2
Մարտունու առաջին ատյանի դատարան	Տեղեկատվություն առկա չէ	1	2	2

Աղբյուրը՝ Համաշխարային բանկի թիմի կողմից իրականացված ֆիզիկական փորձաքննության և ԴԴ արձանագրային վարչության կողմից տրամադրված գծագրերի վերլուծության հիման վրա ստացված տվյալներ:

<sup>178</sup>Չորս դատարաններն ընտրվել են Դատական դեպարտամենտի հետ համատեղ՝ առկա վիճակի մասին լավ պատկերացում կազմելու համար (քաղաքային/տարածաշրջանային, հին/նոր և այլն):  
<sup>179</sup>ԱՄԵՅ. Դատարանի տարածքների կազմակերպման և հասանելիության վերաբերյալ ուղեցույցը տե՛ս [https://rm.coe.int/16807482cb#\\_Toc409098525](https://rm.coe.int/16807482cb#_Toc409098525):

**262. Դատական նիստերի դահլիճների չափսերը** Հայաստանում կարծես ավելի փոքր են՝ համեմատած միջազգային առաջատար փորձի չափանիշների հետ, ինչպես օրինակ՝ Մեծ Բրիտանիայում<sup>180</sup> կամ ԱՄՆ-ում:<sup>181</sup> Տվյալների բացակայության պատճառով դժվար է որոշել Հայաստանի դատարանների դահլիճների միջին չափսը: Հետազոտված չորս դատարաններում դատական նիստերի դահլիճների մակերես-

ները տատանվում են 23,4 քմ-ից (15 նստատեղ) մինչև 207 քմ (210 նստատեղ), միջինը՝ 63,6 քմ, սակայն չափսերը միատեսակ չեն և կախված չեն առկա նստատեղերի քանակից: Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս աղյուսակ 18-ը<sup>182</sup>: Հայաստանում դատական նիստերի դահլիճի չափսերը մոտ են Մոլդովայի<sup>183</sup> և Ռումինիայի<sup>184</sup> դատական նիստերի դահլիճների ստանդարտներին:

**Աղյուսակ 18. Դատական նիստերի դահլիճներ. Հայաստանի հետազոտված դատարաններ**

Դատարանի տեսակը	Չափսը	Մակերեսը	Դատարանի դահլիճի միջին մակերեսը
Շենգավիթի ընդհանուր իրավասության դատարան (քրեական մասնագիտացում)	Ամենամեծ դատական դահլիճը (80 նստատեղ)	197 քմ	80.9 քմ
	Ամենափոքր դատական դահլիճը (32 նստատեղ)	50 քմ	
Աջափնյակի ընդհանուր իրավասության դատարան (քրեական գործերով մինչդատական վարույթի մասնագիտացում)	Ամենամեծ դատական դահլիճը (210 նստատեղ)	207 քմ	67.3 քմ
	Ամենափոքր դատական դահլիճը (15 նստատեղ)	23.4 քմ	
Էջմիածնի ընդհանուր իրավասության դատարան	Ամենամեծ դատական դահլիճը (48 նստատեղ)	74 քմ	54 քմ
	Ամենափոքր դատական դահլիճը (6 նստատեղ)	44 քմ	
Արմավիրի ընդհանուր իրավասության դատարան	Ամենամեծ դատական դահլիճը (50 նստատեղ)	84 քմ	52 քմ
	Ամենափոքր դատական դահլիճը (10 նստատեղ)	24 քմ	

*Աղբյուրը՝* Համաշխարհային բանկի թիմի կողմից իրականացված ֆիզիկական փորձաքննության և ԴԴ-ի արձանագրային վարչության կողմից տրամադրված գծագրերի վերլուծության հիման վրա ստացված տվյալներ:

<sup>180</sup>Նորին Մեծության դատարանների և տրիբունալների ծառայություն: Դատարանների և տրիբունալների նախագծման ուղեցույց, 2019, էջ 145, 149, 153, 157, 161, 164: Մեծ Բրիտանիայում դատարանի դահլիճի առաջարկվող չափսերը տատանվում են 150 քմ-ից (երդվյալ ատենակալներով և մեղադրյալի աթոռով) մինչև 35 քմ փոքր դահլիճների համար, որտեղ ներկա են լինում ավելի քիչ կողմեր:

<sup>181</sup>Միացյալ Նահանգների դատական համաժողով (JCUS). ԱՄՆ դատարանների նախագծման ուղեցույց. Վերանայվել է 2021 թ., էջ 4-9, 4-12, 4-17, 4-22: Ամերիկյան դատարանների դահլիճների մակերեսը տատանվում է 278,7 քմ-ից, վերաքննիչ և շրջանային դատավորների դահլիճների համար, մինչև 167.2 քմ՝ համաշխարհային և սևակույթային գործերով դատավորների դահլիճների համար:

<sup>182</sup>Կարևոր է նշել, որ տարածքի վերլուծության ժամանակ չեն ուսումնասիրվել վարչական դատարանները: Ուստի ավելի շատ հետազոտություններ կպահանջվեն Հայաստանի դատական նիստերի դահլիճների չափսերի վերաբերյալ հավաստի տեղեկատվություն ստանալու համար:

<sup>183</sup>Թակեր Ջերալդ. Մոլդովայում դատարանների շենքերի կառուցման և նախագծման ուղեցույցներ, էջ 135:

<sup>184</sup>Դատական բարեփոխումների նախագիծ Ռումինիայում: Ռումինիայում դատարանների նախագծման չափանիշների ուղեցույցների նախագիծ: 2006 թ. մայիսի 16, էջ 17:

**Աղյուսակ 19. Դատական նիստերի դահլիճների չափսերը. Մոլդովայի, Ռումինիայի, Միացյալ Թագավորության, ԱՄՆ-ի դատարանի ուղեցույցներ**

Երկիր	Դատական նիստերի դահլիճների տեսակը	Մակերեսը	Լրացուցիչ տվյալներ
ԱՄՆ	Վերաքննիչ դատարանի դահլիճ	278.7 քմ (դատական նիստերի դահլիճներ) 167.2 քմ (պանելային նիստերի դահլիճներ)	/
	Շրջանային դատավորի նիստերի դահլիճ	278.7 քմ (մի քանի կողմերի մասնակցությամբ դատական նիստերի դահլիճ) 223 քմ (շրջանային դատավորի նիստերի դահլիճ)	
	Չափազանց դատավորի նիստերի դահլիճ	167.2 քմ	
	Սնանկության հարցերով դատավորի նիստերի դահլիճ	167.2 քմ	
ՄԹ	Դատական նիստերի դահլիճ. ֆորմալ անվտանգություն երդվյալ ատենակալների հետ	150 քմ	Երդվյալ ատենակալների և մեղադրյալների աթոռ, 5 մուտք
	Դատական նիստերի դահլիճ. ֆորմալ անվտանգություն առանց երդվյալ ատենակալների	115-150 քմ	Մեղադրյալների աթոռ, առանց երդվյալ ատենակալների, 4 մուտք
	Դատական նիստերի դահլիճ. խնամակալության հարցերով ստանդարտ դատական լսումներ, տեսակ 1	85 քմ	Խնամակալության հարցերով դատական լսումներ, որտեղ երդվյալ ատենակալների ներկայություն չի պահանջվում, 4 մուտք
	Դատական նիստերի դահլիճ. ստանդարտ տեսակ 2	50-75 քմ	Դատական լսումներ, որոնք չեն պահանջում մեղադրյալների աթոռի առկայություն կամ երդվյալ ատենակալների ներկայություն, բացի վկաների ամբիոնից, 3 մուտք
	Դատական նիստերի դահլիճ. ստանդարտ տեսակ 3	50-75 քմ	Դատական լսումներ, որոնք չեն պահանջում մեղադրյալների աթոռի առկայություն, երդվյալ ատենակալների ներկայություն կամ վկաների ամբիոն, ավելի ոչ ֆորմալ միջավայրում, 2 մուտք
	Ստանդարտ դատական նիստերի դահլիճ. կես չափ	35 քմ	Դատական լսումներ, որտեղ ներկա են քիչ թվով կողմեր, 2 մուտք
Մուրովա	Քաղաքացիական գործերով դատարանի դահլիճ	40-48 քմ	Կախված նիստերի դահլիճում հանրության համար նախատեսված տեղերի քանակից
	Քրեական գործերով դատարանի դահլիճ	60-135 քմ	
Ռումինիա	Փոքր չափի դատարանի դահլիճ	60-75 sqm	/
	Միջին չափի դատարանի դահլիճ	70-90 sqm	
	Մեծ չափի դատարանի դահլիճ	90-120 sqm	

Աղբյուրը՝ Նորին Մեծության դատարանների և տրիբունալների ծառայություն, 2019 թ., Դատարանների և տրիբունալների նախագծման ուղեցույց: Միացյալ Նահանգների դատական կոնֆերանսի (JCUS) տարածության և տարածքների հանձնաժողով: Միացյալ Նահանգների դատարանների նախագծման ուղեցույց (Նախագծման ուղեցույց), 2021 թ.: [https://www.uscourts.gov/sites/default/files/u.s.\\_courts\\_design\\_guide\\_2021.pdf](https://www.uscourts.gov/sites/default/files/u.s._courts_design_guide_2021.pdf); Թաքեր Ջերալդ. Մոլդովական դատարանների կառուցման և նախագծման ուղեցույցներ (ամսաթիվն անհայտ է): <https://crjm.org/wp-content/uploads/2015/01/Ghid-court-construction.pdf>:



բ) Նախկինում ձեռնարկված վերականգնողական միջոցառումները

**263. Անկախություն ձեռք բերելուց հետո Հայաստանը ժառանգել է դատական այնպիսի շենքերի պորտֆել, որոնք չեն համապատասխանում իրենց նշանակությանը, իսկ շինարարության վատ որակը բացասաբար է անդրադառնում սպասարկման վրա:** Խորհրդային տարիներին տեխնիկական սպասարկման նկատմամբ ուշադրության պակասը հանգեցրել է դատարանների շենքերի որակի վատթարացմանը: Բացի այդ, դատարանները հաճախ տեղավորված էին այն շենքերում, որոնք ի սկզբանե կառուցված էին այլ նպատակների համար. դպրոցներ, մասնագիտական ուսումնական կենտրոններ, գործարաններ և այլն: 1997 և 1999 թթ. դատական օրենսդրության առաջին փաթեթը հիմք դրեց ժամանակակից դատական համակարգի ձևավորմանը և բարձրաց-

րեց հանրային իրազեկությունը դատական համակարգի գործունեության մասին: 2000-ական թթ. ենթակառուցվածքների արդիականացմանն ուղղված ջանքերը հիմնականում ձեռնարկվել են կառավարության կողմից, Համաշխարհային բանկի աջակցությամբ:

**264. Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող երկու ծրագրերի և մի քանի անկախ պետական ներդրումների աջակցությամբ դատարանների 47 շենքերից 33-ը կառուցվել կամ վերանորոգվել են 2000-ական թթ. վերջին և 2010-ական թթ. սկզբին (ներդիր 36):** Այսպիսով, Հայաստանի դատական ենթակառուցվածքների շուրջ 86 տոկոսը վերականգնվել է կամ նորն է կառուցվել<sup>185</sup>: ԱՄԵՀ-ի 2020թ. զեկույցի համաձայն՝ 2018 թ. դատարանների միջին թիվը 100,000 բնակչի հաշվով կազմել է 0,5<sup>186</sup>: Թարմ տվյալներ ներկայումս հասանելի չեն:

### ՆԵՐՈՒՐ 36. ՀԱՍՏԱՆԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՆԱԽԱԳԾԵՐ՝ ՈՐԴՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՎԱՐԳԻ ԲԱՐԵՓՈՒՄԱՆԸ

**Արդարադատության բարեփոխումների ծրագիր 1 (ԱԲԾ1, P057838). 2000-2006 թթ.**

ԱԲԾ1-ի նպատակն էր վերանորոգել չափազանց ավերված դատարանների շենքերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանի խոշոր դատարաններին: Կառուցվել է 11 դատարանի շենք, որտեղ տեղակայված է 14 դատարան: Դրանք վերանորոգված կամ նոր տարածք են՝ մոտ 40,000 քմ մակերեսով կամ կազմում են շենքերի ընդհանուր տարածքի 54 տոկոսը: Չնայած ԱԲԾ1-ի շրջանակներում ձեռք բերված ընդհանուր բարելավմանը՝ մարզային առաջին աստիճանի դատարանների շենքերից շատերը դեռևս անմխիթար վիճակում են, չունեն բավարար տարածք, անվտանգության միջոցներ և հաճախ տեղակայված են նույն վայրում, որտեղ գտնվում են ոստիկանությունը, դատախազությունը և դատական այլ ծառայություններ:

**Արդարադատության բարեփոխումների ծրագիր 2 (ԱԲԾ2, P099630). 2007-2012 թթ.**

ԱԲԾ2-ի նպատակն էր վերակառուցել և բարեկարգել 20,000 քմ մակերեսով դատարանների և դատական այլ շենքեր, մշակել փոքր դատարանների նախագծման չափանիշները, բարեկարգել վճռաբեկ դատարանի շենքը և արդարադատության նախարարության շենքը՝ դատական արխիվները պահպանելու նպատակով: Կառուցվել կամ վերանորոգվել են 16 դատարանի շենք, արդարադատության նախարարությանն առընթեր Փորձաքննությունների կենտրոնը և Արդարադատության ակադեմիան՝ ավելացնելով ևս 23,500 քմ մակերեսով արդիականացված շենքեր (կամ ընդհանուր քանակի 32 տոկոսը): Կարևոր է նշել, որ փոքրամասշտաբ դատարանների նախագծման չափանիշները ֆինանսավորվել են նախագծով, սակայն չեն հաստատվել կառավարության կողմից: Բացի այդ, հաստատվել է 4,84 մլն ԱՄՆ դոլարի չափով հոլանդական Dutch Trust-ի դրամաշնորհը (TF-091251)՝ ԱԲԾ2-ի շրջանակներում ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման և իրազեկման գործունեությունը համաֆինանսավորելու և ընդլայնելու համար: ԱԲԾ2-ին զուգահեռ՝ կառավարության ֆինանսավորմամբ վերանորոգվել է ևս 5 դատարանի շենք: Դատական դեպարտամենտի հետ նախնական պայմանավորվածություն կար 10 տարածաշրջանային և տեղական դատարանի շենք կառուցել, սակայն դրանցից հինգի հետ կապված աշխատանքները չեղարկվեցին տնտեսական անկման պատճառով: Դատավորների վերապատրաստման նոր կենտրոնը (այժմ հայտնի է որպես Արդարադատության ակադեմիա) նույնպես կառուցվել է 2011 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորած ճարտարապետական ծրագրերի համաձայն: Ծրագրի շրջանակներում արդիականացվել է դատավորների վերապատրաստման գործող կենտրոնը հիմնական շենքի վերանորոգման և վերազինման միջոցով:


<sup>185</sup>Տոկոսները հիմնված են դատարանի ընդհանուր ենթակառուցվածքի 73,700 քմ տարածքի նախկին գնահատման վրա:  
<sup>186</sup>Եվրոպական դատական համակարգեր. Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով (CEPEJ), գնահատման ցիկլ 2020 (2018 թ. տվյալներ), էջ 25, գծապատկեր 2.9 :



## Ծրագրի իրականացման կազմակերպում

Արդարադատության բարեփոխումների ծրագրի իրականացման գրասենյակը (ԱԲԾԻԳ) գործել է որպես ծրագրի իրականացման գլխավոր հաստատություն, որը պատասխանատու է ծրագրի առօրյա կառավարման համար, իսկ նախագծի վերահսկողությունն ու ռազմավարական կառավարումն իրականացվել է ծրագրի կառավարման խորհրդի կողմից: ԱԲԾԻԳ-ն բաղկացած էր 10 հիմնական անդամներից և 2 լրացուցիչ աշխատակիցներից, որոնք բաժանված էին չորս ստորաբաժանումների՝ (ա) ֆինանսներ և կառավարում (3 հիմնական անդամ), (բ) գնումներ (2 հիմնական անդամ), (գ) շինարարական աշխատանքների վերահսկողություն (3 հիմնական անդամ) և (դ) ինստիտուցիոնալ աջակցություն (2 հիմնական անդամ՝ գումարած 2 լրացուցիչ աշխատակից): Այս մասնագետները մատուցում էին գնումների, ֆինանսական կառավարման, շինարարական և թարգմանչական ծառայություններ և ղեկավարվում էին գործադիր տնօրենի կողմից: Զաղաքացիական աշխատանքների նախագծերի երկու ղեկավարներն իրականացնում էին պայմանագրերի կազմման վերահսկողությունը, կառավարումը և մոնիթորինգը: Այն դեպքում, երբ ԱԲԾԻԳ-ը չուներ մասնագիտացված կարողություններ (ճարտարագետ/ճարտարապետ, գնումներ և այլն), ծրագրի շրջանակներում լրացուցիչ ֆինանսավորում է ստացել հմտությունները լրացնելու նպատակով: Գծապատկեր 44-ում ներկայացված կազմակերպչական սխեման պատկերացում է տալիս ծրագրի իրականացման համար անհրաժեշտ հնարավորությունների մասին, ներառյալ շինարարական աշխատանքների հետ կապված մասը:

Գծապատկեր 44. ԱԲԾԻԳ-ի կազմակերպչական սխեման



Աղբյուրը՝ ԱԲԾԻԳ2-ի գործառնական ձեռնարկ (ներառյալ հղումը շինարարական աշխատանքների տեղական չափանիշներին):



#### գ) Արդիականացման ակնկալիքները

**265.** Հարցախույզները և որակական հարցազրույցները<sup>187</sup> ցույց են տալիս, որ Հայաստանի դատական իշխանության շենքերից ոչ մեկը չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Սա վերաբերում է դատարանների դահլիճների և գրասենյակների ոչ բավարար տարածքներին: Այս չափանիշներին համապատասխանելու համար շենքերի գրեթե կեսը վերանորոգման և ընդլայնման կարիք ունի, իսկ մնացածը պետք է ամբողջությամբ փոխարինվի կամ վերակառուցվի (տես գծապատկեր 45): Յոթ վայրերում դատարանը զբաղեցնում է նույն շենքը մեկ այլ պետական հաստատության հետ: Այս նախնական ցանկը հաստատելու և այն քարտեզագրելու համար անհրա-

ժեշտ են հաստատությունների հետագա մակրամասն ուսումնասիրություններ և հետազոտություններ:

**266.** Մոտ 61,700 քմ մակերեսից բաղկացած տարածքն արդիականացման, ընդարձակման, փոխարինման կամ վերակառուցման կարիք ունի: Սա նշանակում է մոտավորապես 28,000 քմ մակերեսի արդիականացում (մոտավոր արժեքը՝ 1,000 ԱՄՆ դոլար/քմ), 8,200 քմ կցակառուցում (մոտավոր արժեքը՝ 1,500 ԱՄՆ դոլար/քմ), 23,000 քմ փոխարինում (մոտավոր արժեքը՝ 1,500 ԱՄՆ դոլար/քմ) և 2,500 քմ շինարարություն (մոտավոր արժեքը՝ 1,500 ԱՄՆ դոլար/քմ): Բոլոր թվերը կողմնորոշիչ բնույթ ունեն և պետք է հաստատվեն/վերանայվեն տեղերում կատարվող հետազոտությունների ժամանակ:

<sup>187</sup>Հայաստանի դատական իշխանության շենքերի ներկա վիճակը պարզելու նպատակով 2022 թ. ապրիլ-մայիսին իրականացվել է չորս շենքերի ուսումնասիրություն: Մնացած շենքերի վիճակը որոշվել է պարոն Էդգար Մելքոնյանի (ԴԴ-ի արձանագրային վարչության պետ) հետ մի շարք որակական հարցազրույցների միջոցով:

Գծապատկեր 45. Վերականգնողական պահանջները՝ ըստ դատարանի գտնվելու վայրի



Աղբյուրը՝ տվյալներ չկան, քարտեզը կազմվել է դատական դեպարտամենտի (ԴԴ) արձանագրային բաժնի ներկայացուցիչների հետ հանդիպման արդյունքների հիման վրա:

**267. Եթե խոսքը մասնակի արդիականացման կամ ընդարձակման (դատարանի 22 շենք) իրականացման մասին է, դա վերաբերում է ենթակառուցվածքային ասպեկտներին, ինչպես նաև հասանելիության, պահպանման և անվտանգության խնդիրներին:** Ինչ վերաբերում է ենթակառուցվածքին, ապա այնպիսի

տարրեր, ինչպիսիք են շենքի ճակատի, պատերի, կոյուղու և խողովակների վերանորոգումը, սանտեխնիկայի արդիականացումը և տանիքի աշխատանքները, բարելավման կարիք ունեն: Ի լրումն՝ դատարանների մեծ մասում օգտվողների մուտքը առաջնահերթ խնդիր չի համարվում, և շենքերը հաճախ չունեն

անհրաժեշտ բաժինները գտնելու ուղեցույցների համաձայնեցված ռազմավարություն, տեղեկատվական վահանակներ և միատեսակ ու համապատասխան ցուցանակներ: Բացակայում են նաև այնպիսի հիմնական տարրեր, ինչպիսիք են՝ թեքահարթակները և շարժասանդուղքները, վերելակները, հաշմանդամների համար նախատեսված վերելակները և զուգարանները բոլոր հարկերում, ինչպես նաև բոլոր շենքերում չկան հարմարություններ երեխաների համար: Ընդհանուր առմամբ, կա պահպանության և անվտանգության բարելավման էական անհրաժեշտություն: Պատարանների շենքերում պետք է բարելավվի մարդկանց հոսքերի տարանջատումը, որպեսզի դատավորների և մեղադրյալների անցուդարձը չհատվի այնպիսի հատվածներում, ինչպիսիք են միջանցքները կամ մուտքերը դեպի դատական նիստերի դահլիճ: Հասարակական, արգելված և պահպանվող տարածքները անվտանգություն չեն ապահովում բոլոր օգտվողների համար, և չկան բավարար առանձին մուտքեր/անցակետեր: Պարզ չէ՝ խցերը պատշաճ կերպով տարանջատված են արդյոք ըստ կալանավորների խմբերի, լսողական և տեսողական պայմանների: Թեև անվտանգության նկատառումներով բազմաթիվ մեկուսարաններ տեղակայված են նկուղում, որոշ դատարանների շենքերում, օրինակ՝ Էջմիածնի դատարանում, ժամանակավոր մեկուսարանը գտնվում է առաջին հարկում: Այստեղ պետք է լինի անմիջական մուտք դեպի մեկուսարանի նկուղային տարածք, ինչպես նաև դատարանի շենք: Գույքը և հարմարությունները, ինչպիսիք են զուգարանները,

հարդարված են հախճապակե սալիկներով, որոնք չեն համապատասխանում միջազգային չափանիշներին:

**268. Հայաստանի 14 դատական շենք վերակառուցման կարիք ունի՝ համապատասխանելու դատական ծառայությունների պահանջներին:** Թերություններ կան ինչպես կառուցվածքային, այնպես էլ տարածքային մակարդակներում: Ենթակառուցվածքում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ բաց էլեկտրական մալուխները և լարերը, վատ օդափոխությունը, ջրի ներթափանցումը, խոնավությունը և բորբոսը, համատարած են և հրատապ ուշադրություն են պահանջում: Տարածքային առումով դատարանի շենքում տարածքի անարդյունավետ բաշխումը հանգեցնում է ոչ բավարար թվով գրասենյակների տարածքի և դատական նիստերի դահլիճների, ինչպես նաև պատշաճ արխիվային և պահեստային տարածքների անբավարարության: Այն շենքերը, որոնք կառուցվածքային վնասվածք ունեն, հավանաբար պետք է նորից կառուցվեն, քանի որ նույնիսկ վերակառուցումից հետո դժվար կլինի պահպանել ներկայիս շինարարական կանոնները (հատկապես սեյսմիկ պահանջների հետ կապված): Այս դատարաններից ոչ մեկը չի համապատասխանում մատչելիության և գեներացիայի առանձնահատկությունների միջազգային չափանիշներին: Այս 14 շենքերից երկուսը պետք է կառուցվեն նոր վայրերում: Ներկայիս շենքերի հատակագծերը և ընդհանուր վիճակը չեն համապատասխանում դատական ծառայությունների մատուցման պահանջներին, և դրանց վերակառուցումն ավելի թանկ կարծենա, քան նորերի կառուցումը:

### Ներդիր 37. ՄԻ ՊԱՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՊԱՏԱՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի քրեական և քաղաքացիական դատարանը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է խորհրդային տարիներին՝ 1960-1980 թվականների անհայտ ժամանակաշրջանում: Ծենքը բաղկացած է երկու հարկից ու նկուղից և ունի երեք դատական նիստերի դահլիճ՝ 10-50 տեղանոց:

Ենթակառուցվածքային խնդիրները խոչընդոտում են կարևոր փաստաթղթերի պատշաճ արխիվացումը և կարող են լուրջ հետևանքներ ունենալ արդարադատության համակարգի պատշաճ գործունեության առումով: Ներկայումս արխիվային և պահեստային նպատակներով օգտագործվող նկուղը շտապ վերանորոգման կարիք ունի: Վտանգավոր բաց խողովակները, էլեկտրական լարերը, մալուխները և պողպատե լարերը թույլ չեն տալիս այս սենյակն օգտագործել իր նպատակային նշանակությամբ: Նկուղային անմխիթար վիճակը ավելի է սրվել վերելակի բացակայության, հասանելիության չափանիշների բացակայության և ընդհանուր աշխատանքային նեղ միջավայրի պատճառով: Նման խնդիրները զգալիորեն նվազեցնում են ինչպես աշխատավայրի, այնպես էլ աշխատանքի որակը:

Պատերը քանդվում են, իսկ քարե պատերի վրա գիպասատվարաթուղթ չկա: Սա հանգեցնում է նրան, որ փաստաթղթերի վրա շատ փոշի է կուտակվում: Պատերը խոնավ են և բորբոսի նշաններ են երևում հավանաբար օդափոխության համակարգի բացակայության պատճառով: Բացի այդ, տարածքներում չկա համապատասխան պահեստային կահույք, ինչի հետևանքով փաստաթղթերը պահվում են միջանցքներում:



րում և նկուղից վեր գտնվող հարկերի սենյակներում: Սա լուրջ վտանգ է պահպանվող փաստաթղթերի գաղտնիության և անվտանգության տեսանկյունից:



**Մարտահրավեր 2. Դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում**  
ա) Ռազմավարական կառավարում

**269. Դատական ենթակառուցվածքների ռազմավարական կառավարումը բավարար չէ:** Կառավարման մակարդակում ենթակառուցվածքի ծախսերի պլանավորման համակարգումը և ենթակառուցվածքի պահպանման ընթացիկ և պարբերական ծախսերի առաջնահերթության սահմանումը կատարվում է արագընթաց՝ առանց պաշտոնական արձանագրության: Առաջնահերթության չափանիշները հիմնված են վերանորոգման հրատապության վրա, այլ ոչ թե հեռանկարային (ապագա) պլանավորման վրա: Կառավարման և պահպանման քաղաքականության բացակայության պարագայում չկա միջնաժամկետ և երկարաժամկետ տեսլական և պլանավորում:

**270. Կապիտալ ներդրումների բազմամյա ծրագրերի բացակայությունը վտանգում է դատական հաստատությունների արդյունավետ կառավարումը:** Չնայած դատական իշխանության՝ բազմամյա ներդրումային և իրականացման ծրագրին ուղղված ջանքերին, երկարաժամկետ պայմանագրերի ստորագրման սահմանափակումների պատճառով, զուգորդված պլանավորման անբավարար կարողություններով, պարբերաբար տեղի է ունենում թերֆինանսավորում: Փաստորեն ներդրումային ծրագրերը և տեխնիկական սպասարկման պահանջները հաճախ խախտվում են: Շահագործման և տեխնիկական սպասարկման պահանջների անտեսումը խաթարում է կապիտալ ներդրումների կայունությունը:

**271. Դատական դեպարտամենտը, Բարձրագույն դատական խորհրդի ղեկավարությամբ, դատական**

**ենթակառուցվածքի կառավարման միակ պատասխանատու կառույցն է:** ԴԴ կյուբատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչությունը վերահսկում է դատական ենթակառուցվածքի հաստատությունների պլանավորումը, գնումները, կատարման ընթացքը, կապիտալ ծախսերի վերահսկումը և տեխնիկական սպասարկումը<sup>188</sup>: Այս վարչությունը հաստիքներով թերի է համալրված. միայն չորս ֆինանսական աշխատակիցներ են, ի լրումն այլ ֆինանսական խնդիրների, պատասխանատու դատական ենթակառուցվածքների ծախսերի համար, և միայն 11 աշխատակից է պատասխանատու պլանավորման և իրականացման համար, որոնցից ոչ ոք ինժեներական կրթություն չունի<sup>189</sup>: Կապիտալ ներդրումների յուրաքանչյուր որոշում պետք է հավանություն ստանա ԲԴԽ-ից:

**272. Դատական դեպարտամենտում դատական ենթակառուցվածքի մասին նույնիսկ տարրական տեղեկատվություն չկա, օրինակ՝ տվյալների բազա վերջինիս հսկողության տակ գտնվող օբյեկտների քանակի, շենքերի սեփականության, տարածքի, դատական նիստերի դահլիճների քանակի և այլնի վերաբերյալ:** Տվյալների բացակայությունը դժվարացնում է պահանջների գնահատումը և խաթարում է կապիտալ և գործառնական ծախսերը պլանավորելու ջանքերը: ԴԴ-ն պետք է հավաքի և պահի շատ ավելի մանրամասն տվյալներ դատական հաստատությունների վերաբերյալ: Նա պետք է իրականացնի այս բոլոր հաստատությունների ֆիզիկական և գործառնական գնահատումը և օգտագործի այդ տեղեկատվությունը տվյալների բազա ստեղծելու համար, որը ներառի ԴԴ կողմից վերահսկվող բոլոր ռեսուրսներն ու բնութագրերը, որպեսզի հնարավորություն ունենա բա-

<sup>188</sup>ԱԼ-ն պատասխանատու էր կապիտալ ներդրումների և ենթակառուցվածքների ծախսերի համար ԶԲ-ի կողմից ֆինանսավորվող վարկային գործառնությունների ժամանակաշրջանում:

<sup>189</sup>Համեմատության համար նշենք, որ Խորվաթիայի դատական ֆինանսների և գնումների վարչությունն ունի 37 աշխատակից, իսկ ծրագրերի և ներդրումների վարչությունը՝ 23 աշխատակից (ըստ Սերբիայի դատական սեկտորի աջակցության բազմակողմ դոնոր հիմնադրամի, Համաշխարհային բանկ, 2014 թ. ):

ցահայտելու բացերն ու բարելավման ոլորտները և վերահսկելու դատարանների շենքերի վիճակը: Յուրաքանչյուր շենքի անհատական պրոֆիլները պետք է ներառեն.

- Գտնվելու վայրը, չափերը, սեփականության ձևը, շինության տեսակը, կյուրթերը, զբաղվածությունը, հիմնական մարտահրավերները (խնդիրները), համապատասխանությունը նախագծման կանոններին և չափանիշներին, ներկա ու ակնկալվող անձնակազմը և ծանրաբեռնվածությունը:
- Առանձնահատկությունների ազդեցությունը իրավասության, կադրային համալրման և արդարադատության հաստատության աշխարհագրական դիրքի վրա:

**273. Դատական դեպարտամենտն ունի ադմինիստրատորներ, որոնք ստուգում են շենքերը տեխնիկական սպասարկման և ենթակառուցվածքի պահպանման անհրաժեշտության համար, սակայն դատարանները չունեն դատական ենթակառուցվածքի կառավարման համար պատասխանատու անձնակազմ:** Հայաստանի յուրաքանչյուր մարզի դատարան ունի աշխատակազմի ղեկավար, որը պատասխանատու է համապատասխան մարզում դատարանների շենքերի պահպանման համար, և յուրաքանչյուր շենք ունի վարչական անվտանգության պարեկ, որը պատասխանատու է կահույքի մաքրման և խնամքի, պահեստների պահպանման համար: Երևանում, բացի աշխատակազմի ղեկավարից, յուրաքանչյուր դատարանի շենքում նշանակվում է դատարանի ադմինիստրատոր, որն օգնում է աշխատակազմի ղեկավարին պարզելու ծառայության պահանջները և հաղորդելու պահպանման կարիքների մասին:

**274. ԴԴ-ն և ԱՆ-ն կշահեն դատական համակարգի ֆիզիկական ենթակառուցվածքի բարելավումն ավելի լավ վերահսկելու նպատակով ինստիտուցիոնալ զարգացումից:** Ճարտարապետներ, ճարտարագետներ և գեոդեզիստներ են անհրաժեշտ, որպեսզի վերահսկեն, գործարկեն և պահպանեն առկա դատական կառույցները, ինչպես նաև դատական ենթակառուցվածքներում նախագծեն և վերահսկեն ներդրումները: Միջազգային կոմպարատորների (համեմատիչներ) մասնակցությամբ ուսումնական ճամփորդությունները և սեմինարները (առաջատար փորձի օրինակներ) նույնպես կարող են օգտակար լինել և նպաստել առաջադեմ և արդյունավետ առաջնորդող ուղեցույցների մշակմանը, որոնք կաջակցեն արդարադատության անաչառ իրականացմանը համապատասխան ենթակառուցվածքների միջոցով<sup>190</sup>:


**275. ԲԴԿ-ն և ԱՆ-ն պետք է պայմանավորվեն դատարանների շենքերի հետ կապված առաջնահերթությունների և գործողությունների շուրջ, ինչը կարող է արտացոլվել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կապիտալ ներդրումների ծրագրում (ԿՆԾ):** Պարբերաբար վերանայվող ԿՆԾ-ն կօգնի պարզելու պահանջվող աշխատանքը և սահմանելու թափանցիկ չափանիշներ շինարարության, վերականգնման և վերանորոգման առաջնահերթությունների համար: ԿՆԾ-ն կխրախուսի հեռանկարային լուծումները՝ բավարարելու դատական համակարգի և հարակից ծառայությունների գործառնական կարիքները, այլ ոչ թե ինքնանպատակ վերանորոգելու գոյություն ունեցող տարածքները: Օրինակ՝ նա կարող է թվարկել և առաջնահերթացնել ֆինանսավորման կարիքները ըստ բյուջետային տարվա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են անձնակազմի համար տարածքի պահանջները, առողջության և անվտանգության խնդիրները, հրդեհային կանոնները, կառուցվածքային պայմանները, որոնք ազդում են հաստատության կայունության վրա (օրինակ՝ տանիքում արտահոսք կամ հիմքի խնդիրներ), էլեկտրականության, ջեռուցման և էլեկտրամատակարարման խնդիրները և ծախսերը: Պարբերական խորհրդատվությունները տարածքի օգտատերերի հետ, ինչպիսիք են դատավորները, դատական պաշտոնյաները, արդարադատության նախարարության աշխատակիցները և քաղաքացիները, կլինեն ԿՆԾ-ի շուրջ ամուր կոնսենսուս ստեղծելու բոլոր ջանքերի և միջոցների անբաժանելի մասը:

**276. Կապիտալ ծախսերի համար միջոցների հատկացումը ցածր է:** Կապիտալ ծախսերի համար նախատեսված միջոցները նախատեսված են յուրաքանչյուր օրացուցային տարվա համար, և բազմամյա կապիտալ ներդրումների ծրագրերի բացակայությունը հանգեցնում է նրան, որ Հայաստանն ունենա Եվրոպայում ամենացածր դատական ծախսերից մեկը մեկ բնակչի հաշվով (տե՛ս նաև գլուխ V-ը՝ բյուջեավորում, ֆինանսական կառավարում և ծախսեր): Հայաստանում դատական ծախսերում գերակշռում են աշխատանքի և աշխատավարձի ծախսերը, որոնք կազմում են ծախսերի մոտ 90 տոկոսը: Թեև կապիտալ և ընթացիկ վերանորոգման հետ կապված ծախսերը ժամանակի ընթացքում աճել են, դրանք սուղ են եղել և կարծես արձագանքում էին միայն ծայրահեղ կարիքներին՝ չնայած տեղերում առկա այլ կարիքներին (տե՛ս գծապատկեր 46 և 47):

<sup>190</sup>Նախագծային ուղեցույցներ են մշակվել, օրինակ՝ Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ի դաշնային դատարաններում և շատ նահանգային դատական համակարգերում, Ավստրալիայում, Իռլանդիայում, Կանադայում, Ֆիլիպիններում, Չեռնոգորիայում, Յուսիսային Մակեդոնիայում և Ռումինիայում:



**Գծապատկեր 46.** Դատական ծախսերը՝ ըստ կատեգորիաների (ընդհանուր), 2018-2021 թթ.




Աղբյուրը՝ Դատական դեպարտամենտ:

**բ) Տեխնիկական սպասարկման ռազմավարություն և արձանագրություն**

**277.** Տեխնիկական սպասարկումն ու վերանորոգումը, որոնք ներկայումս կրում են ռեակտիվ բնույթ և հիմնված են հրատապության վրա, կարող են ավելի լավ պլանավորվել ԿՆԾ-ի առկայության պարագայում: ԿՆԾ-ն հնարավորություն կտա մշակելու տեխնիկական սպասարկման ռազմավարություն և կազմելու արձանագրություն: Ռազմավարությունը պետք է բովանդակի համապատասխան տեղեկատվություն դատական հաստատությունների սպասարկման և աշխատանքի վերաբերյալ, ներառյալ՝ հատուկ ուղեցույցներ և առաջարկություններ դատարանների շենքերում տարբեր սարքավորումների (սպասարկման տեսակ) պարբերական սպասարկման (հաճախականության) վերաբերյալ, ինչպիսիք են շանթարգելները, հրդեհային սարքերը, ջեռուցման կաթսաները, վերելակները և այլն: Յուրաքանչյուր դատարանի շենքի կանխարգելիչ միջոցառումների սպասարկման, վերանորոգման և վերակառուցման չափորոշիչների սահմանումը կսահմանափակի հետագա վատթարացումը և կապահովի առողջ և անվտանգ աշխատանքային միջավայր աշխատողների և օգտվողների համար, ինչպես նաև բյուջեի արդյունավետ օգտագործում տեխնիկական սպասարկման համար:

**278.** Արձանագրությունը պետք է ներառի շինանյութերի լիակատար ցանկ՝ հետագա վերանորոգման

**Գծապատկեր 47.** Պահանջված, հատկացված բյուջեները ըստ կատեգորիաների՝ փաստացի ծախսերի համեմատ, 2018-2021 թթ. (հազ. դրամ)



Աղբյուրը՝ Դատական դեպարտամենտ:

**և վերակառուցման արդյունավետ և ծախսարդյունավետ պլանավորման համար:** Նման ցանկը (նյութերի գույնապակը) կենսական նշանակություն ունի միջազգային չափանիշներին համապատասխան դատական ելթակառուցվածքների վերաբերյալ հստակ տեսլականը խթանելու համար և կբարձրացնի դատարանների շենքերի շինանյութերի հետ կապված դիզայնի և ճարտարապետական ընտրության միատեսակությունը:

**գ) Նախագծային չափանիշներ**

**279.** Հայաստանը դեռ չի սահմանել, չի կիրառում կամ չի վերահսկում դատարանների վերակառուցման և կառուցման նախագծային չափանիշները: Դատարանների շենքերի նախագծման չափանիշների մշակումն ու ներդրումը միջազգային լավագույն փորձն է՝ ապահովելու, որ բոլոր հետագա վերանորոգումները կամ դատարանների նոր կառուցումները համապատասխանեն չափանիշներին ու որակին, համապատասխանեն հասանելիության, ճկունության և կայունության պահանջներին՝ եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխան<sup>191</sup>: Դատարանների օգտատերերին, պետական պաշտոնյաներին, մասնավոր հատվածին, կառավարման տարբեր մակարդակներին և հանրությանն ուղղված հաղորդակցության և վերապատրաստման ծրագրերը կմեծացնեն չափանիշների ըմբռնումը և պատաս-

<sup>191</sup>Օրինակ՝ [https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment\\_data/file/790777/Court\\_and\\_Tribunal\\_Design\\_Guide\\_-\\_Public\\_v1.1\\_-\\_webOptimised.pdf](https://assets.publishing.service.gov.uk/government/uploads/system/uploads/attachment_data/file/790777/Court_and_Tribunal_Design_Guide_-_Public_v1.1_-_webOptimised.pdf).



խանատվություն կսերմանեն ընդհանուր նպատակներին հասնելու համար: Բարձրագույն դատական խորհրդի կողմից հաստատված նախագծային չափանիշները կարող են ներառել.

- Զինական սկզբունքների համատեքստում ենթակառուցվածքների համապարփակ ֆունկցիոնալ վերլուծություն: Օրինակ՝ դա կարող է ներառել դատարանի տարածքների և գործունեության տեսակների համար ընդունելի չափերը, հարդարման, էլեկտրականության և լուսավորության պահանջները, տարածքների հարևանությունը (այսինքն, թե որ սենյակները պետք է հարակից լինեն այլ սենյակներին կամ լինեն որոշակի մակարդակների վրա), յուրաքանչյուր տեսակի գրասենյակի/սենյակի չափերը՝ կա՛մ որպես ճշգրիտ չափսեր, կա՛մ որպես քառակուսի մետր մեկ աշխատակցի համար (բազմապատկած աշխատողների թվով սենյակի չափը որոշելու համար):
- Էլեկտրականության, լուսավորության, անվտանգության, պատերի և հատակի հարդարման, ջեռուցման և օդորակման, ՏՅՏ-ի, գտնվելու վայրի, ավտոկայանատեղիի և բնակեցման, կանաչապատման, դատարանի շենքի ճակատային մասի ընդհանուր ձևավորման և տեսքի, մուտքի և հաշմանդամություն ունեցող անձանց համար մուտք գործելու հնարավորության, արտաքին և ներքին ցուցանակների նորմատիվ պահանջների նախատեսում, որոնք տարբերվում են պետական այլ շենքերից կամ սովորական շինարարական կանոններից:
- Անվտանգության և ապահովության չափորոշիչների ինտեգրում, ներառյալ էլեկտրոնային և ՏՅՏ համակարգերը, համապատասխան տարածքները տարբեր շահագրգիռ կողմերի համար (ներառյալ կալանավորները), անձնակազմի և հանրության գործունեության գնահատման ծրագրերը և այլն: Մասնավորապես կալանավորների առնչությամբ ծրագրերը պետք է նախատեսեն տարիանման միջոցառումներ անձնակազմի սերտ հսկողության ներքո և ուղեկցությամբ, որը կարող է բացել անվտանգության դռներն ու դարպասները: Բացի այդ, պետք է սահմանել կալանքի տակ գտնվողներին անձնակազմի ուղեկցությամբ կալանավորների համար նախատեսված տարածքներից/ժամանակավոր մեկուսարանների խցերից տարիանման ուղիները, ընդ որում՝ յուրաքանչյուր ճանապարհ պետք է տանի դեպի առանձին անվտանգ գոտի:
- Բավարար և համապատասխան հանրային տարածքների՝ սպասարանների, համապատասխան ցուցիչների, տեղեկատու սեղանների, վերելակների, զուգարանների, փաստաթղթերին ծանոթանալու վայրերի և թերևս ճաշասենյակի ապահովում:

■ Դատարանի հարմարությունների հասանելիության բարելավում, ինչպիսիք են տեղեկատու սեղանները, վերելակները, հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված զուգարանները և այլն:

■ Տարբեր դատարանների նախագծման նախատիպերի մշակում, որոնք կարող են կիրառվել տարբեր վայրերում:

**280. Բոլոր դատարանների շենքերի ենթակառուցվածքները կշահեն ավելի մեծ ներառականության նկատառումների դեպքում (այսինքն՝ սահմանափակ տեսողություն, շարժունակություն և լսողություն ունեցող մարդիկ և այլ խոցելի խմբեր)՝ բոլորի համար մուտք գործելու հնարավորությունը երաշխավորելու համար:** Դատական շենքերում պետք է փորձել ստեղծել ներառական դիզայն՝ արդարադատության հասանելիություն ապահովելու համար, և դատական հաստատությունները պետք է բավարարեն բոլոր օգտվողների կարիքները՝ անկախ նրանց սեռից, ֆիզիկական և մտավոր ունակություններից, տարիքից, էթնիկ պատկանելությունից և սեռական կողմնորոշումից:

**281. Վերանայված նախագծային չափանիշները պետք է հաշվի առնեն կլիմայի փոփոխությունը:** Հայաստանում կա դատական ենթակառուցվածքների և սկզբունքների ավելի կայուն ձևավորման հնարավորություն: Օրինակ՝ եվրոպական չափանիշները սահմանում են դատարանների շենքերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության բարելավման վերաբերյալ առաջարկություններ. ջերմաստիճան և օդափոխություն, ջեռուցման ժամանակաչափ (թայմեր) համակարգեր, կանաչ լույսի աղբյուրներ, ջերմության վերականգնման համակարգեր և անձրևաջրերի վերականգնման համակարգեր բացօթյա տարածքների ոռոգման համար: Նմանապես, շենքերի շահագործման և սպասարկման հետ կապված ծախսերը կարող են կրճատվել նախագծման փուլում նյութերի և շինարարական համակարգերի մանրակրկիտ ընտրության միջոցով՝ կիրառելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են կյանքի ցիկլի արժեքի հաշվարկը, պասիվ դիզայնի առանձնահատկությունները՝ նվազեցնելու ջերմության բարձրացումն ու կորուստը, բնական լուսավորության և օդափոխության օգտագործումը, շրջակա միջավայրի վրա ազդեցության վերահսկման համար տեխնոլոգիաների կիրառումը և հնարավորության դեպքում վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը: Ներկայումս քիչ ուշադրության են արժանանում կայուն դատական ենթակառուցվածքի նախագծումը և հայեցակարգը: ԶԲ-ի կողմից ֆինանսավորվող երկու ծրագրերի իրականացման ընթացքում ԴԴ-ի՝ հաստատությունների կառավարման և շինարարության համար պատասխանատու մարմնի և դատարանների նախագահների

մի շարք հանդիպումներ են տեղի ունեցել՝ քննարկելու նախագծերի պատրաստման և կառուցման բնապահպանական խնդիրները: Սակայն ձեռնարկված բնապահպանական միջոցառումներն անբավարար են եղել և չեն համապատասխանում եվրոպական կամ միջազգային չափանիշներին: Հետագուտված դատարանի շենքերը չունեն անձրևաջրերի վերականգնման համակարգեր, ջերմության ավելացումն ու կորուստը նվազեցնելու համար պասիվ դիզայնի առանձնահատկություններ, շրջակա միջավայրի վերահսկողության տեխնոլոգիաներ կամ վերականգնվող էներգիայի համակարգեր: Էներգիայի բավարարության և կայունության մոնիթորինգի համար կարող են օգտագործվել էկոլոգիական կայունության հաշվիչը, շենքերի հետազոտական հաստատության բնապահպանական գնահատման մեթոդը (BREM) նախագծման փուլում և արտացոլվել տեխնիկատնտեսական հիմնավորումներում<sup>192</sup>:

**282. ՏՀՏ մեխանիզմները պետք է ինտեգրվեն վերանորոգված կամ նոր դատարանների շենքերում:** ՏՀՏ գործիքները կարող են բարելավել դատական ծառայությունների մատուցումը՝ բարձրացնելով արդյունավետությունն ու որակը: ՏՀՏ միջոցները, որոնք ավտոմատացնում են դատական գործընթացները, ձայնագրում են դատական նիստերը, բարելավում են ձայնը և ապահովում են հեռավար մասնակցությունը, դարձել են դատական համակարգի արդիականացման կարևոր գործիք: Ռեսուրսներով սահմանափակ միջավայրում առավել արդյունավետ լինելու համար նման ավտոմատացումը պետք է ի սկզբանե ընդգրկված լինի նոր շենքերի նախագծման մեջ: Նախագծային ուղեցույցը, որն արտացոլում է այս ոլորտը, կօգնի ճարտարապետներին և ճարտարագետներին հասկանալու, թե ինչպես պետք է նախագծվի որոշակի դատարանի շենքը դրանում ՏՀՏ-ն տեղադրելու համար:

ման կարևոր գործիք: Ռեսուրսներով սահմանափակ միջավայրում առավել արդյունավետ լինելու համար նման ավտոմատացումը պետք է ի սկզբանե ընդգրկված լինի նոր շենքերի նախագծման մեջ: Նախագծային ուղեցույցը, որն արտացոլում է այս ոլորտը, կօգնի ճարտարապետներին և ճարտարագետներին հասկանալու, թե ինչպես պետք է նախագծվի որոշակի դատարանի շենքը դրանում ՏՀՏ-ն տեղադրելու համար:

## Բ. ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**283. Գործող դատական ենթակառուցվածքի և դատական կառույցների արդիականացումը կօժանդակի դատական հատվածի բարելավմանը՝ օգուտ բերելով բոլոր նրանց, ովքեր աշխատում են դատարաններում կամ այցելում են դատարաններ:** Չնայած Հայաստանում մեկ բնակչին բաժին ընկնող դատարանների փոքր թվին՝ յուրաքանչյուր մարզում կան բավարար թվով դատարանների տարածքներ: Անհրաժեշտ է կենտրոնանալ հաստատության պլանավորման և ռազմավարական կառավարման բարելավման վրա գործառական պահանջներին և միջազգային չափանիշներին շենքերի համապատասխանությունն ապահովելու համար: Ստորև ներկայացված են առաջարկություններ դատական ոլորտի շահագրգիռ կողմերի համար:

Առաջարկություն 1	Ֆիզիկական ենթակառուցվածքների ռազմավարական կառավարման բարելավում:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>ԲԴԽ -ի և ԱՆ -ի միջև ձեռք բերել համաձայնություն շինարարության/վերանորոգման/վերակառուցման համար նախատեսված շենքերի վերաբերյալ:</li> <li>Ամրապնդել ԴԴ-ի և ԱՆ-ի ֆինանսատնտեսական և գնումների հարցերով զբաղվող վարչությունների կարողությունները:</li> <li>Ստեղծել ենթակառուցվածքի միասնական տվյալների բազա՝ հիմնված տարածքների ֆիզիկական ու գործառական գնահատման և աուդիտի վրա, տարածքների արդյունավետ պլանավորման համար հաշվի առնել դատական համակարգի գործառական և կազմակերպչական կարիքները:</li> <li>Կիրառել հաղորդակցման գործիքներ և անցկացնել թրեյնինգներ՝ իրականացվող վերլուծությունը տարածելու և ընդհանուր նպատակներին հասնելու հետաքրքրություն առաջացնելու համար՝ ներառելով մասնավոր հատվածին, կառավարման տարբեր մակարդակներին և հանրությանը:</li> </ul>
Առաջարկություն 2	Դատարանների վերանորոգման և կառուցման նախագծային չափանիշների ներդրում և վերահսկում:
Հնարավոր քայլեր	<ul style="list-style-type: none"> <li>Մշակել և ընդունել դատարանների վերակառուցման և կառուցման նախագծային ուղեցույցներ՝ ապահովելու կառուցվածքների չափանիշների և որակի համապատասխանությունն ու միատեսակությունը, ինչպես նաև դրանց հասանելիությունը, ճկունությունը և կայունությունը՝ եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխան:</li> <li>Մշակել նախատիպերի նմուշներ տարբեր դատարանների համար, որոնք կարող են վերարտադրվել տարբեր վայրերում:</li> </ul>

<sup>192</sup>Շենքերի գիտահետազոտական հաստատության բնապահպանական գնահատման մեթոդը շենքերի բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունության գնահատումն է և նպատակ ունի (ա) բարելավել մարդկանց բարեկեցությունը, որոնք աշխատում կամ օգտագործում են դրանք, (բ) նպաստել բնական ռեսուրսների պահպանմանը և (գ) ապահովել արդյունավետ ներդրում:

Առաջարկություն 3	<b>Կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ԿՆԾ-ի մշակում:</b>
<b>Հնարավոր գործողություններ</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Մշակել հաստատությունների կարիքների նույնականացման և վերլուծության ընթացակարգ:</li> <li>■ Սահմանել ֆինանսավորման կարիքները՝ օգտագործելով համապատասխան առաջնահերթության չափանիշները:</li> <li>■ Հեռանկարային զարգացում՝ հաշվի առնելով արդիականացված դատական համակարգի և հարակից ծառայությունների ֆունկցիոնալ կարիքները:</li> <li>■ Պարբերաբար վերահսկել և գնահատել դատական ծառայությունների պահանջարկը (ծանրաբեռնվածություն, բնակչություն, հեռավորություն և այլն)՝ առաջնահերթությունների մասին տեղեկացնելու և դրանք փոխելու համար:</li> <li>■ Պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել շենքերից օգտվողների հետ:</li> </ul>
Առաջարկություն 4	<b>Ռազմավարության և տեխնիկական սպասարկման արձանագրության պատրաստում և կիրառում:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Մշակել ռազմավարություն, որը կբովանդակի տեղեկատվություն դատարանների շենքերի շահագործման և սպասարկման կարգի և հաճախականության վերաբերյալ:</li> <li>■ Կազմել յուրաքանչյուր դատարանի շենքի կանխարգելիչ սպասարկման, վերանորոգման և վերակառուցման վերաբերյալ արձանագրություն:</li> <li>■ Անհապաղ աշխատանքներ սկսել ռազմավարության մեջ նախատեսված և արձանագրությունում նշված խնդիրների լուծման ուղղությամբ:</li> </ul>
Առաջարկություն 5	<b>Արդարադատության ֆիզիկական հասանելիության բարելավում:</b>
<b>Հնարավոր քայլեր</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել բարելավված հարմարություններ, այդ թվում նաև հատուկ հաշմանդամների համար կայանատեղիներ, վերելակներ, թեքահարթակներ, շարժասանդուղքներ, զուգարաններ, դատարանների դահլիճներ՝ առանց խոչընդոտների մուտքերով, դեպի դուրս բացվող դռներով և այլն:</li> <li>■ Դիտարկել և գնահատել դատական ծառայությունների պահանջարկը և անհրաժեշտության դեպքում թարմացնել կապիտալ ներդրումների ծրագրի առաջնահերթությունները:</li> </ul>
Առաջարկություն 6	<b>Ավելի կայուն և կլիմայի համար բարենպաստ դատական ենթակառուցվածքային նախագծերի և սկզբունքների կիրառում</b>
<b>Հնարավոր քայլ</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ձեռնարկել միջոցներ դատարանի շենքերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության բարելավման ուղղությամբ. ջերմաստիճան և օդափոխություն, ջեռուցման ժամանակաչափ (թայմեր) համակարգեր, կանաչ լույսի աղբյուրներ, ջերմության վերականգնման համակարգեր և անձրևաջրերի վերականգնման համակարգեր բացթյա տարածքների ոռոգման համար:</li> </ul>
Առաջարկություն 7	<b>Նորարարության խրախուսում և ՏՀՏ գործիքների ինտեգրում դատարանների շենքերում և շինություններում՝ բարելավելու մատուցվող ծառայությունների որակը:</b>
<b>Հնարավոր քայլ</b>	<ul style="list-style-type: none"> <li>■ Ընդգրկել ՏՀՏ գործիքները և գործընթացների ավտոմատացումը (օրինակ՝ հանդիպումների ձայնագրում, ձայնի ուժեղացում և հեռավար մասնակցություն) նոր/վերանորոգվող շենքերի նախագծման մեջ:</li> </ul>



# IX. ԵԳՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**284.** Հայաստանն առաջընթաց է գրանցել արդարադատության համակարգում եվրոպական չափանիշների հասնելու ուղղությամբ: Ինչպես արձանագրել են բոլոր շահագրգիռ կողմերը, վերջին տարիների խոշոր բարեփոխումներն ազդեցություն են թողել արդարադատության ոլորտի վրա, նաև ներդրվել է շատ ավելի հստակ ռազմավարական ուղղվածություն: Այնուամենայնիվ Հայաստանի դատական համակարգը դեռևս իր գործառնությունների ապահովման ռեսուրսների պակաս ունի՝ համեմատած Եվրոպայի խորհրդի այլ երկրների հետ: Դատարանները դանդաղ են լուծում դատական վեճերը՝ խախտելով արդարադատության իրականացման ողջամիտ ժամկետները: Ընդհանուր առմամբ, ներկայումս անհրաժեշտ է այնպես վերանայել ռազմավարությունը, որ այն հանգեցնի տեղերում շոշափելի փոփոխությունների: Դա կպահանջի շարունակական քաղաքական հանձնառություն՝ ապահովելու անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը:

**285.** Հանդիսանալով դատաիրավական բարեփոխումների երկարամյա գործընկեր՝ Համաշխարհային բանկը, Հայաստանում ԵՄ պատվիրակության աջակցությամբ, ոլորտի շահառուների համար իրականացրել է ոլորտի խորքային գնահատում: «Հայացք ապագային» զեկույցը բացահայտում է հիմնական խնդիրները և առաջարկում կոնկրետ գործողություններ՝ ուղղված այդ խնդիրների լուծմանը հետևյալ ոլորտներում. կառավարում և ղեկավարում, քաղաքացիներին դատական ծառայությունների մատուցում, կատարողականի գնահատում և կառավարում, բյուջետավորում, ֆինանսների և ծախսերի կառավարում, մարդկային ռեսուրսներ, ՏՀՏ ռեսուրսներ և ֆիզիկական ենթակառուցվածքներ:

## Ա. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՂԵԿՎԱՐՈՒՄ

**286.** Հայաստանում իրականացվել են նշանակալի դատական բարեփոխումներ, սակայն անկախության,

արդյունավետության և որակի առումներով դեռևս կան որոշ հիմնախնդիրներ<sup>193</sup>: Հայաստանի Հանրապետության 2019-2023 և 2022-2026 թթ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությունների ընդունումը ապահովում է լավ ռազմավարական շրջանակ: Այնուամենայնիվ, 2019-2023 թվականների ռազմավարությունը լիովին չի հասել իր սահմանած նպատակին, դեռ պարզ չէ, թե արդյոք 2022-2026 թվականների ռազմավարությունն ավելի արդյունավետ կլինի: Ընդհանուր անարդյունավետ կառավարումը և ինստիտուցիոնալ կառուցվածքը, որը չի նպաստում դատական համակարգի լիարժեք անկախությանը և անաչառությանը, ինչպես նաև դատարանների գերծանրաբեռնվածությունը նվազեցնում են արդարադատության արդյունավետությունը և ազդում դատական որոշումների որակի վրա:

**287.** Անհրաժեշտ է հզորացնել իրավական դաշտը եվրոպական չափանիշներին և Վենետիկի հանձնաժողովին համահունչ՝ դատական հաստատությունների ամբողջականությունն ու թափանցիկությունն ապահովելու համար: Կարելի է բարելավել ԲԴԽ-ի կազմը՝ ապահովելու իշխանությունների հավասարակշռությունը և տարանջատումը, հատկապես ԲԴԽ-ի դատավոր չհանդիսացող անդամների ընտրության գործընթացում՝ հետևելով Վենետիկի հանձնաժողովին<sup>194</sup>: Կարգապահական կանոնները և ընթացակարգերը նույնպես պետք է ամրապնդել՝ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու և սրա՝ դատավորների շահերի պաշտպանությանը ծառայելու մասին ընկալումները վերացնելու նպատակով<sup>195</sup>: Անհրաժեշտ է ստեղծել ակտիվ և գործող համակարգող խորհուրդ՝ որպես բազմաշահառու խորհրդատվական մարմին, որը կվերահսկի ռազմավարության իրականացումը, կնպաստի կարողությունների, հմտությունների և ֆինանսավորման բարելավմանը:

<sup>193</sup>Տե՛ս «Հայաստանում արդարադատության համակարգի ամրապնդման համար» Հայաստանի Հանրապետության 2017 թվականի տարեկան գործողությունների ծրագրի մասին» հանձնաժողովի որոշման 2-րդ հավելվածը (Գործողությունների տարեկան ծրագիր 2017թ.) [https://ec.europa.eu/neighbourhoodenlargement/sites/default/files/eni\\_2017\\_040664\\_consolidation\\_of\\_the\\_justice\\_system.pdf](https://ec.europa.eu/neighbourhoodenlargement/sites/default/files/eni_2017_040664_consolidation_of_the_justice_system.pdf)

<sup>194</sup>Վենետիկի հանձնաժողովը դատավորների նշանակումների վերաբերյալ CDL-AD(2007)028 զեկույցում, որը Վենետիկի հանձնաժողովն ընդունել է իր 70-րդ լիազուգումար կիստում (Վենետիկ, 16-17 մարտի 2007թ.) 30-րդ կետում դիրքորոշում է ընդունել, որ «դատական խորհուրդները ներառում են նաև անդամներ, որոնք չեն մտնում դատական իշխանության մեջ և ներկայացնում են իշխանության այլ ճյուղեր կամ ակադեմիական և կամ մասնագիտական հատվածներ»:

<sup>195</sup>Ըստ Վենետիկի հանձնաժողովի՝ Էթիկայի և կարգապահական հանձնաժողովի նման կազմը դատավորների կորպորատիվ շահերին ծառայելու վտանգ է ներկայացնում: Դա կարող է տպավորություն ստեղծել, որ կարգապահական պատասխանատվության հարցը դատական կորպորացիայի շրջանակներում որոշում են այն մարմինները, որոնք չունեն արտաքին տարրեր և կապեր չունեն ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կամ ավելի լայն իրավական համայնքի հետ»: CDL-AD(2016)013, կարծիք Դազախստանի Հանրապետության դատական Էթիկայի օրենսգրքի նախագծի վերաբերյալ, § 32: Տե՛ս նաև CDL-AD(2015)045, միջանկյալ կարծիք Ալբանիայի դատական իշխանության սահմանադրական փոփոխությունների նախագծի վերաբերյալ, § 76:

## Բ. ՔԱՂԱՔԱՅԻՆԵՐԻՆ ԴԱՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՏՈՒՑՈՒՄ: ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

**288. Հայաստանում արդարադատության համակարգն ընդհանուր առմամբ ընկալվում է որպես հասանելի, սակայն բարձր դատական ծախսերը հաճախ արդարադատության հասանելիության խոչընդոտ են դառնում:** Զաղաքացիների և բիզնես համայնքի ներկայացուցիչների մեծ մասը կարծում է, որ Հայաստանի արդարադատության համակարգն ընդհանուր առմամբ հասանելի է ֆինանսական, ֆիզիկական և տեղեկատվական մատչելիության տեսանկյունից: Այնուամենայնիվ Հայաստանում դատական ծախսերը և փաստաբանական վճարներն ավելի բարձր են, քան տարածաշրջանի այլ երկրներում: Առաջարկվում է վերանայել ընթացիկ դատական վճարները, մասնավորապես որ 2021 թվականի փոփոխությունները զգալիորեն բարձրացրել են դատարան դիմելու համար վճարման ենթակա պետական տուրքերի չափերը:

**289. Անվճար իրավաբանական օգնության վերաբերյալ իրազեկման մակարդակը սահմանափակ է:** Թեև իրավաբանական օգնության հասանելիությունը երաշխավորված է Սահմանադրությամբ և ՀՊԳ-ի կողմից տրամադրվող անվճար իրավաբանական օգնությունը հասանելի է որոշակի սոցիալապես խոցելի խմբերին, այնուամենայնիվ այդ հնարավորության վերաբերյալ իրազեկման մակարդակը բավականին ցածր է, հարցվածների մեծամասնությունը տեղյակ չէ անվճար իրավաբանական օգնության առկայությանը: Հանրային պաշտպանների ծանրաբեռնվածությունն ավելացել է, սակայն նրանց բյուջեն չի մեծացել և բավականին ցածր է այլ երկրների համեմատ:

**290. Վեճերի այլընտրանքային լուծման (ՎԱԼ) մեխանիզմները կարելի է օգտագործել առավել արդյունավետ:** ՎԱԼ մեխանիզմների կիրառման ընդլայնումը առաջնահերթություն է կառավարության 2021-2026 թթ. գործողությունների ծրագրում և 2022-2026 թթ. դատական և իրավական բարեփոխումների ռազմավարության նախագծում: Կառավարության նպատակն է բարելավել հաշտարարության ինստիտուտը և ստեղծել ուժեղ արբիտրաժային կենտրոն, որը կունենա ազգային և միջազգային մանդատ: Այնուամենայնիվ իրազեկության ցածր մակարդակը և վստահության պակասը Հայաստանում վեճերի այլընտրանքային լուծման մեխանիզմների զարգացման հիմնական մարտահրավերներից են:

## Գ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶՍՓՈՒՄ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

**291. Դատարանների ծանրաբեռնվածությունը, պայմանավորված գործերի հսկայական քանակությամբ, զգալիորեն աճել է վերջին տարիներին:** Առաջին

ատյանի դատարաններում մուտքագրված գործերի թիվը 2017-2021 թթ. աճել է 45 տոկոսով, ինչը դեռևս ցածր է ԱՎԵՅ-ի միջինից և ԵՄ անդամ որոշ երկրների միջինից, օրինակ՝ Խորվաթիայի և Եստոնիայի միջինից, սակայն գրեթե 2 անգամ գերազանցում է Կրաստանի դատարաններ մուտքագրվող գործերը: Պահանջարկի աճին առավել էապես նպաստել են պայմանագրային/դրամական պարտավորությունների վերաբերյալ քաղաքացիական գործերը և վճարման կարգադրությունները: Չնայած շատ քիչ դատարանների է հաջողվում հասնել գործերի լուծման ողջամիտ մակարդակի, չկան դատարաններում առկա գործերի ժամկետների/տարիքի վերահսկում և կուտակված գործերի լուծման/և վազեցման ծրագիր:

## Դ. ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԾՄԻՍԵՐ

**292. ԲԴԽ-ն սահմանափակ ազդեցություն ունի բյուջեի վերաբերյալ վերջնական որոշում ընդունելու հարցում, իսկ դատարաններում և ԴԴ-ում հմտությունների պակասը խանգարում է բյուջեի պատրաստմանը և ընդունմանը:** Հայաստանը ցածր տեղ է զբաղեցնում ինչպես ՀՆԱ-ի հաշվով արդարադատության ծախսերով, այնպես էլ արդարադատության՝ մեկ շնչին բաժին ընկնող իրական ծախսերով: Թեև արդարադատության ոլորտն ընդհանուր առմամբ փոքր աճ է գրանցել ինչպես ՀՆԱ-ի տոկոսով, այնպես էլ ընդհանուր ծախսերում, 2019-2021 թթ. ԲԴԽ-ի ներքո գտնվող դատարաններին հատկացված բյուջեն ընդհանուր անկում է գրանցել: Աշխատավարձի մասնաբաժինը դուրս է մղում մնացած բոլոր գործառնությունները՝ քիչ տեղ թողնելով նորարարությունների և ներդրումների համար: Հայաստանի դատական համակարգը քայլեր է ձեռնարկում և առաջընթաց է գրանցում ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումն ուժեղացնելու ուղղությամբ: Բյուջեի հետագա պլանավորման և կատարման բարելավման և դատական ծախսերի ընդլայնման համար շատ կարևոր են օրենսդրական դաշտի հետագա կատարելագործումը, համակարգման և պլանավորման մեխանիզմների ամրապնդումը և ԲԴԽ-ում ու ԴԴ-ում բյուջետային հմտությունների բարելավումը:

## Ե. ՍԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

**293. Համակարգի համեմատաբար պարզ փոփոխությունները կարող են նպաստել ծանրաբեռնվածության կրճատմանը:** Դատական համակարգում աշխատավարձերը ամենաբարձրներից են պետական հատվածում և բավական են որակյալ դատավորներին ներգրավելու և պահելու համար: Այնուամենայնիվ դատավորների և դատավորների օգնականների հաստիքների մակարդակը ցածր է եվրոպական երկրների մեծ մասի մակարդակից: Ընթացիկ ծանրաբեռն-

վածությունը կարող է կրճատվել՝ պարզեցված ընթացակարգից արագացված ընթացակարգի անցնելու և դատավորներին գործերի մակագրման համակարգի բարելավման միջոցով: Առաջարկվում է բարելավել աշխատանքի ընդունման/նշանակման գործընթացը, ինչպես նաև դիտարկել գնահատման և նշանակման հանձնաժողովներում դատավորների և ՅԿ-ների ներկայացուցիչների ներգրավումը ավելացնելու հնարավորությունը: Ինչ վերաբերում է կարգապահական ընթացակարգերին, այն հանգամանքը, որ կարգապահական վարույթը կարող է հարուցվել ԱՆ-ի կողմից, ճանաչվել է որպես արդյունավետությունը խաթարող պոտենցիալ գործոն և ի վերջո ենթակա է վերանայման:

## 9. ՏՃՏ ՌԵՍՈՐՍՆԵՐ

**294. Դատարանների և նրանց որոշումների մասին տեղեկատվությունն աստիճանաբար առավել հասանելի է դառնում առցանց, բայց դեռևս ոչ համապարփակ և հեշտ հասանելի ձևաչափով:** Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքը ստեղծվել է 2016 թվականին՝ բարելավելու օրենքների հասանելիությունը և օրինաստեղծ գործընթացը, սակայն ներառում է միայն կառավարության պատրաստած և առաջարկած օրենքների նախագծերը: Դատական գործերին վերաբերող կոնկրետ տեղեկատվություն ստանալու համար ստեղծված կայքերը թերի են:

**295. Դատարաններում առկա ՏՃՏ սարքավորումները ընդհանուր առմամբ բարվոք վիճակում են, սակայն առկա համակարգերը և տվյալները բավականին խոցելի են դատական համակարգում ՏՃՏ գործիքների**

**օգտագործման թերի ուղեցույցի պատճառով:** Յոթ տարբեր համակարգեր են երաշխավորում դատական համակարգում հիմնական գործընթացները, որոնք ապահովում են տասնութ սերվերային սենյակներում տեղակայված սերվերներ: Գոյություն ունեցող համակարգերն ու ծրագրերը պատշաճ կերպով չեն պահպանվում, ներդրված և փորձարկված չեն տվյալների պահպանման, կրկնօրինակման և վերականգնման համակարգերը:

## Է. ՏԻԳԻԿԱԿԱՆ ԵՆԹԱՍՈՈՒՅՎԱԾՔՆԵՐ

**296. Վերջին տարիներին Հայաստանի դատարանների շենքերի վերականգնման և պահպանման համար հատկացվել են սահմանափակ միջոցներ, ինչի հետևանքով դատարանների շենքերը ներկայումս պահանջում են զգալի ներդրումներ՝ դրանք հասանելի և լիարժեք գործունակ դարձնելու համար:** Դատարանների շենքերի մեծ մասը հիմնարար վերակառուցման և վերանորոգման կարիք ունի: Այդ աշխատանքի պլանավորման և իրականացման համար պետք է կիրառել ավելի ռազմավարական մոտեցում, ներառյալ նախագծային ստանդարտների օգտագործումը, որոնք հաշվի են առնում հասանելիությունը, կայունությունը և ՏՃՏ-ի ներառումը, ինչպես նաև պետք է ունենալ շենքերի շարունակական պահպանման հստակ ռազմավարություն և համապատասխան կարգավորումներ:

Ստորև ներկայացված առաջարկություններում ներկայացված են այն գործողությունները, որոնք շահագրգիռ կողմերը պետք է հաշվի առնեն արդարադատության ոլորտի բարեփոխումների իրականացման ընթացքում:

# X. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿ

Կարճաժամկետ		Պատասխանատու մարմին/կառույց	Անհրաժեշտ ժամկետ <sup>196</sup> և բյուջե <sup>197</sup>	Կապ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 ռազմավարության (ԴԻԲՈ) հետ
<b>Փոքր</b>				
Ա.1	ԲԴԽ-ում և ԴԴ-ում հզորացնել վարչական և կառավարման կառույցները՝ աջակցելու 2022-2026 թթ. ռազմավարության իրականացմանը (նշված է մարտահրավեր1-ում. իրականացման ռազմավարություն):			
Ա.1.1	Գնահատել ԲԴԽ-ում և ԴԴ-ում ներկա վարչական և կառավարման կառուցվածքի արդյունավետությունը:	ԲԴԽ	Կարճաժամկետ Փոքր	Հստակ նշված չէ ԴԻԲՈ-ում, սակայն առկա է ԴԻԲՈ-ի ընդհանուր նպատակը՝ բարձրացնել արդարադատության արդյունավետությունը:
Ա.1.2	Գնահատման հիման վրա առաջարկել ԴԴ-ի գործունեության նոր համակարգ՝ առաջադրանքների և պահանջվող հմտությունների մանրամասն նկարագրությամբ:	ԲԴԽ, Զաղաքացիական ծառայության խորհուրդ	Միջին ժամկետով Փոքր	
Ա.1.3	Դատական համակարգում ստեղծել մշտական ռազմավարական և արագ պլանավորման գործառնություն՝ տվյալների հավաքման ու վերլուծության, ինչպես նաև գործընթացի բարելավումներ պլանավորելու համար՝ համաձայն ԵԴԽ-ի չափանիշի, ըստ որի՝ տվյալների հավաքումն օգտագործվում է արդարադատությունն ավելի լայն համատեքստում գնահատելու համար և կատարվում է դատական իշխանության անկախ հաստատությունում:	ԲԴԽ, ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	
Ա.1.4	Պատշաճ կերպով համալրել ԴԴ-ի՝ դատարանների գործունեության բոլոր ուղղությունների վերաբերյալ տվյալների հավաքման և վերլուծության գործառնությունը	ԲԴԽ, ԴԴ	Միջին ժամկետով Միջին	
Ա.1.5	Մշակել կատարողականի շրջանակ/պարզեցված տեղեկատվական վահանակ՝ կատարողականի հիմնական ցուցիչներով կատարողականությունը մշտադիտարկելու համար, որոնք, ամենայն հավանականությամբ, կհանգեցնեն կատարողականի բարելավմանը:	ԲԴԽ, ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	
Ա.1.6	Սահմանել բարեփոխումների ավելի փոքր փաթեթ՝ դատարանների քաղաքացիական տրոն աշխատանքն ընդլայնելու և կարճաժամկետ հեռանկարում տեղերում շոշափելի արդյունքների հասնելու համար: Սահմանել բարեփոխումների այս ենթախմբի համար չափելի նպատակները և վերահսկել ու փաստաթղթավորել արդյունքները՝ կապված հատկապես արդյունավետության և օգտագործողների փորձի հետ:	ԲԴԽ, ԱՆ	Կարճաժամկետ Միջին	

<sup>196</sup>Կարճաժամկետը վերաբերում է 12 ամսվա ընթացքում իրականացվող փոփոխություններին. միջին ժամկետը՝ 1-3 տարի, երկարաժամկետը՝ 3-5 տարի:  
<sup>197</sup>Թեև ծախսերի ճշգրիտ հաշվարկը դուրս էր այս վերլուծության շրջանակներից, առանձին առաջարկությունների բյուջեի մոտավոր հաշվարկը գնահատվեց որպես փոքր / միջին / մեծ:

Ա.1.7	Ներդնել ԲԴԽ-ի և դատավորների համագործակցության մեխանիզմներ՝ ԲԴԽ-ին դատարանների մակարդակում առկա մարտահրավերների մասին տեղեկացնելու և լուծումներ գտնելու համար:	ԲԴԽ, ԴԴ, Դատարաններ	Հրատապ Փոքր	
Ա.1.8	Ստեղծել մշտադիտարկման խորհուրդ և համապատասխան անձնակազմով քարտուղարություն:	ԲԴԽ, ԱՆ	Միջնա-ժամկետ, Փոքր	
Ա.2	<b>Բարելավել քաղաքականության մշակումը և բարեփոխումների մշտադիտարկումը (Նշված է մարտահրավեր 1-ում. իրականացման ռազմավարություն):</b>			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը:</b>
Ա.2.1	Իրականացնել յուրաքանչյուր նախորդ բարեփոխման ազդեցության գնահատում մինչև որևէ նոր բարեփոխում կատարելը՝ ենթադրությունները ճշտելու համար:	ԱՆ	Կարճա-ժամկետ Միջին	
Ա.2.2	Ներդնել վաղ նախագուշացման մեխանիզմ՝ շահագրգիռ կողմերին տեղեկացնելու բարեփոխումների ծրագրերի ուշացումների մասին:	ԱՆ	Կարճաժամկետ, շարունակական	
Ա.3	<b>Բարձրացնել վստահությունն ու հավատը՝ խթանելով հասարակության և շահագրգիռ կողմերի տեղեկացվածությունը բարեփոխումների ու դրանց արդյունքների վերաբերյալ (Նշված է մարտահրավեր 1-ում. իրականացման ռազմավարություն):</b>			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը:</b>
Ա.3.1	Դատական համակարգում անցկացնել տեղեկատվական արշավներ՝ ապահովելու բոլոր դատավորների և դատական անձնակազմի ընկալումն ու ակնկալիքները բարեփոխումներից:	ԱՆ, ԲԴԽ	Կարճաժամկետ, շարունակական Միջին	
Ա.3.2	Կազմակերպել հանրային իրազեկման արշավներ ակնկալիքները կառավարելու համար՝ մեկնաբանելով ընթացիկ և նախատեսվող բարեփոխումները, ներառյալ սպասվող արդյունքները:	ԱՆ, ԲԴԽ	Կարճաժամկետ, շարունակական Միջին	
Ա.3.3	Օգտագործել մի շարք (նվազ ծախսային) մեթոդներ նման տեղեկատվությունը տարածելու համար, ներառյալ առցանց տեղեկատվությունը, պաստառները և դատարաններում տրամադրվող նյութերը:	ԱՆ, ԲԴԽ	Կարճաժամկետ, շարունակական Փոքր	
Ա.3.4	Տարեկան հաշվետվություններում գետեղել համակարգի տվյալների ներբեռնվող աղյուսակներ՝ վերլուծաբաններին և հետազոտողներին օգտակար լինելու համար: Վարել էլեկտրոնային փոստերի ցուցակներ՝ առաջընթացի առավել հաճախակի թարմացումների մասին ժամանակին տեղեկացնելու համար:	ԱՆ, ԲԴԽ	Կարճաժամկետ, շարունակական Փոքր	
Ա.4	<b>Խթանել, Վենետիկի հանձնաժողովի կարծիքին համահունչ, ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների ընտրության գործընթացի բարելավությունը և թափանցիկությունը (Նշված է մարտահրավեր 2-ում. դատական համակարգը ղեկավարող հաստատությունների հզորացում):</b>			<b>Ներառված է նաև ԴԻԲՈ-ի մեջ, Վենետիկի հանձնաժողովը ԱՆ-ի խնդրանքով այս հարցի վերաբերյալ կարծիք է հայտնել:</b>
Ա.4.1	Փոփոխել առաջադրման գործընթացը՝ ակադեմիական և իրավական մասնագիտական շրջանակների ներգրավվածությունը ապահովելու համար:	ԱՆ, ԱԺ	Կարճա-ժամկետ Փոքր	



Ա.4.2	Փոփոխել Դատական օրենսգիրքը՝ ապահովելու ԱԺ-ի կողմից թափանցիկ և արժանիքների վրա հիմնված ընթացակարգով ԲԴԽ-ի ոչ դատավոր անդամների նշանակումը:	ԱԺ	Կարճա-ժամկետ Փոքր	
Ա.5	<b>Ուժեղացնել դատական համակարգի կարգապահական կանոններն ու ընթացակարգը:</b> <i>(նշված է մարտահրավեր 2-ում. դատական համակարգը ղեկավարող հաստատությունների հզորացում):</i>			Տե՛ս ԴԻԲՈ-ի «Դատավորների մասնագիտացման և ենթամասնագիտացման ապահովման և նրանց կարողությունների ու բարեվարքության մեխանիզմների կատարելագործման մասին» ընդհանուր ռազմավարական ուղղության «Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամների հարաբերակցության վերանայումը» ռազմավարական ուղղությունը:
Ա.5.1	Կարգապահական մարմինների կառուցվածքը, ինչպիսին է ԷԿՀ-ն, համապատասխանեցնել Վենետիկի հանձնաժողովի չափանիշներին (ներկայիս կազմը դատավորների նեղ կորպորատիվ շահերը սպասարկելու վտանգ է ստեղծում):	ԱՆ, ԱԺ	Միջին ժամկետով Փոքր	
Ա.5.2	Վերջնարդյունքում նվազեցնել ԱՆ-ի դերը կարգապահական վարույթ հարուցելու գործում (համաձայն Վենետիկի հանձնաժողովի կարծիքին):	ԱՆ, ԱԺ	Միջին ժամկետով Փոքր	
Ա.6	<b>Ընդունել ռեսուրսների կառավարման և գործառնական պլանավորման գործառնությունների ռազմավարական մոտեցում</b> <i>(նշված է մարտահրավեր 2-ում. դատական համակարգը ղեկավարող հաստատությունների հզորացում):</i>			
Ա.6.1	Ընդունել և իրականացնել մարդկային ռեսուրսների ռազմավարություն, որը կներառի խիստ և թափանցիկ մեթոդաբանություն կենտրոնական մակարդակում՝ դատավորների և անձնակազմի անհրաժեշտ թիվը որոշելու համար <i>(ինչպես մանրամասն նկարագրված է մարդկային ռեսուրսների կառավարման վերաբերյալ 6-րդ գլխում):</i>	ԲԴԽ, ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	Տե՛ս ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը:
Ա.6.2	Բարելավել ՏՀՏ կառավարումը՝ ապահովելու ՏՀՏ բարեփոխումների տնօրինումն ու կայունությունը <i>(ինչպես մանրամասն նկարագրված է ՏՀՏ ռեսուրսների վերաբերյալ 7-րդ գլխում):</i>	ԱՆ,ԲԴԽ, ԴԴ	Կարճա-ժամկետ Փոքր	
Ա.6.3	Ընդունել ենթակառուցվածքների ռազմավարություն՝ ապահովելու պատշաճ պահպանում և առաջնահերթ կապիտալ ներդրումներ <i>(ինչպես մանրամասն նկարագրված է ենթակառուցվածքների մասին 8-րդ գլխում):</i>	ԱՆ,ԲԴԽ, ԴԴ	Կարճա-ժամկետ Փոքր	
Ա.6.4	Ուժեղացնել բյուջեի կազմման գործընթացը՝ համոզվելու համար, որ բյուջեի առաջարկը պատշաճ կերպով հիմնավորված է ԲԴԽ-ի կողմից և պատշաճ կերպով վերանայվում է ֆինանսների նախարարության կողմից <i>(ինչպես մանրամասն նկարագրված է բյուջետավորման, ֆինանսական կառավարման և ծախսերի մասին 5-րդ գլխում):</i>	ԲԴԽ, ԱՆ, ՖՆ.Նախ.	Կարճա-ժամկետ Փոքր	



**Բարեփոխման ոլորտ Բ: Դատական ծառայությունների տրամադրումը քաղաքացիներին: Արդարադատության հասանելիություն**

<b>Բ.1</b>	<b>Վերանայել ընթացիկ դատական վճարները՝ մատչելիությունն ապահովելու համար (նշված է մարտահրավեր 1-ում. ֆինանսական և ֆիզիկական հասանելիություն):</b>			
Բ.1.1	Նախաձեռնել ընթացիկ դատական վճարների խոր վերլուծություն և վերլուծության արդյունքների հիման վրա փոփոխել «Պետական տուրքի մասին» օրենքը՝ ապահովելու դատական վճարների մատչելիությունը: Տարածաշրջանային գործընկերները և նրանց դատական վճարների համակարգը կարող են որպես ուսումնասիրության մոդելներ ծառայել:	ԲԴԽ	Կարծաժամկետ Միջին	<b>Հստակ նշված չէ ԴԻԲՆ-ում, խորհուրդ է տրվում ներառել «Անհատույց իրավաբանական օգնության տրամադրման մեխանիզմների բարելավում» ընդհանուր ռազմավարական ուղղության մեջ:</b>
Բ.1.2	Ներդնել դատական տուրքերից ազատելու ծրագրի մշտադիտարկման համակարգ: Մշտադիտարկման այս համակարգի միջոցով հավաքված տեղեկատվությունը և տվյալները պետք է վերանայվեն՝ որոշելու ծրագրի արդյունավետությունը և հնարավոր ճշգրտումները:	ԲԴԽ	Կարծաժամկետ Փոքր	
Բ.1.3	Ներկայացնել և հանրության համար հեշտ ու ազատ հասանելի դարձնել առցանց վճարների հաշվիչը: Նման գործիքը, թեև պարզ է և որևէ հավելյալ տեղեկատվություն չի պահանջում, բացի նրանից, ինչև արդեն իսկ առկա է դատական վճարների որոշման համար, կարող է մեծապես նպաստել դատական ընթացակարգերի թափանցիկության բարձրացմանը:	ԲԴԽ	Հրատապ Փոքր	
<b>Բ.2</b>	<b>Վերանայել Վճռաբեկ դատարան բողոքների ընդունման ներկայումս գործող չափանիշները (նշված է մարտահրավեր 1-ում. ֆինանսական և ֆիզիկական հասանելիություն):</b>			<b>Հստակ նշված չէ ԴԻԲՆ-ում, հասանելիությունը, թափանցիկությունը և իրավաբանական մշակույթը հզորացնելու նպատակով խորհուրդ է տրվում ներառել «Օրենսդրական բարեփոխումներ» ռազմավարական ուղղության մեջ:</b>
Բ.2.1	Վերանայել Վճռաբեկ դատարան բողոքների ընդունման չափանիշները և տեղեկություններ հավաքել այն մասին, թե դիմողները որ չափանիշներին չեն բավարարում:	ԱՆ, ԱԺ	Կարծաժամկետ Փոքր	
Բ.2.2	Որոշել մերժման ազդեցությունը անհատական գործերի և ավելի լայն առումով իրավական մշակույթի վրա՝ համեմատած համապատասխան գործերով Վճռաբեկ դատարանի սահմանափակ հասանելիության անհրաժեշտության հետ: Ազդեցության այս ուսումնասիրության հիման վրա կարելի է վերանայել և փոփոխել պահանջների և բողոքների ներկայացման օրենսդրական պահանջները՝ խոչընդոտները վերացնելու համար:	ԲԴԽ	Միջին ժամկետով Միջին	
<b>Բ.3</b>	<b>Ընդլայնել դատական ծառայությունների, այդ թվում օրենքների և դատարանների վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը (նշված է մարտահրավեր 2-ում. տեղեկատվության մատչելիություն):</b>			<b>Տե՛ս ԴԻԲՆ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը:</b>

Բ.3.1	Ներկայացնել գործնական ուղեցույցներ և կարևոր կանոնների ու կանոնակարգերի հանրամատչելի բացատրություններ՝ քաղաքացիների և ձեռնարկությունների շրջանում դատական ծառայությունների վերաբերյալ իրազեկությունն ու ըմբռնումը բարձրացնելու համար:	Վճռաբեկ դատարան, ԲԴԽ	Կարճա-ժամկետ Միջին	
Բ.3.2	Նոր օրենսդրություն մշակելիս/հրապարակելիս հետևել փոփոխություններին և առկա օրենսդրության խաչաձև հղումներին՝ օրենսդրական գործընթացում թափանցիկությունը բարձրացնելու և ոլորտներում փոխկապակցվածություն ապահովելու համար:	ԱԺ	Կարճա-ժամկետ Միջին	
Բ.3.3	Շարունակել կատարելագործել օգտատերերին միտված վեբկայքերը՝ տրամադրելով ընդհանուր տեղեկատվություն, հրապարակված դատական որոշումներ (ներառյալ որոնելի տվյալների բազան) և տեղեկատվություն առանձին գործերի վերաբերյալ:	ԲԴԽ, ԱՆ	Միջին ժամկետով Փոքր	
Բ.3.4	Ապահովել ստանդարտ դիմումի ձևաթղթեր տարբեր տեսակի դատական ծառայությունների համար:	ԲԴԽ	Կարճա-ժամկետ Փոքր	
<b>Բ.4</b>	<b>Շարունակել բարելավել իրավաբանական օգնության ծառայությունների որակը՝ ավելացող պահանջարկը բավարարելու համար (նշված E մարտահրավեր 3-ում. իրավաբանական օգնություն):</b>			
Բ.4.1	ՀՊԳ-ում ստեղծել ռեգիստր՝ գրանցելու աշխատանքները, որոնք տարանջատված լինեն ըստ գործերի և իրավաբանական աջակցության տեսակի:	ՀՊԳ	Կարճա-ժամկետ Փոքր	
Բ.4.2	Ժամանակի ընթացքում հետևել օգտագործողների բավարարվածությանը՝ տարանջատված ըստ գործերի տեսակների, սեռի և տարիքի:	ՀՊԳ	Կարճա-ժամկետ, շարունակական Միջին	Տե՛ս ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը», «Իրավաբանական օգնության բարեփոխումները» ընդհանուր ռազմավարական ուղղությունները և ԴԻԲՈ-ի արդարադատության արդյունավետության բարձրացման ընդհանուր նպատակը:
Բ.4.3	Գնահատել աշխատանքային ծանրաբեռնվածությունը և դրանք վերանայել ՀՊԳ-ում առկա ռեսուրսների համեմատությամբ՝ որոշելու մատուցվող ծառայությունների արդյունավետությունը և ժամկետայնությունը:	ՀՊԳ	Միջին ժամկետով, շարունակական Միջին	
Բ.4.4	Վերանայել բյուջեի հատկացումները և պլանավորումը աշխատանքային ծանրաբեռնվածության և արտադրողականության լույսի ներքո և համապատասխանաբար իրականացնել իրավաբանական օգնության ֆինանսավորման հարմարեցում:	ԱՆ	Միջին ժամկետով, Փոքր	
Բ.4.5	Կազմակերպել քաղաքացիների իրազեկման արշավ՝ ուղղված հատկապես խոցելի խմբերին:	ԱՆ	Կարճա-ժամկետ, շարունակական Միջին	



<b>Բ.5</b>	<b>Հգորացնել ՎԱԼ ընթացակարգերի հասանելիությունը</b> (նշված է մարտահրավեր 4-ում. վեճերի այլընտրանքային լուծում):			
Բ.5.1	Ստեղծել արբիտրաժային կենտրոն	ԱՆ	Միջին ժամկետով, Միջին	<b>Տե՛ս ԴԻԲՈՒ-ի «ՎԱԼ մեխանիզմների բարելավումը Հայաստանում» ընդհանուր ռազմավարական ուղղությունը:</b>
Բ.5.2	Ստեղծել և վարել հաշտարարների թարմացված ռեգիստր, որը տեղեկություններ կտրամադրի մասնագիտացման և պաշտոնական գրանցման վերաբերյալ:	ԱՆ	Կարճա-ժամկետ, շարունակական Միջին	
Բ.5.3	Վիճակագրական տվյալներ հավաքել հաշտարարության գործերի, դրանց տեսակների և վերջնական արդյունքների վերաբերյալ:	ԱՆ	Միջին ժամկետով, շարունակական Փոքր	
Բ.5.4	Ներկայացնել հաշտարարների համար էթիկական ուղեցույցներ և հետևել նպատակի համապատասխանությանը՝ նպաստելու հավանական օգտատերերի միջև վստահության ստեղծմանը:	ԱՆ	Կարճա-ժամկետ, շարունակական Միջին	
Բ.5.5	Չուգահեռաբար պետք է ձեռնարկել լրացուցիչ և նպատակաուղղված իրազեկում՝ բարձրացնելու իմացությունը ՎԱԼ կառուցակարգերի և օգտագործողների համար հնարավոր օգուտների վերաբերյալ:	ԱՆ	Կարճա-ժամկետ, շարունակական Միջին	

**Բարեփոխման ոլորտ Գ: Կատարողականի չափում և կառավարում**

<b>Գ.1</b>	<b>Հգորացնել տվյալների հավաքումը և վիճակագրությունը</b> (նշված է մարտահրավեր 1-ում. արդյունավետության բարելավում):			
Գ.1.1	Վերանայել վիճակագրական հաշվետվությունները ավելի լավ պատկերացում կազմելու համար ներկայումս ամենատարածված գործերի տեսակների մասին, որոնք կազմում են գործերի բեռնվածության և աշխատանքային ծանրաբեռնվածության մեծ մասը: Ցանկալի է սկսել առաջին ատյանի դատարաններում դրամական փոխհատուցման գործերից և վարչական դատարանում տեղական ու կենտրոնական իշխանությունների վիճարկվող որոշումներից:	ԴԴ	Հրատապ Միջին	<b>Տե՛ս ԴԻԲՈՒ-ի «Վրդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը և ԴԻԲՈՒ-ի արդարադատության արդյունավետության բարձրացման ընդհանուր նպատակը:</b>
Գ.1.2	Ուղղակիորեն սկսել քաղաքացիական գործերի տեսակների տարանջատումից վիճակագրական հաշվետվություններում՝ ըստ առավել նշանակալի ընթացակարգերի, մասնավորապես հարկ և համոզվել, որ պարզեցված և արագացված ընթացակարգերով քննվող գործերը կարող են տարանջատվել մյուս գործերից՝ գործադրվող ջանքերն ու ընթացակարգային խոչընդոտները մշտադիտարկելու և գնահատելու համար:	ԴԴ	Հրատապ Փոքր	

<b>Գ.2</b>	<b>Ստեղծել գործերի կուտակումների սկզբնական պլաններ</b> (նշված է մարտահրավեր 2-ում. գործերի ավելացող կուտակումներ):	<b>ԲԴԽ</b>	<b>Հրատապ Փոքր</b>	<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի ընդհանուր նպատակը դատարանների ծանրաբեռնվածության խնդիրը լուծելու վերաբերյալ:</b>
Գ.2.1	Սահմանել տարիքային սահմանափակում գործը ձգձգված համարելու համար՝ ԱՎԵԶ-ի ուղեցույցներին համապատասխան:	ԲԴԽ	Հրատապ Փոքր	
Գ.2.2	Ընդունել գործերի կուտակումների կրճատման պլաններ ինչպես ազգային, այնպես էլ յուրաքանչյուր դատարանի համար և համաձայնեցնել հետաձգված գործերի կուտակումների կրճատման ուղղված գործողությունները, ինչպես օրինակ՝ «հին» համարվող գործերի համար կանոնավոր և հաճախակի նիստեր նշանակել:	ԲԴԽ	Կարճաժամկետ, Փոքր	
<b>Գ.3</b>	<b>Վերանայել ԲԴԽ-ի սահմանած ցուցանիշային ժամկետները՝ ապահովելու դրանց իրագործելիությունը</b> (նշված է մարտահրավեր 3-ում. գործերի վարման ժամկետայնություն):			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի ընդհանուր նպատակը գործերի քննության ողջամիտ ժամկետների վերաբերյալ:</b>
Գ.3.1	Նախաձեռնել գործի նմուշային ուսումնասիրություն՝ իրագործելի ժամանակային չափորոշիչները որոշելու համար:	Վճռաբեկ դատարան, ԲԴԽ	Միջին ժամկետով, Միջին	
Գ.3.2	Ստեղծել մշտադիտարկման համակարգ՝ վեր հանելու առաջատար դատարանների փորձը և երկրում լավագույն գործելակերպի օրինակները:	Վճռաբեկ դատարան, ԲԴԽ	Կարճաժամկետ, Միջին	
<b>Գ.4</b>	<b>Վերանայել և հարմարեցնել պարզեցված ընթացակարգի, արագացված ընթացակարգի և վճարման կարգադրությունների շրջանակն ու կիրառելիությունը</b> (նշված է մարտահրավեր 4-ում. հատուկ ընթացակարգերի կիրառում):			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը և ԴԻԲՈ-ի արդարադատության արդյունավետության բարձրացման ընդհանուր նպատակը:</b>
Գ.4.1	Հավասարեցնել պարզեցված ընթացակարգով և արագացված ընթացակարգով որոշումների ընդունման ժամկետները՝ խուսափելու համար նախապես պարզեցվածը արագացվածով փոխարինումից, ինչպես կատարվում է ներկայումս:	ԱՆ	Կարճաժամկետից մինչև միջին ժամկետով Փոքր	
Գ.4.2	Վերացնել ընթացակարգային խոչընդոտները, որոնք ստիպում են կողմերին պարզապես ներկայացնել ընդհանուր քաղաքացիական հայց և ոչ թե ընտրել վճարման կարգադրության եղանակը, ներառյալ ներդնել ՎԿ-ների խմբային ներկայացման և ծավալային վճարման մեխանիզմ:	ԱՆ	Կարճաժամկետից մինչև միջին ժամկետով Փոքր	
<b>Գ.5</b>	<b>Բացահայտել (և ի վերջո հեռացնել) գործի ժամանակին լուծման ընթացակարգային խոչընդոտները և կիրառել իրավական պաշտպանության միջոցներ</b> (նշված է մարտահրավեր 5-ում. ընթացակարգային արդյունավետություն):			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի ընդհանուր նպատակը գործերի քննության ողջամիտ ժամկետների վերաբերյալ:</b>
Գ.5.1	Ձևավորել դատավորների և փաստաբանների համատեղ աշխատանքային խմբեր փոխըմբռնման հասնելու և խոչընդոտները, ինչպես նաև դրանց խորքային պատճառները բացահայտելու համար: Ընթացակարգային այդ խոչընդոտների լուծմանը այնուհետև կարող է առաջնահերթություն տրվել:	ԱՆ, ԲԴԽ	Հրատապ Փոքր	



Գ.5.2	Այս աշխատանքային խմբերին պետք է աջակցել, ընդ որում հարցախույզներով, որքանով որ հնարավոր է, և առկա վիճակագրական տվյալներով՝ արդյունքները հաստատելու և իրավական մեխանիզմները գործնականում ստուգելու համար (հետադարձ կապ):	ԱՆ, ԲԴԽ	Միջին ժամկետով, Փոքր	
<b>Բարեփոխման ոլորտ Դ: Բյուջեավորում, ֆինանսական կառավարում և ծախսեր</b>				
Դ.1	<b>Առաջիկայում հստակեցնել օրենսդրական դաշտը.</b> (նշված է մարտահրավեր 1-ում. սահմանափակ հմտությունների առկայության պարագայում բյուջեի կազմում, որոշում և կատարում):			
Դ.1.1	Սահմանել օրենսդրական այն դրույթները, որոնց հիման վրա ԱԺ-ին թույլատրվում է մերժել բյուջետային հայտերը, որպեսզի ԲԴԽ-ին հնարավորություն տրվի առավել լավ թիրախավորելու և պաշտպանելու իր պահանջները:	ԲԴԽ, ԴԴ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Փոքր	<b>Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ:</b>
Դ.1.2	Ամրապնդել բավարար դատական բյուջեի համար օրենսդրական երաշխիքը՝ ի վերջո բացարձակ նվազագույնից ձերբազատվելու համար:	ԲԴԽ, ԴԴ, ԱՆ, ԱԺ	Կարճա-ժամկետ, Փոքր	
Դ.2	<b>ԲԴԽ-ի և կառավարության միջև ամրապնդել համակարգման և պլանավորման մեխանիզմները</b> (նշված է մարտահրավեր 1-ում. սահմանափակ հմտությունների առկայության պարագայում բյուջեի կազմում, որոշում և կատարում):			
Դ.2.1	Ստեղծել տեխնիկական մակարդակով ԲԴԽ-ի և կառավարության միջև ավելի հաճախակի հանդիպումների մեխանիզմ՝ բյուջեի պլանավորումը հեշտացնելու նպատակով:	ԲԴԽ, ԱՆ, ՖՆ.Նախ, ԱԺ	Կարճա-ժամկետ, շարունակական	<b>Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ:</b>
Դ.2.2	Բյուջեի կատարումը բարելավելու և բյուջեի միջնաժամկետ պլանավորումը կատարելագործելու համար ներդնել «խելացի» ցուցիչներ (այսինքն՝ ցուցիչներ, որոնք որոշակի են, չափելի, հասանելի, տեղին և ժամանակին):	ԲԴԽ, ԱՆ	Կարճա-ժամկետ, շարունակական	
Դ.3	<b>Դատական բյուջեի լոբբինգ իրականացնել և խթանել ապացույցների վրա հիմնված որոշումների կայացումը</b> (նշված է մարտահրավեր 1-ում. սահմանափակ հմտությունների առկայության պարագայում բյուջեի կազմում, որոշում և կատարում):			
Դ.3.1	Բարելավել բյուջեի հետ կապված տվյալների որակը, հուսալիությունը և ծածկույթը, որոնք կօգտագործվեն ներքին քննարկումներում և որոշումներ ընդունելիս:	ԲԴԽ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Փոքր	<b>Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ:</b>
Դ.3.2	Առավել հստակ ձևակերպել բյուջեի (լրացուցիչ) հատկացումների հայտերի նախապատմությունը (դատարանների, դատավորների և դատարանների անձնակազմի կարիքները և դատարաններից օգտվողների կարիքները):	ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր	

Դ.3.3	Բարձրացնել հանրային իրազեկությունը Հայաստանի դատական համակարգում աշխատանքային բարդ պայմանների վերաբերյալ:	ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Միջին	
<b>Դ.4</b>	<b>Ամրապնդել բյուջետային հմտությունները ԲԴԽ-ում, ԴԴ-ում և դատարաններում (Նշված է մարտահրավեր 2-ում. նվազող բյուջե, որում աշխատավարձերը գերակշռում են ծախսերը):</b>			<b>Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ:</b>
Դ.4.1	Դատարանների և ԴԴ-ի համար ներդնել ֆինանսական կառավարման փոխգործու-նակ համակարգ:	ԲԴԽ, ԴԴ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Միջին	
Դ.4.2	Իրականացնել կարիքների պարբերական գնահատումներ ֆինանսական գնահատա-կաններով (տեխնիկական օժանդակու-թյան կարիքներ, գործառնական ծախսեր, CAPEX և այլն):	ԲԴԽ	Շարունա-կական, Միջին	
Դ.4.3	Չարգացնել ներկա և ապագա անձնակազ-մի հմտություններն ու կարողությունները՝ շոշափելի փոփոխությունների հասելու նպատակով դատարանի բյուջեի կարիքնե-րի շուրջ բովանդակալից քննարկումներին նպաստելու համար:	ԲԴԽ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Միջին	
Դ.4.4	Մշակել ու վարել վիճակագրություն և փաստերի վրա հիմնված ծախսերի գնա-հատումներ ներդրումների համար, որպես-զի ԲԴԽ-ին ավելի լավ հնարավորություն ընձեռնելի փաստարկելու դատական բյուջեի ավելացումը կարճաժամկետ, միջնաժամ-կետ և երկարաժամկետ հեռանկարում:	ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր	
<b>Դ.5</b>	<b>Ներդնել կատարողականի ճկուն մոդել, որը հիմնված է բյուջեի կազմման, հատկացման և ծախսերի վերաբերյալ հուսալի տվյալ-ների վրա (Նշված է մարտահրավեր 2-ում. նվազող բյուջե, որում աշխատավարձերը գերակշռում են ծախսերը):</b>			<b>Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ:</b>
Դ.5.1	Ներդնել կատարողականի մոդել, որը հա-մահունչ է սակավ ռեսուրսների իրակա-նությանը և արտացոլում է դատական ծա-ռայությունների մատուցման բոլոր հիմնական տարրերը:	ԲԴԽ, ԴԴ, ԱՆ	Երկարա-ժամկետ Միջին	
<b>Բարեփոխման ոլորտ Ե: Մարդկային ռեսուրսներ</b>				
<b>Ե.1</b>	<b>Հավաստիանալ, որ գործող անձնակազմի հնարավորություններն առավելագույնս օգտագործվում են: Դատավորների թվա-քանակն ավելացնել որպես վերջին լուծում (Նշված է մարտահրավեր 1-ում. կադրային մակարդակների ճիշտ ձևավորում):</b>			<b>Տե՛ս ԴԻԲՈ-ի արդարա-դատության արդյունա-վետության բարձրաց-ման ընդհանուր նպա-տակը:</b>
Ե.1.1	Առավելագույնի հասցնել պարզ ընթացա-կարգի կիրառությունը՝ դատարանների և դատավորների օգնականների աշխատան-քային բեռը թեթևացնելու համար:	ԲԴԽ, ԱՆ	Հրատապ Փոքր	
Ե.1.2	Ճշգրտել դատավորների և դատավորների օգնականների թիվը՝ համապատասխա-նեցնելու համար աշխատանքային ծանրա-բեռնվածությանը:	ԲԴԽ	Կարճա-ժամկետ, շարունա-կական Փոքր	

Ե.2	Գնահատել դատավորների համալրման, գնահատման և կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգի փաստացի կատարողականը (նշված է մարտահրավեր 1-ում. կադրային մակարդակների ճիշտ ձևավորում):			Տե՛ս ԴԻԲՈ-ի «Մասնագիտացում, դատավորների կամ դատարանների ենթամասնագիտացում և բարելավության մեխանիզմների շարունակական զարգացում» ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի բարելավում» ռազմավարական նպատակը:
Ե.2.1	Գնահատել դատավորների համալրման, գնահատման և կարգապահության ներկայիս պրակտիկան՝ համոզվելու համար, որ փաստացի գործելակերպը համապատասխանում է օրենսդրությանը:	ԲԴԽ, Զաղ. ծառայության խորհուրդ, ԱՆ	Միջին ժամկետով, Միջին	
Ե.2.2	Եթե գործելակերպը չի համապատասխանում օրենսդրությանը, որոշել պատճառները և առաջարկել լուծումներ:	ԲԴԽ	Միջին ժամկետով, Միջին	
Ե.3	Նվազեցնել քաղաքական ազդեցության հավանականությունը դատավորների նշանակման և գնահատման վրա (նշված է մարտահրավեր 1-ում. կադրային մակարդակների ճիշտ ձևավորում):			Տե՛ս ԴԻԲՈ-ի «Մասնագիտացում, դատավորների կամ դատարանների ենթամասնագիտացում և բարելավության մեխանիզմների շարունակական զարգացում» ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատավորների թեկնածուների ընտրության գործընթացի բարելավում» ռազմավարական նպատակը:
Ե.3.1	Ճշգրտել ԲԴԽ-ի կազմը և ընդլայնել դատավորների և ոչ կառավարական հատվածների ներկայացվածությունը:	ԲԴԽ, ԱՆ, ԱԺ	Միջին ժամկետով, Փոքր	
Ե.4	Իրականացնել ՄՌ/քաղաքացիական ծառայության բարեփոխում՝ մնալով քաղաքացիական ծառայության համակարգի հովանու ներքո (նշված է մարտահրավեր 1-ում. կադրային մակարդակների ճիշտ ձևավորում):			Ներառված չէ ԴԻԲՈ-ի մեջ, սակայն քննարկվում է ԱՆ-ի և դատական իշխանության միջև:
Ե.4.1	Անդրադառնալ դատական համակարգի խնդիրներին աշխատանքի դասակարգման, վարձատրության և հավաքագրման գործող համակարգում փոփոխությունների և հենց քաղաքացիական ծառայության գրասենյակի գործունեության բարելավման միջոցով:	ԲԴԽ, Զաղ. ծառայության խորհուրդ, ԱՆ	Կարճաժամկետից երկարաժամկետ Միջին	
<b>Բարեփոխման ոլորտ 2: ՏՅՏ ռեսուրսներ</b>				
2.1	Ընդլայնել համակարգումը ԱՆ-ի և ԴԴ-ի միջև և սահմանել հստակ պարտականություններ դատական ՏՅՏ կառավարման համար (նշված է մարտահրավեր 1-ում. ՏՅՏ կառավարման բարելավում):			
2.1.1	Ստեղծել կազմակերպական կառուցվածք, որը հեշտացնում է դատական համակարգում որակյալ և կայուն ՏՅՏ կառավարումը, ներառյալ ԱՆ-ում էլեկտրոնային արդարադատության վարչություն, ինչպես նաև խորհրդատվական մարմին, որը կազմված լինի տարբեր առյանների դատարաններ ներկայացնող դատավորներից, և ստեղծել այլ մասնագիտացված խորհրդատվական մարմիններ, որոնք կաջակցեն անմիջական դատական համակարգից դուրս գտնվող շահագրգիռ կողմերին:	Կարճաժամկետ, Փոքր	Կարճաժամկետ, Փոքր	Տե՛ս «Էլեկտրոնային արդարադատության միասնական կառավարման համակարգի ստեղծում» ռազմավարական ուղղությունը:



2.1.2	Ստեղծել տեղեկատվության կենտրոնական աղբյուր բոլոր հաստատված ՏՀՏ ծառայությունների վերաբերյալ, որոնք հասանելի լինեն դատական համակարգին ցանկացած պահին ճշգրիտ, համաձայնեցված պատկեր ստանալու համար, ներառյալ նման ծառայությունների մանրամասները և կարգավիճակը:	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր	
2.1.3	Ստեղծել հաշվետվությունների ժամանակակից համակարգ, որը կնպաստի դատարանների գործունեության արդյունավետ մշտադիտարկմանը և կառավարմանը:	ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր	
<b>2.2</b>	<b>Պատրաստվել էլեկտրոնային արդարադատության ծրագրի իրականացմանը (նշված է մարտահրավեր 1-ում. ՏՀՏ կառավարման բարելավում):</b>			
2.2.1	Ապահովել ամուր ինստիտուցիոնալ հանձնառություն՝ ապահովելու էլեկտրոնային արդարադատության ծրագրի հաջող ավարտը և զուգահեռ սկսել մրցույթների նախապատրաստումը էլեկտրոնային արդարադատության համակարգի հետ կապված բոլոր ենթահամակարգերի համար (էլեկտրոնային քաղաքացիական գործեր, էլեկտրոնային քրեական գործեր, էլեկտրոնային սևանկություն, էլեկտրոնային վարչական գործեր), ներառյալ ծրագրային ապահովման և ենթակառուցվածքային ռեսուրսները:	ԱՆ, Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ԷԿԵՆԳ	Միջին ժամկետով, Փոքր	Հստակ կերպով ներառված չէ ԴԻԲՌ-ում՝ չնայած առաջիկա ներդրումների համալիր պլանավորման և նախապատրաստման անհրաժեշտությանը:
2.2.2	Ապահովել բավարար բյուջետային ռեսուրսներ, ենթակառուցվածքային ռեսուրսներ (ՏՀՏ սարքավորումներ և հոսթինգ) և համապատասխան մարդկային ռեսուրսներ՝ համակարգը կառավարելու և հաճախորդներին աջակցություն տրամադրելու համար:	ԱՆ, ԲԴԽ	Երկարա-ժամկետ Մեծ	
2.2.3	Տվյալների շտեմարանում ինտեգրել քաղաքացիական, քրեական և վարչական գործերի տարբեր համակարգերը:	ԲԴԽ, ԴԴ	Միջին ժամկետով, շարունակական Փոքր	
2.2.4	Պատրաստել և պահպանել դատական սարքավորումների և պահանջվող արդիականացման գույքագրումները:	ԲԴԽ, ԴԴ	Կարճա-ժամկետ, շարունակական Փոքր	
<b>2.3</b>	<b>Ընդլայնել գոյություն ունեցող համակարգերը մինչև էլեկտրոնային արդարադատության համակարգի գործարկումը (նշված է մարտահրավեր 2-ում. գործող ՏՀՏ ռիսկերի մեղմացում):</b>			
2.3.1	Ապահովել, որ բոլոր համակարգերն ունենան սպասարկման պայմանագրեր, որոնք պարունակում են ամուր իրավական կարգավորումներ, ինչը կօգնի խուսափելու համակարգի երկարաժամկետ անջատումներից:	ԱՆ, ԲԴԽ	Հրատապ Միջին	

2.3.2	Սահմանել կրկնօրինակման և վերականգնման ստանդարտ գործառնական ընթացակարգեր, կանոնավոր կերպով կատարել բոլոր համակարգերի և հավելվածների կրկնօրինակում և փորձարկել վերականգնման ընթացակարգեր՝ տեղեկատվության կորուստը նվազեցնելու նպատակով:	ԱՆ, ԲԴԽ	Հրատապ Միջին
2.3.3	Կանոնակարգել գործերի կառավարման համակարգի օգտագործման իրավունքներն ու պարտականությունները՝ գործողությունների կրկնությունից կամ բացերից, ինչպես նաև որևէ չարաշահումից խուսափելու նպատակով:	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր
2.3.4	Անհապաղ կատարելագործել գործերի պատահական մակագրման ալգորիթմը՝ խուսափելու գործերի ձեռքով մակագրումից և ապահովելու գործընթացի թափանցիկությունը բոլոր օգտատերերի համար:	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր
2.3.5	Տեղակայել դատական տվյալների կենտրոնը գործող պետական տվյալների կենտրոններից մեկում (օրինակ՝ ԷԿԵՆԳ տվյալների կենտրոնում):	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Միջին
2.3.6	Ստեղծել աղետների վերականգնման տվյալների կենտրոն:	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Միջին
2.3.7	Ստեղծել ՏՀՏ ծառայությունների ռեգիստր:	ԱՆ, ԲԴԽ	Կարճա-ժամկետ, Փոքր
2.3.8	Ներդնել ՏՀՏ համապատասխան գործիք՝ ավտոմատ կերպով վիճակագրական հաշվետվություններ ստեղծելու համար:	ԲԴԽ	Հրատապ Միջին
2.3.9	Գործերի կառավարման համակարգը սահմանել օրենքով (նշել հավելվածի անվանումը և նկարագրությունը, հավելվածի նպատակը, օգտատերերին, օգտատերերի պատասխանատվությունը և այլն):	ԱՆ, ԲԴԽ	Հրատապ Միջին

**Բարեփոխման ոլորտ Է: Ֆիզիկական ենթակառուցվածք**

<b>Է.1</b>	<b>Ֆիզիկական ենթակառուցվածքների ռազմավարական կառավարման բարելավում (նշված Է մարտահրավեր 1-ում. վատ ենթակառուցվածքների խնդիրների լուծում և դատարանների պայմանների բարելավում):</b>			<b>Տե՛ն ԴԻԲՈ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատական ենթակառուցվածքի շարունակական բարելավում» ռազմավարական նպատակը:</b>
Է.1.1	ԲԴԽ-ի և ԱՆ-ի միջև ձեռք բերել համաձայնություն շինարարության/վերանորոգման/վերակառուցման համար նախատեսված շենքերի վերաբերյալ:	ԲԴԽ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Միջին	
Է.1.2	Ամրապնդել ԴԴ-ի և ԱՆ-ի ֆինանսատնտեսական և գնումների հարցերով զբաղվող վարչությունների կարողությունները:	ԴԴ, ԱՆ	Կարճա-ժամկետ, Միջին	
Է.1.3	Ստեղծել ենթակառուցվածքի միասնական տվյալների բազա՝ հիմնված տարածքների ֆիզիկական ու գործառնական գնահատման և աուդիտի վրա, տարածքների արդյունավետ պլանավորման համար հաշվի առնել դատական համակարգի գործառնական և կազմակերպչական կարիքները:	ԴԴ	Կարճա-ժամկետ, Փոքր	

Է.1.4	Կիրառել հաղորդակցման գործիքներ և անցկացնել թրեյնինգներ՝ իրականացվող վերլուծությունը տարածելու և ընդհանուր նպատակներին հասնելու հետաքրքրություն առաջացնելու համար՝ ներառելով մասնավոր հատվածը, կառավարման տարբեր մակարդակները և հանրությունը:	ԲԴԽ, ԱՆ, ֆին. նախ, ԱԺ	Կարծա- ժամկետ, Փոքր	
Է.2	<b>Դատարանների վերանորոգման և կառուցման նախագծային չափանիշների ներդրում և վերահսկում:</b> (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):			Տե՛ս ԴԻԲՌ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատական ենթակառուցվածքի շարունակական բարելավում» ռազմավարական նպատակը:
Է.2.1	Մշակել և ընդունել դատարանների վերակառուցման և կառուցման նախագծային ուղեցույցներ՝ ապահովելու կառուցվածքների չափանիշների և որակի համապատասխանությունն ու միատեսակությունը, ինչպես նաև դրանց հասանելիությունը, ճկունությունը և կայունությունը՝ եվրոպական և միջազգային չափանիշներին համապատասխան:	ԴԴ	Միջին ժամկետով, Միջին	
Է.2.2	Մշակել նախատիպերի նմուշներ տարբեր դատարանների համար, որոնք կարող են վերարտադրվել տարբեր վայրերում:	ԴԴ	Միջին ժամկետով, Միջին	
Է.3	<b>Կարծաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ԿՏԾ-ի մշակում</b> (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):			
Է.3.1	Մշակել հաստատությունների կարիքների նույնականացման և վերլուծության ընթացակարգ:	ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	
Է.3.2	Սահմանել ֆինանսավորման կարիքները՝ օգտագործելով համապատասխան առաջնահերթության չափանիշները:	ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	
Է.3.3	Յեռանկարային զարգացում՝ հաշվի առնելով արդիականացված դատական համակարգի և հարակից ծառայությունների ֆունկցիոնալ կարիքները:	ԴԴ	Միջին ժամկետով Փոքր	
Է.3.4	Պարբերաբար վերահսկել և գնահատել դատական ծառայությունների պահանջարկը (ծանրաբեռնվածություն, բնակչություն, հեռավորություն և այլն)՝ առաջնահերթությունների մասին տեղեկացնելու և դրանք փոխելու համար:	ԴԴ	Միջին ժամկետով	
Է.3.5	Պարբերաբար խորհրդակցություններ անցկացնել շենքերից օգտվողների հետ:	ԴԴ	Միջին ժամկետով	
Է.4	<b>Ռազմավարության և տեխնիկական սպասարկման արձանագրության պատրաստում և կիրառում</b> (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):			Տե՛ս ԴԻԲՌ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատական ենթակառուցվածքի շարունակական բարելավում» ռազմավարական նպատակը:



Է.4.1	Մշակել ռազմավարություն, որը կբովանդակի տեղեկատվություն դատարանների շենքերի շահագործման և սպասարկման կարգի և հաճախականության վերաբերյալ:	ԴԴ	Կարճաժամկետ, Փոքր	
Է.4.2	Կազմել յուրաքանչյուր դատարանի շենքի կանխարգելիչ սպասարկման, վերանորոգման և վերակառուցման վերաբերյալ արձանագրություն:	ԴԴ, ԲԴԽ	Կարճաժամկետ, շարունակական Փոքր	
Է.4.3	Անհապաղ աշխատանքներ սկսել ռազմավարության մեջ նախատեսված և արձանագրությունում նշված խնդիրների լուծման ուղղությամբ:	ԴԴ	Կարճաժամկետ, շարունակական Փոքր	
<b>Է.5</b>	<b>Արդարադատության ֆիզիկական հասանելիության բարելավում (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):</b>			<b>Տե՛ս ԴԻԲՌ-ի «Արդարադատության համակարգի բարեփոխումների իրականացման ապահովումը» ընդհանուր ռազմավարական ուղղությունը, այստեղ՝ «Դատական ենթակառուցվածքի շարունակական բարելավում» ռազմավարական նպատակը:</b>
Է.5.1	Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել բարելավված հարմարություններ, այդ թվում՝ նաև հատուկ հաշմանդամների համար կայանատեղիներ, վերելակներ, թեքահարթակներ, շարժասանդուղքներ, զուգարաններ, դատարանների դահլիճներ՝ առանց խոչընդոտների մուտքերով, դեպի դուրս բացվող դռներով և այլն:	ԲԴԽ, ԱՆ	Միջին ժամկետով, Փոքր	
Է.5.2	Դիտարկել և գնահատել դատական ծառայությունների պահանջարկը և անհրաժեշտության դեպքում թարմացնել կապիտալ ներդրումների ծրագրի առաջնահերթությունները:	ԴԴ, ԲԴԽ, ԱՆ	Միջին ժամկետով, շարունակական	
<b>Է.6</b>	<b>Ավելի կայուն և կլիմայի համար բարենպաստ դատական ենթակառուցվածքային նախագծերի և սկզբունքների կիրառում (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):</b>			
Է.6.1	Ձեռնարկել միջոցներ դատարանի շենքերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության բարելավման ուղղությամբ. ջերմաստիճան և օդափոխություն, ջեռուցման ժամանակաչափ (թայմեր) համակարգեր, կանաչ լույսի աղբյուրներ, ջերմության վերականգնման համակարգեր և անձրևաջրերի վերականգնման համակարգեր բացօթյա տարածքների ոռոգման համար:	ԲԴԽ, ԱՆ	Կարճաժամկետ, շարունակական Փոքր	
<b>Է.7</b>	<b>Նորարարության խրախուսում և ՏՀՏ գործիքների ինտեգրում դատարանների շենքերում և շինություններում՝ բարելավելու մատուցվող ծառայությունների որակը (նշված է մարտահրավեր 2-ում. դատական ենթակառուցվածքների կառավարման և սպասարկման բարելավում):</b>			
Է.7.1	Ընդգրկել ՏՀՏ գործիքները և գործընթացների ավտոմատացումը (օրինակ՝ հանդիպումների ձայնագրում, ձայնի ուժեղացում և հեռավար մասնակցություն) նոր/վերանորոգվող շենքերի նախագծման մեջ:	ԲԴԽ, ԱՆ	Կարճաժամկետ, շարունակական Մեծ	

# ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Baum, L. 2009. «Դատական մասնագիտացման էֆեկտների ուսումնասիրություն»: Duke Law Journal 58: p.1667–84:

Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդ. 2012թ. «ՄԴԵՍ թիվ 15 կարծիք». Փարիզ՝ CCJE.

Եվրոպայի խորհուրդ. 2019. «Զորորդ գնահատման փուլ, Համապատասխանության երկրորդ զեկույց Հայաստան». Ընդունվել է GRECO-ի կողմից իր 84-րդ լիազումար նիստում, Ստրասբուրգ, 2-6 դեկտեմբերի 2019թ

<https://rm.coe.int/fourth-evaluation-round-corruption-prevention-in-respect-of-members-of/1680993e83>

Եվրոպայի խորհուրդը և Վենետիկի հանձնաժողովը. 2022. «Վենետիկի հանձնաժողովի և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և իրավունքի գերակայության դիրեկտորատի համատեղ կարծիքը». CDL (2022)002. Ստրասբուրգ. [https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD\(2022\)002-e](https://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-AD(2022)002-e).

Դրեյֆուս Բ.Ս. 1995. «Ապագայի ֆորումներ. մասնագիտացված դատարանների դերը բիզնես վեճերի լուծման գործում»: Brooklyn Law Review 61, No.1: էջ 1-44:

Եվրոպական հանձնաժողով. 2014թ. «Աջակցություն արդարադատության ոլորտի բարեփոխումներին Հայաստանում. փուլ I Հայաստանի Հանրապետության 2020 թվականի տարեկան գործողությունների ծրագրի մասին հանձնաժողովի կիրարկող որոշման հավելված 1 (մաս 1). [https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2020-07/c\\_2020\\_4218\\_f1\\_annex\\_en\\_v1\\_p1\\_1084379.pdf](https://neighbourhood-enlargement.ec.europa.eu/system/files/2020-07/c_2020_4218_f1_annex_en_v1_p1_1084379.pdf)

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով. 2020. CEPEJ զեկույց եվրոպական դատական համակարգերի վերաբերյալ ԱՎԵՅԵ-ի գնահատման զեկույց – հրատարակություն 2020 (2018 թ. տվյալներ). Ստրասբուրգ: CEPEJ» 3. [http://moj.am/storage/uploads/001.Final\\_Efficiency-Judiciary\\_Quintavalle-2.pdf](http://moj.am/storage/uploads/001.Final_Efficiency-Judiciary_Quintavalle-2.pdf).

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով. 2020. «CEPEJ զեկույց եվրոպական դատական համակարգերի վերաբերյալ CEPEJ-ի գնահատման զեկույց – հրատարակություն 2020 (2018թ. տվյալներ). Ստրասբուրգ: CEPEJ. <https://rm.coe.int/evaluation-report-part-1-english/16809fc058>

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով. «CEPEJ-STAT եվրոպական դատական համակարգերի դինամիկ տվյալների բա-

զա»: <https://www.coe.int/web/cepej/dynamic-database-of-european-judicial-systems>

Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով. 2014. «CEPEJ-ի ուղեցույցները դատարանների տարածքների կազմակերպման և մատչելիության վերաբերյալ»: Ստրասբուրգ: CEPEJ. [https://rm.coe.int/16807482cb#\\_Toc409098525](https://rm.coe.int/16807482cb#_Toc409098525)

Մարդու իրավունքների եվրոպական դատարան. «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա». Ստրասբուրգ. հասանելի է [http://www.echr.coe.int/Documents/Convention\\_ENG.pdf](http://www.echr.coe.int/Documents/Convention_ENG.pdf) կայքում

Ստեֆան Ֆլաուրդեյ. 2014. «Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում և իրականացում. բովանդակության վերլուծության մոտեցում»: Տեղեկատվական անվտանգության և ապահովման մարդկային ասպեկտների ութերորդ միջազգային սիմպոզիումի նյութեր (HAISA 2014):

Յ.Գրամկո, Բ.Ուելշ «Մասնագիտացված դատական ծառայությունների զարգացում. միջազգային փորձ և քաղված դասեր»: Վաշինգտոն D.C.: Համաշխարհային բանկ.

Դատարանների և տրիբունալների ծառայություն. 2019. Դատարանի և տրիբունալի նախագծման ուղեցույց. Լոնդոն.

<https://www.gov.uk/government/publications/court-and-tribunal-design-guide>

Միացյալ Նահանգների դատական կոնֆերանս. Վերանայված 2021. «Ս.Տ. Դատարանի նախագծման ուղեցույց»: Էջեր 4–9, 4–12, 4–17, 4–22. <https://www.uscourts.gov/rules-policies/judiciary-policies/us-courts-design-guide>

Լուսինե Լալայան, 2022. «Դատական անկախության ապահովագրումը ֆինանսական հատկացումների միջոցով. «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպություն. Երևան, Հայաստան.

Մոլդովայի իրավական ռեսուրս կենտրոն. 2014. «Դատավորների մասնագիտացումը և վարչական դատարանների ստեղծման իրագործելիությունը Մոլդովայի Հանրապետությունում». [https://crjm.org/wp-content/uploads/2014/06/2014-Study-Specialis-Judges-MD\\_en.pdf](https://crjm.org/wp-content/uploads/2014/06/2014-Study-Specialis-Judges-MD_en.pdf)

Ռումինիայի դատաիրավական բարեփոխումների նախագիծ. 2006թ. «Ռումինիայում դատարանների շենքերի նախագծման ստանդարտների ձեռնարկի նախագիծ»:



Գ.Թեքեր 2015. Մոլդովական դատարանների կառուցման և նախագծման ուղեցույցներ: Էջ 135. <https://crjm.org/wp-content/uploads/2015/01/Ghid-court-construction.pdf>

Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն. 2019. «Ամբողջականության համակարգերը և օրենքի գերակայությունը Հայաստանում. ներկայացված գնահատում LER II-ի համար». ԱՄՆ ՄՁԳ Ժողովրդավարության, մարդու իրավունքների և կառավարման կենտրոն. [https://usaidelearninglab.org/sites/default/files/resource/files/usaide\\_armenia\\_drg\\_isrol\\_evidence\\_review\\_-\\_final\\_2019-06-14.pdf](https://usaidelearninglab.org/sites/default/files/resource/files/usaide_armenia_drg_isrol_evidence_review_-_final_2019-06-14.pdf)

Համաշխարհային բանկ. 2020. «Հայաստանի կառավարումը և արդարադատությունը. Հայաստանում դատական գործընթացների արդյունավետության բարձրացում. պարզեցված ընթացակարգերի և վճարման կարգադրությունների արդյունավետության բարձրացում»: Վաշինգտոն. Համաշխարհային բանկ:

Համաշխարհային Բանկ. 2021. «Կառավարում և տեխնոլոգիաներ Հայաստանի համար. Կառավարության ողջ մոտեցումը որպես Հայաստանի թվային տնտեսության առանցքային հիմնադրամ» Վաշինգտոն, DC. Համաշխարհային բանկ:

«Հայացք ապագային» զեկույցի պատրաստման ժամանակ օգտագործվել են մի շարք օրենքներ, որոշումներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, այդ թվում.

Հայաստանի Հանրապետություն. Գործողությունների տարեկան ծրագիր 2017 թ.

Հայաստանի Հանրապետություն. Պետական տուրքի մասին ՀՀ օրենքը:

Հայաստանի Հանրապետություն. Դատական և իրավական բարեփոխումների 2012-2016թթ. ռազմավարություն: Հասանելի է՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66236>

Հայաստանի Հանրապետություն. Զաղաքացիական դատավարության օրենսգիրք.

Հայաստանի Հանրապետություն. 2015. Սահմանադրություն. <https://www.arlis.am/>

Հայաստանի Հանրապետություն. Դատական օրենսգիրք.

Հայաստանի Հանրապետություն. «Փաստաբանության մասին» ՀՀ օրենք.

Հայաստանի Հանրապետություն. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք

Հայաստանի Հանրապետություն. 2018թ. Արդարադատության նախարարության N-180-Ն հրաման. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145009>

Հայաստանի Հանրապետություն. Հաշվետվություն գործողությունների ծրագրերի 2020 թվականի երկրորդ կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ <https://www.moj.am/legal/view/article/1376/>.

Հայաստանի Հանրապետություն. Հաշվետվություն գործողությունների ծրագրերի 2020 թվականի առաջին կիսամյակում կատարման ենթակա գործողությունների ընթացքի վերաբերյալ <https://www.moj.am/legal/view/article/1347/>

## ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՄԵԹՐՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

«Չայացք ապագային» զեկույցում կիրառվել է առաջարկի և պահանջարկի մոտեցումը՝ դատական իշխանության արդյունավետության բարելավման մարտահրավերները հաղթահարելու համար: Առաջարկի առումով այն կենտրոնանում է ռեսուրսների կառավարման և բաշխման վրա, իսկ պահանջարկի առումով՝ դատական գործերի ներհուսքի վրա: Այս հեռանկարը հնարավորություն է տալիս դիտարկելու և՛ առաջարկի, և՛ պահանջարկի խնդիրները, որոնք ազդում են համակարգի արդյունավետության վրա, և հնարավորություն է տալիս առաջարկելու գործողություններ և քաղաքականության պատասխան միջոցներ, որոնք կարող են քաղաքականություն մշակողներին հնարավորություն տալ ավելի արդյունավետ կառավարելու պահանջարկը՝ միաժամանակ ուժեղացնելով արդարադատության հասանելիությունը ռեսուրսներով սահմանափակ միջավայրում: Իրականացվել է կառավարման մոտեցումների, գործերի ներհուսքի, ռեսուրսների, այդ թվում ֆինանսական ռեսուրսների կառավարման, մարդկային ռեսուրսների կառավարման, ՏՅՏ-ի և ենթակառուցվածքների համապարփակ վերլուծություն: Այս ոլորտների ուսումնասիրությունը տալիս է դատական ծառայությունների մատուցման ընդհանուր պատկերը:

Օգտագործվել են մի շարք տվյալներ՝ բովանդակալից և խորաթափանց գնահատումը ապահովելու համար: Սկզբում իրականացվել է Չայաստանում դատական իշխանության բարեփոխումների ուղղությամբ կատարված աշխատանքների փաստաթղթային ուսումնասիրություն: Այնուհետև ուսումնասիրության շրջանակներում ձեռք են բերվել և վերլուծվել համակարգի՝ 2018-2021 թվականներն ընդգրկող քանակական տվյալները: Չայաստանում հասանելի տվյալների մեծ մասը վերաբերում է գործերի կառավարման համակարգերին, մարդկային ռեսուրսներին և ֆինանսական համակարգերին: Տվյալների հետ կապված խնդիրներից մեկն այն էր, որ դրանք համակարգված

և հետևողական չեն, ինչը պահանջում է տվյալների մշակման զգալի աշխատանք:


Համակարգի ներսից ստացված տվյալները համալրվել են հարցումների, հարցազրույցների և դաշտային այցելությունների շնորհիվ ստացված տվյալներով:

2020-2021 թվականներին իրականացվել է արդարադատության բազմակողմանի հետազոտություն՝ արդարադատության ոլորտի շահագրգիռ կողմերի ընկալումները, ինչպես նաև դատավարության ժամկետների, դատական ծախսերի և նախորդ բարեփոխումների արդյունավետությունը չափելու նպատակով: Շահագրգիռ կողմերի հետ իրականացվել է ավելի քան 50 հարցազրույց, կազմակերպվել է մոտ մեկ տասնյակ այցելություն տարբեր դատարաններ: Հարցազրույցների ընթացքում «Չայացք ապագային» զեկույցը կազմող թիմը պարզել է շահագրգիռ կողմերի կարծիքը դատական իշխանության ընդհանուր կատարողականի, ինչպես նաև ներկա իրավիճակի հիմնական պատճառների վերաբերյալ: Եղել են տարբեր կարծիքներ շահագրգիռ կողմերի փորձի, նորարարությունների, մտահղացումների, ինչպես նաև դատական ծառայությունների մատուցման հետ կապված մարտահրավերների մասին: Հարցման մասնակիցների թվում էին դատավորներ, դատարանի անձնակազմի, ինչպես նաև արդարադատության նախարարության ներկայացուցիչներ:

Չայաստանի դատական համակարգի հարաբերական կատարողականը համեմատելու և այն եվրոպական երկրների կատարողականի համատեքստում գնահատելու համար օգտագործվել են տարբեր երկրների տվյալներ: Այլ երկրների հետ համեմատության նպատակով օգտագործվել են տվյալներ լրացուցիչ աղբյուրներից, ինչպիսիք են ԱՎԵՅ-ի հավաքած այլ երկրների դատական համակարգերի վիճակագրական տվյալները:



# ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՑՎԱԾՔԸ




146



Աղբյուրը՝ ԱՆ, <https://www.moj.am/en/structures/view/structure/37>



# ՀԱՎԵԼՎԱԾ 4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Աղբյուրը՝ ԴԴ, <https://court.am/hy/central>

# ՀԱՎԵԼՎԱԾ 5. ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՆՎԱԳԵՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Դատարաններում կուտակված գործերի նվազեցման ծրագրերը սովորաբար ազգային ծրագրի/ռազմավարության մի մասն են, որը սահմանում է կուտակումների դեմ պայքարելու ուղեցույցները և քաղաքականությունը: Դրանք իրականացվում են կամ վերահսկվում են ազգային դատական խորհուրդների կամ բարձրագույն դատարանների կողմից: Ընդհանուր առմամբ, ընդունվում է մեկ համապարփակ ռազմավարական փաստաթուղթ մի քանի տարի ընդգրկող ժամանակահատվածի համար (սովորաբար չորս կամ հինգ), այնուհետև ամեն տարի դատարանների կողմից կազմվում են առանձին դատական ծրագրեր: Ծրագրերում պետք է լայնորեն օգտագործել վիճակագրական տվյալները՝ բարելավումները պլանավորելու և դրանց մշտադիտարկում իրականացնելու համար:

Կուտակված գործերի նվազեցման միջոցները պետք է նախատեսված լինեն հատուկ համակարգի համար և համապատասխանեն ազգային համատեքստին: Որոշ ընդհանուր օրինակներ բերված են ստորև:

- Առանձին դատարանների համար, ըստ գործերի տեսակների, սահմանել կուտակումների նվազեցման թիրախներ (օրինակ՝ հետաձգված քաղաքացիական գործերի քանակն առաջիկա տարում կնվազի 20 տոկոսով):
- Սահմանել դատարաններում ավելի հին կուտակված գործերի քննության առաջնահերթություն (հաշվարկված այն պահից, երբ կողմն առաջին անգամ դիմել է դատարան):

- Դատավորի ակտիվ դերի ամրապնդում վարույթների կառավարման և գործերի քննության արագության պահպանման գործում:

Գործերի քննության հետաձգումներին նպաստող օրենսդրական խոչընդոտների վերացում:

- Ըստ առաջնահերթության գործերի քննության վերահսկում (սկզբում քննել հին գործերը, բացառությամբ այն գործերի, որոնք, օրենքի համաձայն, պահանջում են արագ քննություն):

- Դատական նիստերի ժամանակացույցի խստացում, կուտակված գործերի լսումների հաճախականության ավելացում:

- Ավելի մեծ դատարաններում կուտակված գործերի համար հատուկ խմբերի ստեղծում:

- Դատարանների միջև հանդիպումների կազմակերպում՝ ընդհանուր մարտահրավերները քննարկելու և փորձի փոխանակման ու գործընթացների նորարարությունները քննարկելու համար:

Առանձին դատարանների գործերի կուտակումների նվազեցման ծրագիրը պետք է ներառի.

- ա) Նախորդ տարվա ընթացքում սահմանված նպատակների արդյունքները կամ այդ արդյունքներին չհասնելու պատճառները (առկայության դեպքում):
- բ) Առաջիկա տարվա համար սահմանված նպատակները և նպատակին հասնելու համար կիրառվող միջոցառումների շարքը:

Աղյուսակ 20. Նախորդ տարվա համար սահմանված նպատակների իրականացման հաշվետվություն

Գործի տեսակ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19
Դատարարների թվաքանակ																			
Ժամանակահատվածի սկզբում չլուծված գործերի քանակ																			
Ժամանակահատվածի սկզբում կուտակված («հին») գործերի քանակ							10 տարուց ավելի				10 տարուց ավելի								
							5-10 տարի				5-10 տարի								
							3-5 տարի				3-5 տարի								
							Ընդամենը				Ընդամենը								
							Ժամանակահատվածի վերջում չլուծված գործերի քանակ				Ժամանակահատվածի վերջում չլուծված գործերի քանակ								
Ժամանակահատվածի սկզբում լուծված գործերի քանակ																			
Նախաձեռնողների վաճառքային գործերի քանակ																			
Վերջին տարվա ընթացքում կուտակված («հին») գործերի քանակ																			
Զրուցված հարկային տարբերությունների քանակ																			
Ժամանակահատվածի վերջում կուտակված («հին») գործերի քանակ																			
Նախաձեռնողների վաճառքային գործերի քանակ																			
Վերջին տարվա ընթացքում լուծված գործերի քանակ																			

**Աղյուսակ 21.** Հաջորդ տարվա համար սահմանված նպատակների իրականացման հաշվետվություն

Գործի տեսակ	Դատավորների թվաքանակ	Ժամանակահատվածի սկզբում չլուծված գործերի քանակ	Ժամանակահատվածի սկզբում կուտակված («հին») գործերի քանակ				Ժամանակահատվածի սկզբում յուրաքանչյուր դատավորի վարույթում առկա չլուծված գործերի քանակ	Ժամանակահատվածի սկզբում կուտակված («հին») գործերի մասնաբաժինը չլուծված ընդհանուր գործերի քանակում	Կուտակումների կրճատման ծրագրի թիրախ (կուտակված («հին») գործերի քանակ
			Ընդամենը	3-5 տարի	5-10 տարի	10 տարուց ավելի			
1	2	3	4	5	6	7	8	9	10

# ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝ ՀԻՄՆՎԱԾ ԱԱԵՀ-Ի ՄԵԹՐՈՂԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Սույն հավելվածում իրականացվել է Հայաստանում առկա դատական գործերի ծանրաբեռնվածության ուսումնասիրությունը և դրանց համեմատական վերլուծությունը ԵՄ-ի անդամ և այլ երկրների հետ: Այս համեմատության համատեքստում Վրաստանը, Խորվաթիան և Եստոնիան համարվում են Հայաստանի նման երկրներ՝ իրենց համադրելի չափերով, քաղաքական և տնտեսական առանձնահատկություններով: Վրաստանը հարմար տարածաշրջանային գործընկեր է, մինչդեռ Խորվաթիան և Եստոնիան հանդիսանում են ԵՄ 11-ի<sup>198</sup> լավ օրինակներ: Հետևյալ բաժինները նպատակ ունեն գնահատելու Հայաստանի դատարանների վրա գործադրվող ճնշումը՝ համեմատած այլ իրավասությունների և ԱԱԵՀ-ի անդամ պետությունների միջինի հետ: Դա նաև թույլ է տալիս համեմատել այս համակարգերում դատավորների թվաքանակը և դատավորների վարույթում գտնվող գործերի միջին քանակը: ԱԱԵՀ-ի կողմից կիրառվող մեթոդաբանությունն իր համընդհանուր մոտեցման շնորհիվ տարբերվում է սույն հավելվածի մյուս մասերում կիրառված մեթոդաբանությունից:

**ԱԱԵՀ-ի 2020 թ. զեկույցի (2018 թ. տվյալներ) համաձայն<sup>199</sup>**՝ Հայաստանում դատական ծառայությունների ընդհանուր պահանջարկը գնահատվել է ոչ քրեական գործերով<sup>200</sup> ցածր ԱԱԵՀ-ի միջինից և ԵՄ-ի գործընկեր երկրներ Խորվաթիայի և Եստոնիայի միջինից, բայց մոտավորապես կրկնակի է Վրաստանում առկա պահանջարկից (գծապատկեր 48): Բնակչության համեմատ՝ Հայաստանի դատարանները ստացել են 6,13 ոչ քրեական գործ 100 բնակչի

հաշվով, մինչդեռ ԱԱԵՀ անդամ երկրներում՝ 10,29 գործ, Վրաստանում՝ 3,20, Խորվաթիայում՝ 21,65 և Եստոնիայում՝ 22,58 գործ: Սա նշանակում է, որ 2018-ին Հայաստանի յուրաքանչյուր 16-րդ քաղաքացին դատարանում ունեցել է ոչ քրեական գործ:

Ինչպես նշվեց, Հայաստանում ոչ քրեական գործերի պահանջարկը 2012 թվականի զեկույցից ի վեր (2010 թվականի տվյալներ) զգալիորեն աճել է: 2010 թվականից մինչև 2018 թվականը ընկած ժամանակահատվածում պահանջարկը աճել է վեց անգամ<sup>201</sup>:

**Հայաստանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում 100 բնակչի հաշվով ստացվել է 0.10 քրեական գործ, ինչպես հաղորդում է ԱԱԵՀ-ն իր 2020 թվականի զեկույցում (2018թ. տվյալներ), ինչը զգալիորեն ցածր է ԱԱԵՀ-ի, ինչպես նաև այս բաժնում հիշատակված այլ երկրների միջինից:**

ԱԱԵՀ-ի անդամ երկրների միջինը՝ 2,77 քրեական գործեր 100 բնակչի հաշվով, գրեթե 30 անգամ գերազանցում է Հայաստանի միջինը: Խորվաթիայի դատարանները ստացել են 4,58 քրեական գործ 100 բնակչի հաշվով, ինչը գրեթե 50 անգամ գերազանցում է Հայաստանի միջինը, իսկ Եստոնիայի դատարանները ստացել են 1,70 քրեական գործ 100 բնակչի հաշվով, ինչը գրեթե 20 անգամ գերազանցում է Հայաստանի միջինը: Վրաստանի դատարանները ստացել են 0,40 քրեական գործ 100 բնակչի հաշվով, ինչը գրեթե 4 անգամ գերազանցում է Հայաստանի միջինը: Տվյալները ներկայացված են գծապատկեր 48-ում:


<sup>198</sup>ԵՄ 11-ը 11 նոր անդամ պետություններն են՝ Բուլղարիան, Չեխիան, Եստոնիան, Հունգարիան, Լատվիան, Լիտվան, Լեհաստանը, Ռումինիան, Սլովակիայի Հանրապետությունը, Սլովենիան և Խորվաթիան:

<sup>199</sup>Տե՛ս ԱԱԵՀ-ի զեկույցը. «Եվրոպական դատական համակարգերի մասին ԱԱԵՀ գնահատման զեկույց. 2020թ. (2018թ. տվյալներ). CEPEJ-STAT Եվրոպական դատական համակարգերի դինամիկ տվյալների բազա <https://www.coe.int/web/cepej/dynamic-database-of-european-judicial-systems>

<sup>200</sup>Կամ «բացառությամբ քրեական գործերի» կատեգորիան, ինչպես սահմանված է ԱԱԵՀ-ի կողմից:

<sup>201</sup>Հայաստանի դատարանները 2010 թ. ստացել են 1,19 ոչ քրեական գործ 100 բնակչի հաշվով, 2012թ.՝ 1,38, 2014թ.՝ 4,74, 2016թ.՝ 5,43, 2018թ.՝ 6,13 գործ:

**Գծապատկեր 48.** 100 բնակչի հաշվով առաջին ատյանի դատարան մուտքագրվող գործերի քանակ (ԱԱԵՅ 2020 թ. զեկույց)




Աղբյուրը՝ ԱԱԵՅ 2020 թ. զեկույց (2018 թ. տվյալներ):

ԱԱԵՅ-ի 2020 թ. զեկույցում արձանագրվել է, որ Հայաստանում քաղաքացիական, առևտրային բնույթի վեճերով և վարչական դատավարության նկատմամբ պահանջարկը մոտ է ԱԱԵՅ-ի անդամ պետությունների միջինին, որտեղ գրանցվել է, համապատասխանաբար, 2.53 և 0.54 գործ 100 բնակչի հաշվով: Հայաստանում ստացվել են 2.85 քաղաքացիական և առևտրային բնույթի վեճերով գործեր, որը գրեթե հավասար է Խորվաթիայում ստացված 2.86 գործին,

մինչդեռ Եստոնիայում ստացվել է 1.17, իսկ Վրաստանում՝ 0.47 քաղաքացիական և առևտրային բնույթի վեճերով գործեր 100 բնակչի հաշվով: Ինչ վերաբերում է վարչական գործերին, Հայաստանում ստացվել է 0.47 գործ 100 բնակչի հաշվով, ինչը մոտ է ԱԱԵՅ-ի անդամ պետությունների միջինին՝ 0.54-ին: Խորվաթիայի և Վրաստանի դատարաններում մուտքագրվել է 0.33 վարչական գործ, մինչդեռ Եստոնիայում մուտքագրվել է 0.19 գործ 100 բնակչի հաշվով:

**Գծապատկեր 49.** 100 բնակչի հաշվով առաջին ատյանի դատարան մուտքագրվող քաղաքացիական, առևտրային բնույթի գործերի և վարչական գործերի քանակ (ԱԱԵՅ 2020 թ. զեկույց)




Աղբյուրը՝ ԱԱԵՅ-ի 2020 թ. զեկույց (2018 թ. տվյալներ):

Ինչ վերաբերում է 100,000 բնակչի հաշվով դատավորների թվաքանակին՝ 8 դատավոր, Հայաստանում արձանագրվել է գրեթե երեք անգամ ցածր հարաբերություն ԱԱԵՅ-ի անդամ երկրներից և համեմատվող այլ երկրներից (բացառությամբ Վրաստանի): Հայաստանի գործերի ծանրաբեռնվածությունը կազմում է ԱԱԵՅ-ի միջինի 59 տոկոսը, քաղաքացիական և առևտրային դատական գործերով՝ 112 տոկոս, վարչական գործերով՝ 88 տոկոս, իսկ քրեական գործերով՝ 4 տոկոս<sup>202</sup>: Մինչդեռ Հայաստանում արձանագրված դատավորների միջին թվաքանակը կազմել է ԱԱԵՅ-ի միջինի 38 տոկոսը: Վրաստանը նույնպես գրանցել է 8 դատավոր 100,000 բնակչի հաշվով, մինչդեռ Խորվաթիայում գրանցվել է՝ 41, իսկ Եստոնիայում՝ 18 դատավոր 100,000 բնակչի հաշվով: Դատավորների պաշտոնների վերաբերյալ լրացուցիչ քննարկման

համար տե՛ս մարդկային ռեսուրսների կառավարման մասին գլուխը:

**ԱԱԵՅ-ի<sup>203</sup> տվյալները ցույց են տվել, որ Հայաստանում առաջին ատյանի գործերի միջին թիվը մեկ դատավորի հաշվով զգալիորեն ավելի մեծ է, քան Վրաստանում և Խորվաթիայում:** Ինչպես ցույց է տրված ստորև գծապատկեր 50-ում, Վրաստանի դատավորները ստացել են Հայաստանի դատավորների գործերի ծանրաբեռնվածության մոտավորապես կեսը: Խորվաթիայի դատավորները ստացել են Հայաստանի դատավորների գործերի շուրջ երեք քառորդը: Հողային կադաստրի հաղորդումների պատճառով դատավորները զգալիորեն ավելի շատ առաջին ատյանի գործեր են ստացել Եստոնիայում, քան Հայաստանում<sup>204</sup>:

**Գծապատկեր 50. Ուսումնասիրված երկրներում ոչ-քրեական գործերի ծանրաբեռնվածությունը առաջին ատյանի մեկ դատավորի հաշվով 2018թ. ընթացքում:**



Աղբյուրը՝ ԱԱԵՅ 2020 գեկույց (2018թ. տվյալներ) և ՀԲ Հաշվարկներ

**Դատարանների աշխատանքային ծանրաբեռնվածությունը ցույց է տալիս դատարաններում ամկա գործերի իրական ծավալը, որը ներառում է նոր ստացված և նախորդ տարվա չուծված գործերը:** Հին և նոր գործերի ծավալի համադրումը կենսական նշանակություն ունի՝ գնահատելու համար, թե իրականում որքան ծանրաբեռնված են դատարանները: Հնարավոր մարտահրավերներին ժամանակին արձագանքելու համար անհրաժեշտ է, որ դատարանների ղեկավարները և ԴԴ-ն պարբերաբար վերլուծեն դատարանների ծանրաբեռնվածությունը (առնվազն եռամսյակա-

յին կտրվածքով), նախքան այն բացասաբար կազդի դատական համակարգի արդյունավետության վրա: Բացի դատարանների ղեկավարությունից, այս տեղեկատվությունը շատ կարևոր է նաև ԱՆ-ի համար՝ նոր օրենսդրություն մշակելու համար:

**Բացառությամբ 2018թ.-ի, դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածությունը հետևողականորեն աճում էր:** 2017-ից մինչև 2021 թվականը ընկած ժամանակահատվածում ընթացիկ գործերի ծավալը աճել է 34 տոկոսով՝ 2017-ին գրանցված 273,249 գործից մինչև 2021-ին գրանցված 366,710 գործ: Աճը պայմանավոր-

<sup>202</sup>Հավանական է, որ քրեական գործերի թվերի տարբերությունների վրա ազդել է ԵՆ անդամ երկրներում իրավական համակարգերի և հաշվետվությունների ներկայացման մեթոդաբանության բազմազանությունը:

<sup>203</sup>Այս հաշվարկը տրամադրել է Համաշխարհային բանկը՝ օգտագործելով ԱԱԵՅ-ի 2018 թ. տվյալները: Հաշվարկով առաջին ատյանի ոչ քրեական գործերի թիվը բաժանվում է պրոֆեսիոնալ առաջին ատյանի դատավորների ընդհանուր թվի վրա:


<sup>204</sup>Ըստ ԱԱԵՅ-ի՝ 2018 թվականին Եստոնիայի դատարանները 100 բնակչի հաշվով ստացել են հողային կադաստրի 8,4 գործ կամ ընդհանուր՝ 111,522 գործ: Հայաստանում հողային կադաստրը ներառված է Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կազմում:

ված է բոլոր տեսակի դատական գործերի աճով, բացառությամբ վարչական գործերի, որտեղ գրանցվել է մեկ տոկոս անկում:

**2021 թվականի ընթացքում Հայաստանի դատարանների ծանրաբեռնվածության 87 տոկոս կազմել են առաջին ատյանի դատարանների գործերը. զծապատկեր 51-ում երևում է այդ միտումը:** Առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածությունը տարիների ընթացքում տարբերվել է, սակայն ընդհա-

նոր աճի միտումը կազմել է 38 տոկոս, որի արդյունքում 2021թ.-ին դատարաններում կա գրեթե 90,000-ով ավելի շատ գործեր քան 2017թ.-ին: 2018 թվականին արձանագրված անկումը պայմանավորված է մուտքագրվող բոլոր տեսակի գործերի 19 տոկոս նվազումով, մասնավորապես՝ գումարի բռնագանձման պահանջի վերաբերյալ դատական գործերի 27 տոկոս նվազումով և վճարման կարգադրություններ արձակելու մասին պահանջների 13 տոկոս նվազումով:

**Գծապատկեր 51. 2017-2021թթ. Հայաստանի դատարանների ընդհանուր ծանրաբեռնվածությունն առաջին ատյանի դատարանների ծանրաբեռնվածության հետ համեմատ**




Աղբյուրը՝ court.am

**Վճռաբեկ դատարանը, Վերաքննիչ քաղաքացիական դատարանը և Վերաքննիչ քրեական դատարանը արձանագրել են ուսումնասիրվող ժամանակահատվածում ծանրաբեռնվածության մշտական աճ՝ համապատասխանաբար 69 տոկոս, 26 տոկոս և 30 տոկոս: Սնանկության դատարանի ծանրաբեռնվածությունը**

մնացել է համեմատաբար նույնը, արձանագրելով ընդամենը 9 տոկոս աճ: Այլ դատարաններում թիվը տատանվում է 2017 թվականից մինչև 2021 թվականը Վերաքննիչ վարչական դատարանի ծանրաբեռնվածությունն աճել է 50 տոկոսով, իսկ վարչական դատարանը արձանագրել է 1 տոկոսի անկում:

**Գծապատկեր 52. Առաջին ատյանի մասնագիտացված դատարանների, Վերաքննիչ դատարանների և Վճռաբեկ դատարանի 2017 մինչև 2021 թվականները:**



Աղբյուրը՝ court.am



# ՀԱՎԵԼՎԱԾ 7. ԵՄ ԶԵԿՈՒՅՑ. «ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՒՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ»

## (ԱՍՓՈՓՈՒՄ)

Հայաստանի դատական համակարգում մարդկային ռեսուրսների կառավարման համակարգի վերաբերյալ ԵՄ-ի 2022 թ. փետրվարի զեկույցում քննադատության են ենթարկվում դատական համակարգի մի քանի ոլորտներ և ներկայացվում են որոշ առաջարկություններ հետագա բարեփոխումների համար: Չեկույցում ներկայացվում են նաև դատախազության համակարգում կադրերի կառավարման հարցերը և էլեկտրոնային համակարգերի օգտագործման լայնածավալ առաջարկություններ: Այս հավելվածն ամփոփում է այն դիտողություններն ու առաջարկությունները, որոնք ուղղակիորեն վերաբերում են դատավորների և դատարանների աշխատակազմի կառավարմանը:

- «Դատական դեպարտամենտի անձնակազմի կառավարման բաժինը հիմնականում կենտրոնացած է աշխատակազմի ղեկավարման գործունեության վրա, իսկ մարդկային ռեսուրսների կառավարման այլ գործողությունների շրջանակը շատ սահմանափակ է: Ցանկալի է վերանայել ԴԴ-ի ֆունկցիոնալ շրջանակը և ընդլայնել կադրերի գործառնությունները, զինել անձնակազմն անհրաժեշտ հմտություններով, որոնք պահանջվում են Նոր ՄՌԿ գործընթացների իրականացման համար, ինչպիսիք են՝ հավաքագրում և ընտրություն, ուսուցում և զարգացում, կատարողականի կառավարում, պարզակներ, պլանավորում և բյուջետավորում, փոփոխությունների կառավարում, մարդկային ռեսուրսների հաշվետվության ապահովում և անձնակազմի թվային հմտությունների բարձրացում»:
- «Դատարաններում (ենթադրաբար յուրաքանչյուր դատարանում) պետք է ներդնել դատարանի ղեկավարի պաշտոնը, որը պետք է ունենա դատարանի աշխատակազմն անմիջականորեն ղեկավարելու իրավասություն (որպես այլընտրանք կարելի է ընդլայնել գործող աշխատակազմի ղեկավարի պարտականությունները և ներառել այս գործառնությունը»:
- «Չկան աշխատուժի պլանավորման համակարգված գործընթաց և անձնակազմը համալրելու դիմումների ձևաչափ, որոնք հնարավորություն կտային

պատշաճ փաստարկներ տրամադրելու անձնակազմի թվաքանակի ավելացման կամ Նոր պաշտոնների համալրման վերաբերյալ»:

- Կադրերի համալրման ներկա գործընթացը ոչ միշտ է իրականացվում մրցութային հիմունքներով: Անհրաժեշտություն է առաջանում մշակել կադրերի համալրման և ընտրության կառուցվածքային ընթացակարգ՝ ապահովելով թափանցիկ և մրցակցային գործընթաց: Երբեմն առկա է թեկնածուներին ուղղակիորեն աշխատանքի ընդունելու պրակտիկա, այն անձանց, որոնք համապատասխանում են աշխատանքի նկարագրի պահանջներին: Թեկնածուները հարցազրույց են անցնում անմիջական ղեկավարների հետ, չկա ընտրող հանձնաժողովի/հարցազրույց իրականացնող խմբի հետ պաշտոնական հարցազրույց անցնելու որևէ գործընթաց:
- Անձնակազմի կառավարման բաժինը մասնակի դեր է խաղում աշխատանքի ընդունման և ընտրության գործընթացում՝ հիմնականում կատարելով աշխատանքի ընդունման վարչական գործառնություններ, ինչպիսիք են թափուր աշխատատեղերի հայտարարությունների ձևակերպում, տեղադրում, դիմումների հավաքում և աշխատանքի ընդունման այլ ձևականությունների ապահովում:
- Արդյունավետության գնահատման համակարգում չկան կառուցվածքային կատարողականի կառավարման ցիկլեր, ինչպիսիք են նպատակների սահմանումը, կատարողականի չափանիշների սահմանումը, առաջընթացի մշտադիտարկումը, աշխատակիցների զարգացումը, աշխատակիցների հետ հետադարձ կապի ապահովումը, կատարողականի գնահատումը կատարողականի հարցախոյզներով, պարզատրումները և երախտագիտությունը, վատ կատարողականության հետ կապված գործողությունները (վատ կատարողականը բարելավելու հնարավորության տրամադրում, բարելավման բացակայության հետևանքով աշխատանքային հարաբերությունների դադարում): Առաջարկվում է բարելավել կատարողականի կառավարման և կատարողականի գնահատման համակարգը՝ հիմնված, այդ թվում, «SMART» (հատուկ, չափելի, հասանելի, համապատասխան և ժամանակի վրա հիմնված) չափանիշների վրա:



# ՀԱՎԵԼՎԱԾ 8. ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԱԶԱԿՑՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԸՍՏ ԴԱՏԱՐԱՆԻ

	Ընդամենը	Դատավորներ	Դատավորի օգնականներ	Դատարանի ռեգիստր	Դատական կարգադրիչներ	Գրասենյակի անձնակազմ	Օժանդակող անձնակազմ	Արխիվի պատասխանատու	Աշխատակազմի ղեկավար	Գլխավոր հաշվապահ	Իրավական փորձագետ	Դատարանի ընդհանուր աշխատակազմ՝ Ընդամենը
<b>Առաջին ատյանի (ընդհանուր իրավասության) դատարաններ</b>												
Երևան	443	68	68	62	65	49	118	6	3	4		375
Արագածոտն	65	7	7	9	9	7	23	1	1	1		58
Արմավիր	74	10	10	9	10	7	25	1	1	1		64
Արարատ, Վայոց ձոր	89	13	13	12	11	11	26	1	1	1		76
Շիրակ	89	10	12	11	10	7	36	1	1	1		79
Գեղարքունիք	78	9	10	9	9	8	30	1	1	1		69
Տավուշ	60	6	6	8	7	8	22	1	1	1		54
Սյունիք	74	8	11	9	10	7	27	0	1	1		66
Կոտայք	78	10	11	12	10	6	26	1	1	1		68
Լոռի	85	12	11	11	12	8	28	1	1	1		73
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1138</b>	<b>153</b>	<b>159</b>	<b>152</b>	<b>153</b>	<b>118</b>	<b>361</b>	<b>14</b>	<b>12</b>	<b>13</b>	<b>3</b>	<b>985</b>
<b>Առաջին ատյանի (մասնագիտացված) դատարաններ</b>												
Վարչական	97	24	11	11	12	8	28	1	1	1		73
Սևանկուղի	137	16	24	25	28	13	27	1	1	2		121
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>234</b>	<b>40</b>	<b>35</b>	<b>36</b>	<b>40</b>	<b>21</b>	<b>55</b>	<b>2</b>	<b>2</b>	<b>3</b>	<b>0</b>	<b>194</b>
<b>Վերաքննիչ դատարաններ</b>												
Քրեական	101	21	19	18	7	21	9		1	1	4	80
Քաղաքացիական	86	18	18	19	6	11	9		1	1	3	68
Վարչական	66	13	13	13	6	8	7		1	1	4	53
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>253</b>	<b>52</b>	<b>50</b>	<b>50</b>	<b>19</b>	<b>40</b>	<b>25</b>	<b>0</b>	<b>3</b>	<b>3</b>	<b>11</b>	<b>201</b>
<b>Վճռաբեկ դատարան</b>	105	17	32		2	9	32		1	1	11	88
Դատական ղեկարտամենտ (կենտրոնական մարմին)	129											129
Դատական կարգադրիչներ	652											652
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>2511</b>	<b>262</b>	<b>276</b>	<b>238</b>	<b>214</b>	<b>188</b>	<b>473</b>	<b>16</b>	<b>18</b>	<b>20</b>	<b>25</b>	<b>2249</b>

Աղբյուրը՝ Ամփոփ տվյալներ ԴԴ-ի կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի վերաբերյալ:

# ՀԱՎԵԼՎԱԾ 9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԸ

Մարզեր	Երևան	Կոտայք	Արարատ և Վայոց ձոր	Արմա- վիր	Արագա- ծոտ	Շիրակ	Տա- վուշ	Գեղար- քունիք	Լոռի	Սյունիք	Նստա- վայրեր
Ընդհանուր իրավասության (ԸԻ) դատարաններ	Կենտրոն և նորք Մարաշ (քրեական)	Չրագ- դան	Եղեգևա- ձոր	Էջմիա- ծին	Ապա- րան	Գյումրի	Իջևան	Գավառ	Վանա- ձոր	Կապան	
	Շենգավիթ (քրեական)	Եղվարդ	Արտա- շատ	Արմա- վիր	Թալին	Արթիկ	Նոյե- մբե- րյան	Սևան	Սպի- տակ	Գորիս	
	Ավան (քրեական)	Աբովյ- ան	Վեդի		Աշտա- րակ	Մարա- լիկ	Դիլի- շան	Մարտ- ունի	Ստե- փանա- վան	Սիսիան	
	Էրեբունի (քաղաքացի- ական)	Չարեն- ցավան	Մասիս			Աշոցք	Բերդ	Ճամ- բարակ	Տաշիր	Մեղրի	
	Արաբկիր (քաղաքացի- ական)		Վայք					Վար- դենիս	Վլա- վերդի		
	Քանաքեռ (քաղաքացի- ական)										
	Աջափնյակ 1 (մինչ- դատական քրեական վարույթ)										
	Աջափնյակ 2 (քաղաքացի- ական)										
	8	4	5	2	3	4	4	5	5	4	44
	Վարչական դատարան	Երևան (քրեական վերաքննիչ դատարանի հետ)					Գյումրի (ԸԻ դատա- րանի հետ)		Սևան ԸԻ դատա- րանի հետ)	Վանա- ձոր (ԸԻ դա- տա- րանի հետ)	Կապան (ԸԻ դա- տա- րանի հետ)
Մասնկության դատարան	Երևան		Մասիս (ԸԻ դատա- րանի հետ)			Գյումրի (ԸԻ դատա- րանի հետ)					3
Վերաքննիչ դատարան	Երևան (վերաքննիչ քաղաքացի- ական) (վերաքննիչ քրեական դատարանի հետ)										3
	Երևան (վերաքննիչ քրեական)										
Վճռաբեկ դատարան	Երևան										1
Շենքեր	11	4	5	2	3	4	4	5	5	4	56/47





